ՖԳ

# ԷՋՄԻԱԾԻՆ



Ե

2000

АЖ146

ԾԶ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

**Մ ա յ ի ս**
**2000**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՄՈՒՇԵՂ ՄԱՐԿԱՎԱԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցելությունը Վրաստան - - - - - - - - - - 3
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին՝ Կանադայի հայոց թեմի թեմակալ առաջնորդ վերընտրվելու առիթով - - - - - - - - - - - - 22
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Գերաշնորհ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատրյանին՝ Իրաքի հայոց թեմի թեմակալ առաջնորդ վերընտրվելու առիթով - - - - - - - - - - - - 24
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Կիզիրյանին՝ երկարամյա հոգևոր ծառայությունից հանգստի անցնելու կապակցությամբ - - - - - - - - - - - 26
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի կոնդակը «Ազդակ» շաբաթաթերթի խմբագիր Արսեն-Նուպար Մամուրյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին - - - 28
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության գիրը Ավստրալիայի հայոց թեմական պատգամավորական ժողովին - - - - - - - - - - - - - - - 30
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Մոնրեալի (Կանադա) «Ազդակ» շաբաթաթերթի խմբագրությանը - - - - - - - - - 32
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Արամ Գալուստյանին՝ երկարամյա ազգանպաստ գործունեության համար - - - - - - - 34
Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Վաչե Սեմերջյանին՝ լրագրողական ու հասարակական գործունեության 40-ամյակի առիթով - - - - 36
Վեհափառ Հայրապետի շնորհավորական ուղերձը Հաղթանակի օրվա առիթով - - - - - - - - - - - - 38
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում Զորավար Դրաստամատ Կանայանի հոգեհանգստի արարողության ժամանակ - - - - 39
Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը շրջանավարտներին - - - - 41
Պատմական Դվին մայրաքաղաքում կրկին ղողանջեցին եկեղեցու զանգերը - - - - - - - - - - - - - - 43

Օծվեց Նորքի Ս. Սարգիս նկեղեցին - - - - - - - - - 44
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բրատիսլավայի պատվիրակությանը - - - - - - - - - - - - - 45
Գարեգին Բ Կաթողիկոսը Սիլվա Կապուտիկյանին հանձնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսության «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանը - - - - - - - - - - - - 45
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական նամակը Հայաստանի նորանշանակ վարչապետին - - - - - 46
Հայաստանի Հանրապետության նոր վարչապետը այցելեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին - - - - - - 46
Գարեգին Բ Կաթողիկոս. «Մատենադարանը մեզ համար տաճարի ընկալում ունի» - - - - - - - - - - - 47
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ուկրաինայի ԱԳ փոխնախարարին - - - - - - - - - - - - - 48

## ՔԱՐՈԶԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում Ս. Խաչի Երևման տոնին - - - - - - - - 49
Տ. Մակար վարդապետ Հովհաննիսյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում - - - - - - - - - - - - - - 52
**ՎԱՐԴԱՆ ԱԻ. ՔՀՆՅ ՏԻՒԼԿԵՐԵԱՆ** - Երկրէն դէպի երկինք. Յարութեան որդիները- - - - - - - - - - - - - - 54

## ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

**ՄԱՐԻ ՍԱՆԹՈՒՐՋՅԱՆ** - «Անձինք»-ները հայ հոգևոր քնարերգության մեջ - - - - - - - - - - - - - 58
**ՌԻՄԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԻՐՈՒՄՅԱՆ** - Կրոնական փիլիսոփայությունը արդի մշակույթի համատեքստում- - - - - - 69

## 1700-ԱՄՅԱԿ

**Հ. Ճ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** - Ներսես Աշտարակեցի. Պաշտպան Հայրենյաց- - - - - - - - - - - - - - - 79

## ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

**ԱՐՈՒՍՅԱԿ ՏԵՐՉԱՆՅԱՆ** - Հայ Եկեղեցու դերը ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում - - - - - - - - - - - 90
**Հ. Վ. ԹՈՐՈՍՅԱՆ** - Խաղողի վազի մշակությունը Էջմիածնի վանական տնտեսությունում (17-18-րդ դդ.) - - - - - - - 94

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

**ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ** - Հայերենի շեշտի պեսությունը ըստ Նիկոլ Աղբալյանի - - - - - - - - - - - - 104
**ԵՐՎԱՆԴ ՄԵԼԻՔ-ՄՈՒՐԱԴՅԱՆ** - Ասպոյիկ դիցուհու աղերսները Վարդավառի պտնակատարության հետ - - - 110
**ՄԻՍԱՔ ԾԵՎԱՀԻՐՃՅԱՆ** - Տարոնի Ս. Սոֆիա տաճարը - - 119

## ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

**ՀԱԿՈԲ ՊԵՏՐՈՍՅԱՆ** - «Կենսագիր ներքող և դամբանական վասն խանգստեան Սրբազնակատար Հայրապետի» - - - - 124

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Եկեղեցական բժմ. լուրեր - - - - - - - - - - - - 135
**ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ** - Նամակ խմբագրությանը՝ ի գիտություն - - - - - - - - - - - - - - 138
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата - 139
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin - - - - 142
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine - - 145

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆ

### ՄԵԿՆՈՒՄ

2000 թվականի մայիսի 9-ի վաղ առավոտյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վրաց Ուղղափառ Եկեղեցու պետ, Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Երկրորդի եղբայրական հրավերով մեկնեց Թբիլիսի:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Արմավիրի թեմի առաջնորդի պաշտոնակատար Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի գլխավոր քարտուղար Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Արագածոտնի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը, Մայր Աթոռի քարտուղարության տնօրեն Արշակ աբեղա Խաչատրյանը, Տ. Ղուկաս աբեղա Զաքարյանը՝ որպես գավազանակիր, և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Վլադիմիր Բարխուդարյանը:

Նորին Սրբության գլխավորությամբ հայ հոգևորականների պատվիրակության այցը Վրաց Ուղղափառ Եկեղեցու աթոռանիստ, Վեհափառ Հայրապետի գնահատմամբ, երկու քույր Եկեղեցիների դարավոր բարեկամության, հոգևոր պետերի եղբայրական սիրո և հարգանքի արտահայտությունն է:

### ԺԱՄԱՆՈՒՄ ՀԱՂՊԱՏԱՎԱՆՔ

Վրաստան ճանապարհվելիս Նորին Սրբությունը կանգ առավ Հաղպատի վանքում, որտեղ Հաղթանակի օրվա առիթով հոգեհանգստյան արարողություն կատարեց Երկրորդ աշխարհամարտի և Արցախյան գոյամարտի զոհերի հիշատակին:

Արարողության ավարտից հետո Վեհափառ Հայրապետը շրջեց վանքի տարած-քում՝ կրկին անգամ ոգեշնչվելով ու հոգեպես նորոգվելով վանականների դարեր շարունակ հնչած մշտանորոգ ու հավերժական կենդանարար աղոթքների զորությամբ:

## ԺԱՄԱՆՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ

Նույն օրը, մայիսի 9-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հայ-վրացական սահմանագծին մոտ, հայկական հողում, աղ ու հացով դիմավորեցին Տավուշի մարզպետը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, մարզը և թեմը ներկայացնող պաշտոնական անձինք:

Սահմանագլխին Ամենայն Հայոց Կաթողիկոսին մեծ շքախմբով դիմավորեցին Վրաց Պատրիարք-Կաթողիկոսը, Վրաց միտրոպոլիտներ, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանը, Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան, փիար Գեորգի Խոսրոևը, Վրաստանում Հայաստանի Հանրապետությունը և Հայոց Եկեղեցին ներկայացնող պաշտոնատար այրեր, թեմական խորհրդի անդամներ:

Ողջագուրանքից հետո Նորին Սրբությանը ողջույնի ու բարիգալստյան խոսք ասաց Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Երկրորդը՝ հայտնելով իր ուրախությունը Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելության առիթով: Այնուհետև երկարաձիգ ավտոշարասյան ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը ուղևորվեց Թբիլիսի: Ճանապարհին՝ Մառնեուլի շրջանի Շահումյան հայկական գյուղում, Հայոց Հայրապետը նախօրոք չծրագրավորված կանգառ ունեցավ: Գյուղի ողջ բնակչությունը մեծ խանդավառությամբ՝ «Շահումյանցիները ողջունում են Հայոց Վեհափառին» լոզունգներով դիմավորելու էր ելել Հայոց Հայրապետին: Նորին Սրբությունը գնահատանքի իր խոսքն ուղղեց շահումյանաբնակ հայորդիներին նման հաճելի անակնկալի համար և իր հայրապետական օրհնությանն արժանացրեց խանդավառ բազմությանը:

Շահումյան գյուղից շքախումբը շարունակեց իր ընթացքը և Թբիլիսի ժամանեց օրվա երկրորդ կեսին, որտեղ և իջևանեցին Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդը և նրան ուղեկցող հոգևորական և աշխարհական անձինք:

Մի քանի ժամ անց Վրաց Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ, Նորին Սրբություն Իլիա Երկրորդը Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հյուրընկալեց Պատրիարքարանի ընդունելության սրահում: Քույր Եկեղեցիների Հովվապետերի ողջույնի և բարեմաղթանաց կարճ արարողությունից հետո հոգևոր առաջնորդներն անդրադարձան իրենց Եկեղեցիների ու տարածաշրջանում տիրող ընդհանուր կացությանը: Նրանք նշեցին, որ թե՛ հայոց, և թե՛ վրաց պետությունները դժվարին ճանապարհ են անցել հասնելու համար երազած այս անկախությանը: Այսօր, որպես

երկու Եկեղեցիների առաջին սպասավորներ, իրենք ջանք չեն խնայելու ամրացնելու, զորացնելու համար այն դարավոր բարեկամությունը, որ գոյություն է ունեցել երկու ժողովուրդների ու պետությունների միջև: Պետք է խթանվեն երկու երկրների գիտական, մշակութային, նաև տնտեսական հարաբերությունների առավել սերտացումն ու զարգացումը:

Վեհափառ Հայրապետը ի մասնավորի ասաց.

*«Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր, Նորին Սրբություն Իլիա Երկրորդ.*

*Հայրապետական Մեր գահակալությունից հետո Մենք հոգևոր պարտք նկատեցինք եղբայրական Մեր այցը կատարելու Ձեզ, Մեզ հետ ունենալով մեր Եկեղեցու բարձրաստիճան եկեղեցականներին, ինչպես նաև անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի, մեր ժողովրդի և մեր Եկեղեցու անունից մեր սերը եղբայրական Ձեզ փոխանցելու և Ձեր անձի միջոցով՝ ողջ հավատավոր ժողովրդին Վրաստանի ու Վրաց պետության: Մենք եկել ենք վերահաստատելու այն եղբայրական զգացումները, որ տածել են մեր ժողովրդի զավակունք և մեր Եկեղեցու հայրերը միմյանց նկատմամբ դարեր շարունակ: Մենք գիտենք, որ մեր երկու ժողովուրդների պատմությունները միահյուսված, միաշաղախված են իրար դարերի ընթացքին: Մենք չենք ցանկանում պատմության մանրամասների մեջ մտնել՝ վերհանելու համար, հաստատելու համար այն եղբայրական ջերմ կապերը, հարաբերությունները, որ ձևավորվել են դարերի մեջ մեր Եկեղեցիների և ժողովուրդների միջև: Բավարար է անդրադառնալ անցնող տասնյակ տարիների պատմությանը, երբ բազմիցս փոխայցելություններ են կատարել մեր հայրապետերը Թբիլիսի՝ իրենց եղբայրական սերը մատուցելու վրաց կաթողիկոսներին, վրաց ժողովրդին, վրաց պետությանը: Մենք այդ ճանապարհին է, որ շարունակում ենք մեր երջանկահիշատակ նախորդ հայրապետերի, Մենք հավատում ենք, որ այս փոխայցելությունը իր դրական ներգործությունն է ունենալու ինչպես եկեղեցական կյանքից ներս, այնպես էլ մեր ազգային կյանքից ներս՝ երկու ժողովուրդների: Մենք, որպես Եկեղեցիներ, անցել ենք միասին աստվածամերժության այդ տարիները, ճանապարհը, և փառք ու գոհություն Աստծուն, որ այսօր անկախ պետության պայմաններում ազատություն են ստացել նաև մեր երկու Եկեղեցիները գործելու և իրենց առաքելությունը հոգևոր լիարժեքորեն, ամբողջականորեն, արդյունավետ կերպով կատարելու: Անցյալում մենք մի շարք անգամներ եղել ենք Վրաստանում, եղել ենք Թբիլիսիում և հոգեկան ուրախություն, բերկրանք ու միաժամանակ մխիթարություն է Մեզ համար հաստատել, որ յուրաքանչյուր անգամ, որ եղել ենք այս օջախում, Վրաց Եկեղեցու պատրիարքարանում, տեսել ենք նրա առաջընթացը, նրա ծաղկումը, նրա վերազարթոնքը: Մեզ համար մեծ ուրախություն է տեսնել զորացումը Վրաց Եկեղեցու, որովհետև մեր ժողովրդի ներկա կյանքի պայմաններում միայն զորեղ Եկեղեցին է, որ կարող է ժողովրդի սպասումները, նրանց պահանջներն ու ակնկալությունները իրականացնել և արդարացնել: Այսօր մենք տեսնում ենք կարևորագույն առաքելություն մեր Եկեղեցիների, մեր ժողովուրդների կյանքում. առաջինը մեզ համար հոգևոր, քրիստոնեական, բարոյական արժեքների վերահաս-*

պատրաստ է մեր ժողովրդի կյանքից ներս, որպեսզի կյանքը մեր ժողովուրդների խարսխված լինի սիրո, արդարության, ճշմարտության և դրանց արդյունքում մնայուն խաղաղության վրա, որպեսզի մեր կյանքից դուրս վանվեն բոլոր այն արատավոր երևույթները, որոնք խոչընդոտում են մեր երջանկությանն ու խաղաղությանը՝ այդ աստվածապարգև շնորհներին: Այսօր մենք կոչված ենք մեր ազգային արժեքների պահպանության նվիրական գործին նաև, որովհետև անցնող դժվարին տարիներին մեր ժողովրդի զանազան բաժին հասան սոցիալական, տնտեսական, քաղաքական խնդիրներ: Մեր անկախ պետականության կերտման պայմաններում նաև զանազան ցավալի երևույթներ տեղ գտան մեր կյանքից ներս, մասնավորապես օտար աղանդներ, կրոնական կազմակերպիչներ ու քարոզիչներ պատեհ նկատեցին ժամանակը, որպեսզի ներթափանցեն մեր աշխարհից ներս և փորձեն իրենց քարոզչություններով մեր ժողովուրդներին շեղել իրենց հայրերի սրբազան հավատքից, քարոզչություններ, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն մեր ժողովուրդների պատմության, նրանց մշակույթի, նրանց կյանքի հետ ընդհանրապես: Նրանց գործունեությունը ուղղակիորեն միտված է խարխլելու և քայքայելու մեր պետության հիմքերը: Այս իմաստով մենք, որպես Եկեղեցի, բնականաբար, պարտավոր ենք մեր ժողովրդին ամրորեն կապված պահել իրենց հայրերի սրբազան հավատքին, իրենց քրիստոնեական հավատքով կերտված արժեքներին: Այդ արժեքների վրա կառուցված մեր ժողովուրդների անվտանգությունը երաշխիքն է մեր վաղվա օրվա, մեր ապագայի: Մենք միանշանակ կիսում ենք Ձերդ Սրբության արտահայտած այն կարծիքը, որ տարածաշրջանում նոր ժամանակների բոլոր մարտահրավերները պարտավոր ենք միասնաբար դիմագրավելու, ինչպես վայել է եղբայր ժողովուրդներին, որովհետև մեր երկու ժողովուրդների գոյությունը սերտորեն պայմանավորված է միմյանց հետ: Դժվար է պատկերացնել տարածաշրջանում մի ժողովրդի երջանիկ կյանք, երբ տառապանքի մեջ է այդ տարածաշրջանում ապրող մեկ այլ ժողովուրդ: Ուրեմն մեր պարտքն է, որ մեր աշխատանքը նպատակաուղղվի նաև խաղաղության հաստատմանը այս տարածաշրջանում, սիրո ու եղբայրության հաստատմանը: Մենք, որպես Եկեղեցի, նաև մեր առաքելությունն ենք տեսնում, որ երրորդ հազարամյակը դարձնենք խաղաղության, ժողովուրդների եղբայրության, բարեկամության, համագործակցության մի դարաշրջան: Եթե մենք, որպես Եկեղեցի, մեր առաքելության մեջ թերանանք, ապա ներկա դարաշրջանի գիտական, տեխնիկական ոլորտներում մեր ձեռքբերումները կդառնան աղետ ազգությունների և ժողովուրդների համար: Ահա այս զգացումներով Մենք Մեր աղոթքն ենք վերառաքում առ Աստված, որպեսզի Տերը զորացնի մեր եղբայրությունը, մեզ ուժ և կարողություն պարգևի՝ մեր առաքելությունը լիարժեքորեն իրականացնելու մեր ժողովուրդների կյանքում: Դարավոր բարեկամության վրա խարսխված մեր Եկեղեցիները պիտի համագործակցեն մեր առաքելությունը արդյունավետ կերպով իրականացնելու համար: Մենք կարող ենք մեր փորձառությունները միմյանց փոխանցել ինչպես կրոնական դաստիարակության ոլորտներում, այնպես էլ օտարամուտ աղանդների դեմ մեր ժողովրդի հավատքը անաղարտ պահելու գործունեության դաշտից ներս: Մեր մաղթանքն է, որ Տերը մեր քայլերը հայ-

*րենի պետության, մեր ժողովուրդների առաջնորդի միշտ սիրո և խաղաղության շավիղներում, որպեսզի միշտ մենք կարողանանք փառքը երգել մեր ամենակալ Տիրոջ՝ մեր Փրկիչ Հիսուսի Քրիստոսի հարության հաղթական օրհներգությամբ. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց»:*

Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն Իլիա Երկրորդն իր ուրախությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ին Վրաստանում հյուրընկալելու առիթով: Նորին Սրբությունը սիրո և բարի կամեցողության զգացումներ հայտնեց Հայ Եկեղեցուն և նրա Գահակալին՝ նշելով, որ այս այցելությունը երկու քույր Եկեղեցիների և եղբայրական ժողովուրդների հարաբերությունների զարգացման հիմնական գրավականներից կարելի է համարել: Վրաց Պատրիարքը առանձնակի նշեց համագործակցելու նպատակով համատեղ ծրագրերի մշակման անհրաժեշտության մասին՝ անշուշտ կարևորելով յուրաքանչյուր Եկեղեցու ազգային նկարագրի ու ինքնության պահպանումը:

Հոգևոր հայրերը նշեցին, որ երկու Եկեղեցիներն էլ անցել են աստվածմերժության նույն ճանապարհը, և փառք ու գոհություն վերառաքեցին առ Աստված, որ ներկա պայմաններում ազատ գործելու և իրենց առաքելությունը ամբողջապես իրականացնելու հնարավորություն են ստացել:

Երկու Հայրապետերի առանձնազրույցից հետո տեղի ունեցավ մամլո ասուլիս: Լրագրողներից մեկի այն հարցին, թե հիմնական ի՞նչ նպատակներ ունի Նորին Սրբության այցելությունը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը ի մասնավորի պատասխանեց.

*«Մենք եկել ենք Մեր եղբայրական սերը փոխանցելու Վրաց Եկեղեցու պետ, Նորին Սրբություն Իլիա Երկրորդին՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Մեր ընտրությունից անմիջապես հետո: Մեր այս այցելությունը նպատակ է հետապնդում հաստատելու, ամրացնելու այն կապերը, որ ձևավորվել են դարերի ընթացքին մեր երկու ժողովուրդների միջև, մեր երկու Եկեղեցիների անցած ճանապարհին: Եկել ենք Մեր սիրեցյալ եղբոր աղոթքի հետ միախառնելու Մեր աղոթքը. Մեր հայցը առ Աստված, որպեսզի հայ և վրաց եղբայր ժողովուրդները ապրեն խաղաղ երկնքի ներքո՝ լծված ստեղծագործ կյանքի և աշխատանքի: Եղբայրական այցի ընթացքին, բնականաբար, Մենք առիթ պիտի ունենանք առանձին զրույցների ընթացքում անդրադառնալու այն խնդիրներին, որոնք առկա են մեր երկու Եկեղեցիներից ներս. պետք է օգտվենք միմյանց փորձառությունից՝ մեկտեղելու մեր ջանքերը մեր Եկեղեցիների առջև ծառացած խնդիրները միասնաբար լուծելու համար»:*

Նույն օրը, երեկոյան, երկու Եկեղեցիների Հովվապետերն իրենց շքախմբերով հյուրընկալվեցին Թբիլիսիի պետական համալսարանում: Թբիլիսիի պետական համալսարանի ռեկտորի ողջույնի խոսքից հետո Վեհափառ Հայրապետը, իր խոսքն ուղղելով դասախոսական կազմին ու ներկաներին, ասաց.

*«Բարձրակարգ այս կրթօջախի հարկի տակ կրթվել և որպես մտավորականներ, արվեստագետներ ու գիտնականներ են ձևավորվել բազում հայորդիներ, ինչի համար Մեր երախտագիտությունն ենք հայտնում համալսարանի տնօրինությանը: Մենք հավատում ենք, որ Եկեղեցու ներկա-*



Վեհափառ Հայրապետը Թբիլիսիի համալսարանին է նվիրում յուղաներկ մի կտավ

*յությունը այս հաստատությունից ներս՝ օրհնյալ պիտի լինի և պիտի շաղախի յուրաքանչյուր ուսանողի հոգին բարոյական արժեքներով: Եկեղեցին իր առաքելությունը կարող է իրականացնել հավատավոր ժողովրդի կյանքում, երբ իր գործունեության մեջ զորակցությունն ունի մտավորականների: Մենք ուրախ ենք, որ մեր երկու ժողովուրդների բարեկամության ոլորտում սերտ համագործակցություն կա վրաց և հայոց մտավորականության միջև, որը պետք է զորացնի մեր բարեկամական կապերը:*

*...Օգտվելով այս բացառիկ առիթից, ցանկանում ենք Մեր շնորհակալությունը հայտնել այն նախանձախնդիր ոգու համար, որ դրսևորվում է համալսարանում հայագիտության հանդեպ, այն ակնկալությամբ, որ ճանաչողությունը առավել պիտի զորացնի դարավոր բարեկամությունը: Մեր աղոթքն է առ Աստված, որ Տերը Սուրբ Հոգու շնորհներով զորացնի մանկավարժական կազմին, որ կրթի ու դաստիարակի նոր սերունդ, որը կերտելու է վրաց ապագան: Մեր մաղթանքն է, որ սերտ համագործակցության մեջ հայոց և վրաց գիտական մտքի՝ փառաբանվի եղբայրությունն իր արգասաբեր դրսևորումներով, թող Վրաց Եկեղեցու օրհնությունը միշտ լինի այս հաստատության վրա, որին շաղախում ենք Մեր*

*աղոթքը և Մեր օրհնությունը՝ բերելով փոքրիկ մի հիշատակ, որպես մնայուն աղբյուր և վկայություն Մեր սիրո ու Մեր աղոթաւաց ոգու»:*

Այնուհետև բարձրաստիճան հոգևորականներն այցելեցին համալսարանին կից գործող և Դավիթ Շինարարի անունը կրող եկեղեցի, որտեղ փոքրիկ արարողությունից հետո Վրաց Եկեղեցու սպասավորները Նորին Սրբությանը նվիրեցին Դավիթ Շինարարի սրբապատկերը:

Երկու Հովվապետերին ուղեկցող ավտոշարասյունը համալսարանից ուղևորվեց դեպի Թբիլիսիի Հաղթանակի այգի, որտեղ Նորին Սրբությունը ծաղկեպսակ զետեղեց և խոնարհաբար իր հարգանքի տուրքը մատուցեց Երկրորդ աշխարհամարտի զոհերի հիշատակը հավերժացնող անհայտ զինվորի հուշարձանին:

## ՕՐ ԵՐԿՐՈՐԴ, 10 ՄԱՅԻՍԻ

### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐՈՒՄ

Այսօր, առավոտյան, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին նախագահական իր նստավայրում ընդունեց Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեն: Հանդիպմանը ներկա էին վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանը և Վրաստանում ՀՀ դեսպան, փիար Գեորգի Խոսրոևը: Վրաց նախագահը ողջունելով Հայոց Հայրապետի եղբայրական այցը Վրաստան՝ ջերմորեն արտահայտվեց Վրաստանում կայք հաստատած հայերի, նրանց հայեցի դաստիարակության և կրթության վերաբերյալ: Էդուարդ Շևարդնաձեն բարձր գնահատեց վիրահայոց համայնքի դերը վրաց հասարակական կյանքում: Նա նշեց, որ պետությունը պետք է նախանձախնդրություն դրսևորի, որպեսզի յուրաքանչյուր հայորդի Վրաստանում կարողանա կրթվել իր ազգային ոգով, կարողանա լսել, գրել և կարդալ հայերեն: Նախագահը մեծ ոգևորությամբ անդրադարձավ հայկական այն բոլոր կրթօջախներին, մշակութային կենտրոններին, որոնք գործում են Վրաստանում և մասնավորապես Թբիլիսիում:

Իր հերթին կարևորելով հայ-վրացական դարավոր բարեկամությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաղորդեց վրացահայերի խնդրանքը՝ Թբիլիսիում հայ մշակույթի գործիչների պանթեոնի պահպանմանը պատշաճ ուշադրություն դարձնելու վերաբերյալ: Վրաստանի նախագահը Նորին Սրբությանը խոստացավ հետևել և անհրաժեշտ հոգածություն ցուցաբերել նշված խնդրին:

### ՄԵԿՆՈՒՄ ՄՑԽԵԹ

Կեսօրին, պաշտոնական այցի շրջանակներում, Իլիա Բ Վրաց Պատրիարքի ուղեկցությամբ, Վեհափառ Հայրապետը և պատվիրակության անդամները մեկնեցին դեպի Մցխեթ՝ 5-րդ դարում կառուցված Ջվարի (Ս. Խաչ) վանք: Վանական այս

համալիրը, իր վանականներով հանդերձ, վրաց ժողովրդի և Եկեղեցու պատմության մեջ դարեր շարունակ առանցքային նշանակություն է ունեցել: Եկեղեցու կենտրոնում կանգնեցված խաչի առջև հայ հոգևորականաց դասը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, երգեց «Խաչի քո, Քրիստոս, երկիր պագանեմք» շարականը, որից հետո Վրաց Եկեղեցու պղամարդկանց «Միռնսկի խոր»-ի «Քրիստոս հարյավ» շարականի երգեցողության ներքո երկու Հովվապետերը իրենց աղոթքը վերառաքեցին առ Բարձրյալն Աստված՝ ի բարօրություն երկու քույր Եկեղեցիների ու եղբայրական ժողովուրդների հարաբերությունների սերտացմանն ու բարգավաճմանը: Ապա հոգևոր Հայրերն այցելեցին Մցխեթ՝ Վրաստանի պատմական մայրաքաղաք և հոգևոր նախկին կենտրոն, որտեղ նրանց դիմավորեցին Մցխեթի մարզպետը, մարզի պաշտոնական այրեր, հայ համայնքի ներկայացուցիչներ: Վեհափառ Հայրապետին առաջնորդեցին հին պատրիարքարան և Սվետիցխովելի (թարգմանաբար՝ Կենդանաբար սյուն) տաճար:

Օրվա երկրորդ կեսին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Մցխեթում տրվեց պաշտոնական ճաշ, որին ներկա էին Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ-ն, Մցխեթի մարզպետը, քաղաքապետը, Վրաստանում ՀՀ դեսպանը: Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետը, ի նշան երկու Եկեղեցիների և բարեկամական ժողովուրդների միջև գոյություն ունեցող սիրո, մարզպետին նվիրեց Մցխեթի վանքը և նրա շրջակայքը պատկերող մի կտավ՝ մաղթելով Վրաց Եկեղեցուն և ժողովրդին նորանոր նվաճումներ՝ ի շահ Քրիստոսի Եկեղեցու ամրապնդման ու հավերժության:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Ճաշկերույթից հետո շքախումբը վերադարձավ Թբիլիսի: Կարճատև հանգստից հետո Վեհափառ Հայրապետը մեկնեց Վրաստանում ՀՀ դեսպանատուն, որտեղ, ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն: Վրաստանում հավատարմագրված դեսպան Գեորգի Խոսրոևը վստահեցրեց, որ Նորին Սրբության այցը Վրաստան՝ Վրաց Ուղղափառ Եկեղեցի, առավել կամրապնդի հարևան ժողովուրդների միջև բարեկամությանն ու եղբայրությանը: Վեհափառ Հայրապետն իր հերթին ուժ և կարողություն մաղթեց դեսպանատան ողջ անձնակազմին, որն իր արդյունավետ և հայրենանվեր առաքելությամբ նպաստում է երկու բարեկամական պետությունների խաղաղ և օգտաշատ համագործակցությանը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԻՐԱՀԱՅՈՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Թբիլիսիի հայ համայնքը իր սերն ու նվիրվածությունը Հայոց Հայրապետին արտահայտեց Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական թատրոնում

կազմակերպված երեկույթի ընթացքում, որտեղ Նորին Սրբությանը ցնծությամբ ղիմավորեցին վիրահայ արվեստագետները, թատերական գործիչներն ու մտավորականները: Միջոցառումն իրենց ներկայությամբ պատվեցին նաև Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ-ն, վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանը, բարձրաստիճան այլ հոգևորականներ ու պետական այրեր: Կարևորելով Թբիլիսիի հայկական թատրոնի դերն ու նշանակությունը հայ թատերագիտության և արվեստի ձևավորման գործում, վիրահայ արվեստագետները Նորին Սրբությանը հակիրճ ներկայացրեցին ներկա մշակութային անցուդարձն ու մտահոգող խնդիրները, իսկ Եղիա մարգարեի անունը կրող կիրակնօրյա դպրոցի սաներն իրենց հայալեզու կատարումներով հիացրեցին Վեհափառ Հորն ու ներկաներին:

Երեկույթի ավարտին Վեհափառ Հայրապետը իր խոսքն ուղղելով ներկաներին՝ ի մասնավորի ասաց.

*«Թող Աստված օրհնի ձեզ, պահի ու պահպանի ապահով ու անվրդով հյուրընկալ Վրաց երկնքի տակ և Վրաց հողի վրա՝ հապապատուն ու անհոգ: Պահեք հայրենի ձեր ժառանգությունները սրբությամբ, շարունակեք նվիրական այն առաքելությունը, որ ժառանգել եք ձեր նախնիներից, մեր պապերից: Ձեր կատարած աշխատանքի համար, ձեր դրսևորած ոգու, ձեր ներդրած ջանքերին բերում ենք Մենք խորին խոնարհում և օրհնություն Հայրապետական Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, կյանք և արևշատություն ձեզ, Սուրբ Էջմիածնի օրհնությունը ձեզ:*

*Ցանկանում եմ Իմ գնահատանքը և օրհնությունը փոխանցել մեր սաներին, որոնք այս բեմի վրա հանդես եկան գեղեցիկ, հիասքանչ ու հայրենաշունչ ելույթով: Ցանկանում եմ ձեզ վստահեցնել, որ թեև հայրենիքը ապրում է ծանր օրեր, բայց հավատացեք, որ մեր ժողովրդի զավակունք իրենց ամուր կամքով և հավատքով պիտի հաղթահարեն և պիտի կերտեն մեր բոլորի երազների հայրենիքը, որ օրհնություն պիտի լինի յուրաքանչյուր աշխարհասփյուռ հայորդու համար, ամեն»:*

Վեհափառ Հայրապետը, ի գնահատումն թատրոնի ազգանվեր գործունեության, հայ մշակութային այդ օջախին նվիրեց Լևոն թագավորի բերդը պատկերող մի նկար:

## ՕՐ ԵՐՐՈՐԴ, 11 ՄԱՅԻՍԻ

Այսօր, մայիսի 11-ին, շարունակելով այցը Վրաստան, Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Թբիլիսիի Ս. Գևորգ առաջնորդանիստ հայոց եկեղեցի, որտեղ Վեհափառ Հայրապետին ցնծությամբ ղիմավորեց հավատացյալների հոծ բազ-

մությունը: Հայրապետական իր օրհնությունը տալով վիրահայոց թեմի հավատավոր զավակաց՝ Նորին Սրբությունը, հորդորելով հավատարիմ մնալ հայրերի հավատքին և ազգային ավանդույթներին, ասաց.

*«Դարեր ի վեր մեր ժողովրդի զավակները կայք են հաստատել Վրաց հողում և ապավինած իրենց հավատքին՝ կերտել են եկեղեցիներ, վանքեր, որոնց հարկի տակ իրենց աղոթքն են բարձրացրել առ Աստված: Ճշմարիտ է, որ մեր ժողովրդի զավակները Ավետարանի խոսքի համաձայն գիտակցել*



Վեհափառ Հայրապետը Ս. Գևորգ եկեղեցուն նվիրում է Աստվածամոր պատկերով կտավ

*են, որ հոգին է կենդանարար: Հոգին է, որ կյանք է պարգևում, հոգին է, որ ուժ է հաղորդում արարումով ապրելու, իսկ հոգու այդ կենդանության ակունքը հավատքն է՝ մեր Տիրոջ Սուրբ Ավետարանը, Նրա քարոզությունը, Նրա Հրաշափառ Հարությունը: Դժվարություններ այսօր ապրում են և՛ մեր ժողովրդի զավակները Հայաստանում, և՛ դուք այստեղ՝ մեր եղբայր Վրաց ժողովրդի հետ: Այս դժվարություններից դուրս գալու միակ ճանապարհն ապավինությունն է միմյանց, ապավինությունն է մեր հայրերի Աստծուն, այդ հավատքն է, որ մեզ պիտի կարողանա ոգի հաղորդել, որ մենք հաղթահարենք ամեն տեսակ դժվարություն: Միայն փոխադարձ սիրո ոգին կրթելով մեր մեջ՝ մենք կարող ենք կերտել մեր երջանիկ կյանքը:*

*Մենք այս գեղեցիկ օրը, երբ կանգնած ենք ձեզ հետ աղոթքի, մեր քարոզն ենք առ Աստված բարձրացնում՝ հայցելով Տիրոջ շնորհը և ողորմությունը ձեզ, որպեսզի հույսը և սերը մշտապես ձեր հոգու մեջ լինեն և պտղաբերեն, արդյունավորվեն նորանոր ձեռքբերումներով: Թող Աստված սիրով միաբան պահի ձեզ, ձեր հայրերի կերտած սրբազան արժեքների, ձեր հայրերի սրբազան հավատքի շուրջ համախումբ: Թող Աստված պարգևի խաղաղ ու երջանիկ կյանք ձեզ, հոգու անդորր, որպեսզի լծվեք մեր ժառանգության պահպանության նվիրական առաքելությանը, որպեսզի լծվեք ձեր հայրենական օջախների և հյուրընկալ ձեր երկրի*

*շինության գործին, որ նաև ձեր գորացյալ կյանքը, ձեր շեն ու բարօր կյանքը խրախույս լինի, ուժ դառնա նաև հայրենաբնակ մեր ժողովրդի զավակաց:*

*Մեր աղոթքն է, որ Տիրոջ փրկչական խաչի օրհնության ներքո ապրեք և շարունակեք փառավոր ընթացքը ձեր հայրերի: Լուսավոր պահեք հայի անունն ու վարկը, առավել պայծառացնեք ձեր հավատքի ջերմությամբ, որպեսզի ձեր վարկով, ձեր բարի ընթացքով միշտ վայելեք հարգանքը և սերը վրաց ժողովրդի և Վրաց աշխարհի:*

*Շնորհք, սեր և խաղաղություն թող լինեն միշտ ձեզ հետ այժմ և հավիտյանս. ամեն»:*

Եկեղեցու բակում Վեհափառ Հայրապետը կանգ առավ Սայաթ-Նովայի շիրիմի առջև և հոգեհանգստյան աղոթք վերառաքեց առ Աստված:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՊԱՆԹԵՈՆ

Ս. Գևորգ եկեղեցուց Վեհափառ Հայրապետին ուղեկցող շքախումբը այցելեց նաև Հավլաբարի Ս. Էջմիածին եկեղեցի և խոջիվանք:

Խոջիվանքում Վեհափառ Հայրապետը, խոնարհելով իր գլուխը, հարգանքի տուրք մատուցեց հայոց մեծ երախտավորների՝ Թումանյանի, Րաֆֆու, Մուրացանի, Նար-Դոսի, Եկմալյանի և այլոց շիրիմների առջև և, ուղղելով իր խոսքը ներկաներին, ասաց.

*«Մենք եկել ենք հարգանքի խոնարհումը բերելու մեր ժողովրդի արժանավոր զավակաց: Նրանց ոգին կրթել է սերունդներ, նրանց ոգին ուղեկից է եղել մեր զավակաց, մեր կյանքի դժվարին ու ծանր օրերին մեզ զորեղացնել, մեզ արիացրել է: Մեր մաղթանքն է, որ արժանավոր մեր զավակների շիրիմները շարունակեն խանդավառել ձեզ, շարունակեն ոգի դառնալ Ձեզ համար, որպեսզի կարողանաք ապրել այն երազների համաձայն, այն իղձերի համաձայն, որ ունեցել են այստեղ իրենց հանգիստը գտած մեր ժողովրդի զավակունք, և կարողանաք այդ երազները կյանքի կոչել, իրականություն դարձնել: Այսօր Հայաստանի անկախության ձեռքբերումով մենք մասամբ իրականություն ենք դարձրել նրանց երազները, սակայն հայրենի անկախ պետականությունը պետք է ամրացնենք մեր աշխատանքով, մեր քրտինքով, նաև սփյուռքի զորեղ կյանքով: Իմ՝ Հայրապետիս խնդրանքն է ձեզ. միշտ այցելեք մեր մեծերի շիրիմներին, աղոթք բարձրացնեք նրանց հոգիների համար, խոնարհվեք նրանց հիշատակի առջև և ունկնդիր եղեք նրանց պատգամներին ու խորհուրդներին, որ մեր հավերժության խորհուրդն է պարունակում:*

*Թող Աստված օրհնի հիշատակը արժանավոր մտավորական մեր զավակաց, և թող նրանց հոգին լույս դառնա յուրաքանչյուրիս համար՝ լուսավորելով մեր կյանքի ճանապարհը և ընթացքը: Օրհնությամբ թող լինի արդարների հիշատակը մեր հոգիներում այժմ և հավիտյանս. ամեն»:*

Վերջում Վեհափառ Հոր նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ պանթեոնում ամփոփված հայ մեծ երախտավոր զավակների:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ՝ Ի ՊԱՏԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, ժամը 14-ին, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, Թբիլիսիի քաղաքապետ Վանո Զոդելավիի նախաձեռնությամբ տրվեց պաշտոնական ճաշ, որին ներկա էին Իլիա Բ Պատրիարքը, վրաց բարձրաստիճան հոգևորականներ, Վրաց կառավարության անդամներ, Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գեորգի Խոսրոևը, թեմական խորհրդի անդամներ, Վրաստանում Ադրբեջանի արտակարգ և լիազոր դեսպանը:

Ճաշկերույթի ընթացքում փոխանակվեցին բարեողջույնի խոսքեր:

Վրաց Իլիա Բ Պատրիարք-Կաթողիկոսը իր ուրախությունը հայտնեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Վրաց Ուղղափառ Եկեղեցի կատարած այցելության առիթով: Նա իր համոզումը հայտնեց, որ հայ-վրացական ավանդական կապերը կնորոգվեն երկու հոգևոր առաջնորդների համագործակցությամբ և կծառայեն երկու ժողովուրդների բարօրությանն ու հոգևոր վերազարթոնքին:

Հայոց Հայրապետն իր խորին շնորհակալությունը հայտնելով ջերմ ընդունելության և ցուցաբերած եղբայրական սիրո համար՝ ի մասնավորի ասաց.

*«Ձերդ Սրբություն, սիրելի եղբայր ի Քրիստոս.*

*Սուրբ Հարության բերկրաշատ այս օրերին, երբ ողջ քրիստոնյա աշխարհը շարունակում է տոնել մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշազարդ Հարությունը, Մենք, որպես Հայ Առաքելական Եկեղեցու Հայրապետ, հոգու խնդությամբ գոհունակության աղոթք ենք բարձրացնում առ Աստված, Վրաստանի օրհնյալ հողում Ձեզ հետ հանդիպման ու Ձեր հյուրընկալության երջանիկ առիթը Մեզ պարգևելու համար:*

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որ հոգևոր կենտրոնն է աշխարհասփյուռ համայն հայության, մեր ժողովրդի սերն ու ողջույնն ենք բերում վրաց բարեպաշտ ժողովրդին և ջերմ մաղթանքները ամենայն բարյաց:*

*Ծագումով եղբայր, պատմությամբ եղբայրացած և մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անվամբ առհավետ միավորված մեր երկու ժողովուրդները իրենց գոյության վաղնջական ժամանակներից աստվածապարգև իրենց Հայրենիքներում ապրում են հարևանությամբ՝ միասնաբար դիմագրավելով ընդհանուր թշնամյաց վտանգ ու պատերազմի աղետ, միասնաբար կառուցելով ու բարիք ստեղծելով, կիսելով միմյանց վիշտն ու ուրախությունը, ինչպես վայել է եղբայրներին: Երկար թվարկում պիտի պահանջվի Թորգոմի (Վրաց պատմագրությամբ՝ Թարգամոս- «Քարթլիս Ցխովրեբա») ութ որդիներից մեր նախահայրեր Հայկի (Հաոս) և Քարթլոսի ժամանակներից մինչ օրս մեր ժողովուրդների կենսագրական ընդհանրությունների թեկուզև հպանցիկ հիշատակումը: Ստիպված պիտի լինենք շարադրել հայոց և վրաց ողջ պատմությունը, երկուստեք նվիրական անուններով ու դեպքերով հարուստ: Ինչպե՞ս կարող են մեր հոգիները սրբազան սարսուռով և թանկ հիշատակներով չլցվել սրբուհիներ Նունեին, Շուշանիկին հիշելիս, որոնց կյանքով Հարության հավատքը ամրացավ մեր մեջ, Վարդան Մամիկոնյանին և Աշուշա Պիտիախշին (բդեշխ), Վախթանգ Գորգասալին և Վահան Մամիկոնյանին հիշելիս, որ 5-րդ դարում մեր երկրների ազատագրության*

*դրոշը պարզեցին Սասանյան տիրապետության դեմ: Մի՞թե հնարավոր է ջնջել բախտակից մեր ժողովուրդների համատեղ պայքարի էջերը արաբական, բյուզանդական նվաճումների դեմ, մոռանալ երկուստեք ապրված խնդությունը 10-րդ դարում Բագարատ Բագրատունու կողմից վրաց թագավորության միավորման առիթով և նրա արժանավոր հաջորդներ Դավիթ Շինարարի, Թամար թագուհու շրջանում հայազգի Զաքարյան զորավարների գլխավորությամբ Վրաց հողերի հետ սելջուկ-թուրքերից նաև Հայոց տարածքների ազատագրության բերկրանքը: Ինչպե՞ս չհիշել հայ և վրաց մարտիկների խանդավառ և հուսալի հանդիպումը հայոց Գանձակի մոտ, երբ Հերակլ II արքայի և հայոց Եսայի Հասան-Ջալալյան Կաթողիկոսի ու Արցախի մելիքների գլխավորությամբ պայքարի էին պատրաստվում իրենց Հայրենիքների ազատագրության համար: Ընդհանրություններով հարուստ է մեր ժողովուրդների վերջին շրջանի պատմությունը, բազմակողմ են երկուստեք բարի կամեցողության ոգով կառուցված տնտեսական հարաբերությունները և երկկողմանի հարազատ քրիստոնեական մեր մշակույթները, արտահայտելով նաև հայ և վրաց գործիչների եղբայրական կապերը:*

*Մեր երկու ժողովուրդների ու Եկեղեցիների բարեկամական դարավոր հարաբերությունների աներկբա երաշխավորն է Վրաստանի հայ համայնքը, որի անդամները, որպես Ձեր երկրի ազնիվ քաղաքացիներ, մասնակից են հասարակական կյանքի զարգացմանն ու առաջընթացին: Քրիստոնյա Վրաստանում հայ ժողովրդի զավակները մշտապես իրենց ապահով ու ազատ են զգացել, վստահությամբ հիմնել եկեղեցիներ ու վանքեր, դպրոցներ ու թատրոն, բարեգործական հաստատություններ: Այսօր ևս, հոգևոր առաջնորդությամբ Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սերայդարյանի, հայորդիք հնարավորություն ունեն շարունակելու իրենց ազգային-եկեղեցական կյանքը՝ վայելելով վրաց պետության, Եկեղեցու և ժողովրդի անկեղծ բարեհաճությունը:*

*Փա՜ռք Բարձրյալին, այսօր մեր ժողովուրդները վերստին ձեռք են բերել ազգային իրենց անկախությունը, որն առավել մեծ հնարավորություններ է ընձեռում փոխվստահության ու համագործակցության: Վրաց և Հայոց Եկեղեցիները ազատորեն գործելու հնարավորություն են ստացել և առավել պատասխանատվություն են կրում քրիստոնեական Սիրո, Հույսի ու Հավատի արժեքներով նորոգելու մեր ժողովուրդների կյանքը, ամրապնդելու նախնյաց սրբազան ժառանգություն մեր դարավոր բարեկամությունը:*

*Մեր երկու Եկեղեցիների առջև այսօր ծառացել են նույն դժվարությունները ու հոգսերը՝ հաղթահարել աստվածամերժ 70 տարիների հետևանքները, օտարամուտ աղանդների հոգեավեր գործունեությունը և լիարժեքորեն սպասավորել ու առաջնորդել հոգևոր վերազարթոնք ապրող մեր զավակաց:*

*Մենք հավատում ենք, որ նոր կյանք կառուցող մեր երկու ժողովուրդները իրենց Մայր Եկեղեցիների հանապազ օրհնության ներքո միմյանց զորակցությամբ պիտի կարողանան հաղթահարել քաղաքական, տնտեսական և ընկերային կյանքի այսօրվա դժվարությունները: Հավատում ենք մեր եղբայրության արարող ուժին, քանզի մեր առջև ունենք ընդհանուր նպատակ՝ կառուցելու ճշմարիտ մարդասիրական հասարակություն, որի գերակա ար-*

*ժիքը մարդն է և առաջնային սկզբունքը՝ իր բոլոր անդամների հավասարությունը: Հասարակություն, ուր տեղ չունեն ազգային, կրոնական, սոցիալական խտրականություն և բաժանում՝ ընտրյալների ու մերժվածների. Պողոս առաքյալի խոսքերով՝ «ոչ հրեայի, և ոչ հեթանոսի, ոչ ծառայի, և ոչ ազատի»:*

*Մեր աղոթքն է, որ Բարձրյալի կամքով և օրհնությամբ եղբայրական Վրաստանում մշտապես թագավորեն երկնապարգև խաղաղությունն ու սերը, բարգավաճումն ու բարօրությունը:*

*Ձերդ Սրբություն.*

*Ընդունեք Մեր խորազգաց երախտագիտությունը Ձեր սիրալիր հրավերի և ջերմ ընդունելության համար: Անկեղծ սիրով Մենք նույնպես հրավիրում ենք Ձեզ համար հարմար ժամանակ այցելել Սուրբ Էջմիածին՝ Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջև միասնաբար աղոթելու համար եղբայրական մեր երկրների ու ժողովուրդների, քրիստոնեական մեր Եկեղեցիների խաղաղության ու սիրո:*

*Թող Տերը զորացնի մեզ բոլորիս մեր պարտքի ու ծառայության մեջ՝ ի պայծառություն հնագույն մեր Եկեղեցիների և ի շինություն նորանկախ մեր պետությունների:*

*Թող միշտ օրհնյալ լինեն Տիրախնամ Վրաց Ուղղափառ Եկեղեցին, ժողովուրդն ու հողը Վրաստանի ամեն:*

*«Քրիստոս Յարեաւ»»:*

Պաշտոնական ճաշկերույթից հետո Վեհափառ Հայրապետը մեկնեց կառավարական հյուրանոց, որտեղ փոքր հանգստից հետո ուղևորվեց Թբիլիսիի Երիտասարդական պալատ: Նորին Սրբության խանդավառությամբ դիմավորեցին թե՛ հայ, և թե՛ վրաց ժողովրդի զավակներ, որոնց Վեհափառ Հայրապետը հորդորեց մնալ ամուր կառչած իրենց պապերի հավատքին, պահպանել ու էլ ավելի ամրապնդել դարերի խորքից եկող բարեկամական ու եղբայրական հարաբերությունները, որոնք մեծագույն գրավականներն են վաղվա լուսավոր օրվա ու պայծառ ապագայի:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ՝ Ի ՊԱՏԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, երեկոյան, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեն, Իլիա Բ Պատրիարքը, վրաց բարձրաստիճան հոգևորականաց դասը, վրաց կառավարության անդամներ, Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գեորգի Խոսրոևը:

Ճաշկերույթի ընթացքում փոխանակվեցին բարեողջույնի խոսքեր:

Վրաց նախագահը իր ուրախությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Վրաց Ուղղափառ Եկեղեցու աթոռանիստ այցելելու առիթով: Նա հույս հայտնեց, որ հայ-վրացական ավանդական կապերը կնորոգվեն հոգևոր առաջնորդների համագործակցությամբ և կծառայեն երկու ժողովուրդների բարօրությանն ու առաջընթացին:

Վրաց Պատրիարք Իլիա Բ-ն, դիմելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ին, ներկա հոգևորականաց դասին ու պաշտոնատար անձանց, ասաց.

*«Ձերդ Սրբություն, Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գարեգին Երկրորդ, Ձերդ գերազանցություն պարոն նախագահ, հավատակից սիրելի եղբայրներ, տիկնայք և պարոնայք.*

*Այսօր Վրաստանի պատրիարքությունը հյուրընկալում է քրիստոնեական հինավուրց Եկեղեցու ղեկավար, Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գարեգին Երկրորդին ու նրան ուղեկից անձանց: Սա պաշտոնական այցելություն է և հետապնդում է մեր երկրների ու Եկեղեցիների միջև համագործակցության հետագա հաստատման և խորացման նպատակ: Մեր երկրների միջև շատ են կապերը, քանի որ գտնվում ենք աշխարհաքաղաքական այնպիսի տարածքում, որ դարեր շարունակ բազում օտար պետություններ ձգտել են ենթարկել իրենց ազդեցությանը:*

*Միաժամանակ մեր հողը եղել և մնում է քրիստոնեական օազիս Եվրոպայի և Ասիայի սահմանագծին, և դրա համար մեր ժողովուրդներին վիճակված էր բազմաթիվ թշնամիներից պաշտպանել իրենց տարածքը, հավատքը, լեզուն, մշակույթը:*

*Աշխարհում չկան այլ երկրներ, որտեղ այնքան նահատակներ լինեն, որքան Վրաստանում և Հայաստանում: Երկու երկրներում էլ Եկեղեցին առաջնակարգ դեր է կատարել 2000-ամյա պատմության ընթացքում:*

*Մեր վանքերը ոչ միայն հոգևոր գործունեության օջախներ էին, այլև գիտական և մշակութային խոշոր կենտրոններ: Հավատքը հագեցնում էր մեր կյանքի բոլոր ոլորտները, և հենց դա պայմանավորեց մեր ազգային էությունն ու ոգին, մեր մտավոր և մշակութային կենսաձևը:*

*Հատկապես ցանկանում եմ ընդգծել Հայ Եկեղեցու բացառիկ դերը երկրի պատմության մեջ: Այն ճշտապես ներառում էր ազգի կառավարման և միավորման դերը, երբ պետության մեջ վերացված էր աշխարհիկ կառավարումը: Այդ իրավիճակը տևում էր դարեր շարունակ, ու չնայած ծանրագույն դժվարություններին, Եկեղեցին կարողացավ պատվով տանել այդ ծանր խաչը: Կարողացավ նաև ազգի մեջ բացահայտել ներքին պոտենցիալը, որի արդյունքում առկա է մեծ ժառանգություն դպրության մեջ, մատենագրության մեջ, ճարտարապետության մեջ, ընդհանրապես մշակույթում, որը ներկայումս հարստացնում է համաշխարհային գանձարանը:*

*15-րդ դարի հայ եկեղեցական գործիչ Մատթեոս Ջուղայեցին ասել է. «Բարությունը չորս տեսակի է. ներողամտություն, մարդասիրություն, հյուրասիրություն, առատաձեռնություն»: Վրացիներին բնորոշ են բոլոր այս հատկանիշները: Հենց դրա համար էլ նրանց թագավորությունը փրկվեց:*

*Գիտնականները, քաղաքագետները, հասարակական գործիչները հաճախ են ասել մեր Եկեղեցիների՝ անցյալում կատարած դերի մասին, սակայն մեր օրերում էլ մեր Եկեղեցիների վրա ոչ նվազ պատասխանատվություն է դրված, և դա փաստ է:*

*Այսօր բավականին ինտենսիվ է ընթանում օտար, կեղծ մշակույթի ներխուժումը մեր երկրներ: Մեր հասարակությունը, որը 70 տարիներ դաստիարակվել է անհավատության մթնոլորտում, հաճախ առանց ըմբռնելու ընդունում է այն և անզգուշորեն կորցնում անցյալի հետ կապող արմատները: Եկեղեցին պարտավոր է մեր ժողովուրդներին հիշեցնել և ցուցանել հոգևոր արժեքները:*

*Սրա հետ մեկտեղ Եկեղեցին պետք է կանգնի իշխանության կողքին, ինչպես դա եղել է պատմության ընթացքում, սակայն իշխանությունն էլ պետք է հաշվի առնի Եկեղեցու դերը և նրա հնարավորությունները: Այս հարաբերությունների խախտումը ծանր հետևանքներ կարող է բերել երկու կողմին, առավելապես բնակչությանը: Այդ պատճառով էլ ժողովրդավարության անվան տակ ընթացող գործընթացները չպետք է հասցնեն քաոսի և անիշխանության:*

*Այսօր, ավելի քան երբևէ, անհրաժեշտ է ազգի և Եկեղեցու միասնություն, քանզի սկսում ենք նոր կյանք, և մեր երկրները ձեռնամուխ են եղել անկախ ու ժողովրդավարական պետությունների շինարարությանը:*

*Մենք մեծապես գնահատում ենք, որ Վրաստանն անդամագրվել է Եվրամիությանը և հուսով ենք, որ մոտ ժամանակներս Հայաստանը և Ադրբեջանը ևս կդառնան այդ նշանակալից միջազգային կազմակերպության անդամներ, որը կայուն ու խաղաղ պայմաններ կստեղծի Կովկասի համար:*

*Կովկասի կյանքում նշանակալի դեր կկատարի Մետաքսի ճանապարհի վերականգնումը: Կարծում ենք, որ այն նոր հեռանկարներ կբացի Հարավային Կովկասի երկրների կյանքում ու կնպաստի Արևելքի և Արևմուտքի, Եվրոպայի և Ասիայի ինչպես տնտեսական, այնպես էլ մշակութային մերձեցմանը:*

*Ձերդ Սրբություն, մենք բազում տարիներ ենք ճանաչում Ձեզ որպես ճանաչված և եռանդուն եկեղեցական գործիչներից մեկի: Եվ կարծում ենք, որ Ձեր հետագա գործունեությունը կլինի բացառիկ օգտավետ ինչպես մեր երկու երկրների, այնպես էլ ընդհանուր առմամբ Կովկասի համար:*

*Եվ թող Ձեր հովվապետությունը լինի բազում տարիներ, խաղաղ և արգասաբեր: Ձեր Եկեղեցուն, ձեր երկրին, մեր եղբայր հայ ժողովրդին մաղթում ենք ապագա առաջընթաց և բարգավաճում»:*

Հայոց Հայրապետն իր խորին շնորհակալությունը հայտնեց ներկաներին սրտագին ընդունելության և ցուցաբերած եղբայրական ջերմ սիրո համար:

Վեհափառ Հայրապետը, իր խոսքն ուղղելով ներկաներին, ասաց.

*«Ձերդ Սրբություն,*
*Մեծարգո նախագահ*

*Փառք ենք բարձրացնում առ Աստված Վրաստան այցելելու և հատկապես Մեզ շատ սիրելի Թբիլիսիում, որ ժամանակին ծառայել ենք որպես սարկավագ, հյուրընկալվելու հրաշալի հնարավորության համար:*

*Գտնվելով այստեղ Մեր սիրեցյալ եղբայր, Վրաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Երկրորդի սիրալիր հրավերով՝ հոգու ջերմությամբ հիշում ենք Ձեր չքնաղ քաղաքում Մեր ապրած երջանիկ օրերը և շնորհակալ ենք Աստծուն, որ Թբիլիսիի յուրօրինակ վառ գունապատկերը այսօր ևս շողում է բարի կամեցողությամբ ու անկեղծ հյուրընկալությամբ:*

*Ձեր հրաշալի քաղաքում հայերը իրենց երբեք չեն զգացել օտար, նույնիսկ հյուր, քանզի եղբայրական սիրո գրկախառնությամբ մշտապես բաց է եղել թբիլիսցիների հոգին:*

*Հնագույն ժամանակներից հաստատված այստեղ՝ հայոց համայնքը անցնող դարերում գործուն մասնակցություն է ունեցել քաղաքի տնտեսական,*

*հասարակական-մշակութային կյանքում և առանց որևէ խոչ կաշկանդվելու Թբիլիսիում ապրող մյուս ժողովուրդների հետ կանգնել է թշնամյաց դեմ, սիրելի քաղաքի պաշտպանության դիրքերում:*

*Թբիլիսիում են ստեղծագործել հայ ժողովրդի բազմաթիվ մեծ զավակներ, որոնց աստվածաշնորհ տաղանդը ծաղկել ու պտղաբերել է այս արգասավոր հողում: Հայության համար մշտապես նվիրական է Թբիլիսին Սայաթ-Նովայի, Հովհաննես Թումանյանի, Ալեքսանդր Շիրվանզադեի, Րաֆֆու և մշակույթի ուրիշ հայ գործիչների սրբազան գերեզմաններով, հայոց սրբավայրերով:*

*Սիրելի ներկաներ.*

*Մեր աղոթքն ու բարեմաղթանքն է, որ Ձեր քաղաքում երբեք չմարի, այլ զորանա փոխադարձ այն անկեղծ սերը, որը մենք ունենք այսօր որպես ավանդ, թանկ ժառանգություն մեր նախնյաց, որպես հայրական օրհնություն:*

*Թող Աստված Իր Աջի հովանու և հավերժ իր օրհնության ներքո խաղաղ ու բարգավաճ պահպանի հնագույն հողը Վրաստանի, մշտապես ծաղկող՝ նրա հրաշագեղ մայրաքաղաք Թբիլիսին, երջանիկ ու բարօր՝ ստեղծարար վրաց ժողովրդին:*

*Մեծարգո պրն Քաղաքագլուխ, ընդունեք Մեր շնորհակալությունը անկեղծ ու ջերմ հյուրընկալության համար և Մեր լավագույն մաղթանքները: Թող Տերը զորակից լինի և առաջնորդի Ձեզ պատասխանատու Ձեր առաքելության մեջ:*

*«Շնորհք Տեառն մերոյ Յարուցեալ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ամենեսեան». ամեն:*

*

* *

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Վրաց Ուղղափառ Եկեղեցու պետ Իլիա Բ Պատրիարք-Կաթողիկոսը մայիսի 11-ին Հայոց Հայրապետի՝ Վրաստան կատարած անդրանիկ այցի շրջանակներում ստորագրեցին համատեղ հայտարարություն.

**«Մենք՝ Վրաց Ուղղափառ և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիների Պետերս, հանդիպելով Թբիլիսիում 2000 թ. մայիսի 9-11, Քրիստոնեական սիրո մթնոլորտում, հանուն մեր Եկեղեցիների և ժողովուրդների, մեկ անգամ ևս հաստատեցինք դարավոր բարեկամությունը՝ անքակտելիորեն միավորող մեր Եկեղեցիներին ու ժողովուրդներին:**

**Եղբայրացած՝ պատմությամբ, և հավիտենապես միավորված՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ, մեր ժողովուրդները դարերի խորքից, ապրելով իրենց Աստվածապարգև հայրենիքներում իբրև բարի հարևաններ, միասին դիմակայելով նույնանման դժվարությունների ու դժբախտությունների, հարատև պայքար են մղել իրենց ազգային անկախության համար:**

**Փա՛ռք Տիրոջը, մեր ժողովուրդները այսօր վերստին ձեռք են բերել անկախ պետականություն, որն առավել լայն հնարավորություններ է ընձեռում մեզ՝ փոխվստահության և համագործակցության: Վրաց և Հայոց**

Եկեղեցիները հնարավորություն են ստացել ազատ գործունեության և է՛լ ավելի մեծ պատասխանատվություն են կրում իրենց ժողովուրդների կյանքի վերանորոգության հանդեպ:

Մեր Եկեղեցիներն այսօր կանգնած են նույն բարդությունների և հոգսերի առջև. հաղթահարել աստվածամերժ վերջին յոթ տասնամյակների հետևանքները, դիմակայել օտարածին աղանդների ներխուժմանը, չհարժեքորեն խնամք տանել և առաջնորդել մեր զավակաց դեպի հոգևոր վերածնունդ:

Մենք հավատում ենք, որ մեր՝ նոր կյանք կերտող ժողովուրդները, մերօրյա բոլոր տնտեսական և քաղաքական դժվարությունները կարող են հաղթահարել միմիայն համատեղ ջանքերով և սերտ համագործակցությամբ՝ հարատև օրհնության ներքո իրենց Մայր Եկեղեցիների:

Մենք հավատում ենք մեր եղբայրության արարչագործ ուժին, քանզի մեր առջև մեկ ընդհանուր խնդիր ունենք. կերտել հիրավի մարդասիրական մի հասարակություն, որի գլխավոր արժեքն է մարդ-անհատը, իսկ հիմնական սկզբունքն է նրա բոլոր անդամների հավասարությունը. հասարակարգ, ուր տեղ չկա ազգային, ընկերային և կրոնական խտրականության համար:

Մենք՝ Վրաց և Հայոց հինավուրց առաքելահաստատ Եկեղեցիների Պետերս, կոչ ենք ուղղում տարածաշրջանիս բոլոր ժողովուրդներին՝ իրատեսորեն գիտակցելու, որ խաղաղ Կովկասն այլընտրանք չունի, և որ բոլոր վիճելի հարցերն իրենց լուծումը պիտի գտնեն միմիայն խաղաղ բանակցությունների ճանապարհով:

Մենք անձանձիր աղոթում ենք, որ մոտենա այն ցանկալի օրը, երբ, ըստ Եսայի մարգարեի, «ժողովուրդներն իրենց սուսերներից խոփեր պիտի ձուլեն և իրենց սվիններից՝ մանգաղներ. ազգ ազգի վրա սուր չպիտի բարձրացնի, և նրանք այլևս չեն սովորելու պատերազմել» (Եսայի Բ 4):

Մենք դիմում ենք բարի կամքի տեր բոլոր ժողովուրդներին, որ նրանք իրենց ներդրումն ունենան խաղաղության հաստատման Աստվածահաճո գործին, զի խաղաղ Կովկասն այսօր իսկ դառնա իրականություն»:

## ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅՐԵՆԻՔ, ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ավարտելով իր պաշտոնական այցը Վրաստան՝ մայիսի 12-ին, ուրբաթ օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Մայր Հայրենիք՝ իր հետ բերելով երկու ժողովուրդների նորոգված բարեկամությունից բխող ջերմագին սերը:

## ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Նույն օրը Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի առջև, Ամենայն Հայոց Հայրապետն իր գոհաբանական աղոթքը վերառաքեց առ Բարձրյալն Աստված.

*«Մենք մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված, որ այս ուղևորությունը զորացնի միջեկեղեցական հարաբերությունները երկու քույր Եկեղեցիների և արգասաբեր դարձնի մեր եղբայրությունը»*,- ներկայացնելով այցելության արդյունքները՝ ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի հետ ունեցած հանդիպմանը:

*«Սրտաբուխ էր յուր նախագահի ջերմ արտահայտությունները Վրաստանում ապրող հայորդյաց մասին»*,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ բարձր գնահատելով պրն Շևարդնաձեի լայնախոհ կեցվածքը, որն իր պատրաստակամությունն ու ցանկությունն է հայտնել՝ նպաստելու վրացահայության ազգային ինքնության և հայ մշակութային արժեքների պահպանմանը:

Նորին Սրբությունը ջերմությամբ նշեց նաև իր հանդիպումները վիրահայ համայնքի հետ, որը, չնայած ներկայիս կյանքի սոցիալ-տնտեսական դժվարություններին, ուրախությամբ ու ցնծությամբ է դիմավորել Ամենայն Հայոց Հայրապետին:

Մայր Տաճարում Նորին Սրբության վերադարձը ողջ միաբանության անունից ողջունեց լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը:

*ՄՈՒՇԵՂ ՄՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ՝ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԵՐԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

### ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Հոգեկան խոր գոհունակութեամբ տեղեկացանք կանադահայոց Թեմական Վարչութիւնից, որ Դուք մայիս 27-ին, յընթացս Թեմական Պատգամաւորական Ժողովի, վերընտրուել էք Կանադայի հայոց թեմի առաջնորդ՝ ըստ արժանեաց վայելելով բարձր գնահատանքը Տիրախնամ Ձեր թեմի հաւատաւոր Մեր զաւակաց:

Սիրելի Սրբազան.

Ծանօթ ենք եկեղեցաշէն ու հայրենանուէր Ձեր գործունէութեանը, որի առանցքը եղել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Վազգէն Ա երջանկայիշատակ Հայրապետի

«Սիրեցէք Սուրբ Էջմիածինը. Էջմիածինն է հայութեան միաւորող հզօր շաղկապը՝ Սրբալոյս իր Միւռոնով» պատգամով ներշնչուած՝ Դուք, որպէս հարազատ զաւակ Մայրավանքիս, ազնիւ նախանձախնդրութեամբ Ձեր մեծարժէք ներդրումն էք բերել Մայր Աթոռիս հեղինակութեան բարձրացման սրբազան գործին:

Մեր բարձր գնահատանքը յայտնելով կանադահայոց մեծազնիւ խրախոյսին եւ սիրով ընդառաջ հաւատարիմ հայորդեաց, որ ի Կանադա, Հայրապետական այսու գրով յղում ենք Ձեզ Մեր օրհնութիւնը եւ վաւերացնում ընտրութիւնը Ձեր, որպէս առաջնորդ կանադահայոց:

Աղօթում ենք առ Բարին Աստուած, որպէսզի Տէրն Ամենակալ պարգեւի Ձեզ «Համայն ամս ուղիղ վարդապետութեամբ եւ անարատ վարուք» առաջնորդել մեր ժողովրդին իր բարի երազների լուսեղէն ճանապարհներով:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեանդ, ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 28 Մայիսի յամի Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 41

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՎԱԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻՆ՝ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԵՐԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՒԱԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ, ՈՐ Ի ԲԱՂԴԱԴ, ԻՐԱՔ

Հոգեկան խոր գոհունակութեամբ տեղեկացանք Թեմական Վարչութիւնից, որ, իբրեւ արժանի հատուցումն Իրաքի հայոց ազգային-եկեղեցական կեանքում Ձեր բերած նշանակալի ու կարեւոր ներդրումների, մայիսի 18-19-ը Առաջնորդարանում գումարուած Պատգամաւորական Ժողովի ընթացքին Դուք վերընտրուել էք Իրաքի հայոց թեմի առաջնորդ: Արդարեւ, մեծ է եւ նշանակալի աւանդը Ձեր: Աւետարանական քաջ ու բարի հովուի պատգամներով զինավառ՝ Դուք աննահանջ հետեւողականութեամբ հաւատացեալ մեր հօտը առաջնորդել էք դէպի հոգեւոր ու եկեղեցական արժէքների պահպանման լուսաւոր հորիզոններ՝ շնորհը ստանալով աւանդապահութեան ջահակիրը լինելու իրաքահայոց համայնքային կեանքում:

Առաքելական Մայր Եկեղեցուն բերած Ձեր ծառայութեան բարձր գնահատանքով՝ համայն հայութեան Արքութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը՝ «ուղղեսցէ եւ հաստատեսցէ Տէր զգնացս Ձեր ի ճանապարհս խաղաղութեան» ջերմեռանդ մաղթանքով:

Աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Տէրն Ամենակալ պարգեւի Ձեզ «Համայն ամս ուղիղ վարդապետութեամբ եւ անարատ վարուք» առաջնորդել մեր ժողովրդին իր բարի երազների լուսեղէն հանգրուանները:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 27 Մայիսի յամի Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 40

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻՋԻՐՅԱՆԻՆ՝ ԵՐԿԱՐԱՄՅԱ ՀԱԳԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԳՍՏԻ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻՋԻՐԵԱՆ, ՈՐ Ի ԼՈՆԴՈՆ, ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ

Հայոց Հայրապետիս համար հանապազ անսահման բերկրանք է գովեստի խօսքեր ասել մեր նուիրեալ հոգեւորականաց, որոնց բազմաբեղուն ծառայութիւնը մեր Եկեղեցուն բնորոշւում է իբրեւ «զինք երթալ բարեաց» եւ «ծառայել Աստուծոյ», քանզի նրանցով է կանգուն Առաքելական մեր Մայր Եկեղեցին, զօրեղ՝ մեր միաբանութիւնը, շէն ու պայծառ՝ Սուրբ Աթոռը Լուսոյ Խորան Էջմիածնի։

Սիրելի Սրբազան, աւելի, քան կէս դար Դուք, իբրեւ հովուի քաջ ու հովուի բարի, նուիրեալ ու անսակարկ ծառայութիւն էք բերում Լուսաւորչապսակ մեր Սուրբ Եկեղեցուն։ Հովուական սպասաւորութեան առաջին քայլերը սկսելով Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռից, երկար տարիներ Դուք նախանձախնդիր ու սիրառատ ոգով հոգեւոր սնունդ էք ջամբել Մեծն Բրիտանիոյ հաւատաւոր մեր զաւակաց եւ մեծ աւանդ բերել նրանց հաւատքի զօրացմանն ու ազգային-եկեղեցական կեանքի պայծառացմանը։

Տարիների հեռաւորութիւնից ուրախ ենք այսօր արձանագրելու, որ Սրբալոյս Միւռոնը, որպէս «մաքուր կաթն անարատ ստեանց Մօրն Լուսոյ Սրբոյ Էջմիածնի», երիցս պսակելով Ձեր ճակատը իբրեւ Քրիստոսի եւ Եկեղեցու քաջարի զինուորի, շնորհընկալն է դարձրել Ձեզ հաւատաւոր մեր զաւակաց հայրենակարօտ հայեացքները Լուսաւորչեան մշտավառ կանթեղին ուղղելու։

Սիրելի Սրբազան, յաւարտ Ձեր ծառայութեան՝ իբրեւ Հայրապետական Պատուիրակ եւ Անգլիայի հայոց առաջնորդ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապե-

կական Մեր օրհնութիւնն ու խորին գնահատանքն ենք բերում Ձեզ եւ գոհութիւն ու փառք առ Աստուած վերառաքում, որ Ձեր երկարամեայ սպասաւորութեան տարիները արդիւնաշատ են անձնամատոյց խաւարով ու սիրով իմաստաւորուած եկեղեցաշէն գործերով, ազգաշահ բազում յաջողութիւններով ու ձեռքբերումներով:

Սիրելի Սրբազան, աղօթում ենք առ Բարին Աստուած եւ խայցում, որ Ամենակալ Տէրը Իր խանապազ օրհնութեան եւ ողորմութեան ներքոյ քաջառողջ արեւշատութիւն ու բիւր բարիքներ պարգեւի Ձեզ՝ ազնիւ, բարի եւ հաւատարիմ Իր ծառային: Մաղթում ենք, որ հոգեւորականի խոգեսնուցիչ սրբազան առաքելութեանը կոչուած Ձեր վաստակեալ կեանքը օրհնեալ լինի մխիթարութեամբ լեցուն բազում բարի օրերով:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 16 Մայիսի յամի Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 35

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ «ԱՊԱԳԱՅ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ԱՐՄԷՆ-ՆՈՒՊԱՐ ՄԱՄՈՒՐՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ԲԱԶՄԱՄԵԱՅ ԽՄԲԱԳԻՐՆ «ԱՊԱԳԱՅ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ, ՏԻԱՐ ԱՐՄԷՆ-ՆՈՒՊԱՐ ՄԱՄՈՒՐԵԱՆ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Ուրախութեան եւ հոգեւոր բերկրանքի առիթ է Մեզ համար Հայրապետական Մեր ողջոյններն ու ջերմ բարեմաղթանքները յղել Ձեզ, որ հեռաւոր Կանադայի հողում ջերմեռանդ եկեղեցասիրութեամբ ու հայրենաշինութեամբ, որպէս գիր ու գրականութեան անխոնջ մշակ, լծուած էք ի փար աշխարհի բնակեալ մեր զաւակաց լուսաւորելու պատուաբեր առաքելութեանը:

Կանադահայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի միջոցով ծանօթ ենք խմբագրական 25-ամեայ Ձեր նուիրեալ գործունէութեանը, որ համախառնել էք հասարակական յարաբերութեանց ոլորտում բերած Ձեր մեծարժէք ծառայութիւններով:

Հայրենիք ու Եկեղեցի սրբազան գաղափարներով խանդավառ՝ Դուք Ձեր հոգու ջերմութիւնն ու սիրոյ կրակն էք դրոշմել նախանձախնդիր հոգացողութեամբ խմբագրած «Ապագայ» շաբաթաթերթի էջերին, որ առ հայրենական աւանդներն ու սրբութիւնները հաւատարմութեան հիմներգի է փոխակերպուել Կանադայի բարեպաշտ մեր զաւակաց հոգիներում:

Մեր «լոյսի ու յոյսի» հայրենեաց եւ Սրբազնասուրբ մեր Եկեղեցւոյ նկատմամբ Ձեր անկեղծատր սիրոյ ու նուիրումի բարձր գնահատանքով եւ ընդառաջ բարեջան

առաջնորդի խնդրանքին՝ Ձեր կեանքի յոբելեանական այս հանգրուանին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական այսու Կոնդակաւ շնորհում ենք Ձեզ

# Ս. Սահակ - Ս. Մեսրոպ

շքանշանը:

Լուսաւորութիւնն ու խաւարամերժութիւնն էր տեսիլքը Ս. Սահակ Հայրապետի եւ Ս. Մեսրոպ Մաշտոցի, որոնց առաքելութեան «դալար մարգագետիններով» էք ընթանում նաեւ Դուք:

Աղօթքով առ Աստուած՝ կենաց արեւշատութիւն եւ հայրենանուէր ծառայութեամբ նուաճուած նուիրականութեան բազում աւիթներ ենք մաղթում Ձեզ Ձեր օրհնեալ ճանապարհին:

Թող Երկնաւորն Աստուած հանապազ լոյս բաշխի Ձեզ՝ բեղմնաւոր գործունէութեամբ ու բիւր յաջողութիւններով պսակազարդելով Ձեր կենաց ընթացքը՝ ի լուսաւորումն մտաց եւ հոգւոց հայորդւոց զաւակաց:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս
ի 16 Մայիսի յամի Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 36

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴՒՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿԱՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԱՆԴԱՄՈՑՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ, ՈՐ Ի ՍԻԴՆԵՅ, ԱՒՍՏՐԱԼԻԱ

Գոհունակութեամբ տեղեկացանք Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզեանից, որ այս տարի Մայիսի 6-ից 7-ը Սիդնեյ մայրաքաղաքում տեղի է ունենալու Աւստրալիայի հայոց թեմի տարեկան պատգամաւորական ժողովը՝ կոչուած միասնաբար ամփոփելու անցնող տարուայ մէջ կատարուած աշխատանքները եւ նոր ծրագրեր մշակելու ապագայի գործունէութեան:

Սիրելի զաւակունք մեր Մայր Եկեղեցու.

Համայն մեր ազգի հոգեւոր կենտրոնից, 1700 - ամեայ Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերկրանօք սրտի Մեր սէրն ու ողջոյններն եւ Հայրապետական անդրանիկ օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ հոգեւորական ու աշխարհական անդամներիդ տարեկան պատգամաւորական ժողովի եւ հեռաւոր Աւստրալիայի հիւրընկալ հողում ապրող հաւատաւոր ողջ հայութեանը:

Ձեր բարեջան առաջնորդի, ինչպէս նաեւ թեմի «Լոյս» պաշտօնաթերթի միջոցով Մենք հաղորդ ենք թեմական Ձեր կեանքին, տեղի ունեցող նշանակալից իրադարձութիւններին: Ուրախութեամբ է համակուած Հայրապետիս հոգին, որ Դուք, սիրելիք Մեր, Հայրենիքից ովկիանով զատուած հեռաւոր Աւստրալիայի մայրցամաքում համախմբ էք Առաքելական մեր Եկեղեցու շուրջ եւ մեր հայրերի աւանդներին ու ստեղծած սրբազան արժէքներին հաւատարիմ, բազմաթիւ կրթամշակութային ծրագրերի միջոցով արթուն եւ արարող էք պահում եկեղեցասիրութեան ու հայրենասիրութեան ոգին հայաշունչ Ձեր գաղութում:

Մեզ համար յատկապէս մխիթարութեան եւ առ Աստուած փառաբանութեան առիթ են Տիրախնամ Ձեր թեմի հովանու ներքոյ գործող Ազգային Վարժարանները՝ որպէս պայման մեր ազգային ինքնութեան յարատեւութեան: Արդարեւ, հայեցի

գրով ու դպրութեամբ կրթուած եւ Մայր Եկեղեցուն ու Հայրենիքին անքակտ կապուած երիտասարդ սերունդն է ամենայն հայոց վաղուայ լուսաւոր ապագան:

Հայրական Մեր պատգամն ու յորդորն է Ձեզ ամենքիդ, որ Դուք նոյն ոգով ու նուիրումով շարունակէք համայնքային Ձեր կեանքը՝ սիրոյ եւ բարութեան գործերով արդիւնաւորելով այն ի շինութիւն եւ ի պայծառութիւն Տիրախնամ Ձեր թեմի եւ ի շահ համօրէն մեր ազգի ու Առաքելական Մայր Եկեղեցու:

Առ Բարին Աստուած ապաւինութեամբ յաջողութիւններ ենք մաղթում Ձեր համաժողովի աշխատանքներին եւ Տիրոջ օգնականութիւնը հայցում Աւստրալիայի հաւատարիմ Մեր զաւակաց:

Մեր աղօթքն է նաեւ, որ Ամենախնամ Բարձրեալը քաջառողջութիւն եւ ազգաշահ մնայուն ձեռքբերումներով երկարատեւ ծառայութիւն պարգեւի Աւստրալիայի հայոց թեմի բոլոր նուիրեալներին՝ ի գլուխ քաջակորով առաջնորդ, Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիօզեանի:

Թող Տէրը խաղաղ երկնքի ներքոյ անշրջելի առաջընթաց ու բարօրութիւն պարգեւի Աւստրալիայի պետութեանն ու ժողովրդին եւ Իր hանապազ օրհնութեան ներքոյ անսասան ու անվրդով պահի Տիրախնամ թեմը հայոց եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 1-ն Մայիսի ի թուին Տեառն 2000
եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 33

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ՄՈՆՐԵԱԼԻ (ԿԱՆԱԴԱ) «ԱՊԱԳԱՅ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴՒՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՆՈՒԻՐԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐԱՑՆ «ԱՊԱԳԱՅ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Սիրով ընդառաջելով Կանադայի հայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի խնդրանքին, գոհունակ սրտով Հայրական Մեր ողջոյնները, սէրն ու Հայրապետական օրհնութիւնն ենք բերում Մոնրէալի Թէքէեան հրատարակչական Կենտրոնի «Ապագայ» շաբաթաթերթի խմբագրական կազմին, բոլոր աշխատակիցներին ու ընթերցողներին՝ թերթի հիմնադրման քսանհինգամեայ յոբելեանի առիթով:

Սփիւռքի մեր ժողովրդի կեանքում մեծ է առաքելութիւնը հայախօս մամուլի՝ մեսրոպատառ հայոց լեզուի հնչումով ծառայելու հայ հոգու ինքնութեան ու նկարագրի պահպանմանը:

Յարգարժան խմբագիր «Ապագայ» շաբաթաթերթի, սիրելի աշխատակիցներ. գովեստի ու բարձր գնահատանքի էք արժան Դուք, որ քառորդ դար, «որպէս մշակք այգւոյն Տեառն», Ձեր ծառայութիւնն էք բերում բարեպաշտ մեր ժողովրդին եւ նպաստում Կանադայի ողջ հայութեան հայրենասէր եւ եկեղեցանուէր կեանքի շինութեանը: Ուրախութեամբ ենք անդրադառնում, որ «Ապագայ» շաբաթաթերթը իր եռալեզու հրապարակումներով արժանի տեղ ունի կանադահայոց մէջ՝ լուսաբանելով համայնքային կեանքը եւ նրանց հաղորդ դարձնելով տարածաշրջանի ու հայրենական կեանքում տեղի ունեցող նշանակալից իրադարձութիւններին:

Հայրապետիս աղօթքն ու մաղթանքն է, որ Բարձրեալն Աստուած հանապազ օգնական եւ աջակից լինի Ձեզ ամենքիդ եւ Իր մշտական օրհնութեան ու առատ ողոր-

մութեան ներքոյ պարգեւի քաջառողջ ու երջանիկ բազում օրեր, ամենայն բարիք եւ ստեղծագործական նորանոր յաջողութիւններ:

Թող «Ալպագայ» շաբաթաթերթը իր ազգաշահ առաքելութեամբ յարատեւի մեր ժողովրդի կեանքում՝ լինելով սպասուած սիրելի հիւր բոլոր յարկերից ներս:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 6-ն Մայիսի ի թուին Տեառն 2000
եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 34

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԱՐԱՄ ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻՆ՝ ԵՐԿԱՐԱՄՅԱ ԱԶԳԱՆՊԱՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԵՐԱԽՏԱՐԺԱՆ ՏԻԱՐ ԱՐԱՄ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ, ՈՐ Ի ԲՈՍՏՈՆ, ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ

Հոգեւոր ուրախութեամբ եւ բերկրանօք սրտի Միածնաէջ Մայր Աթոռից Հայրապետական Մեր ողջոյններն ու սէրն ենք յղում Ձեզ, որ, կայք հաստատելով Մայր Հայաստանից հորիզոններ հեռու Ամերիկայի օրհնեալ հողի վրայ, Ձեր հոգու եւ մտքի հայեացքը հանապազ սեւեռել էք հինաւուրց մեր Հայրենիքին ու Սրբազնասուրբ մեր Եկեղեցուն՝ սիրոյ ու զոհողութեանց Ձեր ծառայութիւններով բարեշէն ու ամուր տեսնելու համար հայրենական մեր կեանքը:

Ծանօթ ենք հայրենաշէն ու եկեղեցանուէր Ձեր գործունէութեանը, որով «զբարիս գործել յամենայն ժամ» գիտակցութեամբ ոգեշունչ՝ լծուած էք հայու զաւակաց ապագան միմեանց նկատմամբ եղբայրական ջերմ զգացումներով փոխշաղախուած տեսնելու սրբազան գաղափարի իրականացմանը: Դուք, որպէս ազնիւ ջահակիրը մեր նախահարց ստեղծագործական ու կառուցողական անընկճելի ոգու, հիմնադիրներից մէկը դարձաք «Ամերիկայի Հայկական Համագումար» բարեգործական կազմակերպութեան, որի խիզախ իրագործումները՝ նպատակաուղղուած ազգային գերագոյն շահերի պաշտպանութեանը եւ քարոզչութեանը, օրհնութեան աղբիւր են դարձել աշխարհասփիւռ ու հայրենական մեր կեանքից ներս:

«Արժան է եւ իրաւ», որ, ի գնահատութիւն անդուլ եւ անսակարկ Ձեր ծառայութեան, այսօր հայորդիք յարգանք են ընծայում Ձեզ: Հայրենեաց ու Մայր Եկեղեցւոյ նկատմամբ Ձեր նուիրումը բարձրօրէն ենք գնահատում նաեւ Մենք եւ օրհնութեան

այսու գրով համայն հայոց հաւատոյ ծննդավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր ջերմ բարեմաղթանքները եւ Հայրապետական օրհնութիւնը:

Աղօթքով սրտաբուխ առ Բարին Աստուած վասն արեւշատութեան, երջանկութեան ու գործոց յաջողութեան՝ հայցում ենք Ձեզ եւ Ձեր ընտանեաց բոլոր անդամներին Երկնաւոր Տիրոջ զօրակցութիւնը, որպէսզի Բարձրեալի հանապազ օրհնութեան ներքոյ ապահով ու խաղաղ շարունակէք կենաց Ձեր ճանապարհը:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալք ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 17 Մայիսի յամի Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 37

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ՎԱՉԵ ՍԵՄԵՐՃՅԱՆԻՆ՝ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 40-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՏԻԱՐ ՎԱՉԷ ՍԵՄԵՐՃԵԱՆ, ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԷՍ, ԱՄՆ

ԱՄՆ հայոց արեւմտեան թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանից ցոհունակ սրտով տեղեկացանք, որ այս տարի Մայիսի 19 - ին Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անջելէսի մասնաճիւղի նախաձեռնութեամբ, որի Կենտրոնական Վարչութեան երկարամեայ անդամն էք, նշուելու է Ձեր լրագրողական եւ հասարակական գործունէութեան 40 - ամեակը, եւ յընթացս հանդիսութեան պիտի կայանայ նաեւ «Ապրուած ափիտք» խորագրով Ձեր նոր հրապարակած գրքի շնորհանդէսը:

Մեծարգոյ պրն Սեմերճեան. անկեղծ ուրախութեամբ ենք անդրադառնում, որ Ձեր արդիւնաշատ կեանքն ու գործունէութիւնը իմաստաւորել եւ իմաստաւորում էք մեր ազգին, Հայրենիքին ու Եկեղեցուն մատուցած մեծարժէք ծառայութիւններով: Դուք, իբրեւ հաւատաւոր հարազատ զաւակ Հայ Առաքելական Եկեղեցու, լրագրող եւ հասարակական գործիչ, Ձեր գործուն մասնակցութիւնն էք բերում ԱՄՆ հայոց արեւմտեան թեմի համայնքային կեանքին եւ հայոց լեզուի ու պատմութեան ուսուցչի շնորհակալ առաքելութեամբ՝ հայրենասիրութեան ու եկեղեցասիրութեան Ձեր ոգին էք փոխանցում Արշակ Տիգրանեան վարժարանի ծրաչյան սանուց, խանդավառելով նրանց մեր ազգի ու Եկեղեցու փառապանծ անցեալով ու ապագայի կենդանի տեսիլքով, նախրական մեր հերոսների ոգեղէն կեանքով ու սրբազան գործերով:

Անխոնջ մշակ հայ գրչի, բառ ու բանի.

Ձեր յոբելեանի առիթով Ամենայն Հայոց հաւատի օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Մեր սրտաբուխ շնորհաւորանքներն ու Հայրապետական օրհնութիւնը: Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարեմաղթանքն է, որ Ամենա-

խնամն Աստուած Իր Աջի հովանու ներքոյ ջաջառողջ երկար կեանք ու ամենայն բարիք պարգեւի Ձեզ. որպէսզի շարունակէք ստեղծագործական նորանոր ներշնչանքներով Ձեր նպաստը բերել հայ դպրութեանն ու մշակոյթին՝ փառաց պսակ հիւսելով Ձեզ կեանք պարգեւած փիրախնամ մեր ժողովրդին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 18-ն Մայիսի ի թուին Տեառն 2000
եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 38

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 8 մայիսի 2000 թ.:**

Մայիսի 9-ի Հաղթանակի օրվա առիթով Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հետևյալ ուղերձն է հղել.

Սիրելի հայորդիք.

Մայիսի 9-ը կրկնակի տոն է մեր ժողովրդի զավակաց համար՝ Հաղթանակի նվիրական օր, որ իր խորհրդով միավորում է ֆաշիզմի դեմ Երկրորդ համաշխարհային պատերազմում ձեռք բերված պանծալի հաղթության և Արցախյան պատերազմում Շուշիի ազատագրության սուրբ հիշատակները:

55 տարիներ են անցել այն օրից, երբ լռեցին համաշխարհային ահեղաբեր պատերազմի որոտները և բռնության, անօրինության ու չարիքի դեմ ելած բազում ժողովուրդների թվում փոքրաթիվ հայ ժողովրդի քաջարի մարտիկները ևս իրենց «սուրը փառքով դրեցին պատյան»: Հայրենյաց նվիրյալ, ազատության ու արդարության պաշտպան նրանց ոգին՝ որպես նախնյաց սրբազան ժառանգություն, անթեղվեց իրենց որդիների ու թոռների հոգիներում և բոցավառվեց Արցախի ազատագրական պատերազմում՝ Մայիսյան ևս մեկ հաղթություն պարգևելով մեր ժողովրդին:

Մայիսի 9-ի հաղթապսակ օրվա առիթով, հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, շնորհավորում ենք և Հայրապետական Մեր օրհնությունը հղում համայն մեր ժողովրդի զավակաց, Հայրենական Մեծ պատերազմի բոլոր մասնակիցներին և Արցախյան պատերազմի ազատամարտիկներին:

Հավերժ փառք մահին մահով հաղթանակած և կյանքը փառքով պսակած հերոսներին:

Թող ոչինչ և երբեք չխամրեցնի հայրենյաց պաշտպանի անմնացորդ Ձեր ծառայության բարձրանուն փառքը:

«Խաղաղութիւն և Սէր Տեառն մերոյ ընդ մեզ ամենեսեան. ամէն»:

Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԶՈՐԱՎԱՐ ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

«Յանուն Հօր և Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Բանք միայն դատարկ են,
այլ գործ պիտոյ է ընդ բանին»:

Սիրելի հավատավոր ժողովուրդ հայոց.

Հանուն Հայրենիքի և հավատի շատ մարտեր են մղել մեր նախնիք: Հաղթանուն այդ հերոսամարտերի շարքում մենք սրբորեն հիշատակում ենք 1918 թ. Մայիսյան դյուցազնամարտումը, որի քաջարի զինվորն իր բազկով, արյամբ ու ապրելու իր կամքով կերտեց մեր ժողովուրդը Սարդարապատում, Ապարանում և Վանաձորում ծնունդ տալով Հայոց առաջին Հանրապետությանը:

Անկախության այս թանկ օրը մեր կյանքում այսօր նշանավորվում է Զորավար Դրաստամատ Կանայանի աճյունի ամփոփումով Մայր Հայրենիքում: Տասնամյակների պարագրությունից հետո ինքնիշխան մեր ժողովուրդը երախտագետ իր սիրով ընդունում և արժանին է մատուցում իր որդուն, որ անխնկմիտ նվիրվեց Հայաստանի ազատագրության ու անկախության սրբազան գործին:

Ժողովուրդը չի սխալվում իր սիրո մեջ, քանզի շռայլ չէ իր գնահատականներում: Արդարև, Դրաստամատ Կանայանը անձնական ողջ կյանքը որպես ընծա մատուցելով մեր ժողովրդին՝ արժանացավ հայրենյաց պաշտպանի պատվին, հաղթապսակ մարտերով՝ անպարտելի լինելու համբավին: 82 տարիներ առաջ, երբ միայնակ, հերոսական ճիգով հայությունը դիմակայում էր մահ ու ավեր սփռող թուրք նվաճողներին, Ապարանի բարձունքներում փայլեց Դրաստամատ Կանայանի զորավարական տաղանդը, և փառաբանվեց նրա անունը, որ արդեն հայտնի էր «Դրո» ձնով: Մայիսը մեկ անգամ ևս վկա եղավ մահվան դեմ հանդիման կանգնած սխրանքին հայոց, որ Վարդանանց ոգով կարող գտնվեց օրհասը փրկության վերափոխել: Կանգնած Հայոց առաջին Հանրապետության ծննդյան ակունքներում, հմուտ, երկաթյա կամքով զորահրամանատարը Հանրապետության կարճատև գոյության ամեն օրը «արութեան գործերով» փառավորեց՝ պաշտպանելով Հայրենիքի սահմանները Բագրատաշենից մինչև Զանգեզուր, Սուրմալուից մինչև Արցախ:

Այսօր մեր ժողովուրդը՝ աշխարհական և հոգևորական դասերով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսեղեն Տաճարից խնկաբույր աղոթքով դեպի Ապարանի հաղթական բարձունքն է ճանապարհում իր զավակին: Երկարամյա հարկադիր բացակայությունից հայրենի փառն դարձավ ազատության և հայոց անկախության ջահակիրներից ևս մեկը՝ իր և իր սերնդակիցների սերը, հաղթելու կամքը, հայոց ցալիքի հանդեպ աներկբա հավատը փոխանցելու մեզ:

Արդարև, կյանքը Զորավարի վկայություն էր, որ «Բանք միայն դատարկ են, այլ գործ պիտոյ է ընդ բանին»: Վերադարձը նրա թող արթնացնի այս ճշմարտության արժևորումը հայորդյաց հոգիներում: Թող Դրաստամատ Կանայանի և իր զինակիցների անմար հիշատակը հայրենյաց ծառայության բոցավառ ոգով հաղթանակների նոր հավատ պարգևի հայրենաբնակ մեր ժողովրդին և նորոգի ազգային մեր միաբանությունը ի սփյուռս աշխարհի: Հայրենիքը միշտ կանչում է: Հայրենիքը հավերժական կանչ է: Հայրենիքի ազատության և բարօրության համար նրա մշտավառ սիրով կյանքը գործ դարձրած զավակունք շարունակ վերադառնում են:

Թող Բազումողորմն Աստված հայրենի ազատ հողում, Արագածի սեգ փեշերին, Սուրբ Լուսավորչի աղոթախոս անմար Կանթեղի ներքո հանգստություն պարգևի Զորավարի հոգնած ոսկորներին և մխիթարություն՝ հայրենակարոտ նրա հոգուն:

Օրհնություն և խաղաղություն Զորավար Դրաստամատ Կանայանի հայրենադարձ շիրիմին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: ամէն:

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 26 մայիսի 2000 թ.։**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերջին զանգի առիթով իր հայրապետական օրհնությունը և պատգամն է հղել Հայաստանի բոլոր շրջանավարտներին։

*Սիրելի շրջանավարտներ, սիրասուն զավակներ մեր.*

*Բերկրանքով ու խինդով եք լեցուն այսօր բոլորդ, գեղեցկապես՝ ձեր հույսերով ու լավատեսությամբ, ամբարած արդյունքները նվիրյալ այն ջանքերի ու սիրո, որ ներդրել են ձեր սիրելի ուսուցիչները, փոքր փարիներ ուսուցանելով ու կրթելով, դեպի հիշարժան այս օրը առաջնորդելով ձեզ։ Նրանց շնորհակալ գործը միշտապես ձեր ուղեկիցն է լինելու, ինչպես և հարազատ դպրոցի կարոտը, որ, վստահաբար, արդեն իսկ անթեղում եք երիտասարդական ավյունով խայտացող ձեր հոգիներում։*

*Մարդկային կյանքի առաջին կարոտներից է դպրոցի հանդեպ կարոտը, որը, թանկ մանկության ու պատանեկության հուշերով, ընտանիքի, հարազատ բակի ու ծննդավայրի ջերմության հետ անբաժան մասն է դառնում առ հայրենին մեր ունեցած մեծ սիրո։ Աստվածպարգև է Հայրենիքը, երկնաշնորհ։ Երջանիկ եք դուք, սիրելի շրջանավարտներ, որ հասակ եք առել անկախ Հայաստանում, անուցվել ազատության շնչով, հավատի և հայրենյաց ավանդների վերարժևորմամբ։ Պատմությունից ձեզ հայտնի է, թե որքան կարևորել են մեր նախնիք մեր երկրի ազատությունն ու անկախությունը, որքան արյուն հեղել, ջանք թափել՝ կորցնելուց հետո այն վերագտնելու համար։ Այո, հոգսաշատ են այսօր մեր Հայրենիքն ու ժողովուրդը, սակայն ազատությունն է այն արժեքը, որ պայման է դառնում արարումների, բարգավաճման ու բարօրության։ Կեղծիքից, ստրկամտությունից, անգիտությունից ազատ ձեր հոգու սլացքներով է կերտվելու նվիրական մեր Հայրենիքի այսօրն ու գալիքը։ Դուք թանկարժեք, ոսկեղեն հունձքն եք մեր, որ խտացրած ազատության մեր արեգակի հորդավառ լույսը, հայության նվիրական իղձերի կենսավորումով պտղավորելու եք ազգային մեր կյանքը։ Վստահ քայլեք ձեր ճանապարհով, կրեք ձեր կարևորության գիտակցությունը, շիտակ, աներկյուղ ու անվախ ստանձնեք ձեր բաժին պատասխանատվությունը։ Ձեր ջանադիր, անխոնջ, ստեղծարար աշխատանքով, ձեր հոգու ջերմությամբ ու ձեռաց գործերով իմաստավորեք ու գեղեցկացրեք ձեր ու ձեր հարազատների, մեր ժողովրդի կյանքը, մեր մայր հողն ու երկիրը։ Հավատարմությամբ ծառայեք մեր հայրերի Աստծուն, զորացեք հավատքով, հինավուրց մեր պատմությամբ ու մշակույթով, աղոթախոս անցեք կյանքի ձեր ուղին։*

*Հայրական սիրով շնորհավորում և ողջունում ենք Ձեզ շրջանավարտ դառնալու տոնական առիթով, բերում ամենքիդ Հայրապետական Մեր օրհնությունը և ամենաբարի մաղթանքները: Թող Բարձրյալն Աստված շնորհազարդի Ձեզ և առաջնորդի նորափթիթ կյանքի Ձեր ճանապարհը՝ Իր հանապազ օրհնությամբ Մայր Հայրենիքի խաղաղ երկնքի ներքո պարգևելով Ձեզ բարիք, երջանկություն, ազնիվ ու բարի նպատակների իրականացում և ամենայն հաջողություններ:*

*«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ Ձեզ ամենեսեան. ամէն»:*

*Օրհնությամբ՝*

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՊԱՏՄԱԿԱՆ ԴՎԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԿՐԿԻՆ ՂՈՂԱՆՋԵՑԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՆԳԵՐԸ

## ՕԾՎԵՑ ԴՎԻՆԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 3 մայիսի 2000 թ.։**

Այսօր, առավոտյան, Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգևոր դասի ուղեկցությամբ մեկնեց Արարատի մարզ՝ օծելու Ներքին Դվինի Ս. Հարություն նորակառույց եկեղեցին։

Պատմական Դվին կաթողիկոսանիստ մայրաքաղաքում Հայոց Հայրապետին դիմավորեցին աղ ու հացով, եկեղեցու զանգերի ղողանջներով ու «Հրաշափառի» երգեցողությամբ։ Այստեղ էին Արարատի մարզպետ Հովիկ Աբրահամյանը, եկեղեցու բարերար, նախկին դվինցի Սամվել Տիգրանյանը, մարզային իշխանության ներկայացուցիչներ, բազմաթիվ դվինցիներ։

Ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի օծվել էին եկեղեցու սյուները, մկրտության ավազանը։ Հայոց Կաթողիկոսը սրբալույս Մյուռոնով օծեց եկեղեցու Ս. Սեղանն ու խորանը։

*«Հավատում ենք, որ ազգի, հայրենիքի, մեր ժողովրդի հարատևությունը, նրա բարօր կյանքը, լուսավոր գալիքը պայմանավորված են մեր անսասան հավատքով՝ հանդեպ մեր հայրերի սրբազան ժառանգությունները, հանդեպ Քրիստոսի Ս. Ավետարանը, Նրա լույս վարդապետությունը»,*- ասաց Նորին Սրբությունը՝ հորդորելով հաստատ լինել այդ ճշմարտությանը, որը և ժողովրդի գոյության ու հարատևության հիմքն է։

Ապա նորակառույց Ս. Հարություն եկեղեցում մատուցվեց առաջին Ս. Պատարագը։ Պատարագիչն էր Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը։ Կատարվեց նաև հոգեհանգստյան արարողություն՝ հին և նոր խանգուցյալների և բարերարի ննջեցյալ եղբ հիշատակին։

Հավարտ Ս. Պատարագի եկեղեցու բակում տեղի ունեցավ ժողովրդական տոնախմբություն։

---

# ՕԾՎԵՑ ՆՈՐՔԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1 մայիսի 2000 թ.:**

Կիրակի օրը, ապրիլի 30-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, փեղի ունեցավ Երևանի Նորքի զանգվածի Ս. Սարգիս եկեղեցու օծումը:

*«Մեզ համար մխիթարություն է, որ եկեղեցու օծումը կատարվում է հայրենական մեր կյանքի այս դժվարին օրերին, երբ փոքր-ինչ վհատություն ունենք մեր սրտերում, երբ փոքր-ինչ համակված ենք անորոշությամբ: Հավատում ենք, որ դեպի երկինք եկեղեցիների նոր խոյանքը պիտի գա փարատելու մեր հոգու մեգը, պիտի վերացնի անորոշության քողը մեր հոգու հայացքից, ու պիտի կարողանանք տեսնել հայրենիքը շենացնելու այն ուղին, որ ազգային միասնականությունն է, ազգային սերը միմյանց նկատմամբ»*,- շնորհավորելով ներկաներին եկեղեցու օծման առիթով, ասաց Վեհափառ Հայրապետը՝ պատգամելով նրանց մշտական աղոթքներով, ուխտով, խնկարկությամբ ու մոմավառությամբ կենդանի պահել մարդկանց հոգիների փրկությանը կոչված Աստծո տունը:

Ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանի նախագծով ուղիղ մեկ տարի առաջ սկսված հոյակերտ այս եկեղեցու շինությունը ավարտվեց ճիշտ ժամանակին: Ու թեև եկեղեցու օծմանն այլևս ներկա չէր եկեղեցու բարերարը՝ հանգուցյալ Սարգիս Գաբրիելյանը, սակայն նրա բացակայությանը լրացնում էր բարերարի որդին՝ Մարկ Գաբրիելյանը՝ իր փիկնոջ ու երեխաների հետ: Արարողությանը ներկա էր նաև Տ. Գառնիկ քահանան, որ նույնպես իր կարևոր ավանդն ունի եկեղեցու կառուցման գործում:

Նորին Սրբությունն իր գնահատանքի, երախտիքի ու շնորհակալության խոսքն ուղղեց Սարգիս Գաբրիելյանի ընտանիքին, Տեր Հորն ու բոլոր նրանց, ում շնորհիվ կառուցվել է փառահեղ այս եկեղեցին:

Ապա նորաօծ Սեղանի առաջ մատուցվեց Ս. Պատարագ:

Հավարտ Պատարագի Վեհափառ Հայրապետը, ի հիշատակ հանգուցյալ բարերարի, կատարեց հոգեհանգստյան արարողություն:

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՐԱՏԻՍԼԱՎԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1 մայիսի 2000 թ.:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բրատիսլավայի փոխքաղաքապետ Պավոլ Մինարիկին ու նրա գլխավորած Բրատիսլավայի իրավաբանական համալսարանի պատվիրակությանը՝ ՀՀ գլխավոր դատախազի առաջին տեղակալ Աղվան Հովսեփյանի ընկերակցությամբ:

Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնելով երկու երկրների միջև առկա բարեկամական կապերի առնչությամբ, կարևորեց նաև իրավագետների փոխհամագործակցությունը, ասպարեզ, որի շնորհիվ հստակեցվում ու բանաձևում է գտնում ցանկացած փոխհարաբերություն:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻՆ ՀԱՆՁՆԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1 մայիսի 2000 թ.:**

Ապրիլի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների սրահում, ձեռամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի, «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշան հանձնվեց մեծանուն բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանին:

Բանաստեղծուհուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության շքանշանով պարգևատրելու կոնդակը դեռևս մեկ տարի առաջ հրապարակել էր երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսը՝ Կապուտիկյանի ծննդյան 80-ամյակի առիթով՝ ի գնահատություն նրա գրական ու հասարակական բազմանվեր ծառայության, հայ մշակույթին ու դպրությանը բերած մեծ նպաստի:

Իր օրհնությունը փոխելով Ս. Կապուտիկյանին՝ Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց նրա հայրենասեր ու հայրենաշունչ ոգին, արի պահվածքը: Բանաստեղծուհու արվեստը բարձր գնահատեց նաև Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, մշակույթի գործիչներ: Վեհափառ Հայրապետի հրավերով ներկա էր նաև Արամ Ղարաբեկյանի գլխավորած նվագախումբը, որն իր անկրկնելի կատարումներով շնորհավորեց բանաստեղծուհուն: Կապուտիկյանի բանաստեղծությունների արտասանությամբ շնորհավորանքներին միացան նաև հանրապետության ճանաչված ասմունքողները:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 13 մայիսի 2000 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հղեց իր շնորհավորական նամակը Հայաստանի Հանրապետության նորանշանակ վարչապետ Անդրանիկ Մարգարյանին, ուր ասված է.

*«Մեծարգո պրն Վարչապետ.*

*Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհրդի շնորհավորում ենք Ձեզ Հայաստանի Հանրապետության վարչապետ նշանակվելու առիթով:*

*Աղոթքով առ Բարձրյալն Աստված մաղթում ենք Ձեզ կորով ու եռանդ, անշրջելի հաջողություններ բարձր ու պատասխանատու Ձեր պաշտոնում՝ ի շինություն մեր Հայրենիքի և ի բարօրություն մեր ժողովրդի»:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԱՅՑԵԼԵՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 14 մայիսի 2000 թ.:**

Այսօր Հայաստանի Հանրապետության նորանշանակ վարչապետ Անդրանիկ Մարգարյանն այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը: Վարչապետին ուղեկցում էր Կրոնի գործերի խորհրդի նախագահի պաշտոնակատար պրն Լևոն Մկրտչյանը: Վարչապետն իր ջերմ շնորհակալությունը հայտնեց Վեհափառին իր օրհնության և շնորհավորանքների համար՝ ասելով. «Մենք ապավինում ենք մեր սրբազան հայրերի հավատին՝ ստանալու ուժ և օրհնություն մեր առաքելության և ծառայության մեջ»:

Վեհափառ Հայրապետը մեկ անգամ ևս շնորհավորեց պրն Անդրանիկ Մարգարյանին վարչապետ նշանակվելու կապակցությամբ՝ նրան մաղթելով ուժ և կորով, որպեսզի իր առաքելությունը, ծառայությունը մեր ժողովրդի, լինի արգասավոր՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, կրթական և հայրենական կյանքի բոլոր ոլորտներում: «Մենք հավատում ենք, որ ծանր այս իրավիճակից

կարող ենք դուրս գալ միայն ազգովի միաբան, քաղաքական ու հոգևոր իշխանությունների սերտ համագործակցությամբ»:

Այնուհետև Վեհափառն անդրադարձավ Եկեղեցու և պետության միջև կնքված «Մտադրությունների հուշագրին» և այնտեղ առկա մշակութային, կրթական և այլ կարևոր հարցերին: Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը առանձնապես կարևորեց մտավորականության վերապահված դերը ազգային կյանքում, մեր հայրենիքի ու ժողովրդի համար ծանր ու բարդ այս ժամանակահատվածում:

Վարչապետն իր կողմից հավաստիացրեց, որ ըստ ամենայնի պիտի նպաստի Եկեղեցի-պետություն համագործակցությանը:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ՄԵԶ ՀԱՄԱՐ ՏԱՃԱՐԻ ԸՆԿԱԼՈՒՄ ՈՒՆԻ»

### ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՆՎԻՐԵՑ 12 - ՐԴ ԴԱՐԻ ԱՎԵՏԱՐԱՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 22 մայիսի 2000 թ.:**

Մայիսի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր անդրանիկ այցը կատարեց Մատենադարան:

«Երբ մուտք ես գործում Մատենադարան, ակամայից ձեռքդ շարժվում է դեպի ճակատդ, որպեսզի խաչակնքես, քանզի Մատենադարանը մեզ համար տաճարի և սրբության ընկալում ունի»: Հայոց Հայրապետները միշտ էլ սերտ կապեր են պահպանել Մատենադարանի հետ և զորակցել գիտական այս հաստատությանը հարստացնելով ու լրացնելով այն նոր ձեռագիր մատյաններով, նպաստելով դրանց պահպանման ու հրատարակման աշխատանքներին:

Այս անգամ էլ, իբրև անդրանիկ այցի հիշատակ, Նորին Սրբությունը հայոց ձեռագրերի գանձատանը հանձնեց 12-րդ դարի ձեռագիր մի Ավետարան՝ հավաստելով, որ կարողությունների և հնարավորությունների սահմաններում մշտապես սատարելու է Մատենադարանին:

Թանկարժեք նվերի համար շնորհակալություն հայտնելով՝ պրն Արևշատյանն իր հերթին Վեհափառ Հայրապետին նվիրեց «Վազգեն Վեհափառի Ավետարանը»՝ երջանկահիշատակ Հայրապետի կողմից Մատենադարանին նվիրած 10-րդ դարի հայոց հնագույն Ավետարաններից մեկի նմանատիպ հրատարակությունը, որը նվիրված է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին:

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱԳ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 31 մայիսի 2000 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ուկրաինայի ԱԳ փոխնախարար Դմիտրի Տկաչին՝ երկու երկրների դեսպաններ Ալեքսանդր Բոժկոյի և Հրաչ Սիլվանյանի ընկերակցությամբ:

Նորին Սրբությունը հյուրին ծանոթացրեց Հայ Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր, կրթական և բարեսիրական գործունեությանը, կարևորեց Եկեղեցու այն հիմնական առաքելությունը, Հայաստանի հետ տարբեր երկրների, այդ թվում նախկին խորհրդային հանրապետությունների ջերմ ու եղբայրական կապերը, մասնավորապես նշելով հայ-ուկրաինական պատմական բարեկամությունը:

# ՔԱՐՈԶԽՈՍՈՒԹՅՈՒՆ

## Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ԽԱՉԻ ԵՐԵՎՄԱՆ ՏՈՆԻՆ

«Ի յերկնից երեւեալ նշանն յաղթութեան այսօր հեթանոսաց
ծագեաց լոյսն ողորմութեան»
(Շարական)

«Երկնքից երևացած հաղթության նշանն այսօր հեթանոսների
համար եղավ ողորմության լույս»

Սիրելի՛ հավատացյալներ. այսօր Հայաստանյայց Եկեղեցին փոնախմբում է Սուրբ Խաչի Երևման հիշատակը: Այս առթիվ սրբազան շարականագիրը իմ բնաբանի խոսքերով՝ սուրբ խաչի երևումը երկնքի վրա փառաբանում է և ասում. «Այդ երևումը հեթանոսների համար ողորմության լույս եղավ»: Սուրբ Խաչի Երևման տոնը, բնականաբար, կապված է մի իրողության հետ, և այդ պատմությունը հետևյալն է.

351 թ. Երուսաղեմ քաղաքում, օրը ցերեկով Ձիթենյաց լեռից մինչև Սիոնի բարձունքը, այդ տարածության մեջ երկնակամարի վրա արևի լույսից ավելի պայծառ փայլատակվում է Քրիստոսի խաչափայտի նշանը, և օրը ցերեկով ամբողջ ժողովուրդը տեսնում էր այդ ու հիանում Աստծո կատարած հրաշագործությամբ և, զարմացած, ձեռքերը երկինք բարձրացնում ու խնդրում Աստվածային ողորմություն: Այն ժամանակ Երուսաղեմի եպիսկոպոս Կյուրեղը մի գեղեցիկ նամակ է գրում Կոնստանդին կայսեր, որը Կոնստանդիանոս Մեծ կայսեր որդին էր, և այնտեղ նկարագրում, թե ինչպե՛ս այդ խաչը՝ լուսավոր և պայծառ, շողյլ արևի ճառագայթներով փայլատակում է Երուսաղեմ քաղաքի վրա, և խորհուրդ է Կոնստանդին կայսեր, որ հավատարիմ մնա իր հոր հավատքի վրա և իր ունեցած հավատքը զորացնի Աստծո վրա դնելով

այն և երբեք չմոռանվի Հուլիանոս Ուրացողին, որն ուրացավ Քրիստոսին: Երբ այս պատմությունը կարդում ենք, մենք հիշում ենք նաև հայ ժողովրդի կյանքի մեջ ինչպես վերստին երևացել է խաչը, լուսավոր կերպով Վաղարշապատ քաղաքի վրա: Մեր պատմիչներից Կորյունը նկարագրում է, թե ինչպես երբ Մեսրոպ Մաշտոցն իր աչքերը փակեց, Վաղարշապատ քաղաքի վրա փայլել է Քրիստոսի խաչափայտի նշանը, և ինչքան ժամանակ որ նրա մարմինը մնացել է քաղաքում, այնքան ժամանակ այդ լուսավոր խաչը երկնքի վրա փայլել է: Երբ հողարկավորներն այստեղից ոտքով շալակած իրենց ուսերի վրա դեպի Օշական են տարել, խաչի նշանը երկնքի վրա ետևել է նրա դագաղին, մինչև նրան Օշականի Ամատունյաց հողի մեջ դնելը:

Խաչը, սիրելի հավատացյալներ, հին աշխարհի մեջ սարսափի գործիք էր, և՛ Պարսկաստանում, և՛ Հռոմում մահապարտները մահվան էին դատապարտվում խաչելությամբ, և նաև այդ էր պատճառը, որ Հռոմեական Կայսրության իշխանության օրերին հրեաները երբ մեղադրեցին, դատապարտեցին Հիսուսին, նրանց օրենքով խաչ բարձրացվեց մեր Տերը, իր անմեղ արյունը թափեց Գողգոթայի վրա, խաչի վրա, որպեսզի իր թափած անմեղ արյամբ փրկի, քավություն բերի ամբողջ աշխարհի մարդկությանը: Հին Կտակարանում խաչը խորհրդանշել է Նոյյան Տապանը, Մովսեսի գավազանը, որ Կարմիր ծովը ճեղքեց և բացեց իր ժողովրդին առաջնորդելու համար Ավետյաց երկիր, նաև անապատի մեջ երբ հրեաները մեղանչեցին Աստծո օրենքի դեմ, այն ժամանակ օձեր ելան նրանց խայթելու և սպանելու համար, և Մովսեսը պղնձե մի օձ գավազանի վրա դրեց, և այդպիսով նրանք, որոնք նայեցին այդ գավազանին՝ օձերի խայթոցից փրկվեցին, բուժվեցին: Նրանց կյանքը շարունակվեց, բայց նրանց կյանքը շարունակվեց՝ սահման ունենալով: Նրանք, ովքեր Քրիստոսի խաչին են նայում, նրանք մահը չեն ճանաչում, նրանց մարմինները թեև մահանում են, բայց հոգին գնում և միանում է Աստվածության էությանը, և երբեք նրանք չեն մահանում, հավիտենապես ապրում են երկնքում՝ Աստծո ներկայությունը վայելելով:

Սիրելի հավատացյալներ, մեր ժողովուրդը հաճախ իր կյանքը նկարագրելիս մարդուն նմանեցնում է խաչակրի, ամեն մարդ մի խաչ ունի իր ուսին և այդ խաչն է շալակած գնում՝ կյանքի մեջ բարձրանալու համար մինչև իր Գողգոթան: Սա իսկապես ճշմարտություն է. մենք, որպես գիտակից մարդիկ, ունենք մեր պարտականությունները, գիտենալով մեր դերը կյանքի մեջ՝ ունենանք մեր պարտականությունը մեր ընտանիքի, ընկերոջ, համայնքի, ազգի և ժողովրդի հանդեպ: Այդ գիտակցությունը մեր ուսերի վրա դրված պարտականությունների մի խաչի նման է, և ով որ ավելի գիտակից է, նրա խաչն ավելի ծանր է, իսկ ով անգիտակից է, նրա պարտականությունները թեթև են, և խաչը՝ թեթև: Ես երանի եմ տալիս նրանց, որոնք գիտակցություն ունեն և այդ գիտակցությամբ իրենց խաչերը շալակում են և տանում՝ զոհողության հանձն առնելով, մինչև իսկ իրենց կյանքի գնով բարձրանում են դեպի Գողգոթա և այնտեղ իրենց արյունն են հեղում վասն հայրենիքի, վասն Եկեղեցվո և

վասն ազգի: Եթե մենք կարծում ենք, թե խաչը երկու փայտի կտորներից է բաղկացած, սխալվում ենք: Պետք է խորհրդածենք, թե ինչ իմաստ է պարունակում այդ խաչը: Աստված իր սիրույն որպես գրավական՝ ուղարկեց իր Որդուն աշխարհ, Աստված սիրեց մարդուն և այդ պատճառով ուղարկեց իր Որդուն մարդկության փրկության համար: Աստծո խոնարհությունն է նշանակում այն մասը խաչի, որ ուղղահայաց, երկնքից երկիր է իջնում, իսկ մարդկանց նկրտումները, ձգտումներն Աստծուն ճանաչելու միայն հորիզոնական մի գիծ կարող են կազմել բոլոր իրենց ստեղծած փիլիսոփայությամբ և գիտությամբ: Աստված, սակայն, խոնարհվելով, հորիզոնական այդ մարդկային չափանիշի գիծը երկնայինով խառնեց և կազմեց երկնայինի և երկրայինի հանդիպման կետը՝ իբրև խաչ: Այդ խաչի վրա է Աստվածայինի ու մարդկայինի հանդիպման վայրը, որ Գողգոթայի վրա մեր Տերը խաչվեց ու իր անմեղ արյամբ փրկեց համայն մարդկությանը՝ հին ու նոր աշխարհի: Ինչ լավ է, որ այսօր եկեղեցի եք եկել: Միասին աղոթում ենք և այսօր մեր ներքին աշխարհում, մեր հոգևոր աշխարհում, մեր եկեղեցու գմբեթի վրա, մեր հոգիների մեջ Աստվածային խաչն է երևում, ինչպես այն երևաց 351 թ. Երուսաղեմ քաղաքի վրա, ինչպես այն երևաց Վաղարշապատի վրա Ս. Մեսրոպ Մաշտոցի թաղման օրերին: Այդ խաչը փրկության նշան է, այդ խաչը հաղթանակի նշան է, և այդ խաչով պիտի չարին և սատանային կարողանանք հաղթահարել. Նրանք, որոնք ձեզ ասում են՝ խաչ մի հանեք, նրանք, որոնք խաչի հակառակ են, այն աղանդավորները, որոնք մուտք են գործում մեր ժողովրդի ծոցի մեջ և ուսուցում են խաչ չհանել, խաչ չպաշտել, նրանք սխալվում են. խաչը մեր պահապանն է, սիրելիներ, խաչը սատանայի դեմ խրված լավագույն միջոցն է՝ սատանային լռեցնելու ու մեզ փրկելու ոսոխի բոլոր տեսակի սադրանքներից: Այդ պատճառով էլ միշտ խաչակնքեցեք, միշտ խաչն ունեցեք ձեզ ապավեն, որովհետև մեր փրկության լաստը, մեր փրկության միջոցը Հիսուս Քրիստոսի խաչն է՝ Գողգոթայի վրայի այդ խաչափայտն է, որ այսօր մեզ համար պաշտպանության, նվիրումի, զոհողության և հաղթանակի նշան է: Թող Քրիստոսի փրկարար խաչը տեր ու պահապան լինի ձեզ և մեզ այժմ և հավիտյանս. ամեն:

# Տ. ՄԱԿԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

**(28 մայիս 2000 թ.)**

*«Ես եմ դուռն. ընդ իս եթէ ոք մտանիցէ, կեցցէ»:*
*(Հովհ. Ժ 9)*

*«Ես եմ դուռը. եթե որևէ մեկն Իմ միջով մտնի, կփրկվի»:*

Արդեն քառասուն օր է, ինչ մեր Մայր Եկեղեցու հետ ազգովին փոնախմբում ենք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը: Հարության շրջանի այս վերջին կիրակիին մեկ անգամ ևս խորհենք, թե ո՞րն է այն ճանապարհը, դուռը, արահետը, որով պարտավոր է անցնել Հայ Առաքելական Եկեղեցու զավակը: Այդ ճանապարհը նրանից պահանջում է ողջ գիտակցության, էության և կյանքի նվիրում: Դա այն իրական, մեր Տիրոջ բնորոշմամբ՝ ճշմարիտ ճանապարհն է, որը դեպի կյանք է տանում: «Ով իմ միջով անցնի, կփրկվի»: Խորախորհուրդ մի արտահայտություն: Ս. Ավետարանում մենք հաճախ ենք հանդիպում այնպիսի խոսքերի, երբ մեր Տերն Իրեն որպես կյանքի միակ աղբյուր է ներկայացնում: Եվ դա իրոք այդպես է: Հիշենք Հովհաննեսի Ավետարանի առաջին տողերը. «Ամենայն ինչ նովաւ եղեւ» («Ամեն ինչ Նրանով եղավ»), ամեն գոյություն Հիսուսի միջոցով եղավ, ողջ տիեզերքը Հիսուսով եղավ, և առանց Նրա այս կյանքում ոչինչ չէր կարող լինել: Եվ այսպես է, որ ամեն ոք, ով անցնում է Հիսուսով, կփրկվի, որովհետև Նա է կյանքի աղբյուրը: Դրա հաստատումն են նաև Ավետարանի այն հիշատակումները, որտեղ մեր Տերը մահացածներին կյանք էր պարգևում, կենդանություն տալիս:

Երկրորդ կարևոր հանգամանքը որդիության հանգամանքն է: Յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքը, լինելությունը պայմանավորվում է Նրա որդիությամբ: Գիտենք, որ, ի տարբերություն մյուս կրոնների, քրիստոնեական վարդապետության մեջ առկա է Աստծո և մարդու հարաբերության ընտանեկան գաղափարը: Դա հենց այն է, որ Սուրբ Պատարագի ընթացքում պատարագիչ հոգևորականը կարդում է. «Դու նրանց Տեր կոչվեցիր, իսկ մեզ բարեհաճեցիր Հայր լինել, և մենք Քո որդիները դարձանք» անչափ կարևոր աղոթքը: Եվ որովհետև մեր Տեր Հիսուս Քրիստոսը կատարյալ որդի եղավ, մեր կենդանությունը պիտի պայմանավորվի Նրա ճանապարհով անցնելու պարտավորությամբ: Սրանից ենթադրվում է երրորդ կարևոր հանգամանքը՝ հավատարմությունը: Մեր Տեր Հիսուս Քրիստոսն Իր առաքելության երեք տարիներին կատարելապես հավատարիմ գտնվեց Իր կոչումին, ինչով և կարողացավ

երկրի վրա Իր կյանքի ավարտին հաղթականորեն ասել. «Ես հաղթեցի աշխարհին»: Եվ մենք, որպես քրիստոնյաներ, որպես Աստծո որդիներ, եթե գիտակցում ենք, որ մեր կյանքի դուռը Հիսուս Քրիստոս է, պարտավոր ենք մտածել և խորհել հավատարիմ լինելու մեր որդիական կոչումին, հավատարիմ գտնվելու մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն:

Սիրելի հավատացյալներ.

Ահավասիկ սրանք են մեր Տիրոջ այս արտահայտության խորհուրդները: Եվ այսօր, մայիսի 28-ին, երբ ազգովին հիշատակում ենք հայոց առաջին հանրապետության հիշատակի ուրախալի տոնը, եկեք մի պահ մտորենք, թե ո՞րն է մեր լինելության իրական ճանապարհը, ի՞նչ իմաստ ունեն տոները, ի՞նչ արժեն հիշատակությունները, եթե պատմական մեկ անցքի լոկ հիշատակումը պիտի լինեն և գան ու անցնեն, ի՞նչ իմաստ ունի մայիսի 28-ի այս հաղթական ավետիսը:

Դարձյալ հիշենք՝ «Ով Իմ միջով անցնի, կյանք պիտի ունենա»: Մենք պարտավոր ենք ամեն տարի վերստին նորոգել մեր ուխտը՝ ասելով. «Ով Տեր, Քեզանից հայցում ենք, որ ամուր, անսասան, հաղթական, խաղաղ պահես մեր հայրենիքը, գիտակցում ենք, որ դեպի կյանք, դեպի գոյություն կգնանք միայն Քո ճանապարհն անցնելով, որդիներն ենք Քրիստոսից հիմնած Եկեղեցու և միշտ հավատարիմ պիտի լինենք նրան: Միմիայն այսպես ճշմարիտ փերը, արժանորը և ամենայն կատարելությամբ փիրակալը պիտի լինենք մեր հայրենիքի՝ որպես նրա արժանի զավակներ»:

Սիրելի հավատացյալներ.

Երբ մեր հերոսների աճյունները բերում ենք Մայր Հայրենիքի հողում վերաթաղելու, ևս մեկ անգամ նրանց օրհնությունը, ուժը, կարողությունը ստանալու, դրանով մեր ուխտն ենք նորոգում մեր Հայրենիքի ու Եկեղեցու հետ, որին պիտի մշտապես ամուր կառչենք:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեանս. ամէն»:

*ՎԱՐԴԱՆ ԱՐ. ՔՀՆՅ ՏԻՐԼԿԷՐԵԱՆ*

# ԵՐԿՐԷՆ ԴԷՊԻ ԵՐԿԻՆՔ. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՈՐԴԻՆԵՐԸ

Ամէն մարդ, որ աշխարհ կուգայ ու կը տեսնէ բնութեան արեւաշող գեղեցկութիւնները, կ'ըսէ. Ապրիլ կ'ուզեմ: Ոչ ոք կ'ուզէ մեռնիլ: Թէեւ կը վախնայ մահէն, բայց չի կրնար խոյս տալ մահէն: Ու կը սիրէ ապրիլ կեանքը ոչ թէ անցողական ժամանակով, այլ յաւերժալոյս տեւողութեամբ, առանց որ տարաբախտ օր մը՝ սպառին իր կենաց օրերը մահաշունչ հանգրուանի մը վրայ:

Անոնք, որ Աստուծոյ հաւատքով ջահաւորուած՝ սրբացած կեանք կ'ապրին, անոնց մէջ արմատացած է անմահութեան ձգտումը, ու կը ներզգան յաւերժութեան գաղափարին կենսուրախ տրոփումները իրենց սրտին մէջ:

Կրնամ ըսել բառին ճշգրիտ իմաստով, որ որքան դժնետեսիլ պիտի ըլլար կերպարը այն ամբարիշտ մարդուն, որ կ'անգիտանայ իր մէջ այդ կենսական ու բնածին զգացումին առկայութիւնը:

Եղած են սնապաշտութեամբ սնած հանճարեղ իմացականութիւններ, որոնք իրենց մթաստուեր վախճանին չհասած, հարկադրուած են խոստովանիլ Տիեզերական հոգիին ու իմաստութեան գոյութիւնը:

Իրապէս, ո՞րքան խեղապակաս պէտք է ըլլայ անաստուած մը, որ հաւատայ, թէ մարմնին հետ հոգին ալ կը մեռնի ու կ'անհետանայ:

Յիսուսի հրաշալոյս յարութեան յաղթանակը մահուան վրայ նախապատգամն է մեր իսկ յարութեան:

Ան սկիզբն է ու առաջին յարուցեալը բոլոր ննջեցեալներու յարութեան:

Մահուան սոսկատեսիլ ուրուականը ալ անզօր է ու չի կրնար մարդկային կեանքին ընթացքին վրայ տարածել իր կպրաթոյր արատը:

Ինչպէս մահուան մէջ շարունակուեցաւ ու երբեք չընդհատուեցաւ Փրկչին կեանքը, մենք եւս, որպէս իր մարմնոյն անդամները, կը հաւատանք, որ երկրի հորիզոնէն անդին կեանքը պիտի շարունակէ իր ուղեւորութիւնը դէպի երանութեան աշխարհը:

Ահա թէ ինչու Առաջին Յարուցեալին փառատրեալ հրաշքին հաւատացողներս կ'ընդունինք, որ մահկանացուներուս համար ա՛լ չկայ մահ, չկայ գերեզման, չկայ վախճան, այլ կայ միայն նինջ ու ննջարան, աներեկոյ օր, անապականացու մարմին եւ յաւերժալոյս հայրենիք:

Հայրագորով Աստուծոյ հանդէպ մեր սէրը պէտք է ըլլայ անպարագրելի ու համապարփակ:

Ոչինչ տուած կ՚ըլլանք մեր Երկնաւոր Հօր, եթէ մեր ամբողջական սէրը չնուիրաբերենք իր տիեզերական փառքին:

Վերապահութիւններով ու վարանումներով կոտորակուած սէրը սէր չէ, այլ կեղծիք է, եւ Ամենազօր Աստուծոյ հանդէպ ցուցաբերուած այսպիսի սահմանաւոր ու հիւանդ սէր մը մահացու մեղանչում մըն է:

Մեր ներքին սիրազեղ համատրոփումներով, բոլոր բուռն ցանկութիւններով եւ մեր սիրոյ հրավառ զգացումներով կրնանք միանալ ու նոյնանալ Աստուածային Էութեան հետ:

Երբ մէկը կը սիրես անխառն զգացումներով, ով որ ալ ըլլայ այդ մէկը, մարդ կամ անասուն, ալ այդ սիրոյդ նշանակէտը կը դառնայ հոգիիդ ու իմացականութեանդ համագրաւիչ ազդակը:

Չես կրնար սրտիդ կէսը Աստուծոյ տալ եւ միւս կէսը՝ մեղքին բռնակալին:

Մահասարսուռ մեղք կը գործես, երբ շաբթուան բոլոր օրերը եւ բոլոր գիշերները, ստրկային ծնրադրութեամբ կը խոնարհիս Մամոնայի կուռքերուն առջեւ եւ Կիրակի օրերը ձեւապաշտօրէն քանի մը ողորմելի վայրկեաններ կը նուիրաբերես Պարգեւատու Աստուծոյ:

Այս պարագային, բոլոր բազմատարած աղօթքներդ, բոլոր վառած մոմերդ եւ բոլոր ջերմագին աղերսներդ թիզ մը երկինք չեն բարձրանար ու արձագանգ գտներ երկնային ոլորտներուն մէջ:

Արդարներու եւ բարեպաշտներու սրբակեաց վարքով պիտի ապրիս յարուցեալ կեանք մը, եթէ կ՚ուզես դուն ալ՝ վախճանած սուրբերուն նման փառատրուիլ այն աշխարհին մէջ, ուր կը թագաւորէ տիեզերքի ԱՐԱՐԻՉԸ:

Հարաւային Գալիֆորնիոյ մէջ ծնած քսանամեայ հայ ուսանողուհի մը, իր ալեզարդ մեծ մօրը ոսկրուտ ձեռքերը ափերուն մէջ առած՝ հետեւեալ զարմանալի հարցումը կ՚ընէ անոր.

- Գիտե՞ս, մեծ մայրիկ, լսեր եմ հայրենիքէն Լոս Անճելըս ներգաղթած ընկերուհիներէս, որ Երեւանի մէջ բժիշկ մը կայ, որ ծերերու կեանքին վերակենդանութիւն կուտայ: Կ՚ըսեն, թէ անհաւատալի բուժումներ կը կատարէ: Լաւ կ՚ըլլայ, որ դուն ալ երթաս անգամ մը Հայաստան ու տեսնես այդ բժիշկը: Վստահ եմ, երբ վերադառնաս՝ դուն քեզ աւելի վերանորոգուած ու երիտասարդ պիտի զգաս:

Ութսունամեայ մեծ մայրիկը հիասքանչ գրաւչութիւն մը ունէր: Մշտաժպիտ տրամադրութիւն մը, որ հրեշտակային օծում կուտար իր բարեձոյն կերպարին: Կենսուրախ աչքերը չէին հետեւած ժամանակի անիւին աւերումներուն: Իր խորահաւատ բարեպաշտութիւնը եւ աղօթանուէր վերացումները վաներ էին ալեւորութիւնը իր ճառագայթող դիմագծէն:

Լսենք մեծ մօրը պատասխանը՝ ուղղուած իր թոռանը.

- Անուշիկս, այս տարիքիս կուզես որ Հայաստան երթամ, որ բժիշկը վերակենդանութի՞ւն տայ կեանքիս: Բայց ես արդէն վերանորոգուած կեանք կ՚ապրիմ,

առաւելապէս՝ յարուցեալ կեանք մը, որ զիս երիտասարդ կը պահէ: Ծերմակ մազերս չեն ծերացներ զիս: Եթէ դուն ալ ինծի պէս յարութեան կեանք ապրիս, քեզմէ հեռու կը պահես ծերութիւնը:

Օրչենք պահ մը պատկերը եւ մօտենանք սա՝ ատելավառ բռնկումներէ խանձած հոգիներուն: Ի՞նչ ըսել կ'ուզեն մեզի այդ անուղղայ ամբարիշտները իրենց օդակարկառ բռունցքներով, իրենց խելացնոր բացականչութիւններով, յեղափոխաշունչ գաղափարախօսութիւններով, որոնք կ'ուզեն աշխարհի կարգ ու սարքը շրջել, ճշմարտութիւնը խոշտանգել, Քրիստոնէութեան երկհազարամեայ քաղաքակրթութեան հիմերը սարսել...:

Նոյնպէս նայեցէք սա երիտասարդներուն, որ Սուրբ Գիրքը իրենց ձեռքին մէջ բռնած եկեղեցի կ'երթան աղօթելու: Անոնց հաւատքին բոցը ո՛չ կը շիջի, եւ ո՛չ կը նուազի: Ի՞նչ բանն է, որ շողարձակում կուտայ անոնց կենսուրախ կեանքի արտայայտութիւններուն:

Գաղտնիքը անոնց զերզգայուն վերացումներուն տարբեր տեղ մըն է, որ տեւապէս զիրենք Աստուծոյ լոյսին մէջ կը պահէ: Անոնք իրենց հաւատքին ներշնչումը կ'առնեն Յարուցեալ Փրկչին սիրոյ յաւերժալոյս պատգամներէն:

Անոնց յոյսերուն, իղձերուն եւ իտէալներուն անսասան յենարանը Տիեզերքի Արարիչն է, որուն կ'ապաւինեն, երբ փորձութիւններու փրփրադէզ «ալիքները կը սպառնան վտանգել իրենց Քրիստոսանուէր կեանքին ապահովութիւնը: Որքան ալ տարիներու խճողումէն ծանրանան ծերութեան տկարութիւնները, անոնք հոգեւորապէս կը մնան մշտակենդան ու անպարտելի:

Այսպէս է նոր մարդը, բարեպաշտ մարդը, յարուցեալ մարդը, որ իր վերջալոյսի շողերուն մէջ անգամ մահուան ահազդեցիկ ազդարարութիւնները կը դիմագրաւէ հերոսավայել մաքառումով:

Նոր ու յարուցեալ սիրտ մը, որ առլցուն է սիրոյ եւ հաւատքի զեղումով, մշտնջենապէս կը բաբախէ կենսուրախ:

Մարդկային բոլոր բարոյական յատկանիշներէն կողոպտուած անաստուածութեան ախոյեանները կ'ապրին խաբուած կեանք մը, խաբուած ոչ թէ ուրիշներէն, այլ իրենք իրենցմէ: Եւ կը գոյատեւեն երկրի վրայ որպէս կենդանի մեռեալներ: Անուն մը ունին միայն, որ ողջ են ու կը շնչեն:

Պատկերամարտութեան ժամանակ, Բիւզանդիոնի Լեւոն կայսրը գաղտնի հրաման արձակեց, որ բանտին մէջ գլխատեն Բերիլոս եպիսկոպոսը, որ ձերբակալուած էր ի նպաստ ուղղափառութեան իր մղած կատաղի պայքարին համար:

Բերիլոս կայսեր հին բարեկամն էր եւ իր նուիրապետական աստիճաններուն բարձրացումը եղած էր կայսեր հրամանով:

Երբ դահիճները մահապատիժը գործադրելու եկան, եպիսկոպոսը ծունկի եկաւ եւ գրեց հետեւեալ երկտողը՝ խնդրելով դահճապետէն, որ զայն անպայման կայսեր յանձնէ:

«Վեհափառ Տէր. միշտ ալ ուզած ես պատուել քու հին բարեկամդ:

Սարկաւագութենէ բարձրացուցիր զիս աբեղայութեան, աբեղայութենէ՝ վարդապետութեան, վարդապետութենէ՝ եպիսկոպոսութեան, եւ հիմա մեծագոյն շնորհը կ'ընես՝ պատուելով զիս մարտիրոսութեան սրբազնագոյն տիտղոսով: Շնորհակալ եմ»:

Կայսրը, կարդալէ ետք այս սրտառուչ տողերը, սաստիկ յուզումէն ցնցուեցաւ:

Եւ անմիջապէս հրամայեց, որ մահապատիժը չգործադրուի:

Բայց Սուրբը գլխատուած էր արդէն:

# ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ



ՄԱՐԻ ՄԱՆԹՈՒՐՋՅԱՆ

## «ԱՆՁԻՆՔ»-ՆԵՐԸ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ հոգևոր քնարերգությունը սկզբնավորվել է 5-րդ դարում՝ հայ դպրության և գրի հիմնադիրներ Ս. Սահակի և Ս. Մաշտոցի հեղինակությամբ: Այն անցել է զարգացման հետաքրքիր ուղի և շարունակվել մինչև 15-րդ դար: Հազար տարվա ընթացքում հորինվել և կանոնականացվել են շուրջ 2000 հոգևոր երգեր, որոնք միաժամանակ հանդիսանում են մեր գրավոր դասական բանաստեղծությունը: 5-15-րդ դարերում դրանք հղկվել, զարգացել ու հարստացել են և, պահպանելով մեր լեզվի դասական ավանդները, բյուրեղային մաքրությամբ հասել մեզ:

Այստեղ ցանկանում ենք բանասիրական, նաև ծիսական կարևորություն ունեցող մի քանի հարցեր ներկայացնել, որոնք ավելի ճիշտ են բնորոշում մեր հոգևոր քնարերգության առանձնահատկությունները, նրա գործածության կարգը, այդ թվում նաև՝ «Անձինք»-ների տեղը մեր Շարակնոցում և տոնակարգում:

Հինգերորդ դարի մեր հոգևոր քնարերգության մասին արժեքավոր վկայություններ են պահպանվել Կորյունի, Եղիշեի և Ղազար Փարպեցու երկերում:

«Անդ էր այնուհետեւ չարբենալ գինով, այլ առաւելով հոգւով և պատրաստել զսիրտս երգովք հոգեւորօք ի փառս եւ ի գովութիւն Աստուծոյ...» (Կորյուն, ԻԲ):

Հայ Եկեղեցին 5-րդ դարում և մանավանդ դարավերջին ունեցավ իր ինքնուրույն և սեփական հոգևոր քնարերգությունը՝ «Գեղեցկապէս յարմարեալ ի խորհուրդ աւուրն և տօնին»:

Այս երգերի հեղինակները նույն ինքն Ս. Սահակը, Ս. Մեսրոպը և նրանց ընտրյալ աշակերտներն էին ու նրանց մեջ հատկապես մեծ քերթողահայրը՝ Մովսես Խորենացին և Հովհան Մանդակունին:

Հայ հոգևոր երգասացության մեղեդային կառույցի խարիսխը համարվում է այն տասը եղանակների համակարգը, որի վրա հետագա դարերում բարձրացել է հայ

հոգևոր երգը: Այդ տասը եղանակների հորինումը ևս վերագրվում է Ս. Սահակին և Ս. Մեսրոպին: Ահա մատենագրական հավաստումն այդ մասին.

«Նախ՝ Սուրբն Իսահակ և Սուրբն Մեսրոպ ասացին զութն եղանակաւոր ձայնս շարականաց և երկու ձայն ստեղիս»:

Մեր մատենագրության ոսկեդարից հետո մի նոր վերելք է յոթերորդ դարը: Այս դարում են ստեղծագործել Կոմիտաս Աղցեցին, Սահակ Ձորափորեցին, Ստեփանոս Սյունեցին և Հովհան Օձնեցին:

Յոթերորդ դարը հայ մշակույթի պատմության մեջ նշանավորվում է ճարտարապետության բուռն վերելքով: Հայաստանում վեր են խոյանում բազմաթիվ կոթողներ, որոնց մեջ առանձնապես կարևոր են Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Զվարթնոց և Մաստարայի տաճարները:

Ճարտարապետության ծաղկմանը զուգահեռ, նոր վերելք է ապրում նաև հոգևոր քնարերգությունը՝ հայ միջնադարյան երգասացությունը, որի նշանավոր ներկայացուցիչներից է Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոսը:

Կոմիտաս Աղցեցու կյանքի և գործունեության մասին տեղեկություններ է հաղորդում նույն դարի պատմիչ Սեբեոսը: 615 թվականին բարձրանալով Հայրապետական Աթոռին՝ Կոմիտասը ձեռնամուխ է լինում Հայաստան աշխարհի և Հայ Եկեղեցու բարենորոգման դժվարին գործին: Նրան հատկապես հռչակ են բերում իր շինարարական ձեռնարկումները, որոնց համար էլ ստանում է «Շինող» մականունը: 618 թվականին Կոմիտաս Կաթողիկոսն ավարտում է Ս. Հռիփսիմե տաճարի կառուցումը: Ահա Սեբեոսի վկայությունն այդ մասին. «Եւ եղև յամի ԻԸ-երորդի թագաւորութեանն Ապրուէզ Խոսրովու քակեաց կաթուղիկոսն Կոմիտաս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած եւ մթին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի Հայոց կաթուղիկոսի, սրբոյն Ներսէսի: Արդ, մինչդեռ քակէին զորմն մատրանն, երևեցաւ յանկարծակի լուսաւոր և չքնաղագիտ արքունական մարգարիտն, այսինքն՝ կուսական մարմին սրբոյ տիկնոջն Հռիփսիմէի...: Ո՜վ մարգարիտ, որ ո՛չ ծովածին, այլ՝ մարգարիտ, որ ծնեալ ի թագաւորական ազգէ եւ սնեալ ի գիրկս սրբութեանն եւ նուիրեալ Աստուծոյ, որում ցանկացեալ էին տեսանել զքեզ արդարք, եւ խանդակաթ էր ի սէր քո երանելին Կոմիտաս»[1]: Ենթադրվում է, որ այդ օրերին է ստեղծվել «Անձինք նուիրեալք» սքանչելի բանաստեղծությունը, որն ամենայն հավանականությամբ առաջին անգամ երգվել է տաճարի նավակատյաց հանդիսությանը: «Անձինք»-ի ստեղծմամբ հոգևոր քնարերգության մեջ սկիզբ է դրվում բանաստեղծության նոր տեսակի: Այս շարականը պատմական իրադարձությունների շարադրանքն է՝ նվիրված Հռիփսիմյանց կույսերին:

«Անձինք նուիրեալք» շարականը, լինելով հայ հոգևոր երգասացության առաջին երկարաշունչ բանաստեղծությունը, իր գեղեցկությամբ և գեղարվեստական բարձրարվեստ հորինվածքով մնաց իբրև մեր բազմադարյան քնարերգության անգերազանցելի գոհարներից մեկը: Ահա Մ. Աբեղյանի կարծիքը Կոմիտասի այդ քերթվածքի մասին. «Կոմիտաս Կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» երկի մեջ մեր հոգևոր

[1] Պատմութիւն Սեբէոսի: Երևան, 1979, էջ 121:

երգը բավական մեծ կատարելության է հասած իր ձևով, ուստի պետք է ընդունել, որ մեր եկեղեցական բանաստեղծության ծաղկման նախապատրաստական շրջան եղած պիտի լիներ և տերունական տոների համար արդեն երգեր հորինված պիտի լինեին նախքան Հռիփսիմյանց «Անձինք»-ը նման մի մեծ քերթվածի երևան գալը...»[2]:

«Անձինք»-ը իրականում մի գեղեցիկ պոեմ է՝ նվիրված Հռիփսիմյանց կույսերի նահատակությանը: Կոմիտասը չի նկարագրում Հայաստանում ապաստանած քրիստոնյա կույսերի սոսկալի նահատակությունը: Բանաստեղծությունը գովք է մանուկ կույսերի գեղեցկության և նրանց հոգևոր արիության՝ «ընդդեմ մահու»: Գրիգոր Նարեկացուց շուրջ երեք հարյուր տարի առաջ շարականագիր Հայրապետը գովերգում է կանացի գեղեցկությունը.

Գեղեցկութիւնք մարմնաւոր պայծառութեան ձերոյ
Ցիմարեցոյց զթագաւորն, և պակեան հեթանոսք.
Ի գեղ սքանչելի աստուածատուր կուսանացն
Տարփացեալ զուարթունքն ընդ մարդկան տօնեցին:

Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերելու մի կարևոր հանգամանք ևս, որով ավելի է արժևորվում «Անձինք»-ը իբրև դարաշրջան կազմող ստեղծագործություն: Հայտնի է, որ Լավոդիկեի ժողովում՝ 360 թվականին, հատուկ որոշում է ընդունվել, որի համաձայն արգելվում էր չափածո երգերի հորինումը Եկեղեցուց ներս: Անկասկած Հայ Եկեղեցին ևս սկզբնական շրջանում ինչ-որ չափով ենթարկվել է վերոհիշյալ որոշմանը: Այս առումով ևս Կոմիտասի չափածո և բազմատուն «Անձինք»-ը նորություն էր հոգևոր քնարերգության մեջ:

Դեռատի կույսերի գեղեցկության համար են պայքարում աշխարհի հզորները: Ճակատամարտ է սկսվում տկար կանանց և թագավորի, զորեղ և մարտունակ տղամարդկանց միջև, ապշեցուցիչ մի պայքար, որ զարմացնում է ոչ միայն մարդկանց, այլ նաև Աստծուն, որ խոնարհվում է ականատես լինելու այդ անհավասար կռվին:

Է զարմացումն և ի վեր քան զհրաշս
Խորհրդոց և բանից հրեշտակաց և մարդկան.
Քանզի Էնն Աստուած ամենազօր զօրութեամբն
Խոնարհեալ տեսանէր զհանդէս կուսանացն:

Եվ այդ անհավասար պայքարում դեռատի կույսերն են հաղթում.

Թուլացան կորովիք հաստաձիգ աղեղանց,
Եւ տկար կանայքն վառեցան զինու.
Թագաւորն պերճացեալ զօրութեամբ և փառօք
Ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր:

[2] Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին: Երևան, 1944, էջ 477:

Հռիփսիմեն և Հռիփսիմյանք՝ երեսունյոթ սրբակյաց կույսերը, երկրային փառքն ու սերը արհամարհում են ի սեր Քրիստոսի:

Կոմիտաս Աղցեցու «Անձինք»-ը իր բովանդակությամբ, բերած նորություններով երբեք դարակազմ ստեղծագործություն չէր հանդիսանա, եթե չունենար նույնքան կատարյալ լեզու և լեզվամտածողություն: Լավագույն գրական ստեղծագործությունները առանձնանում են լեզվական միջոցների բազմազանությամբ, ճկունությամբ և ներդաշնակությամբ, տվյալ լեզվի ազգային բառապաշարի, արտահայտչական միջոցների և քերականական ձևերի ներքին անսպառ հնարավորությունների բացահայտմամբ: Այդպիսի քերթված է նաև «Անձինքը», որն աչքի է ընկնում պատկերավորման միջոցների հարուստ օգտագործմամբ, բայց զարմանալի կերպով՝ ոչ մի արհեստականություն, իմաստի մթագնում, բառերի խճողում կամ անհարկի կրկնություն: Այս շարականում օգտագործված են բազում մակդիրներ, բայց հետաքրքիր է, որ 36 տներում նրանք չեն կրկնվում, նրանց գործածությունը հիմնականում եռադաս է: Օրինակ՝ անձինք նուիրեալք, կուսանք իմաստունք, բարբառք երկնաւորք, կանայք պատուականք, ղեկավարք ճարտարք, անդաստանս հոգևորս, շինուածք երկնաւորք, արձանք լուսեղէնք: Մակդիրներից շատերը բարդ բառեր են, իսկական բարդություններ՝ ողջակէզք բանաւորք, Եդեմ աստուածատունկ, մահաբերք անիծիցն, թեթևաբեռն մարմնով:

Այստեղ ցանկանում ենք նշել մի կարևոր հանգամանք ևս. Կոմիտաս Հայրապետի «Անձինք»-ում օգտագործված են մակդիրներ, որոնք չեն հանդիպում 5-րդ դարի հայ հոգևոր երգասացության մեջ՝ ընկերք միամիտք, հաստահիգ աղեղանց, ղեկավարք ճարտարք, թեթևաբեռն մարմնով, սուտ պաճուճանք, արձանք լուսեղէնք, քաջազէն բռնութեամբ, դիւապաշտ մոլորութեանց, անստերիւր հոգևորական վարուք, կանայք վեհազինք, մարք մանկունք:

Հայտնի է, որ շարականագիր Հայրապետի «Անձինք»-ի համար սկզբնաղբյուր է հանդիսացել Ագաթանգեղոսի պատմությունը: Ծավոք, Սեբեոսը, որ հանգամանորեն խոսում է Ս. Հռիփսիմե տաճարի կառուցման մասին, լռում է «Անձինք»-ի ստեղծման վերաբերյալ: Միջնադարից, սակայն, մեզ են հասել վեց հեղինակային ցուցակներ, սկսած 13-րդ դարից, որոնք Կոմիտաս Աղցեցուն են վերագրում Հռիփսիմյանց կանոնի «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» շարականը:

Ստորև մեջ ենք բերում այդ ցուցակների հղումները.

Սարգիս Երեց 4

«Զհռիփսիմեանցն զԱնձինքն նուիրեալքն և զայլն Կոմիտաս Կաթողիկոսն առաց...»

Գրիգոր Տաթևացի

«Զհռիփսիմեանցն Անձինքն և զհարցն՝ տէր Կոմիտասն...»:

Անանուն ցուցակ 8

«Տէր Կոմիտասն՝ Զհռիփսիմեանց Անձինքն և զհարցն»:

Առաքել Սիւնեցի (ցուցակ 7)

«Յաղթող բանիւ երանելին՝ տէր Ստեփաննոսըն Սիւնեցին, Պունտիկոսն ցանկալին՝ տէր Կոմիտասն հրաշալին»:

Ստեփանոս Ջիք Ջուղայեցու ցուցակ 16.

«ԶՀռիփսիմեանց զհարցն և զԱնձինքն Տէր Կոմիտաս սրբահոգին»:

Ըստ Հակոբ Սսեցու ցուցակի 16

«ԸզՀռիփսիմեանց զհարցն և զԱնձինքն Տէր Կոմիտաս սրբահոգին»:

Հարկ ենք համարում այստեղ խոսել «Անձինք»-ների մասին ընդհանրապես:

«Անձինք»-ը հայ հոգևոր քնարերգության առաջին ընդարձակ բազմատուն բանաստեղծությունն է՝ բաղկացած 36 տներից և կազմված մեսրոպյան այբուբենի հաջորդականությամբ:

Հետագայում այբուբենի հաջորդականությամբ գրված 36 տներից բաղկացած բանաստեղծությունները, հոգևոր թե աշխարհիկ բովանդակությամբ, կոչվեցին «Անձինք», օրինակ՝ Դավթակ Քերթողի Ջևանշիրի Ողբը:

Հետաքրքիր է նաև, որ «Անձինք նուիրեալք» շարականից հետո նոր «Անձինք»-ներ ստեղծվում են շուրջ հինգ հարյուր տարի հետո միայն: 12-րդ դարում Ներսես Շնորհալի Հայրապետը, ում անվան հետ է կապվում հայ հոգևոր երգասացության նոր և մեծագույն վերելքի շրջանը, ի թիվս բազմաթիվ այլ հոգևոր երգերի, հորինել է նաև հինգ «Անձինք»-ներ, որոնք տեղ են գտել Գիշերային և Առավոտյան ժամերգություններում և ունեն գրեթե ամենօրյա գործածություն:

Ահա Ներսես Շնորհալու այդ «Անձինք»-ները.

«Առաւօտ լուսոյ»,

«Աշխարհ ամենայն»,

«Այսօր Անճառ»,

«Աստուած անեղ»,

«Երգ վասն վեցօրեայ արարչության»:

Այս «Անձինք»-ները ստեղծվել են ժամերգության տարբեր մասերում երգվելու համար և ունեն հորինվածքի, կատարման կամ գործածության զանազան ձևեր:

«Անձինք»-ներ հորինվել են նաև հետագա դարերում: 13-15-րդ դարերում հորինվել են Հովհաննես Երզնկացու՝ Լուսավորչի «Անձինք»-ը՝ «Այսօր զուարճացեալք ցնծայ Եկեղեցի», Գրիգոր Սկևռացու՝ Հովհաննու Կարապետի «Անձինք»-ը՝ «Արեգակնն արդարութեան» և Շարակնոցի վերջին «Անձինք»-ը՝ Կիրակոս Երզնկացու «Արևելք գերարփին» Աստվածամոր Վերափոխման տոնին ձոնված շարականը:

Այս «Անձինք»-ով եզրափակվում է հայ հոգևոր քնարերգության այս տեսակի հետագա զարգացումը:

Շարակնոցում, բացի վերոհիշյալ երեսունվեց տներից բաղկացած «Անձինք»-ներից, կա նաև «Գիւտ Խաչի» կանոնին մաս կազմող մի «Անձինք» ևս՝ «Ապաւինեցաք ի խաչ քո»: Շարակնոցում տեղ են գտել այս շարականի առաջին հինգ տները միայն, իսկ մնացած 5 տները հավանաբար հանվել են իբրև պարականոն, քանի որ այն ամբողջությամբ տեղ է գտել Սահակ ծայրագույն վարդապետ Ամատունու 1911 թվականին Վաղարշապատում հրատարակած «Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ» արժեքավոր աշխատության 134-րդ էջում:

Ուշադրության արժանի են նաև Կանոնական Շարակնոցում տեղ գտած երկու «Անձինք»-ներ ևս, որոնք ունեն յուրահատուկ կառուցվածք: Նրանցից առաջինը «Անսկիզբն Բանն Աստուած» ԴԿ.՝ Հռիփսիմեանց կանոնի Համբարձի շարականն է, որը բաղկացած է տասը տներից, սակայն բանաստեղծն այդ տասը տներում կարողացել է օգտագործել 36 տառերը հետևյալ սկզբունքով. առաջին տունն ունի երեք տառ, երկրորդից մինչև իններորդ տներ՝ չորսական տառ, իսկ վերջին տասներորդ տառով սկսվող տունը՝ մեկ տառ:

Հաջորդ տասը տներից բաղկացած «Անձինք»-ը, որն ունի միևնույն կառուցվածքը, Ներսես Շնորհալու Ղևոնդյանց կանոնի «Մանկունք» շարականն է ԴԿ (Վերջձայն). «Անճառելի Բանդ Աստուած, որ վասն մեր եղեր ի խաչ...»:

Ստորև ներկայացնում ենք վերոհիշյալ շարականները (12-15-րդ դարերի) հաջորդաբար:

Առաւօտ լուսոյ

Ներսես Շնորհալու այս երգը («Անձինք»-ը) նույնպես արտականոնական է, ինչպես հաջորդ չորս «Անիձինք»-ները, այսինքն սրանք չեն մտնում շարականային կանոնի մաս կազմող ութ երգ միավորների մեջ: «Առաւօտ լուսոյ» հոգևոր երգի յուրաքանչյուր տուն երկու եռատող է՝ կազմված երկու տառից: Այս երգն աչքի է ընկնում լեզվի պարզությամբ, մատչելիությամբ, միաժամանակ անկրկնելի գեղեցկությամբ և հուզականությամբ: «Առաւօտ լուսոյ»-ն հորինված է հինգ վանկանի տողերով.

Առաւօտ լուսոյ
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա:
Բղխումն ի հօրէ,
Բղխեա ի հոգւոյս
Բան քեզ ի հաճոյս:
Գօղ արեան քո, տէր,
Գօղեա ի հոգիս,
Գընծացէ անձն իմ:
Իւծեալըս մեղօք,
Իիւծեալ աղաչեմ,
Իիւսել ինձ բարիս:

Աշխարհ ամենայն

Հայոց այբուբենի 36 տառերի հաջորդականությամբ ստեղծված այս գեղեցիկ հոգևոր երգը մաս է կազմում Գիշերային ժամերգության և երգվում է Սրբոց տոներին և Պահոց օրերին: Ինչպես «Առաւօտ լուսոյ»-ն, «Աշխարհ ամենայն»-ը ևս կազմված է եռատողերից՝ երկու տառերով և ունի տասնութ տուն: Յուրաքանչյուր տան վերջում կրկնվում են «Տէր Ողորմեա»-ներ: Ձեռագիր և տպագիր Ժամագրքերն ունեն հետևյալ վերնագիրը. «Տեառն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի ողբերգութիւն անձին զղջացելոյ և բողոք իւրաքանչիւրոյ դիմի խոստովանաբար»: Հայրա-

պետը բոլոր 108 տողերում օգտագործում է գեղեցիկ պատկերներ... Հանգը միանդամ հինգվանկանի տաղաչափությունն է, որը հայ մատենագրության մեջ առաջին անգամ օգտագործել է Ներսես Շնորհալին: «Առաւօտ լուսոյ»-ն գրված է նույն չափով:

Աշխարհ ամենայն.
Առ իս նայեցեալ.
Ախտակից լերուք:
Բանամ ըզշրթունս,
Բարբառիմ լեզուաւս,
Բողոքեմ զանձնէս.
Տէր ողորմեա:
Սիրով ցանկութեան.
Սաստիկ բարկութեան.
Սիրտ իմ խոցեալ է:
Վիրօք յանցանաց.
Վըշտանայ հոգիս.
Վարանեալ շըրջիմ.
Տէր ողորմեա:

Երգի ամեն մեկ տող մարդկային մեղավոր հոգու տառապանքն է, իր մեղքի ծանր զգացումը և ապավինումը միայն Աստծուն:

Այսօր անճառ

«Երգ Տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի ասացեալ յաղագս Մեծի ուրբաթու գիշերին Աւետարանացն»: Այսպես է վերնագրել Ներսես Շնորհալին «Այսօր անճառ» «Անձինք»-ը, որը և խիստ կերպով պատշաճեցնում է պահին: Տրոհված է վեցական տների և յուրաքանչյուր վեցյակ երգվում է իբրև առանձին երգ՝ նույն օրը, չարչարանաց գիշերը ընթերցվող վեց Ավետարաններից առաջ: «Անձինք»-ն ունի Դկ ձայնեղանակ: Տաղաչափությունը միանդամ 4 վանկանի չափն է.

Այսօր անճառ լուսոյն ծագումն
Ի փրկութեան մեր կատարումըն խոնարհի
Ի վերնատունն ի ստուերական տօնից լրումն:
Նախ քան զընթրիսըն խորհրդոյ
Սփածաւ ղենջակ արկողն լուսոյ.
Եւ ջուր առեալ ծառայաբար
Ջոտըս լուանայր զաշակերտացն:

**Աստուած անեղ**

Ըստ Ժամագրքի ու Ծարակնոցի, այս երգի վերնագիրն է՝ «Երգ Տեառն Ներսէսի, ասացեալ վասն առ ի Քրիստոս ննջեցելոց»: Այս երգը տրոհված է չորս մասի՝ իննական տներով և պատշաճեցված է յուրաքանչյուրը երկու ձայնեղանակի համար՝ համաձայն այն չորս Ավետարանների թվին, որոնք ընթերցվում են գիշերային ժամերգության ընթացքին: Այս երգի տաղաչափությունը ևս կազմում է 4 վանկանի տողեր.

Աստուած անեղ, անժամանակ,
Հայր անըսկիզբն եւ անքանակ,
Որդւոյ պատճառ ծննդեամբ անճառ,
Հոգւոյն բղխմամբ անքննաբար.
Աղաչեմք զքեզ գթած,
Երկայնամիտ և ողորմած,
Ողորմեա քո ստեղծուածոյս
Յուսով ի քեզ ննջեցելոյս:

Մերով բնութեամբ, զոր ըզգեցար
Ի փայտ խաչին բեւեռեցար.
Լուծանելով մեզ ի մեղաց
Ի նախահօրըն կապանաց.
Լոյծ և ըզսա ի յանցանաց
Վասն քո սուրբ չարչարանաց.
Լի լապտերօք մոյծ յառագաստ
Ընդ իմաստուն սուրբ կուսանացն:

**Արարչական կամ Երգք եօթնօրեայ արարչութեան**

Այս երգը ևս տրոհված է վեց մասի՝ վեցական տներով, և երգվում է երկուշաբթի օրվանից սկսած մինչև շաբաթ օրը: Իսկ կիրակի օրվա համար Ներսես Շնորհալին հորինել է «Նորաստեղծեալ» գեղեցիկ երգը, որի ծայրակապը կազմում է Ներսէս: Ըստ էության երգի տողերում պատմվում է արարչագործությունը՝ աշխարհի ստեղծումն ըստ Աստվածաշնչի:

Երգի տաղաչափությունը դարձյալ 4 առավել 4 վանկանի տողերն են.

Արարչական բանին հրաման
Ի յերկրորդումն աւուր սկզբան,
Ջրուրսն ի ջուրցն բաժանեաց
Հաստատութեամբ պարունակեաց,
Որով զաշխարհս հողեղինաց

Անչըպետեաց ի հրեղինաց.
Ընդ նոսին, որդիք լուսոյ, տուք օրհնութիւն երրեակ լուսոյն:

**Այսօր զուարճացեալ**

Այս «Անձինք»-ը կոչվում է նաև «Անձինք Լուսաւորչի», քանի որ այն նվիրված է Գրիգոր Լուսավորչի սոսկալի չարչարանքների ու Խոր Վիրապ նետվելու հիշատակին: Գրիգոր Լուսավորչի «Անձինք»-ի հեղինակն է 13-րդ դարի նշանավոր գիտնական, բանաստեղծ ու երաժիշտ Հովհաննես Երզնկացի վարդապետը: «Անձինք»-ում շարականագիրը լայնորեն օգտագործել է նաև ժողովրդական ավանդությունները ու զրույցները՝ Գրիգոր Լուսավորչի կյանքի ու գործունեության, նրա կրած սոսկալի տանջանքների և ապա հայոց քրիստոնեական դարձի գործում ունեցած անգնահատելի ջանքերի մասին:

Առանց չափազանցության կարելի է ասել, որ Հովհաննես Երզնկացու այս «Անձինք»-ը իր գեղարվեստական ու բանաստեղծական բարձր վարպետության արժանիքներով առանձնանում է մեր Շարակնոցի բոլոր շարականներից: Այն նաև արձակ բանաստեղծության սքանչելի նմուշ է.

**Այսօր զուարճացեալ ցընծայ եկեղեցի՝ դրախտ աստուածատունկ ծաղկեալ. յորմէ տըւաւ մեզ տունկն անմահութեան, տէր Գրիգորիոս, և պըտղովն իւրով ելից ըզտիեզերս ամենայն:**

**Երկնային լոյս ծագեալ ի յերկրի ցուցար, պայծառացեալ փայլմամբ ի յարփւոյն կենաց, որով հերքեցաւ խաւար թանձրամած Հայաստանեայց ազգի, և տեսին ըզլոյս շնորհաց Սուրբ Հոգւոյն:**

**Արեգականն արդարութեան**

Հովհաննես Մկրտչի՝ Ծննդյան տոնին ձոնված այս գեղեցիկ «Անձինք»-ի հեղինակը Գրիգոր Սկևռացին է՝ 13-րդ դարի մեր նշանավոր շարականագիրներից մեկը: Հովհաննես Մկրտչի՝ Ծննդյան պատմությունը շարականագրի հիմնական նյութն է՝ երգված բարձր վարպետությամբ.

**Արեգականն արդարութեան ծագման արուսեակդ առաւօտեալ, նախընթաց ճանապարհի որդւոյն Աստուծոյ տնօրէնութեան սուրբ Յովհաննէս, առ Քրիստոս բարեխօսեա վասն անձանց մերոց:**

**«Արևելք գերարփին» կամ «Անձինք Վերափոխման»**

Այս չքնաղ շարականը հեղինակել է Կիրակոս Երզնկացին, որը համարվում է մեր վերջին շարականագիր վարդապետը: Շարականի նյութը նա վերցրել է Աստվածամոր ննջման պատմությունից:

Գեղարվեստական բարձր վարպետությամբ շարականագիրն իրոք որ կերտել է Տիրամոր սքանչելի կերպարը: Հայտնի է, որ Աստվածամոր Ննջման տոնը մեզանում տոնախմբվել է դեռևս հինգերորդ դարում, և այդ տոնի շարականը՝ «Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին»-ը, հորինել է Մովսես Խորենացին: «Արևելք գերարփին» «Անձինք»-ում կան տողեր, որոնք հիշեցնում են Մովսես Խորենացու վերոհիշյալ շարականը: Ննջման կամ Վերափոխման պատմությունը գեղարվեստական բարձր վարպետությամբ ներբողել է պատմահայր Մովսես Խորենացին իբրև Վերափոխման տոնի պատմություն: Չորս ծավալուն տների մեջ շարականագիրը ներկայացնում է Ս. Կույսի մասին եղած ննջման գեղեցիկ այս ավանդությունն ամբողջությամբ, ինքնատիպ կերպով:

Կիրակոս Երզնկացու սքանչելի այս «Անձինք»-ը Շարակնոցում դրված է իբրև Վերափոխման երկրորդ օրվա կանոնի «Այսօր զանճառելի ծննդեանն քո, Տէր» ԴԿ օրհնությանը կից՝ որպես քաղվածք. այն երգվում է նաև իբրև հետևակ շարական: Այստեղ հեղինակը պատմում է արարչագործության մասին: «Անձինք»-ը աչքի է ընկնում հարուստ բառապաշարով, աստվածաբանական և դավանաբանական խորը ընդհանրացումներով, որն ապացույց է հեղինակի աստվածաբանական խնդիրների անհերքելի գիտության:

Շարականը հորինվել է յամբական 3-4 վանկանի չափով:

> **Արևելք գերարփին և**
> **օթարան լուսածին,**
> **զանմայր ծընեալն առաջին**
> **ծընար անհայր յերկրորդին.**
> **Բարեխօսեա Միածնին Աստուածածին մայր Բանին:**

«Անձինք»-ների լեզվական մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հինգերորդ դարի հոգևոր երգասացության համեմատությամբ Կոմիտաս Աղցեցու «Անձինք»-ը բոլորովին նոր որակ է նաև իր լեզվական առանձնահատկություններով: Ինչպես այս «Անձինք»-ում, այնպես էլ հետագա բոլոր «Անձինք»-ներում կան բազմաթիվ նորաբանություններ: Ցանկանում եմ նշել դրանցից մի քանիսը միայն.

«Անձինք նուիրեալք»՝ թեթևաբեռն մարմնով, ծովածուփ կենցաղոյս, կանայք վեհազինք և այլն: «Փառաց ի փառս» այս ձևը առաջին անգամ է հանդիպում մեր քնարերգության մեջ, այնուհետև հանդիպում ենք Ներսես Շնորհալու մոտ՝

«Փառաց ի փառս բարձրանան,
Աչակողմեանքն վերանան» (Երգ Հանգստյան):
Աստուած անեղ՝ օդապարից, աներևկի:

Անհնար է մեկ հոդվածի սահմաններում ներկայացնել «Անձինք»-ների բերած բոլոր լեզվական նորությունները, սակայն ցանկանում եմ նշել, որ կազմված է նաև վերոհիշյալ «Անձինք»-ների համաբարբառը:

Այսպիսով. «Անձինք»-ների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հինգերորդ դարի հայ հոգևոր քնարերգության համեմատությամբ յոթերորդ դարում սկզբնավորված մեր բանաստեղծության այս նոր տեսակն իր բառապաշարով ու նորանաօմություններով, լեզվաոճական առանձնահատկություններով ու տաղաչափությամբ նշանավորում է մի նոր դարաշրջան՝ հարստացնելով մեր հոգևոր երգասացությունը:

«Անձինք»-ը նաև մի սքանչելի ներբող է մասնավորապես Ս. Մեսրոպի հանճարով ստեղծված մեր աննման այբուբենին:

## Օգտագործված գրականության ցանկ


Ղ. Փարպեցի - «Հայց պատմություն», Երևան, 1982 թ.:

Պատմութիւն Սեբէոսի, Երևան, 1979 թ.:

Գ. Տաթևացի - «Գիրք Հարցմանց», Կ. Պոլիս, 1729 թ.:

Գ. Ավետիքյան - Բացատր. շարականաց, էջ ԺԳ.:

Մ. Աբեղյան, - «Հայ հին գրականության պատմություն», 1970, հատ. Գ:

Գ. Հակոբյան - Ծարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ:

Խ. Պալյան - «Ծարականագիտություն», (Գրակ. մեջ) Երևան, 1980 թ., «Կոմիտաս Աղցեցի» (ձեռագիր):

Ջայնքաղ շարական, Վաղարշապատ, 1888 թ.:

*ՌՈՒՄԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԻՐՈՒՄՅԱՆ*

# ԿՐՈՆԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

## (Մեթոդաբանական տեսանկյուններ)

Հազարամյակների սահմանագծում ընկած արդի ժամանակաշրջանը բնութագրելի է սոցիալական կյանքի բոլոր դրսևորումների ճգնաժամով: Վերջինիս հաղթահարման միջոցը աշխարհայացքային փոխակերպությունն է, որի առանցքը պետք է դառնա կրոնի և գիտության պատմամշակութային նշանակության վերաիմաստավորումը: Բանականությունը, որպես կենսագործունեության հիմնական գործոն, «գաղտնի բանալին» է ոչ միայն եվրոպական քաղաքակրթության, այլև արևմտյան մշակույթի ներգործության ոլորտում գտնվող երկրների պատմության: Վերածննդի դարաշրջանի մտածողների նախաձեռնությամբ կրոնին մինչև օրս հատկացվում է «մշակույթի էական բաղադրամաս»-ի անորոշ դերը: Նույն տեսքով այն ներկայացված է խորհրդային տարածության երկրների (այդ թվում նաև Հայաստանի) ազգային վերածնության ծրագրերում, այնինչ կրոնի մեջ ներդրված է մշակույթի բոլոր ոլորտներն ու մակարդակները ներթափանցող, աշխարհայացքային դիրքորոշում: Այդ հանգամանքն ակնհայտորեն դրսևորվում է, երբ մշակույթն ընկալվում է որպես իրական, այսինքն՝ օրգանական ամբողջականություն, այլ ոչ որպես աշխարհայացքների՝ փիլիսոփայական, գիտական, կրոնական, գեղագիտական, բարոյագիտական, տարբերակված և, ըստ էության, ձևական ամբողջականություն: Կրոնական աշխարհայացքի նշված հատկությունը բխում է կրոնի հիմքը ներկայացնող հավատից: Այն մարդու ողջ կենսագործունեությունն ապահովող նրա ոգու ընդունակությունն է՝ բանականության, կամքի և զգացմունքի միասնության մեջ: Դրանով է պայմանավորված այն, որ կրոնը, ի տարբերություն գիտության, իմաստավորում, պահպանում և փոխհաղորդում է հոգևոր արժեքներ, որոնք ընկալելի են որպես համապարփակ, հավերժական, իդեալական, այսինքն՝ աստվածային:

Արդի ժամանակաշրջանի ճգնաժամի խորքային հիմքը մշակույթի մեջ բանականության գերիշխանությամբ պայմանավորված աշխարհի կառույցի մարդակենտրոն սկզբունքն է և դրան համապատասխանող՝ մարդու գոյության և պատմության իմաստի ընկալումը: Աշխարհի մարդակենտրոն պատկերը, որտեղ տիրում է ստեղծագործական ուժով օժտված մարդը, աղբյուր հանդիսացավ Վերածննդի մշակույթի սկզբունքի՝ հումանիզմի առաջացման համար: Հումանիզմի իդեալը

ճիշտ (բանական) ընտրություն կատարելու ընդունակ լինելու հետևանքով՝ գործողությունների ազատությամբ օժտված մարդու ընկալումն էր[1]: Ռեֆորմացիան փոխակերպեց քրիստոնեական մշակույթը և դրա հիման վրա ստեղծեց մարդու նոր տարատեսակը: Քրիստոնեական հոգևորը դարձավ նոր աշխատանքային էթիկայի և աշխարհի գործնական (բանական) վերափոխման իմաստային հիմքը[2]: Բողոքականությունը մերժեց մարդու հոգևոր ազատությունը և միաժամանակ հաստատեց դրա անհրաժեշտությունը գործնական և քաղաքացիական կյանքում, որի հետևանքով ձևավորվեց արևմտաեվրոպական զարգացման հիմքը՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտները: Հավատի մեկնաբանման և նրա գործնական իրականացման ղեկավարման գործում բանականությանը առաջնային դերի շնորհումը Եվրոպայի առջև դրեց գործունեության բոլոր ձևերի ռացիոնալիզացման և նոր ժամանակի գիտության ձևավորման խնդիրը[3]: Լուսավորությունն, իր հերթին, մշակեց մարդու կատարելագործման իր մոդելը՝ քաղաքական ե սոցիալական ինստիտուտների «ռացիոնալ» վերափոխման միջոցով, հաշվի առնելով գլխավորապես «զուտ մարդկային բովանդակությունը» մշակույթում, անտեսելով ազգային և կրոնական տարբերությունները:

Այդպես ստեղծվեց արժեքների մի համակարգ, որն օրգանապես մտավ արևմտյան քաղաքակրթության կառուցվածքի մեջ և ժառանգվեց XX դ. կողմից: Վերջինիս գլխավոր արժեքը հանդիսացավ սոցիալական կեցության պրոցեսների համապարփակ տեխնոլոգիաների ստեղծման և զարգացման ձգտումը, որի հետևանքով մերժվեց կեցության և մարդու սկիզբների հավերժական խնդիրների առաջնային դերը ինչպես համամարդկային արժեքների, այնպես էլ ճանաչողության ոլորտներում: Արդյունքը եղավ այն, որ խախտվեց մշակույթի ամբողջականությունը, և կտրվեց կյանքի բնական հիմքերի հետ մարդու օրգանական կապը: Ստեղծվեց, այսպես կոչված, «օտարման իրավիճակ»[4], ինչը վկայում է, որ մարդը շեղվել է իր կեցության ճշմարիտ նպատակից, այսինքն, որ մարդը (և մարդկությունը) հոգևոր ճգնաժամի մեջ է գտնվում:

Նոր աշխարհայացքային դիրքորոշումը պետք է իր մեջ համադրի մարդկային ոգու բոլոր դրսևորումները (բանականությունը, կամքը, զգացմունքը) և ուղղված լինի հոգևոր այդ ճգնաժամի հաղթահարմանը: Նման հարցադրումը հանգեցնում է

---

[1] Տե՛ս **Любимов И.,** Искусство Западной Европы. М., 1976, с. 128.

[2] Տե՛ս **Вебер М.,** Протестантская этика и дух капитализма – Избранные произведения. М. 1990, с. 136-208. **Соловьев Э. Ю.,** Время и дело Мартина Лютера – **Соловьев Э. Ю.,** Прошлое толкует нас. М., 1991, с. 90, 116-119, 122-124.

[3] Տե՛ս **Косарева Л. С.,** Социокультурный генезис науки Нового времени. М., 1989, с. 36-37, 45-46, 55-56.

[4] Տե՛ս **Фромм Э.,** Бегство от свободы. М., 1990, с. 9; **Тиллих П.** Мужество быть. - Социально-политическое измерение хрисианства. Избранные теологические тексты XX века. М., 1994, с. 132; **Сорокин П.,** Кризис нашего времени – Человек, цивилизация, общество. М., 1992, с. 427.

կրոնի և գիտության համադրման հնարավորության գիտակցմանը: Այդ հանգամանքը մեծավ մասամբ բացատրվում է բանականության միակողմանիությամբ, հիասթափությամբ գիտա-տեխնիկական առաջընթացի և հումանիզմի և բարոյականության սկզբունքներին հակասող՝ մարդկային բանականության նվաճումների մեջ[5]: Ընդունելով նշված հանգամանքների կարևորությունը, նշեմ նաև, որ այսօր ավելի քան երբևէ ակնհայտ է դարձել աշխարհայացքային հարցերի մեկնաբանման մեջ գիտության ավանդական ձևի անկարողությունը և ավելին՝ նրա սկզբունքային սպառումը:

Բանն այն է, որ գիտության միջոցներով (ռացիոնալ ճանապարհով) անհնարին է լուծել աշխարհի սկիզբների խնդիրը, հիմնավորել նրա ծագման և կառուցման (կարգավորվածության, ներդաշնակության, բազմազանության, նպատակահարմարավետության և այլն) հարցերը: Աշխարհի ճանաչողությունն ու իմաստավորումը գիտնականի համար հնարավոր է դառնում այն դեպքում միայն, երբ նա «հավատում է» աշխարհի գոյությանը, և այդ հավատը նրան ներշնչում է կրոնը: Կրոնի նկատմամբ նման վերաբերմունք ունեցել են հատկապես XX դ. խոշորագույն բնագետները՝ Պլանկ, Հայզենբերգ, Պաուլի, Էյնշտեյն: «Գիտության համար կրոնը նախ և առաջ հանդես է գալիս որպես շրջապատող աշխարհի կայունության, հուսալիության վկայություն: Գիտության հետազոտման առարկան՝ նյութական երկրային աշխարհը, նոր ժամանակում, կարծես, գոյություն ունի աստվածային, տրանսցենդենտ աշխարհին զուգահեռ, գիտնականը միանգամայն կարող էր զբաղվել իր հետազոտություններով՝ առանց մտածելու Աստծու պրարչության խնդիրների, տիեզերքի նպատակների մասին»[6]:

Ռացիոնալականության իդեալը կամ մտածողության ոճը դուրս է բերվում գիտության արդի փուլում ստեղծվող աշխարհի գիտական պատկերից և արտահայտվում գիտության հայեցակարգի մեջ: Գիտության արդի ըմբռնումը ենթադրում է ճանաչողության մի ձև, որը չի հիմնվում Աստծու (որպես նախասկզբի) գոյության նախադրյալի վրա: Նման ըմբռնումից է բխում մարդու ընկալումը որպես «աշխարհի ինքնաճանաչման օրգանի», աշխարհի մասնիկի, որը գիտակցում է ստեղծագործողի իր դերը և ձգտում վերափոխել աշխարհը: XX դ. աշխարհի գիտական պատկերի ստեղծումը, սակայն, չի նպաստել աշխարհայացքային խնդիրների լուծմանը: Ընդհակառակը, բնության հանդեպ բռնության դրոշի ներքո ռացիոնալականության իդեալի իրականացման ձգտումը բացահայտեց այդ իդեալի իմացաբանական սահմանափակությունը, իսկ սոցիալական հետանկարների տեսանկյունից՝ նրա վնասակարությունը: Ճանաչողության ամբողջական ձևի գիտության ձեռքբերումը հնարավոր է միայն հոգևոր փորձի միջոցով: Դա նշանակում է, որ գիտության

[5] **Филимонов Э. Г., Элбакян Е. С.,** Религия в системе духовных ценностей современной российской интеллигенции. –Кентавр, 1993, № 5 с. 61.

[6] **Маркова Л. А.,** Теология в эпоху постмодернизма. - Вопросы философии, 1999, № 2, с. 109.

հիմքում պետք է դրվի նոր՝ իդեալական սկզբունքը, այսինքն՝ համընդհանուր Միության և Գոյի ինքնահամաձայնեցվածության սկզբունքը: «Ճշմարիտ գիտելիքը կառուցվում է հասկացությունների և պատկերացումների, այդ թվում՝ նաև տրանսֆինիտ..., որոնք թույլ են տալիս հաջորդաբար և որոշակիորեն... ելնելով ելակետային նախադրյալների նվազագույն թվից, կառուցել, վերաիմաստավորելով տարբեր փիլիսոփայական համակարգերը՝ հնությունից մինչև մեր օրերը, Աշխարհի արդի միասնական ինքնահամաձայնեցված պատկերը»[7]: Այս կանխադրույթի ձևավորման նախապայմանն են, ի մասնավորի, ֆիզիկայի նորագույն տվյալները, որոնք խորտակում են դասական բնագիտության ողջ սխեման և վկայում, որ Կեցության նախասկիզբը իդեալական է[8]:

Ճանաչողության խնդիրը պետք է հանգի Կեցության գաղտնիքների ըմբռնման, ճշմարտության (միակ և բացարձակ) որոնման՝ կրոնի և գիտության, այսինքն, հայտնության և բանականության օրգանական միասնության հիմքի վրա: Դա կպայմանավորի նաև մարդու գոյության և Պատմության իմաստի վերագնահատումը:

Ժամանակակից տեխնոկրատ հասարակության մեջ մարդն ընկալվում է որպես անհատ, այսինքն՝ իր պահանջմունքները բավարարելու ձգտող մարդ: Ժողովուրդն այս տեսանկյունից ըմբռնելի է որպես անհատների հանրագումար, իսկ սոցիալական շահը՝ որպես անհատական շահերի հանրագումար: Պատմությունն այս հարթության վրա ընկալվում է որպես տևող առօրեություն: Կարծում եմ, որ նման ինքնագիտակցությունն է ծնունդ տվել պլյուրականության աշխարհայացքային կոնցեպցիայի զուեհիկ ըմբռնմանը: Կարծիքների բազմազանությունը, առանց առանցքային միավորող գաղափարի, անհրաժեշտաբար հանգեցնում է հասարակության քայքայման, անիշխանության, բարոյականության անկման: Կառուցված լինելով բազմաթիվ անկախ սուբստանցիոնալ սկիզբների գոյության սկզբունքի վրա՝ անձնավորության ազատության բացարձականացման հետ մեկտեղ, պլյուրալականության կոնցեպցիան առաջացնում է բռնակալություն (ցանկացած գնով ազատության հասնելու ձգտում), որի հակառակ կողմը սոցիալական էնտրոպիան է:

Մարդը, սակայն, նախ և առաջ ոգու կրող է, այսինքն՝ անձնավորություն է: Կենդանական աշխարհում նրա առանձնահատուկ դիրքը բացատրվում է նրա մեջ հոգևոր աշխարհի՝ իդեալական սկզբի առկայությամբ: Հենց այդ հանգամանքն է պայմանավորում «մատերիալիստական» գիտության կողմից ջնջված՝ գիտելիքի հումանիտար և բնագիտական ոլորտների տարբերությունը: Մարդու հոգևոր էությունը անճանաչելի է զգայական փորձի և ռացիոնալ մեթոդների օգնությամբ, ուստի և այդ դիրքերից անհնարին է իմաստավորել մարդու գոյության պատճառը,

---

[7] Куляков Ю. И., Синтез науки и религии. - Вопросы философии, 1999, № 2, с. 145.

[8] Տե՛ս Бажур В. К., К вопросу о естественно-научном базисе идеального. – Философские науки, 1992, № 3, с. 148.

իմաստը և նպատակը: Մարդն ունի ինչպես արտաքին (զգայական), այնպես էլ ներքին (հոգևոր) փորձի հնարավորություն: Փորձի երկրորդ տարատեսակը բարձրագույն իրողության՝ Աշխարհի մասին գիտելիքի ու հոգևոր մշակույթի ձևավորման հիմքն է, ինչն արժեքավորում է սերունդների հոգևոր մշակույթի պահպանման և ուսումնասիրման գործընթացը: «Մարդկության արդի հոգևոր ճգնաժամը, ամբողջությամբ առած, բացատրվում է նրանով, որ մարդկությունն արդեն մի քանի սերունդների ընթացքում արհամարհում էր հոգևոր փորձի աղբյուրները..., կուրացած բնագիտության և տեխնիկայի հաջողություններով, անտարբեր դառնալով կյանքի կրոնական խորքերի նկատմամբ, նա վստահել է... զգայական զգացողություններին և դրանցից վերածող տեսությանը և պրակտիկային[9]:

Մարդկության ողջ հոգևոր փորձը հիմք է տալիս հաստատելու, որ մարդու ներքին աշխարհի հիմքում ընկած է տրանսցենդենտ, գերզգայական սկիզբը: Դա խոսում է «նատուրալիստական օբյեկտիվության նախապաշարմունքների» հաղթահարման անհրաժեշտության, ինչպես նաև այն մտքի հաստատման կարևորության մասին, որ մարդն ավելի խորքային և առաջնային է, քան իր կենսաբանական-հոգեբանական և պատմամշակութային սկզբները (Հուսերլ): Նման մոտեցումը ենթադրում է «հումանիզմ» հասկացության վերաիմաստավորումը, որի բովանդակության մեջ Վերածնունդը ներդրել է մարդու ինքնաբավության գաղափարը: Մարդկության հետագա 500-ամյա սոցիալական պրակտիկան ցույց տվեց, որ մարդու՝ նման զնահատումը ոչ միայն նպաստավոր չէր նրա հոգևոր զարգացման, այլև ընդհակառակ՝ շատ նպաստավոր էր նրա հոգևոր աշխարհի քայքայման համար: Մարդու գոյության իմաստը ֆիզիկական գոյատևումը չէ, իսկ գործելակերպի նորման՝ հարմարումը չէ[10]: Հոգևոր էակի՝ մարդու գոյության իմաստը հոգևոր որոնումն է, ստեղծագործությունը, իսկ նպատակը՝ իրեն և աշխարհի կատարելագործումն է: «Տիեզերքն իր գոյաբանական հիմքերի մեջ ստեղծագործական է և նույն ստեղծագործական պատասխանին է սպասում մարդուց»[11]: Ստեղծագործության այդ ճանապարհին կարող է հաղթահարվել Մ. Լյութերի ժամանակից մինչև օրս գոյություն ունեցող «տրանսցենդենտ-իմանենտ» անտինոմիան: Կեցության աղբյուրի հետ մարդու միասնությունը կապահովի մարդու կեցության լիիվությունը, որի հետևանքով էլ ժամանակի կողմից պահանջված մարդու իրա-

---

[9] **Ильин И. А.**, Религиозная философия. М., 1994, с. 100.

[10] Փիլիսոփայական մարդաբանության մեջ լայն տարածում է ստացել այն տեսակետը, ըստ որի մարդու մեջ ներդրված են երկու ծրագրեր՝ բնազդային և սոցիալ-մշակութային: Մարդու եզական հատկությունը՝ որպես արարածի, նրա անավարտ լինելն է: Մարդն ընդունակ է հաղթահարել տեսակային իր սահմանափակությունը՝ լինել կենդանի աշխարհի անբաժանելի մասնիկը և միևնույն ժամանակ վեր կանգնել նրանից: Մարդն, այսպիսով, ի տարբերություն կենդանի աշխարհի մյուս ներկայացուցիչների, ազատ ծրագրով է գործում: Մարդու մեջ շատ բնազդներ բնական են և միաժամանակ տարիմաստորեն անօրգանական:

[11] Панарин А. С., Смысл истории. - Вопросы философии, 1999, № 9, с. 7.

վունքները ու ազատությունը կաշխատեն ոչ թե ի վնաս մարդկային (և ազգային) արժանապատվությանը, այլ ի նպաստ դրան: «Բարձրագույն նպատակների և իդեալների առկայությունն ու բնույթը, ընդհանուր հոգևոր արժեքային դիրքորոշումն առաջնային դեր են կատարում տնտեսական, քաղաքական, սահմանադրական-իրավական ծրագրերի նկատմամբ»[12]:

Նշվածի լույսի տակ հատուկ նշանակություն ու այժմեականություն է ձեռք բերում կրոնական փիլիսոփայությունը, որի մեջ «ի սկզբանէ» իրականացված է բանականության և հայտնության համադրումը: Կրոնի և փիլիսոփայության հարաբերակցությունը վերջինիս կարևորագույն բնութագրումներից է, ինչը պայմանավորված է կրոնի և փիլիսոփայության ծագումնաբանական կապով, դրանց հարատև գոյակցությամբ, սկսած այն պահից, երբ փիլիսոփայությունը հանդես եկավ որպես գիտակցության և տեսական գործունեության հատուկ ձև: Կրոնական փիլիսոփայությունը կրոնի և փիլիսոփայության փոխներգործության արդյունք է. այն առաջանում է փիլիսոփայության կողմից կրոնական գաղափարների և մտակաղապարների ասիմիլյացիայի հետևանքով, երբ կրոնական պատկերացումները ձևավորվում են փիլիսոփայական հայեցողությանը: Կրոնական փիլիսոփայության ելակետը՝ կրոնական աշխարհայացքի հիմնական սկզբունքներն են[13]: XIX դ. հայ մտածող Գ. Աշըգյանը հետևյալ բնութագրումն է տվել կրոնական փիլիսոփայությանը. «Եկեղեցական Պատմութիւնը և Քրիստոնէական Աստուածաբանութիւնը իմաստասիրութեան ընկերացող ուսումներ են... այն հեղինակներին ընտրելով, առաջնորդ որոյ կրօնական և իմաստասիրական վարդապետութեանը հակառակ չեյլեր ոչ ուղիղ փիլիսոփայութեան և ոչ ողջամիտ աստուծաբանութեան և յատկապէս ազգային աւանդութեան... Մէկ կողմանէ բանականութեան պատիւը պահեմք, միւս կողմանէ ալ Աստծոյ երաշխիքը կամ ճշմարտութեան ծրի պարգևը իմաստուն երկիւղածութեամբ մեծարեմք»[14]:

Փիլիսոփայության նպատակը մարդկային փորձի ողջ բազմազանության հիման վրա Աշխարհի մասին գիտելիքի մշակումն է: Կրոնը մարդկային փորձի հիմնական բաղադրիչներից մեկն է, որի շնորհիվ փիլիսոփայությունը ձեռք է բերում ավարտականություն և Տիեզերքի գոյության նվիրական իմաստի բացահայտման հնարավորություն: Կրոնական փիլիսոփայության մեջ համադրվում են մարդու ստեղծագործական ընդունակությունների երկու հիմնական գումարելիներ՝ «վերացական մտածողության ընդունակությունը և բարձրագույն իրողության կոնկրետ

---

[12] Шердаков В. Н., Философия религии и религиозная философия. - Вопросы философии, 1995, № 2, с. 181.

[13] Տե՛ս Միրումյան Ռ., XIX դարի հայ կրոնական փիլիսոփայության ուսումնասիրության մեթոդաբանական հարցերի մասին.- Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ III, Ե., 1998, էջ 106:

[14] Աշըգեան Գ., Համառօտ փիլիսոփայութիւն, ի Նիկոմիդիա, 1885, Յառաջաբան, էջ VII-VIII:

հայեցողության ընդունակությունը» (Ն. Լոսկի): Մեթոդաբանական տեսանկյունից ինչպես կրոնական, այնպես էլ «գիտական» փիլիսոփայության հիմքում դրված են սոսկ հավատով ընդունված սկզբունքներ: Գիտական փիլիսոփայությունը, սակայն, չի պարզաբանում մարդու համար կենսական կարևորություն ունեցող աշխարհայացքային խնդիրներ: Դրա մասին է վկայում գոնե մեկ ու կես դարի (սկսած պոզիտիվիստներից) փիլիսոփայության պատմությունը: Մինչդեռ կրոնական փիլիսոփայությունը հենց այդ հարցերին է կոչված պատասխանելու: «Հաւատքը կարևոր ճշմարտութիւններուն մէկ ամփոփ ծանօթութիւնն է, ու գիտութիւնը՝ հաւատքով սովրուածներուն հաստատ ապացութիւնն է: Փիլիսոփայութիւնը հաւատքի կը պատրաստէ, որի վրայ հիմնուած է գիտութիւնը»[15]: Մարդու բարձրագույն պահանջմունքները, այսպիսով, ընդունակ են բավարարել ոչ թե գիտությունը, այլ կրոնը: Ուստի և հնարավոր է պնդել, որ կրոնական փիլիսոփայության մեջ է գլխավորապես արտահայտվում փիլիսոփայության ճշմարիտ (աշխարհայացքային) էությունը:

Փիլիսոփայությունը, ըստ էության, ինքնագիտակցություն է, անձնավորության «դիրք-որոշումն» է աշխարհում և ձևավորվում է որպես «աշխարհ-հայացք»: Փիլիսոփայությունն իր խորքային էությամբ մարդակենտրոն է: Այն որոշակի պատմամշակութային սահմաններում մարդու գոյության բացարձակ (իդեալական) իմաստի որոնման և սահմանման միջոց է: Պատմական հեռանկարում մարդը ճանաչում է իր պատմական բնույթը, ինչին հանգում է (ավելի ճիշտ՝ պետք է հանգի) մարդու ճանաչողական ողջ գործունեությունը: Որոշակի իմաստով կրոնը, հատկապես քրիստոնեական կրոնը, նույնպես ինքնագիտակցություն է: Հենց ռեֆլեքսիայի (ինքնագիտակցության) շնորհիվ է քրիստոնեությունը մշակել համամարդկային արժեքների ամբողջական մի համակարգ, որտեղ բարձրագույն արժեքը մարդն է՝ ազատ և ստեղծագործող անձնավորությունը: Հոգևոր այդ հայտնության իմաստավորման և գործնական իրականացման միջոցները նույնպես պատմականորեն պայմանավորված են և նպատակ ունեն քրիստոնեական մշակույթի զարգացման տարբեր փուլերում իմաստավորելու մարդու կյանքը: Ելնելով շարադրվածից, կարելի է հաստատել, որ կրոնական փիլիսոփայության մեջ փիլիսոփայությունն ու կրոնը օրգանական միասնություն են կազմում ինչպես իրենց բնույթի, էության, այնպես էլ նպատակային ուղղվածության առումով:

Կրոնական փիլիսոփայության գլխավոր բովանդակությունը մարդու գոյության խնդիրն է, իսկ մեր ժամանակի ճգնաժամը հենց գիտակցության, այսինքն՝ «մարդու ճգնաժամ» է: Մարդու էության և բնույթի, նրա կեցության նպատակի, աշխարհում նրա գոյության միջոցների և Աստծու հետ նրա փոխադարձ կապի վերաբերյալ հարցերը կազմում են տեսական այն միջուկը, որից էլ առաջանում է կրոնական

---

[15] Չամուռճյան Հ., Ճառ առաջին ժամանակի մարդոց կրօնական և մտաւորական և բարոյական կրթութեան վրայ: Կ. Պոլիս, 1843, էջ 1:

փիլիսոփայության ողջ խնդրակարգը, մինչդեռ մարդու հոգևոր ինքնորոշումն աշխարհում հնարավոր է դառնում նշված հարցերին տրված պատասխանների շնորհիվ: Այդ գործընթացը մեծապես կնպաստի սոցիալական զարգացման ընդհանուր ուղղվածությանը՝ մշտական ընդարձակմանը ձգտող կենտրոնախույս քաղաքակրթությունից դեպի կենտրոնաձիգ մշակույթը, ուղղված դեպի մարդը, նրա ինքնաճանաչումը, ինքնակատարելագործումը, ոգեշնչումը, ներդաշնականացումը: Այդ խնդիրները պետք է դիտվեն որպես սոցիալական կյանքի բարձրագույն խնդիրներ, քանզի դրանց մոռացության տալու հետևանքով աղքատանում է մարդու և հասարակության հոգևոր կյանքը (ինչի վկաներն ենք այսօր մենք), ինչը հարցականի տակ է դնում դրանց հետագա գոյության հնարավորությունն անգամ:

Կրոնական փիլիսոփայության նշանակալիությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ այն, ինչպես և ողջ քրիստոնեական մշակույթը, բացահայտում և հիմնավորում է մարդու (անձնավորության) ստեղծագործության և ազատության բացարձակ (տրանսցենդենտ) արժեքը: Մարդու կյանքում տրանսցենդենտ արժեքների որոշակի դերը ճանաչելով հանդերձ, կրոնական փիլիսոփայությունը, սակայն, «ուշադրությունը բևեռում է այն բանի վրա, որ այդ արժեքները իրականացվում են անհատի կողմից ռեալ սոցիալական հարաբերությունների և կառույցների ոլորտում»[16]: Հոգևոր բովանդակություն ունեցող սոցիալական պրակտիկան ապահովում է մարդու էության երկու՝ տրանսցենդենտ և երկրային կողմերը, իսկ դրանով նաև՝ նրա կեցության լրիվությունը: Այդ խնդիրը սերտորեն կապված է կրոնական փիլիսոփայության առանցքային խնդիրներից մեկի՝ «էությունը-պատշաճը» անտինոմիայի հետ: Սկսած Անտիկ շրջանից, փիլիսոփայության մեջ գերիշխում էր գոյի իմացության միջոցով պատշաճի ընկալման միտումը: Փիլիսոփայության պատմության մեջ, սակայն, առկա էր նաև այլ մոտեցում՝ պատշաճի իմացությունն է պայմանավորում գոյի ըմբռնումը (Սոկրատ, Կանտ): Պլատոնի փիլիսոփայական համակարգի մեջ նշված անտինոմիան հանվում է, քանզի գոյը և իդեալականը, հետևաբար գոյաբանությունն ու արժեաբանությունն այնտեղ նույնացվում են: Ճանաչել, թե ինչ է մարդը, նշանակում է սահմանել, թե ինչպիսին նա պետք է լինի: Պլատոնի այս կանխադրույթն իր ավարտականությունն է գտնում քրիստոնեական մշակույթի մեջ հետևյալ բանաձևի տեսքով՝ անձնավորությունը Աստծու կերպարն է մարդու մեջ: Կրոնական փիլիսոփայության ողջ բովանդակությունն ուղղված է պատմության մեջ այդ իդեալի իրականացման անհրաժեշտության և հնարավորության մեկնաբանմանը:

Հոդվածի համատեքստում հարկ է շեշտադրել մեկ հանգամանք ևս: Արդի աշխարհում ավելի ու ավելի է նկատելի դառնում հետևյալ օրինաչափությունը. բազմաթիվ ազգերի և պետությունների գործունեության մեջ գերիշխանությունը տրվում է կրոնական աշխարհայացքին: Սոցիալ-քաղաքական գործընթացների

[16] Коротков Н., Социальный аспект проблемы человека в религиозной философии. Киев, 1978, с. 121.

մեջ (գլոբալ, համաշխարհային, միջազգային, ներազգային, ներքաղաքական) կրոնական գիտակցության համապարփակ ներգրավվածության պատճառով սոցիալական գործընթացներն ու իդեալները իմաստավորվում և ձևակերպվում են «կրոնի լեզվով»: Պարզվում է, որ սոցիալական կյանքի արդիականացման և դրանով պայմանավորված՝ գիտակցության աշխարհականացման ճանապարհին զուր էին կրոնի հաղթահարմանն ուղղված ողջ ջանքերը: Պատճառն այն է, որ հումանիտար աշխարհայեցողության զարգացող տկարացման, գիտելիքի մեծացող թաքնության և ամբողջական մտածողության ընդունակության կորստի պայմաններում անխուսափելի է դարձել հասարակության հոգևոր ամրակների՝ գաղափարների կամ իդեալների առաջացման անհնարինությունը: Մինչդեռ կրոնական աշխարհայեցողությունն ընդունակ է մշակել և փոխհաղորդել բացարձակ (համամարդկային) արժեքներ, որոնք հենց իրենց բացարձակության պատճառով ընկալելի են որպես արտաժամանակային: Իսկ դա նշանակում է, որ կրոնական գաղափարների և իդեալների մեջ հնարավոր է բացահայտել ժամանակի կողմից պահանջված բովանդակություն: Կրոնական գիտակցության նշված առանձնահատկությունը ցայտուն<br>որեն դրսևորվում է քրիստոնեական կրոնի և նրա վրա հիմնված՝ քրիստոնեական մշակույթի մեջ. քրիստոնեությունը ժամանակի մեջ զարգացող մշակութային ամբողջություն է:

Սոցիալական կյանքի ունիվերսալականացումը զուգորդվում է հայրենամերժության, արմատների բացակայության զգացման լարումով, ինչը թուլացնում է ազգային մշակույթի հիմքերը, հարթաչափում ազգի բարոյական հենարանը հանդիսացող հոգևոր արժեքները: Այդ գործընթացը հնարավոր է կանխել կրոնական վերածննդի, այսինքն՝ ազգային աշխարհայացքի ձևավորման միջոցով: Վերջինս հատկապես կարևոր է Հայաստանի համար: Հին գաղափարախոսական նորմերի խորտակումից հետո հայ ազգի կենսագործունեությունը անհրաժեշտ է ապահովել նախ և առաջ հոգևոր դաշտի լրիվությամբ: Աշխարհին տնօրինում է գաղափարը, ուստի և ազգերի ճակատագրերը մեծավ մասամբ պայմանավորված են նրանց աշխարհայեցողության մեջ ամրագրված գաղափարներով ու իդեալներով: Առանձնահատուկ նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ հայ ժողովրդի ազգային ոգու (ժամանակակից տերմինաբանությամբ՝ մենթալիտետի) ձևավորման գործում մեծ կշիռ ունի Հայ Լուսավորչական կրոնը և Հայ Եկեղեցին. «Կրօնականին մէջ ազգային ոգիին ազդեցութեամբ կարելի է բացատրել մեծ մասամբ Հայաստանեայց Եկեղեցիին իբրև քրիստոնէական ինքնայատուկ և անկախ դաւանանքի պահպանութեան համար թափած ճիգը դարերու ընթացքին: Բոլոր դաւանանքներուն մէջ ամենամեծ չափով ազգային նկարագիր ունեցողը Հայաստանեայց Եկեղեցին եղած է, միայն ու միայն յատուկ Եկեղեցի մը...[17]: Ազգային գաղափարը հիմքն ու երաշխիքն է մեր ազգի հոգևորի պահպանման,

[17] Զորմիսեան Լ., Համապատկեր արևմտահայ մէկ դարու պատմութեան: Պէյրութ, 1974, էջ 208:

ինչին մեծապես նպաստում է ազգի կրոնական փորձը: Այդ փորձի մեջ է արտահայտվում հայ ազգի պատմական կեցության ունիվերսալ իմաստը, որի միջոցով էլ սահմանվում է ազգերի ընկերակցության մեջ նրա տեղն ու դերը: Ազգի հոգևոր ավանդույթների աշխարհն է ներշնչում մարդուն արմատավորվածության, հետևաբար՝ նաև ազատության և հայրենիքի հանդեպ պատասխանատվության զգացում, որը թույլ չի տա նրան ընկնել աղանդավորության վնասակար ազդեցության տակ կամ պարզապես լքել հայրենի հողը:

Կրոնական փիլիսոփայությունն աշխարհայացքի այնպիսի մի ձև է, որի մեջ օրգանապես զուգորդվում և որոշակի կենսական միասնություն են կազմում կրոնական և ազգային ըմբռնումները: Այդ մտքի ստույգության մասին են վկայում թեկուզ XIX դ. հայ կրոնական փիլիսոփայության ներկայացուցիչները (Հ. Տերոյենց, Հ. Չերքեզյան, Ստ. Մանդինյան, Գ. Աշըգյան, Գ. Այվազովսկի, Մ. Մսերյան, Ա. Գուրգենյան, Պ. Էմմանուելյան, Է. Սիրունյան), որոնք ուղղակիորեն դիմել են կրոնական, ազգային, պատմամշակութային, մարդաբանական խնդիրներին՝ իրենց առջև ունենալով մեկ գլխավոր նպատակ՝ հիմնավորել հայ ազգի հոգևոր-բարոյական միասնության և անկախության գաղափարը: Հավանորեն XIX դ. հայ կրոնական փիլիսոփայությունը պետք է դիտել ոչ միայն որպես ակադեմիական հետաքրքրասիրության առարկա: Այն կարող է նպաստավոր լինել հայ ժողովրդի կենսագործունեության արդի պայմանների համեմատ՝ որոշակի աշխարհայացքային դիրքորոշումների ձևակերպման համար:

# 1700 - ԱՄՅԱԿ

*Հ. Ժ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

## ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ. ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ

Հայոց բազմադարյան պատմությունը դժվար է պատկերացնել առանց Հայ Եկեղեցու հարուստ ու բովանդակալից պատմության, պատմություն, որը շատ ուսանելի էջեր ունի յուրաքանչյուրիս համար: Այնժամ, երբ Հայոց երկիրը զրկված է եղել պետականությունից, Հայ Եկեղեցին է դարձել նրա կրողն ու ոգին, ազատագրական պայքարի ոգեշնչողն ու կազմակերպիչը: Հայ Եկեղեցուն ու նրա նվիրյալներին ենք պարտական նաև հայոց հավատի ու մշակույթի, ավանդույթների ու ազգայինի պահպանության համար:

Հայոց Եկեղեցու բազմադարյան և հարուստ տարեգրության մեջ կան հոգևոր շատ այրեր, որոնք իրենց կատարած մնայուն ու նվիրական գործերի համար արժանացել են համաժողովրդական սիրո ու գնահատանքի, դասվել հայոց սրբերի շարքը. Գրիգոր Լուսավորիչ, Սահակ Պարթև, Ներսես Պարթև, Ներսես Շնորհալի... և շատ ուրիշներ: Երևելի այդ այրերի շարքում իր առանձնահատուկ և մնայուն տեղն ունի Ներսես Աշտարակեցին՝ մի մեծանուն հայ եկեղեցական, հասարակական-քաղաքական գործիչ, որն իր ողջ կյանքի նպատակն է դարձրել հայրենիքի ու հայոց ազգի ազատագրության սուրբ գործին զինվորագրվելը:

Ներսեսը (աշխարհիկ անունը՝ Թորոս) ծնվել է 1770 թ. Աշտարակում, Տեր Ավետիսի ընտանիքում, որը ծագում էր Կամսարականների նշանավոր նախարարական տոհմից: Երբ բոլորում է մանուկ Թորոսի յոթ տարին, նրան ուղարկում են Սիմեոն Կաթողիկոսի՝ Էջմիածնում բացած ժառանգավորաց դպրոց: Արդեն պատանի հասակում Ներսեսի մոտ ձևավորված բացառիկ ունակություններն ու հաստատուն բնավորությունը նրան առանձնացրել են մյուս ուսումնականներից: Այդ շրջանի մասին պատմում է նրա դասընկերներից մեկը՝ Ահարոն վարդապետը. «Ներսեսը իրենից ավելի հասակավոր աշակերտների դասերը լսելով անմոռաց պահում էր մտքումը: Մեզնից ավելի քիչ էր սերտում, բայց ավելի լավ էր տալիս»[1]:

---

[1] Տե՛ս Ալ. Երիցյան. Նյութեր Ներսես Ե-ի կենսագրության համար: Թիֆլիս,1877, էջ 5:

Հաջողությամբ ավարտելով ուսումը. 1791 թ. Գալուստ արքեպիսկոպոսը Էջմիածնում նրան ձեռնադրում է ավագ սարկավագ և վերակոչում Ներսես: Այդ ժամանակ Ներսեսն արդեն քսան տարեկան էր: Ղուկաս Կաթողիկոսի հանձնարարությամբ Ներսեսն այնուհետև ուղարկվում է Թադեոս արքեպիսկոպոսի մոտ՝ որպես կոնդակագիր: Հայտնի է, որ կոնդակներ և հրովարտակներ գրելու արհեստը դեռևս հին ժամանակներից հարգված զբաղմունք էր և մի առանձին հմտություն ու շնորհք պահանջում: Այստեղ Ներսեսը մնում է մինչև 1793 թ., երբ Ջմյուռնիայում առաջնորդ է նշանակվում Դանիել եպիսկոպոսը (հետագայում նաև կաթողիկոս): Դանիելն անձամբ խնդրում է Ղուկաս Կաթողիկոսին՝ թույլատրել Ներսեսին իր հետ տանելու Ջմյուռնիա: Եվ այստեղ էլ հենց, 1794 թ. սեպտեմբերի 24-ին, Դանիել արքեպիսկոպոսի ձեռքով Ներսեսը ձեռնադրվում է աբեղա և առաքելական հանձնարարականով լինում Հունաստանում, Մոլդավիայում և Վալախիայում: Այդ ամենը տևում է մոտ երեք տարի, և երբ 1799 թ. Դանիելն ընտրվում է Կ. Պոլսի պատրիարք, Ներսեսը շուտով մեկնում է այնտեղ: Դանիելի պատրիարքության հետ միասին սկսվում է Ներսեսի եկեղեցական ու քաղաքական նոր ու բուռն կյանքը և այդ ժամանակից էլ սկսած, մեծ ազդեցություն ու դիրք ձեռք բերում էջմիածնական գործերում: 1800 թ. Ներսեսին շնորհվում է վարդապետի աստիճան: 1808 թ. հուլիսին Ներսեսը հանդիսավորությամբ ձեռնադրվում է եպիսկոպոս:

Ներսես Աշտարակեցին 19-րդ դարի հայ իրականության հզոր անհատականությունն էր: Չկար ժամանակին հուզող մի հարց, որին իր անմիջական մասնակցությունը չբերեր Ներսես Աշտարակեցին, կամ որևէ հարց լուծվեր առանց նրա միջամտության ու նրա շնորհիվ: Այս իմաստով նրա գործունեության հիմնական շրջանը 19-րդ դարի առաջին կեսն էր, երբ Կովկասում ընթանում էին բուռն իրադարձություններ: Ռուսական արքունիքում օրակարգի էր դրված Հարավային Անդրկովկասի նվաճման հարցը: Խնդիրն իրագործելու համար ռուսական կառավարությունն այստեղ ակնկալում էր հայ ժողովրդի աջակցությունը: Արքունիքը ջանադրաբար փնտրում էր մի մարդու, որն իր վրա կվերցներ այդ դժվարին առաքելությունը: Թեկնածուն մեկն էր ու միակը՝ Ներսես Աշտարակեցին, որի համար, սակայն, խնդիրն այլ ձևով էր առարկայանում: Ռուսական զենքի հաղթանակի մեջ նա առաջին հերթին տեսնում էր մեկ նվիրական ու ազգանվեր փափագի իրականացում՝ հայրենի երկրի ազատագրումը պարսկական լծից: Քաջ գիտակցելով պահի ողջ լրջությունն ու կարևորությունը՝ Ներսեսն առաջիններից մեկը նետվեց դարասկզբին Կովկասում խմորվող իրադարձությունների հորձանուտը, ստանձնելով կրոնավորին քիչ հարիր դիվանագետի ու առաջնորդի համար իրեն հատկացված դժվարին ու պատասխանատու դերը:

1804 թ., երբ սկսվեց ռուս-պարսկական առաջին պատերազմը, Ներսեսն ամենուր էր. նրան կարելի էր տեսնել Ցիցիանովի գլխավորած ռուսական բանակում՝ թե՛ Գյանջայի մոտ, և թե՛ Երևանում. մասնակցություն է ունեցել բոլոր նշանավոր ճակատամարտերին: Այդ արշավանքի ժամանակ, երբ պարենմթերքի և զինամթերքի պակասությունն իրեն զգացնել է տվել, Ներսեսի օգնությամբ միայն

ռուսական բանակը փրկվում է կործանումից. «Ելիզավետպոլի տակ նա (Ներսես Աշտարակեցին - Հ. Հ.) գտնվում էր իշխան Ցիցիանովի զորքի մեջ, և հայ բնակչության վրա ունեցած իր ազդեցությամբ նպաստեց ռուսական բանակի հաղթանակին ...Երևանի տակ ռուսական բանակը գտնվում էր ծայր աստիճան դժվարին կացության մեջ՝ հացի, զինամթերքի և այլ պահանջների անբավարարության պատճառով: Ներսեսը Էջմիածնից Երևան հասցրեց 12 հազար փութ հաց և ալյուր, 25 փութ վառոդ և ամեն հնարավորն արեց դժվարին այդ վիճակից դուրս գալու համար»[2]: Այս փաստը հետագայում հաստատվում է նաև Ներսես Աշտարակեցու՝ պետքարտուղար Բլուդովին ուղղված նամակում. «Ինձ բախտ է վիճակվել լինել Ցիցիանովի բանակում, ամենուր և ամեն հարցում եռանդորեն համագործակցել նրա հետ»,- գրում էր Աշտարակեցին[3]: Ներսես Աշտարակեցու այս գործունեությունը չվրիպեց պարսկական կառավարության ուշադրությունից: Ծայր աստիճան անհանգստացած, նրանք մեկ սիրաշահում էին Աշտարակեցուն և կուրացնում ամեն տեսակ շնորհներով, մեկ բանտարկում նրան և սպառնում մահապատժով[4]: Թիֆլիսում ռուսական զորքերի հրամանատար գեներալ Ռտիշչևը 1814 թ. հունվարի 14-ի զեկուցագրում նույնպես հաստատում էր, որ Ռուսաստանին նրա նվիրվածությունը «Ներսեսին բազմաթիվ անհանգստությունների տեղիք տվեց պարսկական կառավարության կողմից»[5]: 1819 թ. հունիսի 15-ին գեներալ Երմոլովի երաշխավորությամբ Ներսես Աշտարակեցին ներկայացվում է Ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանի:

Այսպիսով, փաստերն անառարկելիորեն ապացուցում են ռուս-պարսկական առաջին պատերազմին Ներսես Աշտարակեցու գործուն մասնակցությունը: Այս ամենից հետո, սակայն, միանգամայն անընդունելի են Լեոյի՝ Ներսես Աշտարակեցուն տված գնահատականները: Բազմավաստակ պատմաբանն ուղղակի նսեմացրել է 19-րդ դարի հայ հոգևոր և քաղաքական գործչի դերը. «Ցիցիանովը պաշարելով Երևանը,- գրում է Լեոն,- ուներ իր կողքին Հովհաննես Գեղարդակիրի, Ներսես Աշտարակեցու, Գրիգոր եպիսկոպոս Խամսեցու նման հլու և անխոս (?? - Հ. Հ.) գործակալներ... Ունենալով այսքան անվերապահ գործակալներ, Ցիցիանովն արտաքուստ այնպիսի դիրք էր բռնած, որ թույլ էր տալիս նրան շահագործել հայերի զգացմունքը մինչև վերջին կաթիլը, բայց ներքուստ մնում էր հայ ժողովրդի ոխերիմ թշնամի: Նկատում էին այս բանը նրա գործակալները...»[6]:

Եվ թեպետ ռուս-պարսկական առաջին պատերազմը հաջողություն չունեցավ, և հայության մի զգալի հատված շարունակեց մնալ պարսկական տիրապետության տակ, Ներսես Աշտարակեցու հետագա գործունեությունը կրկին սևեռվեց Արևել-

[2] Տե՛ս Г. Эзов, Сношенія Петра Великого с армянским народом. СПБ, 1898, с. CXXIII:

[3] Նույն տեղում, էջ CXXV:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

[6] Տե՛ս Լեո, Հայոց պատմության նորագույն շրջան: Երևան, 1984, հտ. 4, էջ 222:

յան Հայաստանի ազատագրության խնդրի վրա. առանձին դեպքերում թերևս զոհաբերելով իրենց հատուկ հպարտությունն ու վեհանձնությունը, հաճախ էլ նաև՝ վտանգելով սեփական կյանքը: Պարսիկները մի քանի անգամ նրան բանտարկեցին և նույնիսկ սպառնում էին մահապատժով: Եվ չնայած այդ ամենին, Ներսեսը չէր դադարում իր ազգանպաստ գործունեությունը՝ իր շատ հայրենակիցների փրկելով պարսիկ խաների կամայականություններից: Պատմում են, որ 1810 թ., երբ քառասուն թուման պարտքի դիմաց պարսիկները ցանկացել են վաճառել քանաքեռցի Հովհաննեսի Ահարոն և Կարապետ որդիներին, ճարահատյալ հայրը դիմում է Ներսես Աշտարակեցուն և, գումարը ստանալով, փրկում իր որդիներին ստրկությունից[7]:

1814 թ. Ներսեսն արդեն արքեպիսկոպոսի աստիճանով գլխավորում էր Վիրահայոց թեմի առաջնորդությունը: Նրա առաջին խնդիրն այստեղ եղավ լուսավորություն տարածելը ինչպես հոգևորականության, այնպես էլ բազմահազար վիրահայոց շրջանում: Այս իմաստով, Ներսես Աշտարակեցու կատարած ազգանվեր գործի ակնառու արդյունքը, անշուշտ, Թիֆլիսում 1824 թ. Ներսիսյան նշանավոր դպրոցի հիմնումն էր: Իր մեկդարյա գործունեության ընթացքում դպրոցը դարձավ հայագիտության գլխավոր օջախներից մեկը: Թեպետ 1815 թ. Մոսկվայում արդեն բացվել էր Լազարյան նշանավոր ճեմարանը, սակայն, իր բոլոր առավելություններով հանդերձ, այն չէր կարող ստանձնել այն դերը, ինչը պիտի կատարեր հետագայում հայ իրականության ծոցում հիմնադրված Ներսիսյան դպրոցը: Մի քանի հարյուրի է հասնում այն շրջանավարտների թիվը, որոնք ուսումնառություն ստանալով Ներսիսյան դպրոցում, հետագայում մեծապես նպաստեցին հայ գրականության, գիտության և արվեստի զարգացմանը: Ներսիսյան դպրոցը կրթության բնագավառում կատարեց ավելին, քան ժամանակի որևէ հայ դպրոց: Այդ դպրոցի առաջին հունձքը հանդիսացան հայ մշակույթի երախտավորներ Խաչատուր Աբովյանը, Ստեփանոս Նազարյանցը, Գաբրիել Պատկանյանը և շատ ուրիշներ: Նրանցից շատերն իրենց ուսումը հետագայում շարունակեցին Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում, մասնավորապես Մոսկվայում, Պետերբուրգում և Դորպատում, այնտեղ ստեղծելով հայկական ուրույն միջավայր՝ մշտապես երախտապարտ լինելով իրենց նախկին կրթօջախին: Ներսեսն անձամբ ինքն էր մշակում ու կազմում ուսումնական ծրագրերը՝ համապատասխանեցնելով դրանք ժամանակի ոգուն ու խնդիրներին:

Ներսեսի անմիջական ջանքերով ու հովանավորությամբ տպագրվեցին բազում գրքեր, այդ թվում նաև՝ օտար հեղինակների: 1857 թ. գերմաներենից ռուսերեն թարգմանվեց և հրատարակվեց Հաքսհաուզենի «Անդրկովկասի մարզ» աշխատությունը, որի առաջին էջում Ներսես Աշտարակեցու դիմանկարն է ու նրա երկտողը հեղինակին. «Ես ինքս,- գրում է Աշտարակեցին,- ծնվել եմ Հայաստանում, շատ բան եմ տեսել ու լսել և հաճախ ակամայից զարմացել եմ եվրոպական ճանապարհորդների՝ հայերի մասին արտահայտած կարծիքների ու ստացած տպավորու-

[7] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 22ա, վավ. 41:

թյունների համար: Չունենալով հաստատուն գիտելիքներ, նրանք խոսում են ամեն ինչի մասին և դրանով տարակուսանքի մեջ գցում մարդկանց, շատերը սխալ տեղեկություններ են հաղորդում այդ երկրի մասին: Դուք, պարոն,- շարունակում է կաթողիկոսը,- ձգտել եք հասնել ճշմարիտին, ցանկացել եք տեղեկանալ նրանց մասին հանգամանորեն և հիմնովին, ուստի ես սուրբ պարտականություն համարեցի հոգեպես շնորհապարտ լինելու Ձեզ»[8]:

Աշտարակեցուն գրավողը հեղինակի հետևյալ մտքերն էին. «Հրեաներից, հին երկրներից և Եգիպտոսից հետո, համաշխարհային պատմության մեջ հազիվ թե գտնվեն երկրներ, որոնք կարողացել են մարդկային ցեղի մասին պահպանել այդքան կարևոր տեղեկություններ, որքան այն երկրում, որ ընկած է Սև և Կասպից ծովերի միջև... և հասնում է մինչև Արարատ լեռը... Այս տեսակետից առավել քան հետաքրքրություն է ներկայացնում մի երկիր, որը գտնվում է գլխավոր մայրուղիների խաչմերուկում և նրա միջոցով էին հնում կատարվում ժողովուրդների մեծ տեղաշարժեր... Ինչպես վկայում է ավանդությունը, այստեղ է ընկել թռնակալ Բելը... այստեղ է առաջին անգամ հաջողությամբ քարոզել քրիստոնեությունը Սուրբ Գրիգորը...Իմ կարծիքով,- շարունակում է Հաքսհաուզենը - հայերը կանգնած են զարգացման բարձր աստիճանի վրա, քանի որ հոգևոր որակների մեջ է նրանց ապագայի կոչումը՝ դառնալու Ասիայի և Եվրոպայի միջև համագործակցության օղակը: Հայերի մոտ հատկապես ուժեղ է ազգային ներքին կապը, իսկ... հավատի հանդեպ նվիրվածությունը՝ ազգայինի հզոր սկիզբը: Հայերն, անկասկած, առավելություն ունեն իսկական հայրենիքի ու հողի մասին իրենց պատկերացումներում: Ինձ հատնի չէ մեկ այլ ժողովուրդ, որում ընտանեկան կապերն այդքան ամուր լինեն, որքան հայերի մոտ է»[9]:

Ինչ էլ որ ձեռնարկել է Ներսես Աշտարակեցին, նպատակը մեկն էր՝ ազգանպաստ գործունեությունն ու հայոց ազգի առաջընթացին ծառայելը: Նրա թե՛ թեմական առաջնորդության, և թե՛ կաթողիկոսության շրջանը նշանավորվել է հայ ժողովրդի ու նրա մշակույթի առաջընթացով. բացվել են նոր դպրոցներ ու մշակութային օջախներ: Եվ եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ հայ դպրոցը հիմնականում պահվում էր Եկեղեցու հաշվին ու նրա միջոցներով, ուստի որքան հզոր էր Հայ Եկեղեցին, այնքան մեր մշակույթն ու դպրությունը առաջադիմում էին:

Բնատուր խելացի միտքը, աստվածաբանական խորը գիտելիքներն ու երկրամասի գերազանց իմացությունը Ներսեսին կանխորոշեցին հասարակական-քաղաքական բարձր ու արժանի դիրք ինչպես ռուսական արքունիքում, այնպես էլ տեղի իշխանավորների շրջանում: Նա մեծ հեղինակություն էր վայելում ոչ միայն հայերի, այլ նաև վրացիների և մյուս ժողովուրդների մոտ: Նրա արտահայտած կարծիքների ու մտքերի հետ հաշվի էին նստում երկրամասի գրեթե բոլոր կառավարիչները, որոնք բազմիցս դիմում էին նրան՝ օգտակար խորհուրդների համար, թեպետ պետի

[8] Տե՛ս Гаксгаузен, Закавказский край. СПБ, 1867, с.7.

[9] Նույն տեղում, էջ 188-189:

ասել, որ վերջիններս էլ ժամ չէին Ներսեսին ռուսական արքունիքում բազում անգամ պարգևների արժանացնելու համար երաշխավորագրերի խնդրում:

Սկսված 1826-1828 թթ., ռուս-պարսկական երկրորդ պատերազմի առաջին ամիսներին Ներսեսը Թիֆլիսում իր անմիջական մասնակցությունը բերեց նախ ռազմական խորհրդի աշխատանքներին, ապա նաև՝ ռազմական բուն գործողություններին:

Ռուսական զորքերի հաջողությունները ոգևորում էին հայերին: Ժողովրդի մեջ ավելի էր ամրապնդվում պարսկական տիրապետությունից ազատագրվելու հավատը: Եվ այդ ամենի ոգեշնչողն ու կազմակերպիչը կրկին Ներսես Աշտարակեցին էր: Նա հատուկ կոչով դիմեց հայրենակիցներին՝ ոտքի կանգնել Հայաստանի ազատագրության համար: «Հասավ ժամը, երբ աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի և հայոց ազգի ազատագրությունը: Ոտքի կանգնեք, հայոց քաջեր, թոթափեք պարսից լուծը, ուրախացրեք ալեզարդ Մասիսին, մի անգամ արյունով ներկեցեք հայրենի հողերը և ապա ապրեցեք ազատ»: Ներսես Աշտարակեցու կոչերը լայն արձագանք գտան հայ ժողովրդի մեջ: Բազմաթիվ հայ երիտասարդներ ցանկություն հայտնեցին զենք վերցնել և մասնակցել հայրենիքի ազատագրությանը: 1827 թ. գարնանը Թիֆլիսում Ներսես Աշտարակեցու անմիջական մասնակցությամբ ու նրա ղեկավարությամբ կազմակերպվեցին կամավորական ջոկատներ: Հայկական կամավորական ջոկատներն ունեին իրենց կանոնադրությունը, ազգային դրոշակը և զինվորական աստիճանով հայ հրամանատարներ: Նրանց բոլոր հրամանները ու մարտական առաջադրանքները տրվում էին հայերեն: Ներսեսն անձամբ՝ ձիու վրա նստած, ինչպես վայել է հրամանատարին, ինքն էր անցկացնում կամավորականների ստուգայցը և առաջնորդական իր օրհնությունը տալիս աշխարհազորայիններին՝ ռազմաճակատ մեկնելուց առաջ: Հայ կամավորները ակտիվ մասնակցություն ունեցան պատերազմական գործողություններին և խիզախորեն մարտնչեցին թշնամու դեմ: Ներսեսի ծառայությունները այդ ժամանակ այնքան ակնառու էին հանդեպ ռուսական արքունիքը, որ տեղեկանալով, թե նրա կոչերն այդքան մեծ արձագանք է գտել հայության շրջանում, կայսր Նիկոլայ Առաջինն անձամբ 1827 թ. փետրվարի 2-ին ի դեմս Ներսեսի, իր հատուկ շնորհակալությունն էր հայտնում հայ ժողովրդին. «Ի դեմս հայոց արքեպիսկոպոսի, կայսրը ողջ հայ ժողովրդին հայտնում է իր երախտապարտությունը պարսկական պատերազմի ընթացքում ցուցաբերած հավատարմության և նվիրվածության համար»,- ասվում էր կայսեր շնորհակալագրում[10]:

Ներսես Աշտարակեցու դերը մեծ է նաև Էջմիածինը փրկելու գործում: 1827 թ. ամռանը, երբ պարսիկները պաշարել էին Էջմիածինը, Ներսեսի խնդրանքով ռուսական բանակը գեներալ Կրասովսկու հրամանատարությամբ օգոստոսի 17-ին արյունահեղ ճակատամարտ տվեց պարսիկների դեմ և, չնայած թվական մեծապես

[10] Տե՛ս Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа. М., 1833., ч. II, с. 308.

ցերակչռությանը, մարտն ավարտվեց ռուսների հաղթանակով, և Էջմիածինը փրկվեց ավերումից: Այժմ էլ Էջմիածնից Օշական տանող ճանապարհի վրա կանգուն է այդ ճակատամարտը հավերժացնող հուշարձանը:

1827 թ. հոկտեմբերի 6-ին, Երևանի բերդի գրավումից օրեր անց, ստեղծվեց Երևանի ժամանակավոր վարչություն՝ գեներալ Կրասովսկու գլխավորությամբ, որի անդամն էր նաև Ներսես Աշտարակեցին: Թե որքան մեծ և արդյունավետ է եղել Ներսեսի նպաստը Երևանի վարչության գործերը կարգավորելու և կազմակերպելու խնդրում, խոստովանում է նույնիսկ հետագայում նրա հակառակորդ կոմս Պասկևիչը. այս տողերը Կրասովսկուն ուղղված նրա նամակից են. «...Քանի որ ռազմական գործերը Ձեզ լիովին կզբաղեցնեն,- գրում էր գեներալը,- ես հարմար գտա Երևանի և Էջմիածնի վանքի մոտակա գյուղերի բնակիչների կառավարումը հանձնել ...արքեպիսկոպոս Ներսեսին՝ նկատի ունենալով նրա փորձառությունը, ողջամտությունը և մեր կառավարության հանդեպ նրա նվիրվածությունը: ...Բոլոր գործերը կատարել միմիայն արքեպիսկոպոս Ներսեսի համաձայնությամբ»[11]:

Հանգամանքների բերումով և գլխավորապես, որ Ներսեսի անմիջական մասնակցությունն ու օգնությունը նպաստում էին իր գլխավորած ռազմական գործողությունների հաջողությանը, Պասկևիչը ստիպված էր հաճախակի դիմել նրա օգնությանը: Այդ ամենն իր գրքում խոստովանում է նույնիսկ Պասկևիչի կենսագիր, ռուս պատմաբան Շչերբատովը. «Բենկենդորֆի ջոկատի հետ միասին,- գրում է նա,- Էջմիածին ժամանեց հայ արքեպիսկոպոս Ներսեսը, որը պարսկահայերի վրա հսկայական ազդեցություն ուներ: Շնորհիվ նրա համագործակցության, հայերը հնարավորին չափ օգնում էին մեր զորքերին սննդամթերքի մատակարարման խնդրում և հատկապես պարսից կառավարության մտադրությունների և պարսկական զորքերի տեղաշարժերի մասին կարևոր տեղեկություններ հաղորդելով»: «1827 թ. ապրիլի 24: Արքեպիսկոպոս Ներսեսը, որն անկեղծ նվիրված է Ռուսաստանին, իր օրինակով ոգևորում է հայերին»[12]:

Հետագայում, սակայն, չկարողանալով հանդուրժել Ներսեսի այդքան մեծ ժողովրդականությունն ու ազդեցությունը թե՛ հայության, և թե՛ ռուս գեներալների շրջանում, նրա նկատմամբ լցվեց անհանդուրժողականությամբ ու նախանձով: 1828 թ. մարտի 3-ին Պասկևիչը ռուսական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Դիբիչին գրում էր. «Ներսեսի հարցում ես ծանր կացության մեջ եմ, քանի մեր քաղաքականությունը արգելում է ինձ բոլորովին հեռացնել նրան այստեղի գործերից»[13]: Երիցյանն այդ առթիվ գրում է. «Պասկևիչը ցանկանում էր, որ Ներսեսի անունը այլևս չհիշվի Կովկասում, որ նա էլ Մադաթովի նման հեռացվի այս երկրից..... քանի որ Ներսեսն իր մեծ հեղինակությամբ, իր հմտությամբ, ձգտում-

[11] Տե՛ս В. Щербатов, Генерал-Фельдмаршал князь Паскевич. СПБ, 1890, т. 2, с. 245.

[12] Նույն տեղում, էջ 233:

[13] Տե՛ս Ալ. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մաս Ա, Թիֆլիս, 1894, էջ 355:

ներով ու եռանդով կարող էր միայն խոչընդոտներ ստեղծել Պասկևիչի կազմակերպած նոր վարչության համար: Բայց ինչպես հեռացնել նրան, երբ նա մի հզոր ուժ էր և հրամանատարից գրեթե անկախ դիրք ուներ և դեռ նոր էր ստացվել կայսեր բարձրագույն հրամանը Ներսեսի շնորհների մասին, և այդ հրամանը պիտի կատարվեր»[14]: Ահա այդ շնորհագիրը. 1828 թ. հունվարի 25-ին Ներսես Աշտարակեցին արժանանում է Ռուսաստանի բարձրագույն պարգևի՝ Ալեքսանդր Նևսկու շքանշանի: «...Բազում դեպքերում Դուք մեծ նվիրվածություն եք ցուցաբերել դեպի Ռուսաստանը՝ ենթարկելով Ձեզ անձնական վտանգների... Նշանավորել եք Ռուսաստանին օգտակար լինելու հատուկ շնորհներով, հայ ժողովրդի մեջ մշտապես պահելով հավատարմությունը Ռուսաստանի հանդեպ... Ի նշանավորումն Ձեր օգտակար ծառայությունների և ի նշան իմ հատուկ կամեցողությանը դեպի հայ ժողովուրդը, ես արդարամիտ գտա Ձեզ ներկայացնել Ս. Ալեքսանդր Նևսկու շքանշանի»[15]:

Եվ երբ Աշտարակեցին հրաժարվեց աջակցել Պասկևիչին՝ Օշականի հերոս գեներալ Կրասովսկուն Կովկասից հեռացնելու համար, այժմ արդեն գեներալը աշխատում էր Կովկասից հեռացնել իրեն՝ արքեպիսկոպոսին: Ծնունդ առավ Պասկևիչ-Աշտարակեցի հակամարտությունը: Կոմս Երևանսկին բազում ամբաստանագրեր ուղարկեց արքունիք: Այդ «պատերազմի» մասին տեղյակ էին բոլորը՝ կայսրից սկսած: Եվ որպեսզի այստեղ էլ ընդգծվի Ներսեսի ազգանվեր կերպարը, հստակ երևում է հենց նրա հակառակորդ կոմսի՝ նրան ներկայացրած մեղադրանքներից: Ներսեսը մեղադրվում էր հայության շահերի պաշտպանության, Ռուսաստանին միացվելիք հայկական տարածքների ընդարձակման, Էջմիածնի հարստությունները Հայ Եկեղեցու տնօրինությանը հանձնելու համար: Մեղադրանքներից մեկն էլ Էջմիածնի վանքը պաշտպանելու համար 200 հոգուց բաղկացած մի զորաջոկատ ստեղծելու Ներսես Աշտարակեցու ցանկությունն էր: Պասկևիչը դրանում տեսնում էր հայկական բանակի ստեղծման փորձ:

Աշտարակեցի-Պասկևիչ հանգուցահարցը դուրս եկավ անձնական հարաբերությունների ոլորտից և ձեռք բերեց քաղաքական հստակ դրսևորում: Պետերբուրգում բոլորը գիտեին Պասկևիչի անձնական փառասիրության և ինքնասիրահարվածության մասին, ուստի հարցը չսրելու համար Ներսես Աշտարակեցուն առաջարկեցին գլխավորելու Բեսարաբիայի թեմը:

Մեզանում այս փաստը ներկայացված է որպես աքսոր, և հաղթանակը վերագրվել է Պասկևիչին: Մինչդեռ վաղաժամ էր այդ մասին խոսելը: Բանն այն է, որ պետք է սկսվեր ռուս-թուրքական պատերազմը, և Բալկանյան թերակղզու հայերի աջակցությունը ստանալու համար ամենից հարմար թեկնածուն կրկին Ներսեսն էր: Նորից դիմենք Ներսես Աշտարակեցու կենսագիր, պատմաբան Ալեքսանդր Երիցյանին. «Պատրաստվելով օսմանցոց դեմ պատերազմ բանալու, տերությունը

[14] Նույն տեղում:

[15] Տե՛ս Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа. М., 1833., ч. II, с. 308.

կարևոր էր համարում Բեսարաբիայում ունենալ մի կտրիճ ու գործունյա հայ եպիսկոպոս, որ կարողանար Արղության Հովսեփ արքեպիսկոպոսի պես տարածել ռուսական ազդեցությունը Բալկանյան թերակղզու հայ ժողովրդի վրա: Այդ ժամանակվա հայ հոգևորականության մեջ այդպիսի դեր կատարելու համար ամենից ընտրյալը մեկն էր՝ Ներսես արքեպիսկոպոսը»[16]: Ուրեմն արքունիքի կատարած այս քայլը պետք է դիտել ոչ թե աքսոր, ինչն ընդունված տեսակետ է մեզանում, այլ ռուսական կառավարության հետամուտ մի նպատակ, որը պետք է իրագործվեր: Ներսեսն իր գործունեությամբ արդեն ապացուցել էր, որ հավասարը չուներ այդ խնդրում: Այդ են հաստատում նաև գեներալ Կ. Բենկենդորֆի 1828 թ. ապրիլի 13-ին գրած նամակի հետևյալ տողերը. «Օգտակար կլիներ, եթե Բեսարաբիա կարողանար գնալ Ներսես Սրբազանը, որը հայտնի է ինչպես իր ապացուցած հավատարմությամբ և ցույց տված ծառայություններով, նմանապես և իր փորձառությամբ և հայերի նկատմամբ ունեցած իր հզոր ազդեցությամբ»[17]: Մյուս կողմից չի կարելի բացարձակացնել Պասկևիչի և կայսեր բարեկամական հարաբերությունները, և հետո՝ Ներսեսը միայնակ չէր այդ հակամարտությունում: Ռուսական արքունիքում Ներսես Աշտարակեցին ուներ ամուր հենարան, որը կայսեր մոտ հավասարը հավասարի կարող էր ներկայանալ Պասկևիչի հետ: Դրանք Լազարյաններն էին: «Նրանց շնորհիվ,- գրում է Երիցյանը,- Ներսեսը ներկայանում էր բարձրագույն իշխանության առաջ որպես մի շատ նշանավոր հովվապետ, որի նմանը Ռուսիո տերությունը տեսած չուներ Հովսեփ Արղությանից հետո: Ուստի միտք էր հղանում հրավիրել Ներսեսին Պետերբուրգ և արժանացնել նրան կայսեր շնորհների...[18]: Քանի մը անգամ տպագրության մեջ հիշված է և այժմ էլ կենդանի ականատեսներ, պատմողներ կան, որ Ներսեսը մինչև իր կենաց վերջին րոպեն ձախ ծոցի գրպանում մի թուղթ է պահել, որից չէր բաժանվում գիշեր ու ցերեկ: Թե ինչ բովանդակություն ուներ այդ թուղթը, ոչ ոք չգիտեր, որովհետև նա ոչ ոքու ցույց չէր տալիս: Բայց երբ որ նա Բեսարաբիայից վերադարձավ կաթողիկոսական վեհ աստիճանով և մտերիմների հետ խոսք ու զրույց էր լինում Պասկևիչի ու անցած-գնացած անցքերի մասին, ծերունի Հայրապետը ձեռքը դնում էր ձախ ծոցի վրա և խորին հառաչանքով ասում. «Այստեղ է կաշկանդված Պասկևիչը»[19]:

Զուր չէ, որ Խրիմյան Հայրիկը հետագայում, համեմատելով իրեն Ներսես Աշտարակեցու հետ, ակնածանքով գրում էր. «Կնախանձեի Ներսեսի արիասիրտ ոգուն ու աննկուն հզոր կամքի վրա և համեմատելով խեղճուկս նրա հետ՝ կգտնեմ ինչպես եղջրավոր մի խոյ և անեղջյուր մի գառնուկ: Նա մեջքը տվեր էր մի հաստաբուն կաղնի ծառին, իսկ գառնուկին հենարան միայն Քրիստոսի խաչն է:

[16] Տե՛ս Ալ. Երիցյան. Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մաս Ա, Թիֆլիս, 1894, էջ 359:

[17] Նույն տեղում, էջ 360:

[18] Նույն տեղում, էջ 575:

[19] Նույն տեղում, էջ 356:

Նրա ժամանակ տիրում էր բուռն քաղաքականություն, իսկ մեր ժամանակ նուրբ դիվանագիտություն և գիտենք, թե այդ նուրբքը որչափ դժվարին է, քան թե բուռն»[20]: Ուստի Ներսեսը շարունակեց իր հոգևոր առաջնորդությունը Քիշնևում: Ավելին, հիմնվեց Նոր Նախիջևան - Բեսարաբիա հոգևոր թեմը, որն իր մեջ ներառավ նաև Մոսկվան և Պետերբուրգը: Անհանգստացած այդ տեղեկությունից, Պասկևիչն այստեղ էլ շտապեց հայտնել իր դժգոհությունը, քանզի նրա կարծիքով վերջիններիս միացումը Բեսարաբիայի թեմին՝ կուժեղացներ Ներսեսի ազդեցությունը մայրաքաղաքներում, որը ցանկալի չէր փառասեր կոմսի համար:

Եվ, այնուհանդերձ, Պասկևիչը մեկ անգամ կարողացավ խանգարել Ներսես Աշտարակեցուն: 1831 թ., երբ արդեն ծերացած և անկարող Եփրեմ Կաթողիկոսը հրաժարվեց Աթոռից, նշանակվեցին նոր ընտրություններ, և ժողովականները, որոնք թեքված էին դեպի Ներսեսի թեկնածությունը, Պասկևիչն ամեն ճնշում գործադրեց, որպեսզի Ներսեսը չընտրվի կաթողիկոս: Սակայն դա կոմսի վերջին ճիգն էր և հետագայում նա այլևս չկարողացավ կանգնեցնել Աշտարակեցու վերելքը, և հակամարտությունն ի վերջո ավարտվեց Ներսեսի հաղթանակով: 1843 թ. մահացավ Հովհաննես Կարբեցին, և նշանակվեցին կաթողիկոսական նոր ընտրություններ: Այս անգամ արդեն ժողովականների միաձայն ցանկությամբ Ներսեսն ընտրվեց Ամենայն Հայոց 121-րդ Կաթողիկոս՝ Ներսես Ե Աշտարակեցի: Կովկասի կառավարչապետ կոմս Վորոնցովը, որը Ներսեսի հետ հին ծանոթ էր, ըստ արժանվույն էր գնահատում նրան և նրա իմաստնությունը: «Պատրիարք Ներսեսը, - գրում էր Վորոնցովը Երմոլովին ուղարկած նամակում, - ձեռնադրվեց Էջմիածնում մարդկային հսկայական հոսանքի ներկայությամբ: Ես ինքս ցանկանում էի անձնապես ներկա լինել այդ արարողությանը, բայց դա անհնարին է ... Միաժամանակ պետք է ասեմ, որ Ներսեսը և՛ հայերի, և՛ մեզ համար թանկ մարդ է»[21]:

1845 թ. Թիֆլիսում նրան մեծ շուքով դիմավորեցին: 17-ամյա բացակայությունից հետո ժողովուրդը և անձամբ դիմավորելու եկած փոխարքան նրան ընդունեցին ջերմությամբ: Կառավարչապետը հետագայում էլ իր պաշտոնյաներին դիմելով, մեծ գովեստով էր խոսում Ներսես Աշտարակեցու մասին. «Կրկնում եմ այն, ինչն արդեն բազում անգամներ ասել եմ... ի դեմս Պատրիարք Ներսեսի, դուք ունեք հզոր զենք և միշտ պատրաստ մի մարդ: Եվ թեպետ այժմ նա 80-ն անց է, սակայն լի է եռանդով յուրաքանչյուր գործ իր ավարտին հասցնելու համար և մեծ օգուտներ կբերի ինչպես իր ժողովրդին, այնպես էլ մեզ»[22]:

Ներսես Աշտարակեցին խոշոր ներդրում ունի նաև արևելահայերի գաղթի կազմակերպման գործում: Հանդիսանալով Հայկական մարզի վարչության անդամ, նա քաջ գիտակցում էր, որ դրանով զարկ կտրվի ավերված երկրի տնտեսական ու հոգևոր կյանքին: Այդ նպատակով նա մեկ անգամ չէ, որ դիմել է ռուսական

20 Նույն տեղում, մաս 2, էջ 1:

21 Տե՛ս Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом. СПб, 1898, с. CXXXVI.

22 Տե՛ս Братская помощь пострадавшим в Турции армянам, 2. М., 1898. С. 532.

արքունիքին՝ հորդորելով արագացնելու գաղթը և միջոցներ տրամադրելու գաղթականներին: Իսկ երբ գաղթը սկսվեց, նա մեծ ջանքեր գործադրեց գաղթականների ընդունման, նրանց բնակեցման ու ապրելու համար քիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծելու գործում եղած դժվարությունները հաղթահարելու համար:

Իր կյանքի վերջին տարիներին Ներսեսի ջանքերն ուղղված էին 1836 թ. եկեղեցական կանոնադրության առանձին հոդվածներ մեղմելու և Հայ Եկեղեցուն իր նախկին իրավունքները վերադարձնելու համար, սակայն վերահաս մահը գործը թողեց անավարտ:

Ներսես Աշտարակեցին մահացավ 1857 թ. փետրվարի 14-ին ... շատերը գտնում են, որ նա ծնվել ու վախճանվել է նույն ամսին և նույն օրը: Հայոց աշխարհն ու ողջ հայությունը խորապես սգում էին 86-ամյա կաթողիկոսի մահը, որն իր ապրած սրբացած կյանքի համար արժանացավ համաժողովրդական սիրո ու փառքի, մի երևելի այր, որն օժտված էր բացառիկ աշխատասիրությամբ ու համբերությամբ: Ասում են, տարեկան նրա ձեռքով գրվել է երկու հազարից ավելի թուղթ: Նրան նույնիսկ մահացած վիճակում գտել են գրիչը ձեռքին: Եվ ժողովուրդն իր սերն արտահայտեց ընդամենը երկու բառով, որոնք փորագրված են նրա շիրմաքարին - «Պաշտպան հայրենյաց»:

Եվ դա այդպես էր....

## ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

*ԱՐՈՒՍՅԱԿ ՏԵՐՉԱՆՅԱՆ*

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՖԱՇԻԶՄԻ ԴԵՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ (1941-1945)

1941 թ. հունիսի 22-ին, Հայրենական մեծ պատերազմը սկսվելուն պես, Հայ Առաքելական Եկեղեցին ցուցաբերեց իր պատրաստակամությունը՝ օգնելու պետությանը այդ դժվար օրերին, չնայած բոլշևիկները Եկեղեցին անջատել էին պետությունից և դրանով իսկ արգելել նրան խառնվելու պետական գործերին:

Այդ ժամանակ Հայ Եկեղեցու ղեկի մոտ ամուր կանգնած էր Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը, որը Խորեն Մուրադբեկյանի մահից հետո ստանձնել էր Հայոց Եկեղեցու ղեկավարի դերը, դրանով իսկ դառնալով կաթողիկոսի փաստացի տեղապահը:

Արքեպիսկոպոս Չորեքչյանը դրսևորելով ճկուն քաղաքական դիրքորոշում, փորձում էր կայունացնել Եկեղեցի-պետություն հարաբերությունները:

Ինչպես Ռուս Ուղղափառ Եկեղեցին, այնպես էլ Հայ Առաքելական Եկեղեցին արձագանքեցին տեղի ունեցող իրադարձություններին:

1941 թ. հուլիսի 5-ին Հայոց Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհուրդը կոչով դիմեց ողջ հայությանը՝ սատար կանգնել վտանգի ենթարկված հայրենիքին և իրենց նյութական օժանդակությամբ օգնել դիմակայելու թշնամուն:

1941 թ. հուլիսի 30-ին ժողովրդին ուղղված իր երկրորդ կոչում Գերագույն Հոգևոր Խորհուրդը նշում էր. «Հայը, բացի Խորհրդային Հայաստանից՝ չունի այլ հայրենիք: Հայը՝ Հայաստանից դուրս՝ չունի այլ հաստատուն կռվան, բացի Հայ Եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռով»[1]:

Որպեսզի Հայ Եկեղեցին դուրս գար իրեն պարտադրված վիճակից և ի վերջո ամրացներ իր դիրքերը, Գևորգ արքեպս. Չորեքչյանը, չնայած այդ դժվար

---

[1] Ս. Ստեփանյան, Հայ Եկեղեցին Ստալինյան բռնապետության օրոք: 1994 թ., էջ 135:

պայմաններին, Եկեղեցու պարտականությունը տեսնում էր ակտիվ քաղաքական գործունեության և բարեգործության մեջ:

Ֆաշիզմի ջախջախման գործն արագացնելու նպատակով 1943 թ. փետրվարի 21-ին նա որոշեց հանգանակության շնորհիվ միջոցներ հայթայթել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն ստեղծելու համար»[2]:

Էջմիածնի Կաթողիկոսարանը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու ֆոնդին տրամադրեց բավականին մեծ գումար և միաժամանակ հատուկ կոնդակով դիմեց աշխարհի բոլոր հավատացյալ հայերին, որ իրենց խնայողություններով մասնակցեն «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցմանը:

Այս գաղափարի մասին հայտնվեց իշխանության կենտրոնական մարմիններին, և Ստալինն արձագանքեց Գևորգ Չորեքչյանի հղած հեռագրին՝ գիտակցելով Եկեղեցու օժանդակության անհրաժեշտությունը, որը կարող էր լայնորեն օգտագործել քարոզչական նպատակներով:

Ստալինն իր այդ քաղաքականությամբ ցանկացավ ցույց տալ, որ ԽՍՀՄ-ում արդեն վերացված է անհանդուրժողականությունը Եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ, որ Եկեղեցուն լայն հնարավորություն է տրված զբաղվելու բարեգործություններով, չնայած դեռևս 1922 թ. նա արգելել էր ողջ ԽՍՀՄ-ի տարածքում որևէ բարեգործական ընկերության գործունեություն:

Այս արձագանքին վաղուց էր սպասում Հայ Եկեղեցին, որը մեծ նշանակություն ուներ նրա համար:

Ամենից առաջ արդեն Եկեղեցին պաշտոնապես ճանաչվում է կառավարության կողմից, դադարեցվում են ճնշումները Եկեղեցու վրա, հնարավորություններ է ընձեռվում Եկեղեցուն զբաղվելու բարեգործություններով և այլն:

Սփյուռքի հայությանը ոգևորելու և համայն հայության միասնական օգնության նշանակությունը շեշտելու համար, 1943 թ. փետրվարի 2-ին արքեպիսկոպոս Չորեքչյանը կոչով դիմեց հայ հավատացյալ ժողովրդին[3]:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը կազմելու ֆոնդին միջոցներ հանգանակելու նպատակով ԱՄՆ-ի հայ համայնքների ներկայացուցիչները կազմակերպեցին հանգանակող կոմիտե, որի անդամներից էին պրոֆեսոր Հարությունյանը, Դադուրյանը, Կարիկյանը և ուրիշներ: Ակտիվ մասնակցություն ցուցաբերեց Ամերիկայի թեմի առաջնորդ Գարեգին արքեպս. Հովսեփյանը:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու ֆոնդի համար միջոցների հավաքումը կազմակերպելու գործում ակտիվ մասնակցություն ունեցավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանը: 1944 թ. սկզբին նա Գևորգ Չորեքչյանի հատուկ հանձնարարականով մեկնեց Մերձավոր Արևելքի երկրները, հանդիպումներ ու զրույցներ ունեցավ Իրանի, Եգիպտոսի, Սի-

[2] «Էջմիածին», 1944 թ., №4-5, էջ 4:

[3] «Էջմիածին», 1944 թ., № 1, էջ 7:

րիայի, Իրաքի, Լիբանանի, Երուսաղեմի հայ գաղթօջախների ղեկավարների հետ, զեկուցումներով հանդես եկավ սփյուռքահայ լայն շրջանների առաջ[4].

Բարեգործական հանգանակություններ կազմակերպվեցին նաև Արգենտինայի, Հարավային Ամերիկայի, Կիպրոսի, Հորդանանի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Եթովպիայի և այլ երկրների հայ համայնքների կողմից:

Ֆաշիզմին հաղթելու համար սփյուռքահայությունը ոչ միայն դրամական օգնություն էր ցուցաբերում, այլև իրենց անմիջական մասնակցությամբ անդամագրվելով հակաֆաշիստական բանակներում մարտնչում նրանց դեմ:

Այդ օրերին կարևոր դեպքեր տեղի ունեցան Հայ Եկեղեցու պատմության մեջ: Շուրջ երեք տարի թափուր մնացած Կիլիկիո կաթողիկոսի Աթոռը 1943 թ. հունիսին զբաղեցրեց Գարեգին արքեպս. Հովսեփյանը[5], որը բազմիցս աչքի էր ընկել հայրենասիրական գործունեությամբ, ինչպես նախկինում Սարդարապատի ճակատամարտում, այնպես էլ ԱՄՆ-ի թեմի առաջնորդի պաշտոնում: Այս փոփոխություններին անդրադարձան նաև սփյուռքում լույս տեսնող մի շարք թերթեր, որոնք իրենց դրական գնահատականն էին տալիս խորհրդային իշխանություններին: Թեև ընկատելի էին կառավարության և Եկեղեցու մերձեցումը, բայց այդ կապերը դեռևս այնքան սերտ չէին, որպեսզի տեղապահը համարձակվեր բացել եկեղեցիները և հարց դներ քաղբանտարկյալներին ազատ արձակելու վերաբերյալ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի իրավունքների վերականգնումը սկսվեց 1944 թվականից: Միշտ է, կաթողիկոսը դեռևս չէր ընտրվել, բայց 1944 թ. հունվարից սկսեց հրատարակվել «Էջմիածին» ամսագիրը՝ Հայ Եկեղեցու Մայր Աթոռի օրգանը: Այս քայլով ճանաչվում էր Էջմիածնի լոյալությունը խորհրդային իշխանության նկատմամբ և Սուրբ Աթոռի գոյության իրավունքը: Այժմ արդեն Հայ Եկեղեցին, ունենալով պաշտոնական խոսափող, ինչ-որ չափով անկախ, կարող էր հայտնել իր գոյության մասին: Սփյուռքից ողջույնի տասնյակ հեռագրեր ստացվեցին ամսագրի վերահրատարակման կապակցությամբ:

Հայ Առաքելական Եկեղեցին շարունակում էր հանգանակել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյանը փոխանցվող սփյուռքահայերի նվիրատվությունները:

Մինչև 1944 թ. հունվարը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար ստացվեցին՝ ԱՄՆ-ի հայ գաղթօջախներից՝ 115000 դոլար, Հարավային Ամերիկայի հայկական գաղթօջախներից՝ 5800 դոլար, Երուսաղեմից՝ 2000 ֆունտ ստեռլինգ, Կիպրոսից՝ 3100 ֆունտ ստեռլինգ, Կահիրեից՝ 1000 ֆունտ ստեռլինգ, Բեյրութից՝ 100 ֆունտ ստեռլինգ, Սպահանից՝ 30000 թուման, Թավրիզից՝ 120000 ռիալ, Թեհրանից՝ 1067145 ռիալ: Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսարանը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ֆոնդին տրամադրեց մի թանկարժեք պանակե՝ ադամանդներով զարդարված, և ուրիշ թանկարժեք իրեր պլատինից ու ադամանդներից՝ 800000 ռուբլի արժողությամբ, ինչպես և 75000 ռուբլի ու 1000 անգլիական ֆունտ ստեռլինգ: Այդ միջոցներով կառուցված «Տ-34» մակնիշի 21

[4] Մ. Գ. Սահակյան, Սովետական զորքերը Մերձբալթիկայի համար մղված մարտերում: 1981 թ., էջ 94:
[5] «Պայքար», Բոստոն, 1943 թ.:

տանկ 1944 թ. փետրվարի 29-ին հանձնվեցին 119-րդ առանձին տանկային գնդին: Բոլոր տանկերի աշտարակների վրա հայերեն տառերով գրված էր «Սասունցի Դավիթ»[6]: 1944 թ. մայիսի վերջին ավարտվեց «Սասունցի Դավիթ» տանկային երկրորդ շարասյան կազմավորումը (22 տանկ), որը հունիսին հանձնվեց Մերձբալթյան 1-ին ռազմաճակատին (հրամանատար՝ բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյան) և մինչև պատերազմի հաղթական ավարտը մարտնչեց թշնամու դեմ[7]:

Եկեղեցին աստիճանաբար սկսեց վերագտնել տարիներ առաջ կորցրած իր հեղինակությունը: Հավատացյալները ավելի հաճախ էին դիմում Ազգընտիր տեղապահին ամենատարբեր խնդրանքներով և առաջարկներով:

[6] Մ. Գ. Սահակյան. Սովետական զորքերը Մերձբալթիկայի համար մղված մարտերում: 1981 թ., էջ 94-95:

[7] ՀՀՊԿԱ, ֆ. 409. ց. 1. գ. 721:

*Հ. Վ. ԹՈՐՈՍՅԱՆ*

# ԽԱՂՈՂԻ ՎԱԶԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## (17-18-րդ դդ.)

Շուրջ երկու հարյուրամյակ ներքաշված լինելով մուսուլմանական քոչվոր ցեղերի ու պետությունների ավերիչ պատերազմների հորձանուտում, Հայաստանի տնտեսությունը հասել էր կատարյալ անկման: Տեղական էթնիկ ազգաբնակչության մի մասի ոչնչացումը և նրա սոցիալական կառուցվածքում կատարված փոփոխությունները ուղղակի կերպով ներգործել էին ժողովրդական տնտեսության վրա, փոխել նրա ճյուղային կառուցվածքը: Հայ երկրագործի տնտեսությունը տեղը զիջել էր քոչվորական խաշնարածությանը: Չմանրամասնելով Հայաստանի տնտեսական կյանքի անկման մասին ժամանակի գրիչների հայտնած բազում տեղեկությունները, սահմանափակվենք միայն Առաքել Դավրիժեցու հետևյալ վկայությամբ. «Հողագործք եւ երկրագործք,- գրում է նա,- որք իւրաքանչիւր տեղիս գոյին, փախուցեալք ի բերդս եւ ի դղեակս ամրանային եւ ոչ կարէին առնել զերկրագործութիւն, վասն որոյ սերմանել եւ կալ եւ կուտ բարձաւ ամենևին»[1]:

1639 թ. թուրք-իրանական հաշտությամբ առժամանակ հաստատված խաղաղությունը համեմատաբար նպաստավոր պայմաններ ապահովեց երկրի տնտեսական կյանքի վերելքի համար նրա թե՛ արևելյան և թե՛ արևմտյան մասերում:

Հաստատված խաղաղ ժամանակահատվածը բարենպաստ դեր կատարեց նաև Հայ Եկեղեցու ու նրա աթոռանիստ կենտրոնի տնտեսական գործունեության աշխուժացման համար: Եվ պատահական չէ, որ Եսայի Հասան-Ջալալյանը 17-րդ դարի առաջին քառորդն անվանում է Հայոց աշխարհի և Էջմիածնի ավերման պատմություն, ապա դարի երկրորդ քառորդի անցքերը շարադրում որպես Հայոց աշխարհի և Էջմիածնի նորոգման պատմություն[2]: Էջմիածնի հոգևոր հայրապետների գործունեությունը, սկսած Մովսես Սյունեցուց, միտված էր նրան, որ Հայաստանը, գտնվելով օտար տիրապետությունների տակ, չզրկվի տնտեսական իր ինքնուրույնությունից, չվերածվի տիրապետողների վարչական ու տնտեսական սիստեմի դիմազուրկ կցորդի: Այս առումով առանձնահատուկ կարևորություն ունի

[1] Առաքել Դաւրիժեցի, Պատմութիւն: Վաղարշապատ, 1896, էջ 87:

[2] Եսայի Կաթուղիկոս, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից: Շուշի, 1839, էջ 15:

Էջմիածնի վանական տնտեսության պատմության ուսումնասիրումը, որը ցարդ հետազոտողների կողմից չի արժանացել պատշաճ ուշադրության:

17-18-րդ դդ. Էջմիածնի վանական տնտեսությունում խաղողագործությունը հանդիսացել է այգեգործական մշակույթի հիմնական ճյուղը: Դա բացատրվում էր նրանով, որ այդ մշակույթից ստացված արտադրանքը ոչ միայն հանդիսացել է անմիջական արտադրողի ու բնակչության այլ խավերի համար կարևոր սննդամթերքներից մեկը, այլև վաճառքի է հանվել ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս, թե՛ որպես թարմ կամ չոր միրգ, և թե՛ մշակված, գինու վերածված: Ըստ Սիմեոն Երևանցու հայտնած տեղեկությունների, վանական տնտեսությունում խաղողամշակ տարածությունները մեծ չափերի էին հասնում: Ընդհանուր առմամբ դրանց թվաքանակը Վաղարշապատում, Օշականում, Երևանում, Աշտարակում, Փարաքարում, Նորագյուղում և Ջորագյուղում, միասին վերցրած, հասել է 67-ի: Ընդ որում, դրանցից 35-ը գնված էր, 25-ը՝ նվիրված, 2-ը՝ զավթված, 5-ի ձեռք բերման ուղին՝ անհայտ: Գումարային տեսքով ծախսվել է 319 թուման, 40000 դինար, 80 դուռուշ[3]: Այգիների ձեռք բերումը շարունակվել է նաև Սիմեոն Երևանցու հաջորդների օրոք[4]:

Աղբյուրների վկայությամբ Էջմիածնի վանական տնտեսությունում առանձին դեպքերում կատարվել է այգիների վաճառք: Խոսքը մասնավորապես վերաբերում է Օշական գյուղի գրավի դիմաց վերցված այգիներին: Բանն այն էր, որ օշականցիք, ինչպես հայտնում է Սիմեոն Երևանցին, «... հարեալ ի կարկտէ եւ յայլոց ձախորդական պատահմանց, կարի չքաւորին եւ ի նեղ անկանին բոլոր գյուղացիքն», որի պատճառով էլ Երևանի խանության վեզիր Միրզա Մուհամմադ բեկից և քալանթար Մուհամմադ Հուսեյնից 180 թուման գումար պարտք են խնդրում՝ պարտավորվելով դրա դիմաց 7 ամիս ժամկետով գրավ դնել 20 այգի և 5 ջրաղաց: Նույն կերպ 150 թուման վերցնում են երևանցի խոջա Մովսեսից՝ 9 ամիս ժամկետով գրավ դնելով 9 այգի և 18 ջրաղաց: Չկարողանալով նշված ժամկետում պարտքերը վճարել, գյուղացիք ստիպված էին հրաժարվել գրավ դրածից: Հետագայում Աստվածատուր Համադանցի Կաթողիկոսը, նկատի ունենալով, որ Օշականը Էջմիածնի մուլքն է (սեփականատիրական իրավունքով տիրույթը), վճարելով գրավատերերին համապատասխան գումարներ, վանքի սեփականությանն է վերադարձնում այդ այգիները[5]: Այնուհետև կաթողիկոսի համաձայնությամբ որոշ այգիներ վերավաճառվում են իրենց նախկին օգտագործողներին: Կալվածագրերից մեկում այդ մասին կարդում ենք. «Ես՝ տէր Աստուածատուր կաթուղիկոսս, ի թվին ՌՃՀԱ (1722)-ին, որ յօշականցիք իւրեանց այգոնցէն քսան այգի եւ Ե (5) ջրաղացք ծախած էին վեզրին, իսկ մեք այս վերայ գրեալ այգիքս եւ ջաղացքս յիւրեանցս գնօվն յետս առաք վեզրէն: Եւ մինն այս այգոնցն էր

[3] Սիմեոն Երեւանցի. Ջամբռ: Վաղարշապատ: 1873, էջ 164-185:

[4] Կալվածագրեր, կազմեց՝ Հայ. Աբրահամյան: Երևան, 1941, էջ 99:

[5] «Ջամբռ», էջ 174-175:

Մխիթարի որդի տէր Խաչատուրին, եւ այս տէր Խաչատուրի այգիս իւր գնօվն. որպէս եւ մեք առեալ էաք վեզրէն՝ յետս դարձուցաք այս տէր Խաչատուրի որդում՝ Մարուգ վարդապետին, Պետրոսին և Անդրէասին: Այսուհետեւ այս այգուս հետ ոչ ոք իլախայ չունի. զի սիրով եւ յօժարութեամբ ծախեցաք»[6]:

Որոշ դեպքերում կատարվել է այգիների նվիրատվություններ առանձին վանական հաստատություններին: Այսպես, օրինակ, 1741 թ. գրված մի կալվածագրում կարդում ենք. «Տէր Ղազար Կաթուղիկոսս Ամենայն Հայոց, որ զկոնտայ Սրբոյ Անանիայի Առաքելոյ վանաց մերձ եղեալ այգին, որ կոչի Ծըմշտի եւ, լուսաւորեալ հայրապետքն առեալ էին ի գնոյ ի Ծըմշիտ անուն այլազգւոյ եւ ի ժամանելն իմ Սուրբ Աթոռս, դաւանի դուրս եկն, որ ես կրկին առի հաստատուն դապալայիւ եւ տեսի, զի լուսաւորին մեր սրբոյ Խորվիրապի վանաց այգի եւ ոչ գոյր եւ անդրէն բնակեալ միաբանքն յոյժ անմխիթար, վասն որոյ ի գութ շարժեալ զվերոգրեալ այգին ընծայեալ վախմն արարի մեծի լուսաւորչին մերոյ Սրբոյ Հորին»[7]:

Սկզբնաղբյուրներում այնքան էլ սակավ չեն տեղեկությունները խաղողի այգիներ տնկելու, հնձան և կարաս օրհնելու, տնկիների ընտրության, մշակման ու բուժման միջոցառումների մասին: Ըստ այդ տեղեկությունների, Էջմիածնի վանական տնտեսության հողատարածքներում իրենց զարգացման առանձնահատկություններով տարբերվել են խաղողի որթի երկու խմբի մշակություն՝ պառկած վազերով և կանգնած: Հիմնականում տարածված էր պառկած վազերով խաղողի խարջի, հալերուկ, գոմշի մամա, խոզակաշի, եզաչք, մսխալի, ճիլառ, կարմիր և սպիտակ քիշմիշ, կոթունչ, գինուկ տեսակների մշակությունը: 17-րդ դարի ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենը հատկապես առանձնացնում է քիշմիշ տեսակը, որը, նրա խոսքերով, ոչնչով չէր զիջում ֆրանսիական մուսկաթին[8]:

Տնամերձ հողատարածքներում, ինչպես նաև բոստանային մշակություններին շրջապատող վայրերում մշակել են կանգնած խաղողի հաչաբաշ, իծապտուկ, խալիլի, սերկևիլի, ալի-դերեսի, խաթուն, արազբարի, թանի տեսակները, որոնք մինչ 17-րդ դարը, հոլշտինյան ճանապարհորդ Ադամ Օլեարիուսի վկայությամբ, առանձնանում էր ալի-դերեսին իր սև հատիկներով, մեծ ողկույզով և հյութալիությամբ[9]: Պետք է նշել, որ կանգնած վազերով խաղողի համեմատաբար քիչ տարածումը պայմանավորված էր նրա տեսակների թույլ բերքատվությամբ: Բացի այդ, այն մշակում էին բացառապես քամոտ ու ավազոտ վայրերում, ուր ունակ լինելով պատատուկի նման բարձրանալու հատուկ պատրաստված ցանկապատերին, արգելք էին հանդիսանում ավազախառն քամիների ներթափանցմանը:

---

[6] Կալվածագրեր, էջ 79:

[7] Նույն տեղում, էջ 88:

[8] J. Chardin, Voyages du chevalir Chardin en Prese et autres Lieux du L'Orient, vol. III. Paris, 1811, p. 337 (այսուհետև՝ Chardin):

[9] Подробное описание путешествия голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах, составленное секретарем посольства Адамом Олеарием. СПб., 1906, с 756.

Համեմատած երկրագործական մյուս կուլտուրաների, խաղողի մշակությունը հսկայական աշխատանք էր պահանջում: Այն բազմացնում էին ինչպես ցողունային կտրոններով, այնպես էլ անդալիսի ձևով:

Ցողունային կտրոններով բազմացման դեպքում աշնանը, իսկ ավելի հաճախ գարնանը որպես կտրոն ընտրում էին բարձր բերքատու տեսակներից առողջ և լավ զարգացած միամյա ընձյուղներ: Կտրոնները սովորաբար ոռոգման ուղիների երկայնքով ցցված ակոսների մեջ տնկում էին 20-30 սմ խորությամբ ու 10-15 սմ հեռավորությամբ, որից հետո դրանց վերին ծայրերը կտրում էին այնպես, որ հողից դուրս մնա 2-3 բողբոջ (աչք): Երկու տարի անց, տնկիները լավ արմատակալելուց հետո, գարնան սկզբին տեղափոխում էին այգու համար նախատեսված հողամասը, որն աղբյուրներում անվանվում է «նորատունկ այգի»: Կալվածագրերից մեկում «նորատունկ» այգի գցելու մասին կարդում ենք. «Կամաւն Աստուծոյ եւ հրամանաւ տեառն Սիմէոնի Սրբազան Կաթուղիկոսին Ամենայն Հայոց, ես՝ Սրբոյ Խորվիրապու առաջնորդ Աւետիք վարդապետս, մեր Չարեքանոց կոչեցեալ այգւոյ տեղն, որ ի գեօղն Նորք, ետու նորցցի Ղազարի որդի Մարկոսին այսու պայմանաւ, որ իւր բոլոր խարճովն եւ մասրաֆովն նորապես այգի շինեսցէ ի նմա. յորժամ պտուղն հասանիցի, այգւոյ կէսն Սրբոյ Խորվիրապու վանիցն լինիցի եւ կէսն վերոյ յիշեալ Մարկոսին եղիցի: Իսկ եթէ չկարիցէ թամամ եւ կատարեալ այգի շինել, վերստին բոլոր այգետեղն Սրբոյ Խորվիրապու վանիցն է եւ եղիցի»[10]: Հարկ է նշել, որ բավական շատ են տեղեկությունները «նորաշեն», «նորատունկ» այգիների վերաբերյալ նաև վանքի 18-րդ դ. ելքն ու մուտքը պատկերող հաշվեմատյաններում: Օրինակ, 1745 թ. հաշվեմատյանում կարդում ենք. «Նորաշէն այգու ԼԸ (38) փորողի վարձն ետու Ե (5) փողով, ԴՌ (4000) ապասի, Գ (3) շահի գիտութեամբ տեղապահին եւ ժամօրհնողին»[11]: Նույն բնույթի մեկ այլ վավերագրում կարդում ենք. «Դիտումն գրոյս այս է, որ եղեւ ի ՌՄԿԷ (1798) թվին, որ ես յաշտարակցի դալլաք Վարդազարի որդի Յօսէփս իմ յօժար կամաւս յանձն առի այս խամ տեղն, որ է կոչեցեալ Սաղմոսավանից այգոյ տեղ, որ շինեմ նորատունկ այգի»[12]:

Այգու համար առանձնացված հողամասը ընտրելուց հետո, ջրի հոսքին զուգահեռ այն բաժանում էին մարգերի կամ առուների, որոնց վրա էլ մոտ 1,5 մ հեռավորությամբ տնկում էին արմատակալած տնկիները: Այնուհետև մոտ 3-4 տարի շարունակ կատարվում էր մարգերի վերաձևափոխում, երբ մարգերի միջև ընկած հողատարածքների (այն սովորաբար 2 մ էր) հողի մի մասը աջ, մյուսը՝ ձախ մարգի վրա էին լցնում (թումբ թափել), որով և առաջանում էին ապագա այգու թմբերը: Մինչև տնկիների բերք տալը, մարգերի արանքում մշակում էին բոստանային

[10] Կալվածագրեր, էջ 92:

[11] Մատենադարան, Կթղկ. դիվան., թղթ. 1, վավ. 13, էջ 266:

[12] Կալվածագրեր, էջ 100:

կոլտուրաներ: Այդ մասին Զաքարիա Քանաքեռցին հիշատակում է. «... ցանեաց ի մէջ որթոցն վարունգ եւ սեխ»[13]:

Ինչպես նշել ենք, խաղողի բազմացման համար կիրառվել է նաև անդալիսի սիստեմը: Վանական տնտեսության 1745 թ. ելքն ու մուտքը պատկերող մատյանում հանդիպում ենք վկայությունների անդալիսով բազմացման մասին: Այնտեղ մասնավորապես ասվում է. «ԱՌԵԾ (1500) դիան եառու Երեւանա այգու անդալիս թաղօղի վարձ գործապետ վարդապետի ձեռօքն ի մայիսի ԺԷ (17)»[14]: Անդալիսով բազմացումը հանդիսացել է իբրև լրացում բաց մնացած հողատարածքի:

Աղբյուրներում որպես խաղողի այգու չափման միավոր հիմնականում հիշատակվում է «տախտակ»-ը. «... զիւր բաժին յայգւոյն մէկ տախտակ եւ կէսն ծախէ», «... զիւր բաժին չորս տախտակ այգին տայ յիշատակ Սրբոյ Աթոռոյս»,- կարդում ենք «Ջամբռ»-ում[15]: Տախտակը իրենից ներկայացնում էր խաղողի այգիների զուգահեռ ձգվող հողի թմբաշարք: Հարթ տեղերում գցված տախտակները կոչվում էին «դոլամա», իսկ լանջային տեղանքում գցվածները՝ «քոնդալան», «... սոյնոյ ջրաղացիս մերձ՝ դէպ ի յարեւելս կոյս, քեօնդալան կոչեցեալ հողն՝ որ է վաթսուն սոմարի տեղ»,- կարդում ենք նույն «Ջամբռ»-ում[16]: Նման տախտակները միմյանցից բաժանվում էին ուղիղ ձգված թմբերի սահմանագծերով՝ միջնակներով. «... այգւոյս այսմիկ ի միջի մեծ միջնակէն ի վայր»,- տեղեկացնում է «Ջամբռ»-ը[17]: Հարկ է նշել, որ նորատունկ այգին միշտ չէ, որ հարթ կամ լանջային տեսք է ունենում: Պատահում էր, որ մեկ կամ երկու զուգահեռ տախտակներ գցելուց հետո, ավելացած հողակտորի վերևի մասը լինեն լայն, իսկ ներքևինը՝ նեղ: Նման տարածքում տնկված այգիները կոչվում էին «քաշ». «... յոթն տախտակ եւ երկու քաշ»,- ասվում է «Ջամբռ»-ում[18]:

Վավերագրերում որպես խաղողի այգու չափման միավոր գործածվել են «առու», «օրավար» և «լըդր» «հասկացությունները»: Դեռ 13-րդ դ. Ստեփանոս Օրբելյանը, նկարագրելով Սյունյաց գահերեց Գրիգոր Սուփան իշխանի կողմից 901 թ. Մաքենոցաց վանքին կատարած նվիրատվությունը, գրում է, թե իշխանը Գառնի գյուղաքաղաքից վանքին է նվիրում «Ծ (500) առու այգի»[19]: 1718 թ. կալվածագրերից մեկում ասվում է. «Ես՝ Արամի որդի Յակոբս, ես իմ կամաւս եւ իմ ըռազութեամբս ծախեցի իմ մայրենիքէ բերած այգին, որ է հինգ յառու տեղ մալում Սիամոնի որդի Մուքիլին Ե(5) թուման»[20]: Առուն երկու թմբերի միջև ընկած այն տարածությունն էր, որտեղից հոսում էր ջուրը: Եթե ընդունենք, որ թմբերի երկարու-

[13] Զաքարիա Քանաքեռցի, Պատմագրութիւն, հ. Ա: Վաղարշապատ, 1870, էջ 59:

[14] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1, վավ. 13, էջ 75:

[15] «Ջամբռ», էջ 165-166:

[16] Նույն տեղում, էջ 152:

[17] Նույն տեղում, էջ 166:

[18] Նույն տեղում:

[19] Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական: Թիֆլիս, 1910, էջ 179:

[20] Կալվածագրեր, էջ 76:

թյունը սովորաբար լինում էր 2,5 մ, իսկ թմբից թումբ ընկած տարածությունը 1,5 մ., ճշտությամբ կարող ենք որոշել 500 կամ 5 «առու» այգու տարածքը: Ինչ վերաբերում է պատմիչի նշած 500 առու ունեցող այգուն, ապա պետք է նշել, որ այն վայրերում, որտեղ այգիների քանակը մեծ չէ, նշվում է այգիների թիվը, իսկ Գառնիում տրված է նվիրվող բոլոր այգիների առուների քանակը միասին վերցրած:

«Օրավար» այգու վերաբերյալ կալվածագրերից մեկը տեղեկացնում է. «Պատճառ գրոյս այս է. թվին ՌՃՂԹ (1750)ին որ ես օծոպեցի Մկրտչի որդի Եղումս ծախեցի մեր Ծատուրենց այգին Օծոպայ վանից առաջնորդ Մարկոս վարդապետին դիմաց՝ ԻԶՌ (26000) դիան Դ (4) ճատովն. կէս օրավար այգի Ա (1) չարեք հող...»[21]: «Օրավար» այգի ասելով պետք է հասկանալ օրվա ընթացքում վարվող այգու տարածքի չափը:

«Լըդր» այգու չափի վերաբերյալ կալվածագիրը տեղեկացնում է. «Ջորութիւն գրոյս այս է, որ ինձ թարվեզեցի Նուբարշի որդի Յակոպիս, որ ունեմ Տուխուրկան Էջմիածնու էքու հետըն Խ (40) լիտր այգի, որ է մատըն, կամեցայ որ ծախեմ: ... Եղեւ թիւն ՌԲՃԲ (1753)-ումն»[22]: Հարկ է նշել, որ կալվածագրերը կազմող Հար. Աբրահամյանը ճիշտ չի ընկալել «լըդր» բառի իմաստը և սխալմամբ այն դարձրել է *լիտր*: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե ծանրության չափին, այլ մակերեսի հաշվարկին: Նշված ժամանակահատվածում մեկ լըդրը կազմել է 217 մ², իսկ մեկ հեկտարը 44 լըդր է: Հետևապես, «40 լըդր»-ը պետք է կազմեր 8680 մ²:

Ինչպես երկրագործական մյուս կուլտուրաների, առավել ևս խաղողի վազի մշակությունը ժամանակի պայմաններում հսկայական աշխատանք էր պահանջում: Երբ համեմատում ենք քննարկվող ժամանակահատվածում սկզբնաղբյուրների հայտնած տեղեկությունները ավելի վաղ հայտնածների հետ, ապա նկատում ենք, որ խաղողի մշակման ասպարեզում նորամուծություններ համարյա չեն կատարվել, և մշակման ողջ պրոցեսը մնացել է նույնը: Այս առումով արժանահիշատակ են Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ից բերված հետևյալ տեղեկություններ: Հեղինակը հայտնում է, թե նույնիսկ հոգևորականները, տարվելով աշխարհիկ բարքերով, իրենց այգիների մասին ավելի էին մտածում, քան հոգևոր գործերի: Եվ փոխանակ առաքինության արվեստը ուսանելու միմյանցից, այգեգործության մեջ էին վարժվում: Այնուհետև Ն. Շնորհալին թվարկում է այդ հնարներից մի քանիսը, ինչպիսիք էին էտելը, փորելը, պարարտացնելը, մոլախոտերը հեռացնելը, պատվաստելը, բժշկելը և այլն[23]:

Այն հանգամանքը, որ Էջմիածնի վանական տնտեսության այգետարածքներում վազերն էտելու ժամանակ օտագործվել է մեծ աշխատուժ ու ծախսվել մեծ չափի գումար, վկայությունն է այդ աշխատանքի խիստ կարևորության մասին: Օրինակ,

---

[21] Նույն տեղում, էջ 90:

[22] Նույն տեղում, էջ 91:

[23] Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական: Էջմիածին, 1865, էջ 9-30:

մանրի հաշվեմատյանների առանձին էջերում հանդիպում ենք հետևյալ տեղեկությունների. «Է (7) թուման ԳՌ (3000) շահի. Ա (1) փող էտու տեղիս մեր Գ (3) այգեաց յէտոր ԸԾ (800) մշակաց»[24], «Գ (3) թուման ԳՌԹԾ (3900) դիան էտու մեր Դ (4) այգեաց էտոր ՉԾՀԸ (678) մշակաց»[25]: Էտը կատարվում էր վաղ գարնանը, մինչև բողբոջների բացվելը. «ՋՌ (6000) դիան Է (7) շահի Բ (2) փող էտու ԺԾԹ (159) էտուր մշակաց վարձ մարտի ԺԹ (19). Վերի այգւոյնէ»,- կարդում ենք հաշվեմատյանում[26]: Վազին անհրաժեշտ բեռնվածություն տալու համար կատարվում էր էտի երկու ձև՝ երկար և կարճ:

Երկար էտելու դեպքում կրճատվում էր շիվերի քանակը, իսկ կարճի դեպքում թողնվում էր համեմատաբար ավելի շատ շիվեր՝ պահպանելով վազերի բեռնվածության համապատասխան աչքերի քանակը: Այդ մասին ուշագրավ վկայություններ է հաղորդում Ներսես Ծնորհալին. «Այլ և հատանելու կերպը այդ իմաստունների մոտ տարբերակված է.- գրում է նա,- ըստ տնկիների տեսակի, քանի որ մի քանիսը արմատի մոտից, մյուսները հեռվից են կտրում. մի մասի վրա քիչ ճյուղեր են թողնում, իսկ մյուս կեսի վրա ավելի շատ և այս ամենը, որպեսզի այգիները ավելի շատ պտղաբերեն և գինու չափն ու քանակը ավելի նս աճեցնեն»[27]:

Էտի կարևորությունը առավել շատ երևում էր այն ժամանակ, երբ այգին ցրտահարվել էր, կամ էլ բնական աղետների (կարկտահարություն, արևահարություն) ենթարկվել: Այդ մասին դարձյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ներսես Ծնորհալին. «Եվ նա (այգեգործը) թախծալի սրտով պատասխանում է,- գրում է Ծնորհալին,- ինչ ասեմ պատահած աղետների մասին, քանի որ մի մասը ճճիներից վնասվեց, մի մասի ծաղիկները թափվեցին, և մյուսներն էլ արևկեզ լինելով ողկույզի վրա չորացան, և կեսն էլ ննխությամբ ապականվեց և թե ինչ պիտի անեմ՝ չգիտեմ ելքը այս պատահած վտանգներից: Եվ ընկերը թելադիր լինելով նրան առաջարկում է՝ մի մասը պատվաստել և մյուսները փորձված հնարքներով բուժել»[28]:

Էտելուց անմիջապես հետո հաջորդում էր կտրված մատերի (արքատ) հավաքումը, որը ավելի քիչ աշխատուժ էր պահանջում, նաև քիչ վարձատրելի էր: Օրինակ, Էջմիածնի վանքի՝ Երևանում ունեցած մի այգուց 1743 թ. «արքատ ժողովօղ» 4 մշակների վճարվել է ընդամենը 600 դիան[29]:

Խաղողի վազի մշակման հաջորդ աշխատատար դրոցեսը թմբերի փորելն էր: Այն ոչ միայն փխրեցնում էր հողը, այլև ոչնչացնում մոլախոտերը: Փորը կատարվում էր ոչ ուշ, քան ապրիլի կեսերը, երբ դեռ աչքերի բողբոջները չէին մեծացել,

[24] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1. վավ. 13, էջ 34:

[25] Նույն տեղում, էջ 47:

[26] Նույն տեղում, էջ 101:

[27] Ներսես Ծնորհալի, էջ 30-31:

[28] Նույն տեղում:

[29] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1, վավ. 13, էջ 73:

այլապես նոր բացվող բողբոջները բահին շփվելիս հեշտությամբ պոկվում, թափվում էին: «ՅՕշականայ և Աշտարակու մեր այգեաց փորող ԴՃԽԸ (448) մշակաց, յորոց ԱՃՁԱ (181)ին Դ (4) փարայով, իսկ ԲՃԿԷ (267)ին Ե (5) փարայով վարձ եստու, երեք թուման չորս հազար ԴՃ (400) դիան, ձեռամբ վերակացու տէր Յարութիւնին ի յայրիլ ամսոյ»,- կարդում ենք 1768 թ. հաշվեմատյանում[30]: Առանձին բարենպաստ տարիների այգիների փորը կատարվել է ավելի վաղ: Օրինակ, 1767 թ. հաշվեմատյանից տեղեկանում ենք, որ վանքի Նորագեղում ունեցած այգու թվով 88 փորող մշակների վճարվել է. «Գ (3) շահի եւ կիսով մին թուման հինգ հազար ԴՃ (400) դիան, ձեռամբ տէր Սահակին ի մարտ ամսոյ քսան եւ վեցին»[31]: Փորելու ընթացքում բացվում էին վազերի բները, հեռացվում մակերեսային արմատները, կոճղերը, բնի չորացած, փտած մասերը և դրանով իսկ կանխվում վազի հյուսվածքների հետագա քայքայումը: Փորի կարևորությունը նկատի ուներ միջնադարյան մեծ տաղերգու Ֆրիկը, երբ գրում էր.

«Զիս յորէ եւ խոր փորէ,
Որ ես զարթչիմ, զուարթանամ...
Առոգայորդ վտակով,
Որ կանչեմ եւ մանկանամ...
Զիս սնոյ եւ դարմանէ,
Որ ի ժամու պտուղ քեզ տամ»[32]:

Փորելու ընթացքում անհրաժեշտ էր խնամքով հավաքել և այգուց դուրս տանել մոլախոտերի մնացորդները, կոճղարմատները, որը և կիրառվել է հանձին «չայիր» հավաքողների. «Ա (1) թուման ԱՌՁՃԻԵ (1625) դիան եստու Երեւանու Բօշայի այգւոյ Էտորի, փորվորի, չայիր հաւաքողի եւ արքատ ծողովօղի»,- հայտնում է 1744 թ. հաշվեմատյանը[33]:

Հենակավորումը (խչմարում) նպաստում էր վազերի թևերը և միամյա մատերը գետնից բարձրացնելուն, շիվերն ու ողկույզները պաշտպանում մեխանիկական վնասվածքներից, օգնում բույսի լուսավորմանը, օդափոխությանը, ծաղիկների փոշոտման պայմանների բարելավմանը, հեշտացնում բուժման աշխատանքների կատարումը: Հենակները վազերի շուրջը դրվում էին փորելուց անմիջապես հետո, երբ բողբոջները դեռ լավ չէին բացվել. «ԴՌ (4000) եստու Խ (40) բեռն խչմարի փայտի ի յՕշական Պապ մշակի ձեռօք ապրիլի Ի (20)»,- հաղորդում է հաշվեմատյանը[34]:

[30] Նույն տեղում, էջ 395:
[31] Նույն տեղում, էջ 391:
[32] Ֆրիկ, Բանաստեղծություններ: Երևան, 1941, էջ 66-67:
[33] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1, վավ. 13, էջ 60:
[34] Նույն տեղում, էջ 66:

Առանձնահատուկ նշանակություն ուներ այգու բուժումը, որը տարվա մեջ կատարվում էր մոտ 5 անգամ, տերևները բացվելուն պես: Որպես բուժանյութ օգտագործվել է պղնձարջասպի և կրի խառնուրդը, ինչպես նաև ծծումբը: Վանքի հաշվեմատյաններում հանդիպում ենք. «Ետու եւս կրչի Վիրապին, որ մեզ կիր տայր»[35], «ԲՌԲՃԾ (2250) դիան ետու ԽԵ (45) սոմար կրի»[36] և նման բազմաթիվ տեղեկությունների: Հակոբ Կարնեցու վկայությամբ այգեգործական տնտեսությունները ծծումբ ստացել են Ալաշկերտի դաշտից. «... աստի ելանէ քուքուրդ բազում»,- գրում է նա[37]:

Սեպտեմբերի կեսերից սկսվում էր այգեկութը և շարունակվում մինչև հոկտեմբերի կեսերը. «ԷՌԺԴ (7014) շահի ետու յՕշականայ յայգեաց ԲՃԶ (206) քաղատրաց եւ ԾԴ (54) խաղող կոխողաց հոգտեմբերի Ե (5)»,- կարդում ենք 1745 թ. մատյանում[38]: Այն նև շատ աշխատատար պրոցես էր, որում ընդգրկված էին թե՛ տղամարդիկ, և թե՛ կանայք: Ընդ որում կատարվում էր աշխատանքի բաժանում. կանայք զբաղվում էին միայն քաղելով, իսկ տղամարդիկ՝ տեղափոխելով և ճզմելով: Այդ մասին հաշվեմատյաններից մեկում կարդում ենք. «ԺԳ (13) ապասի Ա (1) շահի ետու Երեւանայ Պօշայի այգոյ ԻԴ (24) կանաց խաղող քաղօղի, ԺԶ (16) կթոց կրող եւ կոխատրի Դ (4) ապասի Բ (2) շահի Անանիայ վարդապետի ձեռօք»[39]: Բերքահավաքի ընթացքում միաժամանակ կատարվում էր տեսակավորում, երբ առանձնացնում էին պահպանման համար պիտանի տեսակները ու տեղափոխում հատուկ այդ նպատակի համար պատրաստած կառույցները՝ «սառցատները»: Վանքի հաշվեմատյանները տեղեկություններ են հաղորդում նման շենքերի կառուցման մասին: Դրանցից մեկում, օրինակ, ասվում է. «ՁՃ (600) դիան ետու սառցատան տեղ քանդօղ ԺԲ (12) մշակաց»[40], կամ «Ժ (10) շահի ետու սառցատան շինօղք Ի (20) մշակաց[41] և այլն: Ինչպես խաղողի, այնպես էլ մյուս մրգերի պահպանման համար շատ կարևոր նշանակություն ուներ սառցատներում ջերմաստիճանի կայունությունը: Ուստի սառցատները կառուցում էին գետնափոր ձևով, ուր օդի հարաբերական խոնավությունը լինում էր 70-80 տոկոսի սահմաններում: Հաճախ էր պատահում, որ բարձր խոնավության պայմաններում միրգը հեշտությամբ վարակվում էր սնկային հիվանդություններով, որոնցից ամենավտանգավորը գորշ և կանաչ փտումն էր: Այդ հիվանդության դեմ պայքարելու համար կիրառվում էր ծծմբային գազով մշակման մեթոդը, երբ այրում էին ծծմբափոշին ու կրկնում այն 10-15 օրը մեկ անգամ: Այս եղանակով խաղողը պահվում էր մինչև մայիս ամիսը:

---

[35] Նույն տեղում, էջ 42:

[36] Նույն տեղում, էջ 45:

[37] Տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. 2-րդ: Կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1956, էջ 556:

[38] Մատենադարան. Կթղկ. դիվան, թղթ. 1, վավ. 13, էջ 110:

[39] Նույն տեղում, էջ 52:

[40] Նույն տեղում:

[41] Նույն տեղում, էջ 117:

Խաղողի այգու մշակման վերջին պրոցեսը այգեթաղն էր, որը սկսվում էր բերքը հավաքելուն պես: Ինչպես վկայում է Ժ. Շարդենը, Արարատյան դաշտում և նրան հարող նախալեռնային շրջաններում, ուր ձմեռը խստաշունչ էր, վազերը ցրտահարվելուց փրկելու համար ծածկում էին հողով[42]: Հարկ է նշել, որ այգեթաղը համեմատաբար առավել շատ աշխատուժ էր պահանջում: Պատահական չէ, որ վանքի հաշվեմատյանները բազում տեղեկություններ են հաղորդում վանքապատկան այգիներում օգտագործված մեծ քանակության աշխատուժի ու ծախսված մեծ չափերի գումարի մասին: Օրինակ, Օշականի երեք այգիների «թաղաթաղին» մասնակցել են 324 մշակներ, որոնց վճարվել է 4 թուման 9100 դիան գումար[43], իսկ Վաղարշապատի նույն քանակի այգիների այգեթաղին մասնակցած 365 մշակների վճարվել է 6 թուման 7550 դիան գումար[44]:

Այսպիսով, 17-18-րդ դդ. Էջմիածնի վանական տնտեսությունում երկրագործական արտադրանքի մեջ բավականին մեծ էր խաղողագործության տեսակարար կշիռը: Աղբյուրների ուսումնասիրությունից պարզվում է, որ վանական տնտեսությունը ուներ բոլոր անհրաժեշտ պայմանները խաղողագործության ինտենսիվ զարգացման համար, այսինքն՝ բավականաչափ հարուստ ջրային ռեսուրսներ և մասսայական աշխատանքների կազմակերպման հնարավորություն:

[42] Chardin, Vol III, p. 337:

[43] Մատենադարան, Կթղ. դիվան, թղթ. 1, վավ. 13, էջ 52:

[44] Նույն տեղում:

# ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ



ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ

## ՀԱՅԵՐԵՆԻ ՇԵՇՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ

Նիկոլ Աղբալյանը բազմակողմանի զարգացած մարդ էր, մի բան, որ իր դրական արժանիքների հետ միասին ուներ նաև իր հակակշիռ բացասական կողմերը: Ամենից առաջ նշենք բազմակողմանի զարգացածության հակումը ապակենտրոնացման: Հոգեբանորեն մարդը ձեռքը գցում է այս կողմ, այն կողմ, ցրվում է և չի հասնում այն արդյունքին, որ կարող էր հասնել գիտության մի բնագավառում, որտեղ ինքը կոչված է, որի համար պատրաստվում է:

Նիկոլ Աղբալյանը հմուտ գրականագետ էր՝ գրաքննադատ, և կարող էր այդ բնագավառում գիտական մեծ գործեր ստեղծել, բայց չարեց: Իր ընկերներն ու կուսակիցները նրան մեղադրում են ծուլության մեջ: Մեզ թվում է, թե այդ կարծիքը սխալ է: Բայց նաև ազգային գործչի նրա հանգամանքը պակաս դեր չէր խաղում, որ նա չկարողանար ժամերով գրադարաններում անցկացնել: Նա իր մասին ասել է. «Սուրը չթողեց, որ գրիչ դառնամ, գիրը չթողեց, որ մարտիկ դառնամ»:

Այդպիսի մարդիկ հոգեբանորեն մեկը մյուսով արդարացնում, խղճի կամիթները մասամբ ամոքում են:

Աղբալյանն ունի նաև հայերենագիտական աշխատություններ, որոնք հայրենիքում ծանոթ չեն նույնիսկ լեզվաբան հայագետներին: Չնայած դրանք խիստ նշավակվել են (բայց կտեսնենք, որ դա անտեղի է): Այդ աշխատությունները վերաբերում են հայերենի հնչյունաբանությանը, բառագիտությանը, հոլովներին, շեշտին և այլն: Մենք պետք է անդրադառնանք դրանց: Առաջին հոդվածը ուզում ենք սկսել շեշտից:

Նիկոլ Աղբալյանը հրաշալի լսողություն ուներ, հազվագյուտ երգիչ էր: Գևորգյան Ճեմարանում երաժշտական կրթություն էր ստացել, ուստի հայերենի

շեշտադրության մասին նրա ասած խոսքը գիտական մեծ արժեք ունի, մանավանդ որ մեր շեշտի մասին ուսումնասիրություն չկա: «Հայերենի շեշտը» նրա խոսքը այսօր էլ գիտականությունը պահպանում է, մանավանդ որ այդ խոսքին Հայաստանում գրեթե ոչ ոք ծանոթ չէ: Աղբալյանն իր խոսքի մեջ հաճախ ասում է, թե այս կամ այն խոսքի շեշտը պետք է ուսումնասիրվի, ուրեմն ինքը ուղղվածի է տալիս:

Գրաբարի հետ կատարված հնչյունների փոփոխությունների մեծ մասը կապված է շեշտի հետ: Հայերենի համեմատական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեր գրաբարի բնիկ արմատները հնդեվրոպական ցեղակից լեզուներից մի վանկով պակաս են, օրինակ՝ սանսկրիտ սանա, հուն. էնուս, լատին. սէնեք, հայերեն հին: Սանսկ. պանչա, հունարեն պենտէ, հայ. հինգ:

Ըստ Նիկոլ Աղբալյանի, հայերեն բոլոր բարբառները շեշտում են նախավերջին վանկը, ուրեմն հայերենը փաստորեն վերջահար շեշտ ունի: Արարատյան գյուղացին շեշտում է գո՛ւթան, է՛գի, քա՛ղաք, կա՛րմիր և այլն: Բայց սա գրաբարի հին շեշտ չէ: Գրաբարի նախավերջին վանկի շեշտ բառի վերջին վանկի կորուստով դարձավ վերջնավանկային: Իսկ արարատյան խոսվածքների շեշտը մի վանկ էլ դեպի սկիզբ խաղաց և դարձյալ շեշտեց նախավերջինը: Գրաբարը ամենասկզբում շեշտում էր աթո՛ռ, ռ-ն ընկավ, շեշտը դարձավ վերջնավանկային՝ աթո՛ռ: Բարբառներում մի վանկ էլ դեպի սկիզբ անցավ, դարձավ աթո՛ռ:

Հայերենի շեշտը մասամբ է կայուն. եթե մեր լեզվի շեշտը մանրամասն ուսումնասիրվի, կտեսնենք, որ այդ կայունությունը համարվելու է սխալ: Նայած մեր շարադասության և ասվածքի ձևին՝ շեշտը զարմանալի փոփոխություն է կրում: Նայե՛մ, տե՛սնեմ, մեր Անդրա՛նիկն է, կանչեցի՝ Անդրա՛նիկ, հե՛յ:

Մեր նոր լեզուն իր մշակման հիմքը համարեց արարատյան բարբառը, բայց շեշտադրության հարցում հետևեց գրաբարի քարացած վերջնավանկային շեշտին, իսկ դրանից մեր լեզվի կենդանի եղևէջներից, արտահայտչականությունից և տաղաչափական տարազներից շատ բան կորցրինք: Մեր լեզուն շատ աղքատ է, քորեական՝ մեծասար ոտքերից՝ այսինքն մի շեշտված և մի անշեշտ հաջորդող վանկով ոտքերից: Այդպիսի բառեր են միավանկ հոդով բառերը և ա՛ստղ, կա՛յսր, մա՛նր, բա՛րձր ա՛րկղ, կո՛ճղ, ծա՛նր, փո՛քր և ուրիշ ոչ շատ բառեր:

Մեր լեզուն աղքատ է նաև ստեղնային (դակտիլ) ոտքերով՝ այսինքն չունի մի շեշտված և հաջորդ երկու անշեշտ վանկերով բառեր: Չունենք նաև քողաղոտ (անֆիբրաքոս) մի անշեշտ, մի շեշտված և անշեշտ վանկերով բառեր:

Գրական լեզվում վերջընթեր շեշտվող վանկեր ունեն կո՛ճղ, ա՛ստղ, սա՛ոն, տա՛րր, ա՛նգղ, դա՛ոն, տա՛սն, կա՛յսր և այլ բառեր:

Եռավանկ և քառավանկ բառերը վերջնահար շեշտ ունեն՝ լիաբո՛ւոն, գիշա՛նգղ, լուսա՛ստղ, գառնա՛նգղ, վերջիվե՛րջո, լիաձե՛ոն, արագո՛տն, վեհա՛նձն, Արագածո՛տն, դյուցա՛զն, Հայկա՛զն, Ազա՛տն, Մասի՛ս, քաղցրախա՛ոն, ջրախա՛ոն:

Մի շարք երկվանկ, եռավանկ բառեր շեշտ ունեն վերջընթեր վանկի վրա, ինչպես գրե՛թե, մի՛թե, ո՛չ մի, ի՛սկույն, իսկա՛պես, արդա՛րև, շո՛ւտով, ո՛չ թե, հա՛զիվ, հի՛մա, հե՛տո, ա՛յսպես, ա՛յդպես, ա՛յնպես, նո՛ւյնպես, ո՛րպես, իսկա՛պես, մինչե՛իսկ, նո՛ւյնիսկ, գո՛նե, դա՛րձյալ, ա՛յսօր, նո՛ւյնչափ, թե՛և, թե՛պետ,

թեպե՛տև, վա՛սնզի, մանա՛վանդ, քա՛նզի, ա՛յնժամ, քա՛նի. ո՛րքան, համե՛ցեք. ո՛րտեղ, մինչև՛իսկ և այլն: Այժմ շատերը դրանք վերջավանկ են շեշտում:

Երբ միավանկ բառի կրկնությունը մակբայ է կամ ածական, շեշտվում է առաջին վանկը, օրինակ՝ սո՛ւր-սուր փշեր, մե՛ծ-մեծ ձեռներ, խո՛ւմբ-խումբ եկան, վե՛ր-վեր թռան, զո՛ւյգ-զույգ գնացին, վա՛ռ-վառ կակաչներ և այլն:

Երկրորդ վանկերը կարճ են արտաբերվում և սահուն հասնում են հաջորդ բառին: Այդպես են բոլոր անշեշտ վանկերը: Իսկ երբ կրկնությունը սոսկ կրկնություն է առանց ածական ու մակբայ լինելու, շեշտվում է երկրորդը: Ջո՛ւր-ջո՛ւր, տո՛ւն-տո՛ւն, դեպի տո՛ւն, ջու ջու ջո՛ւ վո՛ւշ-վո՛ւշ Անուշ: Առաջինը երկար է, կարող է թույլ շեշտ ունենալ կամ չունենալ, իսկ երկրորդը կարճ է ու հատու և ուժգին շեշտ ունի:

Առաջին բաղադրիչի վրա է շեշտը նաև այսպիսի կազմությունների դեպքում. կա՛լուկուր, տո՛ւն-տեղ, ամա՛ն-չաման, առո՛ք-փառոք, ճե՛փ-ճերմակ, սե՛փ-սև, կա՛ս-կարմիր, զա՛ռ-վառ, լո՛ռումունջ, կո՛ւշտուկուռ, ավե՛լ-խորթ և այլն:

Առաջին վանկի վրա է նաև երկվանկ կոչականների շեշտը. Մա՛րո, Կա՛րո, Հա՛մո, Սե՛թո, Գի՛նո, Պե՛տո: Բայց կոչականի այլևայլ ձևեր կան, կարող ենք երկու վանկն էլ շեշտել, նայած ինչ իմաստով ենք կանչում:

Այսպես են նաև եռավանկ անունները. Համբա՛րձում, Կիրա՛կոս, Մարտի՛րոս, Կարա՛պետ: Այդպես են շեշտվում նաև սովորական բառերը, երբ իբրև կոչական են գործածվում. ավա՛զակ. խառնա՛կիչ, անա՛զնիվ, սիրե՛լիս, անի՛րավ, ա՛ղջի անաստված:

Մի շարք անիծական ու բարի մաղթանքի բայեր շեշտվում են նախավերջնավանկով, անի՛ծվես, չորա՛նաս, սևավո՛րվես, չմեծա՛նաս, գե՛տինը մտնես, սև՛ կապես, պապա՛նձվես, թաղե՛մ քեզ, լա՛լկվես և այլն, ա՛պրես, զորա՛նաս, կե՛ցցես, կանա՛չես, ծա՛ղկես և այլն:

Առաջին վանկն են շեշտում երկվանկ կրկնությունները. կա՛մաց-կամաց, ա՛րագ-արագ, հե՛ռու-հեռու մնա, տե՛սակ-տեսակ, կո՛պիտ-կոպիտ մարդիկ են, բա՛րի-բարի եղիր:

Նախորդ վանկն են շեշտում բոլոր հարադիր բարդությունները. նե՛րս գալ, դո՛ւրս գալ, վե՛րջ տալ, վա՛զ տալ, վե՛ր կենալ, սի՛րտ տալ, խելքի՛ գալ, աչքո՛վ անել, ակա՛նջ դնել, մի՛տ բերել և այլն:

Նախորդ վանկն են շեշտում հոդավոր բոլոր բառերը. գի՛րքս, տո՛ւնդ, շե՛մքդ, սեղա՛նը, գրի՛չդ և այլն:

Երբեմն նախորդ վանկն են շեշտում, բայի սահմանականի ներկան, անկատար անցյալը:

Առաջին վանկն են շեշտում ներկայի և անցյալ անկատարի ժխտական ձևերը. չե՛մ գրում: Այսպես են նաև վաղակատարի ժխտական ձևերը. չե՛մ գրել:

Այսպես է շեշտվում նաև արգելական հրամայականը. մի՛ գրիր, մի՛ գրեք:

Առաջին վանկն է շեշտ առնում նաև անվանական ստորոգյալները. մա՛րդ եմ:

Եթե մակբայները բայից առաջ են կիրառվում, շեշտվում են մակբայները. շա՛տ խոսեց, լա՛վ երգեց:

Եթե բայերը և մակբայները բազմահնչյուն են, բայերը թույլ շեշտ են առնում:

Եթե անվանական ստորոգյալը որոշիչ ունի, շեշտը առնում է որոշիչը. լա՛վ մարդ է, չա՛ր աղջիկ է: Եթե այդ որոշիչը մի այլ որոշիչ ունի, շեշտը անցնում է որոշիչի որոշիչին. չափազա՛նց սիրուն աղջիկ է, խի՛ստ տգեղ կին է, շա՛տ բարի մարդ է...

Կապերի հետ կազմված կապակցության նախորդ բառն է շեշտ առնում. Քո՛ վրա է մեղքը. նրա՛ մասին է խոսում. գերանի՛ տակ մնաց. պատի՛ տակ ընկած է. արանց տա՛ն մնաց. բացի քեզանի՛ց, առ ա՛յն:

Մեր արտաբերության կշռույթի հիմնական չափերը մեկ-երկու վանկերն են: Սրանք առանց որևէ ընդհատման ենք արտաբերում. օրինակ՝ սուր, բույր, լուր, կատակ, որակ, քանակ և այլն: Այսպիսի բառեր առանց որևէ ընդհատման մի շնչով արտաբերվում են: Եռավանկ, քառավանկ, հնգավանկ, վեցավանկ բառերը արտաբերվում են անընկատելի կիսվելով՝ որոշ դադարով: Եռավանկ բառերի դադարը առաջին և երկրորդ վանկի միջև է ընկնում: Անդ/րանիկ, ման/կություն, ան/ազնիվ և այլն: Քառավանկ բառերի դադարը ընկնում է ուղիղ մեջտեղը՝ երկվանկից հետո. քընն/ցրի, տանտի/րուհի, հիվան/դանոց և այլն:

Իսկ հինգավանկ բառերի առաջին վանկը անջատվում է, մնացածը արտաբերվում է, ինչպես քառավանկ բառերը: Ամեն արտաբերություն իր կանոնավորումը կատարում է շեշտված և անշեշտ վանկերի որոշակի համաչափությամբ: Այսքան անշեշտ վանկին հասնում է մի շեշտված վանկ: Այս երևույթը մեր արտաբերության կշռույթն է (ռիթմը): Մեր լեզվի կշռույթը այնպիսին է, որ քառավանկ և մանավանդ հնգավանկ բառերը մի շեշտով չենք կարող արտաբերել: Քառավանկ բառերի երկրորդական շեշտը ավելի թույլ է, քան հնգավանկերինը: Իսկ եթե ավելի է բառերի վանկերի թիվը, ապա բառը գրեթե երկու շեշտեր է առնում. օրինակ՝ հե՛ռուստատեսությո՛ւն: Առաջին շեշտը ավելի ուժեղ է, քան քառավանկ, հնգավանկ բառերի առաջին շեշտերը:

Մեր քառավանկ, հնգավանկ բառերը երկու շեշտ ունեն: Ընդունենք, որ մեր բառերը վերջին վանկն են շեշտում, բայց երկարահունչ բառերն ունեն նաև մի թույլ շեշտ, սկզբի ձայնավորի վրա: Այդպես են արտաբերվում նաև այնպիսի նախադասություններ, որոնք չորս-հինգ վանկից են կազմված: Իսկ՝ շա՛տ լավ աղջի՛կ է նախադասության ուժեղ շեշտը շատ բառի վրա է, իսկ թույլ շեշտը՝ աղջիկ բառի վերջին վանկի վրա:

Մեր հնգավանկ և ավելի վանկ ունեցող բառերը սակավաթիվ են: Մեր արտաբերության արարողությունը չի կարողանում դրանք տեղավորել, ուստի այդ կարգի բառերի մի վանկը սղվում է: Հարսանիքատուն տալիս է հասանքատուն:

Մեր բարբառները եռավանկ բառերի մեծ մասը շեշտում են միջին վանկը, իսկ գրականը շեշտում է վերջին վանկը: Գրականը որոշ պարագաներում նույնպես միջին վանկն է շեշտում. օրինակ՝ անի՛ծվես, պապա՛նձվես դու, պապա՛նձվես, չըրա՛նաս: Երկրորդ վանկի շեշտումով կարկատանը դառնում է կըրկատան: Առաջին վանկի շեշտումով կարկատանը տալիս է կարկըտան, իսկ վերջին վանկի շեշտումով կարկատանը հնչյունափոխվում է կըրկըտան-ի:

Երկվանկ կրկնավորների անջատ արտաբերումը մեր քառավանկ բառերի շեշտադրությունն է: Եղել է զանգա՛կատուն, սեղա՛նատուն, մարդա՛համար, սա-

կայն այժմ այս տեսակ բառերը մենք երկու շեշտով ենք արտաբերում. սե՛ղանատո՛ւն, մա՛րդահաշի՛վ, հա՛րսանքատո՛ւն, հա՛րսանեկա՛ն:

Հնգավանկ բառերը նույնպես երկու շեշտով ենք արտաբերում. խըմբա՛վարությո՛ւն, հա՛րսնախոսությո՛ւն, տրա՛մադրությո՛ւն և այլն:

Բայերը շեշտում ենք. ասո՛ւմ եմ, բերո՛ւմ եմ, մընո՛ւմ եմ, գընո՛ւմ եմ, որոնո՛ւմ եմ, կամենո՛ւմ եմ: Իսկ հնգավանկ բայերը՝ հիվանդա՛նում եմ, տկարա՛նում եմ: Իսկ սրանց ժխտականը՝ չե՛մ ասում, չ՛ի ասում, չէի՛ ասում: Ա՛սավ, չա՛սավ, մին էլ տեսավ: Բայերի շեշտը փոխվում է, եթե դերանունը շեշտվում է: Ե՛ս եմ ասում, դո՛ւ ես ասում, նա՛ գնաց: Շեշտվող վանկերը դառնում են անշեշտ ու սահուն, իսկ սուղ վանկերը չքանում են: Նա՛ գընաց դառնում է նա՛գ-նաց: Դո՛ւք կըտեսնեք հնչվում է դուքկ տեսնեք: Մա՛րդ եկավ, ձիավո՛ր անցավ, փա՛յտ առավ, գութա՛ն գնեց, վաճառակա՛ն եկավ: Այս նախադասությունների մեջ բայերը շեշտ չունեն, իսկ եթե ենթական ու խնդիրները հոդով են, բայերը շեշտը պահպանում են: Մարդը եկա՛վ: Ձիավորը անցա՛վ: Փայտը տարա՛վ:

Մակբայները շեշտը առնում են իրենց վրա, իսկ բայերը շեշտազրկվում են: Լա՛վ խոսեց, պի՛նդ կաց: Մակբայների ուժեղ շեշտից հետո բայերը ուժաթափվում և շեշտ չեն առնում:

Հուսահատվեց, բայց շա՛տ հուսահատվե՛ց: Այս վերջին եց-ը թույլ շեշտ է առնում: Նե՛րս ընկավ, դո՛ւրս գնաց, սի՛րտ առավ, մա՛րդ եմ, հիվա՛նդ եմ: Այս կարճ նախադասությունները շեշտվում են սովորական բառերի տարազով: Ե՛ս եմ = աշո՛ւն: Դու եկա՛ր = անա՛սուն: Ես կուզեի՛ = անտառապետ: Արոր է = անպիտան: Երկվանկ նախադասությունները արտաբերվում են անանջատ: Մա՛րդ է: Լա՛վ մարդ է նախադասության առաջին վանկը քիչ զատվում է: Շատ լավ/մարդ է: Նա շատ լավ/մարդ է:

Իսկ հնգավանկ և ավել նախադասությունները բաժանվում են երկու մասի՝ կազմելով երկու արտաբերական միավոր, և առնում են երկու շեշտ՝ այսինքն կազմում են երկու ոտք: Հիվա՛նդը շո՛ւտ վեր կացավ: Հասմի՛կը շա՛տ լավ կին է: Եթե նույնիսկ մի բայ ենք արտաբերում, արտահայտվում է ընդհատումներով: Կե՛րպարանափոխե՛ցինք:

Կրկնավորները շեշտում են երկրորդ վանկը: Երբ սրանք ածանց են ստանում, շեշտվում է ածանցը: Ընդ որում ուժգին է առաջին շեշտը. ֆը՛սֆըսո՛ց:

Կա նաև քերականական կամ ճարտասանական շեշտ, որ կոչվում է նաև տրամաբանական շեշտ: Ամբողջ նախադասության որևէ բառի մի վանկ ավելի ուժգին է շեշտվում, քան մնացած բոլոր վանկերը: Այս վերջինները սովորական շեշտով են արտաբերվում, իսկ այդ մեկը ընդգծվում է:

Երբ հանրահայտ ճշմարտություն ենք պատմում, բոլոր բառերն էլ հավասար են շեշտվում: Եթե դրանց մեջ կա մի բառ, որ ուժգին շեշտ է առնում, դա կոչվում է քերականական շեշտ: Խոսքը, օրինակ, չի վերաբերում ստորոգյալի ու խնդրի կամ ենթակայի ու ստորոգյալի շեշտադրությանը սովորական շարադրման մեջ: Այստեղ նկատի չի առնվում, թե որ բառն է ուժեղ կամ թույլ արտաբերվում, նույնիսկ այդ ուժգնությունը հատկապես մակբայի, հարցական այս կամ այն բառի վրա նկատի չի առնվում, աննկատելի է մնում: Քերականական շեշտը այս կամ բառի վրա շատ

ուժգին է և խիստ զանազանվում է մյուս բառերի շեշտերից: Երբ մենք ասում ենք Աբովյանը ծնվել է Քանաքեռ գյուղում, հայտնում ենք մի պատմական իրողություն, և այդտեղ բոլոր բառերն ունեն իրենց սովորական շեշտադրությունը: Ոչ մի բառ մյուսի հանդեպ գերադաս չէ: Իսկ երբ ասում ենք՝ Աբովյա՛նն է Քանաքեռում ծնվել: Աբովյան բառը ուժգին շեշտ է առնում, որ նշանակում է, թե Աբովյա՛նն է Քանաքեռում ծնվածը, և ոչ թե մի այլ գրող: Իսկ եթե ասում ենք Աբովյանը Քանաքեռո՛ւմ է ծնվել, ուժգին շեշտը առնում է Քանաքեռ բառը, որ նշանակում է Քանաքեռում, և ոչ մի այլ գյուղում: Ուրեմն նախադասության որևէ բառի այդպիսի շեշտը փոխում է նախադասության մասնավոր նշանակությունը:

Ենթադրենք, այսօր մեզանից մեկնումեկը պետք է մեկնի Վանաձոր, բայց չգիտենք, թե ով: Մեկը գալիս և ասում է, **Ջեմմա՛ն է մեկնելու Վանաձոր**: Մեկնումեկի մեկնումը մեզ ծանոթ էր, սա հոգեբանական ենթական է, իսկ Ջեմման մեզ անծանոթ էր: Սա էլ հոգեբանական ստորոգյալն է, հենց սա էլ այդ ուժգին շեշտն է առնում: Ուրեմն այդպիսի շեշտ առնում է այն բառը, որ տվյալ նախադասության մեջ անծանոթ է և բացահայտվում է հաջորդ նախադասության մեջ: Այդպիսի բառեր են մինչե՛ւիսկ, նա՛մանավանդ, մի՛նչև անգամ, նո՛ւյնիսկ, միա՛յն, անգա՛մ: Սրանք նախադասության մեջ այդ ուժգին շեշտը կրում են իրենց վրա: Այդպես են նաև հարցական բառերը՝ ե՞րբ, ի՞նչո՛ւ, ո՞վ, ի՞նչ, ի՞նչպես և սրանց պատասխան բառերը, երե՛կ, ուսանելո՛ւ, Արաքսի՛ն, խնձո՛ր, բարեհաջո՛ղ: **Ի՞նչ են ասում: Բա՛ն էլ չեմ ասում: Ե՞րբ գնաց, երե՛կ գնաց:** Անծանոթ բառն առաջ է քաշվում, դառնում նախադասության կենտրոնական դեմքը, ողջ ուշադրությունը բևեռվում է այդ բառի վրա:

Այսպիսի շեշտ է վերցնում նաև արտահայտչական կրկնությունը: Մարոն թափառում էր մենակ, մենա՛կ և տկլոր: Հայերեն խոսիր, հայերե՛ն: Սովորական կրկնությունն այդպիսի շեշտ չի պահանջում: **Ես գիրք եմ կարդում, իսկ դու լրագի՛ր ես կարդում:**

Մենք շարադրեցինք Նիկոլ Աղբալյանի թռուցիկ, բայց հիմնականում հայոց շեշտի ուղենշող տեսությունը, որը մանրամասնելու, լրացնելու, ամբողջացնելու կարիք է զգում: Սա, կարելի է ասել, մեր շեշտադրության ուսումնասիրության միակ փորձն է: Մեր երաժշտագետ լեզվաբաններին է մնում այս տեսության լրացումն ու ամբողջացումը, որը կլինի շատ շնորհակալ մի աշխատանք և փառք ու աստիճան կշնորհի հեղինակին արժանավորապես:

Պետք է ասենք, որ ինքը՝ ազնիվ երախտավորը, մի քանի անգամ նշում է, թե ինքը մանրամասն չի ուսումնասիրել: Այս աշխատանքը նրա հայերենագիտության իմացության արդյունքն է և ոչ թե գիտական ուսումնասիրությունը, որ ավելի կատարյալ գործ կլիներ: Ինչ որ է, մեր շեշտադրության ուսումնասիրության հիմքը և գծագիրը կա, մնում է հմուտ մեկը, որ ամբողջացնի շենքը:

* Հայերենի շեշտի մասին հոդված ունի նաև Մ. Աբեղյանը, որ տպվել է 1890 թ. «Նոր դարում»:

*ԵՐԱՆՈՒՀԻ ՄԵԼԻՔ-ՄՈՒՐԱԴՅԱՆ*

# ԱՍՏՂԻԿ ԴԻՑՈՒՀՈՒ ԱՂԵՐՍՆԵՐԸ ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Աստղիկ դիցուհու պաշտամունքային տոներից գլխավորը, ինչպես վկայում են մատենագրական տվյալները, Վարդավառն է: Վերջինս սինկրետիկ տոնախմբություն է. այն իր մեջ ներառում է բազմաթիվ հավատալիքային տարրեր, ծիսական արարողություններ, որոնք դժբախտաբար աղոտ և ոչ ամբողջական ձևով են ավանդվել: Հնում՝ հեթանոսական ժամանակներում, այն տոնվել է շարժական տոմարացույցով՝ Ամանորի նախաշեմին, իսկ 552 թ. հայկական քրիստոնեական մեծ տոմարի հիմնումով դարձել է կայուն-շարժական (ըստ լուսնարեգակնային տոմարի), 35-օրյա շարժականությամբ և առ այսօր տոնվում է Զատկից 14 կամ Հոգեգալստից 7 շաբաթ անց՝ հունիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

Աստղիկի և Վարդավառի փոխառնչության մասին հավաստիացումներ ենք գտնում «Յայսմաւուրք»-ում. «Զի յայնմ աւուր՝ հեթանոսք ափրոդիտեայ տօնէին: Եւ զնա կոյս ասէին ի փրփրոյ ծովու և յարենէ ծնեալ: Եւ կոչէին զնա վարդամատն և ոսկեծղի և զվարդն նմա ընծայ մատուցանէին: Վասն այսորիկ անուանէին զտօնն զայս Վարդավառ»[1]: Ուշագրավ այդ պատառիկը շեշտում է Աստղիկի՝ որպես ջրերից ծնված կույսի հանգամանքը, ինչպես նաև մատնացույց է անում վարդը՝ որպես յուրահատուկ ընծայումի առարկա, որի հիման վրա էլ բացատրում է տոնի անվանումը:

XIII դարի վերջին, Կիլիկիայում ստեղծված Տոնապատճառ ձեռագիր ժողովածուն[2] ավելի է զարգացնում Աստղիկ-Աֆրոդիտեի ծննդյան մանրամասները և աներկբայորեն «Վարդավառ» անունը բխեցնում վարդ ծաղկի անունից: Խնդրո առարկա հատվածում, որի հեղինակն է համարվում Հովհաննես Կոզեռն վարդապետը, ի մասնավորի նրա «Վասն Վարդավառի Տաւնին» գրվածքում Վարդավառը դիտվում է վաղնջական ժամանակների խորհրդապաշտական մի տոն, որը բոլոր տոներից ամենաերևելին և պայծառագույնն է: Ի թիվս հեթանոսական մի շարք աստվածությունների՝ Արամազդի, Անահիտի, Վահեի և Վահագնի, այդտեղ հիշատակվում է նաև Աֆրոդիտե-Աստղիկն[3] իր տոնացույցով. «Եւ յամառնային ժամա-

[1] Յայսմաւուրք, Կ. Պոլիս, 1730, էջ ՋԺԹՂ:

[2] Ս. Յակոբեանց ձեռագրատուն, ձեռ. № 1272:

[3] Ըստ միջնադարյան գրավոր հուշարձանների՝ Աստղիկը հունական Աֆրոդիտեի համապատասխանությունն է:

նակն տաւնէին Ափրոդիտէ»[4]: Վերջինիս ծնունդը և նրա պաշտամունքային տոնի՝ Վարդավառի անունը բացատրելու նկատառումով հեղինակը վերապատմում է աստվածների ծննդաբանությունը, թե ինչպես տիեզերական Կրոնոս աստծու անդրանիկ որդին՝ Արամազդը, կասկածելով, որ հայրը կարող է ունենալ իրեն մրցակից երկրորդ որդուն, վերջինիս ծնվելուց անմիջապես հետո սպանում է եղբորը և նետում ծովը. «Եւ ծովու փրփրեալ յարենէն, եւ ի սպիտակ փրփրոյն ընծայէր զԱփրոդիտէս[5], զոր եւ ստաքանեալ ասէին, թէ ընդ որ անցանէր եւ ընթանայր, յընթացիցն արիւն իջանէր յոտից նորա, եւ վարդ եւ մուրտ բուսանէր: Իսկ խաւարեալ ի յուսոյ հեթանոսական սովորութիւնն զտաւնն նորա Վարդավառ անուանէին, եւ զվարդ նմա ընծայ մատուցանէին»[6]:

Վարդավառն, աշխարհագրական տարածվածության առումով, բացի Հայաստանից, ընդգրկում էր նաև Կապադովկիան և Վրաստանը: Կապադովկիայում այն հայտնի էր հունատառ βαρτουβα'ρ անունով և տոնվել է Զատկից 6 շաբաթ հետո, իսկ վրացական աղբյուրներում՝ Վարդոբա կամ Վարդոբիսա անուններով[7]: Վրացական այդ ծիսանունը մեկնվում է որպես «վարդի տոն»: Ն. Մառը, ամիսների շարժականության և այլ փաստերի հիման վրա, տոնակատարման ժամանակը դիտում է հուլիսի 7-ը[8]: Վրացական Վարդոբիսայի մասին մի ուրիշ վկայություն կա նաև Կոստանդնուպոլսի նշանավոր պատրիարքներից մեկի՝ Յովհան Պահողի Νομοχανων-ի վրացական տարբերակում՝ պասերի թվարկման ժամանակ, որտեղ սրբոց առաքելոց պահքն անվանվում է Վարդոբիսա[9]:

«Վարդավառ» անվան ստուգաբանության պատմությունն ընդգրկում է բավական երկար ժամանակաշրջան: Եթե հաշվի չառնենք միջնադարի մատենագիրների կեղծ ստուգաբանությունները, ապա անգամ գիտական ստուգաբանության փորձերը մեզ կհասցնեն XIX դարի կեսերը՝ ապացուցելով նրա նկատմամբ եղած մեծ հետաքրքրությունը:

Գիտնականների մի մասը (Ղ. Ալիշան, Ն. Տաղավարյան, Վ. Տեր-Մինասյան, Մ. Աբեղյան) տոնի ակունքները փորձում է կապել Աստղիկ դիցուհու, մյուսները (Գ. Ֆնտգլյան, Ս. Ծոցիկյան, Կ. Մելիք-Փաշայան, Ջ. Ռասել) Անահիտ աստվածուհու պաշտամունքի հետ: Սրանցից բոլորովին տարբերվող և նշված աստվածություններից և ոչ մեկին չառնչվող տեսություններ են զարգացրել Ս. Պարոնյանը և Գր. Ղափանցյանը:

---

[4] Տօնապատճառ, ԺԶ:

[5] Ի տարբերություն Մ. Խորենացու, որը հենվում է Սիբիլլայի հաղորդած ավանդության վրա, Աստղիկը ոչ թե Կրոնոսի (Զրվան) դուստրն է, այլ վերջինիս քույրը և Նոյի դուստրը (տե՛ս Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւն, Պատմութիւն Հայոց: Վենետիկ, 1865, էջ 16):

[6] Տօնապատճառ, ԺԶ:

[7] Պ. Մուրադյան, Կովկասյան մշակութային աշխարհը և Հայաստանը: ՊԲՀ, № 1-2, 1996, էջ 125:

[8] Н. Марр. Боги языческой Грузии. 1905. с. 55-56.

[9] Լ. Մելիքսեթ-Բեկեան, Վարդավառը վրացոց մէջ, Արարատ, Էջմիածին, 1918, № 1-3, էջ 133:

Գ. Ֆնտգլյանը «Վարդավառ» անունը մեկնում է ուարդ «ջուր» և ուրդ «ջրի ճամփա» բառերի օգնությամբ[10], հայր Ալիշանը անունն առնչում է վարդ ծաղկանվան հետ[11]:

Ս. Ծոցիկյանի տեսակետով անունը, թերևս, պետք է կցել սանսկրիտերեն vard «ջուր» բառին և երկրորդ մասի մեջ տեսնել հայերեն վայրել բառարմատը՝ «վայր նետել, թափել, ցայտեցնել» իմաստներով, այսինքն՝ մի տեսակ հիբրիդային կազմություն է ենթադրում[12]:

Շատ ինքնատիպ տեսակետ է առաջ քաշել Սուքիաս վարդապետ Պարոնյանը: Նա Վարդավառը դիտում է որպես զրադաշտական ծագում ունեցող մի տոն, իսկ անունը կապում զենդերեն aetra «կրակ» և վառ բաղադրիչների հետ, որ թարգմանվում է «կրակավառ», «հրավառ» կամ «հրալոյց»[13]:

Ինչպես իրավամբ նկատել է Կ. Մելիք-Փաշայանը, նախ՝ Վարդավառը ոչ մի առնչություն չունի կրակի հետ, և երկրորդ՝ վարդ բառը չի կարող կցվել aetra-ին: Վերջինս նույնպես հակված է անունը դիտել որպես vard «ջուր»-ի հետ առնչվող կազմություն: Մի խոսքով, նա ընդունում է Գր. Ղափանցյանի տեսակետը և բուն իմաստը դիտում «ջրասրսկում»[14]:

Գր. Ղափանցյանը նույնպես փորձում է անվան ծագումը կապել ջրի պաշտամունքի հետ, թեև բառի ծագման աղբյուրը, ի տարբերություն նախորդների, որոնք այն փնտրում էին հնդիրանական աշխարհում, կողմնորոշում է մեզ դեպի փոքրասիական լեզվոլորտը: Ըստ Գր. Ղափանցյանի՝ անունը սերում է խեթերեն vard «ջուր» և arr «լվանալ, լցնել, սրսկել» տարրերի միակցումից[15]:

Բառի ստուգաբանությանն է անդրադարձել նաև Ջ. Ռասելը հատուկ աշխատության մեջ, որտեղ ծիսանունը բացատրում է որպես «վարդ բերող, պարգևող», այն համեմատելով սողդ. βwδβrn «բույրվառ» բառի, մասնավորապես -βrn «բերող» մասի հետ, որ սերում է հին իրանական *barana-ից[16]:

Ըստ ժողովրդական հավատալիքի՝ սրբերի և նահատակների, ընդհանրապես արդար հոգիների գերեզմանի վրա Վարդավառի գիշերը լույս է իջնում, և այդ լույսը տեսնողի նվիրական իղձերն ու ցանկությունները անպայման կատարվում են: Տարածված է նաև այն պատկերացումը, թե իբր Հոգեգալստի օրը բոլոր սրբերը բարձրանում են երկինք, իսկ Վարդավառին նորից իջնում իրենց տեղը՝ ընդունելով լուսավոր աստղերի կերպարանք[17]: Այդ առումով հետաքրքիր է Ա. Մուշեղյանի

---

[10] Տե՛ս Արտակ արքեպիսկոպոս Մանուկեան, Հայ եկեղեցու տօները, Թեհրան, 1980, էջ 179:

[11] Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 364-365:

[12] Ս. Ծոցիկյան, Վարդավառ, «Հայաստանի կոչնակ», 13 հուլիսի,1929, էջ 882:

[13] Տե՛ս Արտակ արքեպիսկոպոս Մանուկեան, Նշվ. աշխ., էջ 179:

[14] Կ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Ե., 1963, էջ 129-130:

[15] Г. Капанцян, Хеттские боги у армян, Երևանի Պետական համալսարանի գիտական աշխատություններ, հ.14, Ե., 1940, էջ 279-280:

[16] J. Russell, The etymology of Armenian vardavar, Annual of Armenian Linguistics, Vol. 13. 1992, էջ 64-66.

[17] Հ. Խառատյան-Առաքելյան, Հայ ժողովրդական տոները: Ե., 2000, էջ 183:

առաջադրած տեսակետը: Ինչպես ցույց է տվել վերջինս իր մի հոդվածում[18], Վարդավառը զուգադրելի է հին իրանական տոմարի առաջին ամսվան՝ *Frawarda-ին և համընկնում է հայկական հնագույն տոմարի 13-րդ ամսվա՝ Աւելեաց օրերի (այլ կերպ արարչության օրեր կամ արարչականներ) հետ: Վարդավառն, ըստ հիշված ուսումնասիրողի՝ զրադաշտական հավատքում Հրաշակերտությանը /Frašo-kereti/ ամենամյա ցիկլում փոխարինող «պահապան ոգիների զարթոնքի» «Fravašimąm» կոչված տոնի զուգահեռն է: Այդ մեկնությունն ակամայից հիշեցնում է Պայծառակերպության շղթայում Մովսես և Եղիա մարգարեների հրաշափայլ հայտնության դրվագը: Ուստի այդ բացատրությունը հավաստիորեն ի հայտ է բերում հայկական ժողովրդական հավատալիքի (հմմտ. լույս իջնի գերեզմանին) և մյուս կողմից քրիստոնեական Պայծառակերպության, որպես հրաշագործ երևույթի, աղերսները:

Վարդավառյան տոների արմատները, ինչպես տեսնում ենք, տանում են պատմության խորքերը և կապվում ջրի, պտղաբերության հետ: Տնախմբության խորհըրդանշական առանձնահատկությունը ջրի պաշտամունքի հետ կապված արարողությունների շարքն է: Ուխտավորները պարտավոր էին լողանալ (ընդօրինակել Աստղիկի՞ն) գետում, և եթե մոտակայքում այդպիսի լիճ կամ գետ չգտնվեր, ապա պիտի ցողվեին աղբյուրների ջրով: Իրար վրա ջուր շաղ տալու սովորույթը մաքրագործումի և ապաշխարանքի, նոր ուխտի հաստատման առաջին, բայց ոչ միակ ատրիբուտն էր: Դրա մեջ պետք է տեսնել ջրհեղեղի առասպելի՝ ծիսական արարողության վերածված վերհուշը. «Վարդավառը նոյեան տապանին Հայաստանի Արարատ-Մասիս լերան վրա հանգչումի յիշատակին ընծայուած տօն մը եղած է մերթ: Զի Նոյ եւս իր տապանով ջրերու մէջ մնաց, աղաւնիներ թռցուց, եւ զոհ մատոյց ջրհեղեղէն ազատուելուն համար»[19]: Այդ սովորույթն, իհարկե, բացառիկ ազգային չի կարելի դիտել, որովհետև մկրտության նմանօրինակ դրսևորումներով աչքի են ընկնում գրեթե բոլոր ժողովուրդները, որոնք վերապրել են բնապաշտության նախնական փուլերը: Ահավասիկ, միջնադարի խոշոր գիտնական Բիրունին նշում է, որ իրանցիները նույն պես սովորություն ունեին միմյանց վրա ջուր սրսկել Nō-Rōz-ի օրերին, որ կոչվում էր Ābrīzegān[20]: Եվ ինչն է ավելի կարևորվում մեր ուսումնասիրության տեսանկյունից. դա այն է, որ ջուր պարգևող կույսի կուռք է գտնվել 60-ական թվականներին՝ Մարիում (ներկայիս Թել-Հարիրի) պեղումներից և թվագրվում է Ն.Ք. II հազարամյակի առաջին կեսով: Եվ ինչպես պարզել է ֆրանսիացի հնագետ Պարրոն, այդ կույսը եղել է ոչ այլ ոք, քան Իշտարը[21]: Ստացվում է, որ Աբեղյանի կանխատեսումը Իշտարի՝ ջրերի աստվածուհի լինելու մասին արդարանում է, նոր հորիզոն բացում Աստղիկ-Իշտար զուգահեռների ոլորտում:

---

[18] Ա. Մուշեղյան, Հայոց բուն տոմարի շուրջ: «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1996, էջ 445-446:

[19] Ա. Մոցիկյան, նշվ. աշխ., էջ 882:

[20] J. Russell, նշվ. աշխ., էջ 63:

[21] Вардиман, Е. Е. Женщина в древнем мире, 1990, стр. 44–47.

Ջրի պաշտամունքը հարատևել է հայոց մեջ որպես հնացույն վերապրուկ: Հատկապես մեծ տեղ է տրվել ակունքների և հոսող ջրերի պաշտամունքին: Ինչպես նշում է Մ. Աբեղյանը, կիրակի և ուրբաթ օրերին դրանց առաջ մոմ են վառել և խունկ ծխել, աքաղաղ զոհել և աղոթք արել, իսկ նորահարսները հարսանիքից հետո, առաջին անգամ ջրի գնալիս, պաշտվող աղբյուրին պարտավոր էին ցորեն մատուցել[22]:

Վարդավառի խորհրդապաշտական արարողություններից մեկն էլ աղավնի թռցնելն է: Յուրաքանչյուր ուխտավոր պարտավոր էր մեկ սպիտակ աղավնի արձակել, որն, ինչպես հայտնի է, սիրո աստվածուհու նվիրական թռչունն է և անբիծ ու անարատ հոգիներին է խորհրդանշում: Դրա անդրադարձը ներկա է Ս.Գրքում, Նոյի առասպելի մեջ, երբ ինքը՝ նահապետը, անցնելով քավության ահռելի ուղին (նկատի է առնվում ջրհեղեղի պատճառած տառապանքները), փրկության ավետաբերի առաքելությունը վստահում է աղավնուն: Եվ այդ օրվանից Աստված օրհնում է մարդկությանը և կապում նոր ուխտի կամարը՝ ծիրանի գոտին[23]:

Վարդավառի սիմվոլ են դիտվում վարդը և «անմահական խնձորը»: Թե ինչու՞ է ծաղիկներից նախապատվությունը տրվել վարդին, և արդյո՞ք հեթանոսական ժամանակներում այդ ծաղիկը պաշտամունքի առարկա է եղել, թե ոչ, դժվար է միանշանակ ասել, քանի որ գրավոր փաստեր չկան: Այդուհանդերձ, վարդը որպես Աստղիկի նվիրական ծաղիկ, առկա է և՛ նրա կերպարային նկարագրության, և՛ ծիսական արարողակարգի մեջ: Եվ դա հիմք է տվել միջնադարի հեղինակներին ստուգաբանելու «Վարդավառ» անունը հենց այդ ծաղկի անվան հետ կապված, իբրև «վարդատոն», «վարդ վառող» և այլն:

Գոհար վարդն վառ առեալ
ի վեհից վարսիցն արփենից՝
ի վեր ի վերայ վարսիցն
Ծաւալէր ծաղիկ ծովային[24]:

Տոնական օրերին ծաղկահանդեսներ էին կազմակերպվում, մարդիկ միմյանց ծաղիկներ էին նվիրում, ծաղկե պսակներ հագնում, մի բան, որ կարծես իր արտացոլումն է գտնում հռոմեացիների Rosalia կոչված տոնի մեջ. վերջինս քրիստոնեության դարաշրջանում միացվում է հինունքի վերջին օրվա՝ Pentekoste-ի հետ[25]: Ի դեպ, հայկական ծիսական ավանդույթում Նավասարդին նախորդող վերջին օրն ընդունված է անվանել Ծաղկամուտ: Դրանց աղերսներն ակնառու են, իսկ արմատները թաղված են խոր հնադարում:

---

22 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Է: Ե., 1975, էջ 52:

23 Աստուածաշունչ. Ծննդոց, Թ 11-17:

24 Գրիգոր Նարեկացու Վարդավառի տաղը ևս հավաստում է, ըստ Մ. Աբեղյանի (տե՛ս Երկեր, հ. Է. Ե., 1975, էջ 159), վարդի առնչությունն այս տոնի հետ:

25 J. Russell, նշվ. աշխ., էջ 64:

Միջնադարի մեծ մտածողներից մեկը՝ Գրիգոր Մագիստրոսը, իր թղթերից մեկում, խոսելով խնձորի առասպելական բուժիչ հատկությունների մասին, նշում է հետևյալը. «Խնձորս երբեմն յԱստղկայ շնորհեալ, ոչ միայն կնոջն հասանիւր տռփանաց, այլև զկեանս շնորհեալ պատժիցն մահու»[26]: Գր. Մագիստրոսը խնձորին վերագրում է կենսատու, առասպելական հատկություններ և այն դիտում Աստղիկի պարգևը: Դրանց առնչությունն արծարծող հետաքրքիր փաստեր է ներկայացնում Ա. Մնացականյանը: Նա, քննելով միջնադարյան զարդարվեստի այն նմուշները, որոնցում պատկերված է խնձորը բերանում մի աստվածուհի, առաջ է բերում վիշապասպան կույսի մասին ավանդությունը և գտնում, որ կույսի համար հաղթանակի զենք է ծառայել անուշահոտ խնձորը, և որոշ վերապահումով եզրակացնում, թե դա Աստղիկ դիցուհուն կարող էր վերաբերել: Այդ կապակցությամբ նա գրում է. «Ուշագրավ է հերոս կնոջ իր պտղաբերության սիմվոլ խնձորով, որը հաղթում է վիշապին: Ուշագրավ է և այն, որ այդ կնոջ և խնձորի պատկերը քանդակվում են և դառնում պաշտամունքի առարկա: Իսկ, ինչպես տեսանք, մեզ մոտ խնձորը համարվել է Աստղիկ աստվածուհու սիմվոլը: Արդյոք մեջբերված զրույցում չի՞ պահպանված հենց Աստղիկի հուշը»[27]: Եթե ավանդազրույցում խնձորը վիշապասպան զենք է, ապա ազգագրական սովորույթների համաձայն՝ հարսանեկան խնձորը խնդումը զարդարող մաս է և կատակ-խաղերի պարագայում բաժին է ընկնում քաջ փեսացուին:

Անմահական խնձորի մասին հետաքրքիր ավանդություն է պահպանվել շատախցիների շրջանում: Նրանք հավատում էին, որ Գրգուռ լեռան կիրճից (որտեղ լողանում է Աստղիկը, ըստ Գ. Սրվանձտյանցի գրառած հայտնի ավանդության[28]) դուրս է գալիս «անմահության խնձորը» և շրջում ողջ երկրամասում, ուստի շատախցիներից շատերն այդ գիշեր անքուն հսկում էին գետի ափին, որպեսզի չվրիպեն այն տեսնելուց: Եվ ով արժանանում էր այդ բախտին, նրա խնդրանքն իրականանում էր[29]:

Ընդհանրացված սովորույթի համաձայն՝ Վարդավառից առաջ խնձոր ուտելն արգելված էր, ինչպես խաղող ուտելը՝ Ս. Աստվածածնի տոնից առաջ: Վարդավառով բացվում էր պասը՝ որոշ հանդիսություններով համեմված: Այսպես. վանեցի և շատախցի երիտասարդները պատրաստում էին բազմաթիվ դեզեր և դրանք կրակի տալով՝ խորովում խնձորը և ուտում[30]: Հետո խարույկի շուրջ կազմակերպում էին խմբապարեր՝ սիրային կատակերգերով, ինչպես այս մեկը.

Վարդն ի պացվե Վարդվերի կիրակին,
Քյո սերն ընգել մէջ իմ սրտի պրակին,

[26] Գրիգոր Մագիստրոսի թղթերը: Ալեքսանդրապոլ,1910, էջ 50:

[27] Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ: Ե., 1955, էջ 542:

[28] Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, էջ 71:

[29] Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. Ա: Ե., 1937, էջ 287:

[30] Հ. Խառատյան-Առաքելյան, նշվ. աշխ., էջ 176:

Քյա ճազերով. քյա խորոտիկ ախ. վի՞րն ես.
Աշխարհ գիյտի, ալամ գիյտի. ա՞խ իմն ես:

Ազգագրական որոշ շրջաններում տոնի մեջ դրված էր նաև ծնողներին այցելելու արգելքի վերացման խորհուրդը: Նորահարսները իրավունք էին ստանում այցելության գնալու իրենց ծնողներին և այնտեղ մնալու 15 օր:

Հայաստանի ազգագրական շրջաններից յուրաքանչյուրն ուներ Վարդավառի նվիրագործման իր սրբատեղին, ինչպես, օրինակ, Քղիի հայերը սովորություն ունեին ուխտի գնալ Սուրբ Լույս լեռ, որի գագաթին արված երդումը տեղի հայերի համար ամենամեծ երդումն էր: Մասնակիցները ուխտի էին գնում սրբավայրեր՝ մեկ առ մեկ իրագործելու հավատքի պատվիրանները[31]: Հանդիսություններին մասնակից դառնալը պարտադիր էր ամենուր և, կարծես թե, խորհրդանշում էր նոր ուխտի հաստատման գաղափարը: Ինչպես հաստատում են ազգագրական սովորույթները՝ եոօրյա, երբեմն էլ մինչև մեկ շաբաթ տևող ուխտի ժամանակ «մատաղներ կը զոհեն, թուխ մաքի, երինջ, գառնուկ եւ աղաւնի: Մատաղացուներու պարանոցէն կը կախեն բոժոժներ, եղջիւրները կը զարդարեն ոսկեգոյն թուղթերով ու անոնց ծայրերը կը տնկեն մէյմեկ մոմ. վրանին ալ կը նետեն մէյմեկ շուրջառ: Քահանան կ'օրհնէ, զոհ կը զենուն շաբաթէն կիրակի լուսնալիք գիշերուան կիսուն: Անկէ առաջ զոհուածը պիղծ է»[32]: Արդ, ծիսակատարության պարտադիր բաղադրիչներից մեկը պիտի լիներ զոհաբերումը՝ սրբազան մատաղը: Հեթանոսական զոհաբերության ծեսի պատկերն է փորձում ուրվագծել Ա. Չոպանյանը հետևյալ հատվածում. «Զոհի ատեն քրմապետը կ'առնէր ափ մը արիւն եւ կը սրսկէր փայտակոյտին[33] վրայ, յետոյ Արածանիի ալիքներէն կ'առնէր սուրբ ջուրը և ոսկե ցնցուղով կը սրսկէր ժողովուրդի վրայ, քաւելու համար անոր մեղքերը»[34]:

Ինչպես նշվեց, սովորություն կար զոհաբերել հատկապես թխամորթ կենդանիներ: Բուլանըխի հայերը հավատում էին, թե եզն այնքան արդար է, որ Վարդավառի ջրի մեջ սառույց կարող է տեսնել[35]:

Հատկանշական է, որ զոհ էին մատուցում ոչ միայն կենդանիներին, այլև բուսական հումք և ընդեղեն: Գրեթե բոլոր վայրերում Վարդավառին եկեղեցի են բերում ցորենի հասկեր և աղաչում Աստծուն, որ արտերն անվնաս մնան մորեխից և

[31] Վ. Տէր-Մինասեան, Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ. Հ. Բ: Կ. Պոլիս.1904, էջ 150-151:

[32] Վարդավառի աւանդութիւնները. «Մաղիկ». 1895, էջ 412-418:

[33] Հիշված «փայտակոյտի» ազգագրական վերապրուկ պիտի դիտել խաչափայտը կամ խաչքուռը: Այսպես. օրինակ. Ագուլիսում, որպես կանոն, նորահարսները տոնին նախորդող օրերին ամանի մեջ ցորեն կամ գարի էին ծլեցնում և տոնի օրը ամանի մեջտեղում մեկ մետրանոց մի փայտ պիտի տնկեին ու զարդարեին խնձորով, այլ պտուղներով ու վարդերով և դրան խաչի տեսք տային, որ կոչվում էր խնդում: Կեսօրից հետո խաղացվում էր խնդումի «հսկման» և «կողոպուտի» տեսարանը (տե՛ս Հ. Խառատյան-Առաքելյան, նշվ. աշխ., էջ 177-178):

[34] «Մաղիկ», նշվ. հոդվ., էջ 412-418:

[35] Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 182:

կարկուտից. «Աստուած, պարզերես պահէ մեզ վարդավառի ձիւն ու բուքէն ու կարկուտէն, փետրուարի տաք ու շոգէն»[36]:

Ցորեն եմ ցանել ծորին,
Կը քաղեմ վարդիվորին:

Քրիստոնեական դարաշրջանում Վարդավառը վերափոխվում և զուգակցվում է տաղավարյան տոներից մեկին՝ Քրիստոսի Պայծառակերպությանը կամ Այլակերպությանը: Տոնն այդ անունով հայտնի էր դեռևս IV դարում: Ինչպես հաղորդում են միջնադարյան աղբյուրները, հեթանոսական տոներից շատերը հարմարեցվեցին քրիստոնեական ծիսակարգին և բնականաբար անվանափոխվեցին, որոնց թվում նաև Վարդավառը՝ Լուսավորչի նախաձեռնությամբ: «Իսկ Սուրբ Գրիգոր, աճեալ զմեզ ի լոյս Աստուածգիտութեանն, խլէր դիւական սովորութիւնն, եւ ի ճշմարտութիւնն փոխէր... եւ զվարդեւորիս տաւնեղ՝ զերեւումն Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի լուսով ի Թափովրական լերինն՝ աւրինադրէր»[37]: Ըստ ավետարանական ավանդության, Թաբոր լեռն այն սրբավայրն է, որտեղ տեղի ունեցավ Հիսուսի պայծառակերպումը, և որտեղ, ավելի ուշ, Կոնստանդին Մեծ կայսեր մայրը՝ Հեղինեն, կառուցեց այդ հիշատակը խորհրդանշող եկեղեցին:

Ըստ Ավետարանի՝ Հիսուսը երեք աշակերտների հետ բարձրանում է Թաբոր լեռ՝ աղոթելու նպատակով: Եվ մինչ աղոթում էր, նրա դեմքը սկսում է պայծառանալ և փայլել այնպես, որ ամբողջ լեռը լույսի ցոլքերից շողարձակում է: Առաքյալները այդ լույսից անմիջապես արթնանում և ապշահար ու երկյուղած ծունկի են գալիս: Այդ պահին ճառագայթափայլ մի ամպ ծածկում է Քրիստոսին, որը զրույցի էր բռնվել հանկարծակի հայտնված երկու մարգարեների՝ Մովսեսի և Եղիայի հետ: Լույսի ցոլքերի միջից հանկարծ լսվում է մի ահեղագոչ ձայն, որն ավետում է. «Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, դմա լուարուք»[38]: Առաքյալներն այդ տեսիլքից ահաբեկված՝ ծնկի են գալիս, իսկ Քրիստոսը դիմում է նրանց՝ ասելով. «Ոտքի ելեք, մի՛ վախեցաք»[39]: Եվ հանկարծ ամպի ձևով անհետանում է տեսիլքը, և առաքյալների աչքի առջև վեր է հառնում իրենց վարդապետը:

Այստեղ առաջին անգամ Քրիստոսը հայտնվում է աշակերտներին իր աստվածային շնորհներով: Երկնային տերը հաստատում է որդու աստվածային էությունը մարդկանց առաջ, մեկտեղ բերում Սուրբ Երրորդությունը՝ հանձին Իրեն, Որդուն և Սուրբ Հոգուն, ժամանակավորապես արարում երկնային արքայության պատկերը, այն արքայության, որ անվախճան է լինելու և ծայր է առնելու Ահեղ դատաստանի օրվանից սկսած: Երկնային Հայրը դրանով կարծես ուզում էր հասկանալ, որ Մովսեսը և Եղիան (Հովհաննես Մկրտիչ) արդեն վաստակել էին երկնային

---

[36] Կ. Մելիք-Փաշայան, նշվ. աշխ., էջ 130:

[37] Տոնապատճառ, ԺՁ:

[38] Աստուածաշունչ, Մատթ., ԺԷ 5:

[39] Նույն տեղ, Մատթ., ԺԷ 7:

արքայությունը, իսկ Հիսուսը դրախտի դռներից ներս սլիսի մտնի՝ հանդերձյալ աշխարհ տեղափոխվելուց անմիջապես հետո:

Հարկ է նշել, որ մեկնիչ-աստվածաբանները Վարդավարի և Պայծառակերպության առնչությունը փորձում են բացատրել այլաբանությունը ելակետ ընդունելով. ինչպես վարդը կոկոնի մեջ է ծածկված լինում նախքան բացվելը, նույնպես և Տերը նախքան այլակերպվելն իր մեջ ուներ աստվածության պայծառությունը, և ինչպես վարդը բացվելով՝ ամենքին երևում է իր ողջ հմայքով, այնպես էլ Տերը պայծառակերպվելով՝ հայտնում էր իր աստվածային էությունը: Ահա թե ինչպես է ձևակերպում իր պատկերացումն այդ մասին Վահան վարդապետ Տեր-Մինասյանը. «Եւ այնուհետեւ եկեղեցական քնարն ալ սկսաւ գովաբանել այն վարդն, որոյ կոկոնէն դուրս ծլեցաւ ու ծաղկեցաւ աշխարհի փրկութեան Արեւն ու Լոյս»[40]:

Վերը բերված փաստերը վկայում են հօգուտ Աստղիկի և Վարդավարի փոխառնչության: Վարդավարի հանդեսները էլ մասամբ կատարվել են այն տեղերում, որոնք անցյալում եղել են Աստղիկին ձոնված սրբավայրեր և ուխտատեղիներ: Վարդավառն, այսպիսով, Աստղիկ դիցուհու պաշտամունքի ծիսական մի գողտրիկ վերապրուկն է:

[40] Վ. Տէր-Մինասեան, Նշվ. աշխ., էջ 146:

*ՄԻՍԱՔ Հ. ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ*

# ՏԱՐՍՈՆԻ Ս. ՍՈՖԻԱ ՏԱՃԱՐԸ

## Կիլիկյան դրվագներ

Բյուզանդական կայսրությունից վասալական կախման մեջ գտնվող Աբլղարիբ Արծրունի իշխանը Վասպուրականի Թոռնավան գավառի իշխան Խուլ Խաչիկի և Հասան իշխանի թոռն էր: Նա 1021 թ. Սենեքերիմ Արծրունի թագավորի հետ Վասպուրականից գնացել էր Սեբաստիա, ապա՝ Կոստանդնուպոլիս: Բյուզանդական արքունիքում նա հեղինակություն և վստահություն ձեռք բերելուց հետո՝ 1050-ական թվականներին նշանակվել էր Կիլիկիայի Տարսոն, Մամեստիա, Ադանա, Լամբրոն, Պապեռոն և շրջակա հայաշատ վայրերի կուսակալ: 1080 թ. նա թաղվել էր Պապեռոնում[1]: Նա խնամիացել էր Անիի վերջին հայ թագավոր Գագիկ Բ Բագրատունու հետ: Վերջինիս Դավիթ որդին ամուսնացել էր Աբլղարիբ Արծրունու դստեր հետ: Վերջինս նախ բանտարկել էր Դավիթ Բագրատունուն, ապա՝ թունավորել նրան: Բացի այդ, մեղսակից էր համարվում Կիզիստռա բերդում Մանդալյան իշխանների կողմից Գագիկ Բ Բագրատունու նկատմամբ կատարված սպանության գործում (1079 թ.): Լեռնային և Դաշտային Կիլիկիաների բյուզանդական կուսակալ Աբլղարիբ Արծրունին (շուրջ 1050-1080 թթ.) իր իշխանության տարիների ընթացքում Կիլիկիայում կատարել էր շինարարական և բարենորոգչական մեծ աշխատանք: Բյուզանդա-արաբական երկարատև պատերազմներից ավերված ու ամայացած Կիլիկիան քրիստոնյաներով վերաբնակեցնելու և շենացնելու գործին զուգընթաց, նա հայերի համար կառուցել էր տվել նաև բազմաթիվ եկեղեցիներ: Այդ մասին մի փոքր ակնարկ կա 1190 թ. Կիլիկիայի Սկևռա վանքում գրիչ Սամուելի ընդօրինակած «Ներսիսի Լամբրունացւոյ Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի» ձեռագիր մատյանի հիշատակարանում:

«Ընդ նուաղեալ թագաւորութեան եւ իշխանութեան Հայոց, յորժամ յափշտակեցաւ յԻսմայէլացւոցն մայրաքաղաքն Անի, եւ տարագրեցան թագաւորքն մեր ի գաւառս եւ յիշխանութիւնս արքայիցն Յունաց, այր ոմն յիշխանացն Հայոց Ապլխարիպ անուն՝ որ էր ի տանէն Վասբուրականի, իբրեւ զմտերիմ եւ զխոհեմ եւ զարի ի գործ պատերազմի՝ առաքեցաւ յինքնակալէն Ալէքսէ ի գաւառս Կիւլիկեցւոց՝ իշխել մայրաքաղաքին Տարսոնին եւ Մամ[ռ]ւեստիոյ, որ եկեալ տիրէր սոցա հայրենի կարգաւք՝ եւ մնայր ի հաւատարմութիւնն Յունաց: Եւ շինեալ տաճարս աղաւթից ի Լեռնային եւ ի Դաշտային գաւառս՝ որ եւ բազումք կան ի մէջ Յունաց հայասեռ ազգիս պաշտամամբք»[2]:

---

[1] Հ. Ս. Հանրագիտարան, հտ. 1: Երևան, 1974, էջ 26:

[2] Երևանի Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 1526, թերթ 853ա: «Հայերեն ձեռագրերի

Աբլղարիբ Արծրունին, Տարսոնը դարձնելով իր իշխանանիստ մայրաքաղաքը, կառուցել էր տվել իր իշխանական պատվին համապատասխան հոյակապ և մեծ մի տաճար, որը կոչվել էր Ս. Սոֆիա: Այդ տաճարի մասին է գրված 1195 թ. Տարսոն քաղաքի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Լամբրոնացու գրած «Մեկնութիւն համաբարբառ Աւետարանաց Եփրեմի» աշխատության հիշատակարանում, ուր նշված է հետևյալը. «. . . վերակացութեամբ Տարսոնի քաղաքին եւ որ ի նմա մեծի եկեղեցւոյն պաշտմամբ»[3]:

Մինչև թուրքերի կողմից խոնարհվելը, Տարսոնի «մեծ եկեղեցին» համարվում էր Ս. Սոֆիա տաճարը: Կիլիկիայի հայկական թագավորության անկումից (1375 թ.) հետո, Կիլիկիային տիրացած Ռամազան-օղլու բռնապետերը մինչև հատակը փլցրել էին Ս. Սոֆիա տաճարը և նույն տեղում կառուցել խոշոր մի մզկիթ, որը այժմ կոչվում է Ուլու-Ճամի: Մինչև օրս դա գործող մզկիթ է: Պետք է ասել, որ վաղ միջնադարում ևս արդի Ուլու-Ճամի մզկիթի տեղում եղել են Բյուզանդական կայսրության և Արաբական խալիֆաթի շրջանի պաշտամունքային տաճարներ: Տարսոն բերդաքաղաքն արաբների տիրապետության տակ եղած ժամանակ Ուլու-Ճամի մզկիթի տեղում էլի եղել էր մահմեդականների մի մզկիթ: Բյուզանդա-Արաբական կայսրությունների միջև «Սահմանային գոտու» վրա գտնվող Տարսոնը, հերթական տուրևառից հետո, 830 թ. գրավվել էր խալիֆա Էլ-Մամունի կողմից: Վերջինս 833 թ. Տավրոս լեռների Թելուկ (այժմ՝ Անաշա կալե) բերդում մահանալուց հետո, թաղվել էր այժմ Ուլու-Ճամի կոչվող մզկիթի տեղում, արաբական մզկիթի բակում:

Ս. Սոֆիա տաճարը բազմիցս փլցվել է մահմեդականների կողմից: Նույնը կրկնվել է նաև Ուլու-Ճամիի տեղում գտնվող նախկին մզկիթների նկատմամբ՝ Տարսոնին տիրած քրիստոնյաների կողմից: Մի խոսքով, երկու դավանանքին էլ պատկանողները ավերել և վերակառուցել են հիշյալ մզկիթի տեղում գտնվող պաշտամունքային կառույցները: Օրինակ, դրանց թվին կարելի է դասել Եգիպտոսի թուրքմեն սուլթաններից Պայպարսի (1260-1276 թթ.) 1275 թ. Կիլիկիայի Հայոց թագավորության սահմանների ներխուժումը: Նա հասել էր Տարսոն ու հրկիզել Ս. Սոֆիա տաճարը:

Ս. Սոֆիա տաճարի մասին Ղ. Ալիշանը կարծիք է հայտնել, թե նա կառուցված է եղել իբր «. . . յանուանէն Ս. Սոփիա, կառուցեալ ի Յունաց[4], եւ ըստ սովորութեան՝ նուիրեալ Աստուածայնոյ իմաստութեան»[5]: Սակայն այդ կարծիքը ճիշտ կլիներ, եթե չլիներ անժխտելի և զորավոր մի ապացույց, որը պահպանվել էր մինչև 1953 թ. իմ այցելության ժամանակ: Ռամազան-օղլուները Ս. Սոֆիա տաճարը փլցնելիս, կառույցի պատերն իջեցրել էին մինչև հատակի մակարդակ, իսկ Աբլղարիբ Արծրունին, ըստ Հայկական Առաքելական Ս. Եկեղեցու տաճարաշինության ավանդույթների, Ս. Սոֆիա տաճարը կառուցել էր տվել բազմաստիճան

---

հիշատակարաններ», Ե-ԺԲ դդ., աշխատ. Ա. Ս. Մաթևոսյանի: Երևան, 1988, էջ 255:

[3] Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 423 (լուսանկարից): Հայ. ձեռ. հիշ., էջ 288:

[4] Իմա՝ Բյուզանդացոց:

[5] Ղ. Ալիշան, Սիսուան: Վենետիկ, 1885, էջ 269:

որմնախարսխի վրա: Բյուզանդական տաճարաշինության մեջ գործնականում չի կիրառվում բազմաստիճան որմնախարսխի վրա տաճարի կառուցումը: Ս. Սոֆիա տաճարը խոնարհեցնող Ռամազան-օղլուները ձեռք չէին տվել տաճարի հատակին, հիմքերին ու բազմաստիճան որմնախարսխին: Ուլու-Ճամի մզկիթի պատերը բարձրացնելուց հետո, հարավի պատի շարվածքի տակից դուրս էր մնացել Ս. Սոֆիա տաճարի հատակի և բազմաստիճան որմնախարսխի հարավի ծայրամասից մի փոքր հատված: Դրանով կարելի է որոշել նաև Ս. Սոֆիա տաճարի և Ուլու-Ճամի մզկիթի երկայնական առանցքների ուղղության միմյանց նկատմամբ ունեցած շեղության տարբերության աստիճանը[6]: Այդ երևույթը բացահայտ կերպով նկատվում է մզկիթի հարավի կողմի փողոցի մայթին բազմաստիճան որմնախարսխի ցցված ծայրից:

Բազմաստիճան որմնախարսխի վրա տաճար կառուցելու ավանդույթը հայոց տաճարաշինության ասպարեզում արմատավորվել էր դեռևս հին դարերից: Դրա օրինակներն են Գառնիի և Արարատյան թագավորության Մուսասիրի տաճարները: Դա հին հայկական տաճարաշինության ոճ է, և Աբլղարիբ Արծրունուց առաջ ոչ մեկը Տարսոնում հայկական ոճով բազմաստիճան խարսխի վրա տաճար չէր կառուցած: Ուստի առանց կասկածելու կարելի է ընդունել, որ Տարսոնի հիշյալ Ս. Սոֆիա տաճարը հայկական շինություն է: Շատ հավանական է, որ իշխան Աբլղարիբ Արծրունին Տարսոնի Ս. Սոֆիա տաճարը կառուցել կամ վերակառուցել էր բյուզանդական խոնարհված մի այլ հին եկեղեցու տեղում, որովհետև Ուլու-Ճամի մզկիթի բակում դեռևս պահպանվում են բյուզանդական շրջանից մեզ հասած քանդակազարդ դարավոր հին շինաքարեր:

12-14-րդ դարերում ինչպիսի՞ տեսք էր ունեցել Տարսոնի Մայր տաճարը՝ Ս. Սոֆիան, այդ մասին նկարագրական տեղեկություններ կան 1211 թվականին Կիլիկիայի Հայկական թագավորության տարածքը շրջագայած գերմանացի Վիլեբրանդ Օլդենբուրգի ճամփորդագրական հուշերում: Ըստ նրա՝ «. . . ի միջոց կամ կենդրոն քաղաքին ասէ զկաթողիկէն Տարսոնի, յորժ վայելչազարդ եւ պադպաջուն կճէիւք և թէ ի ծայր եկեղեցւոյն անդրի մի էր, և ի նմին՝ հրեշտակային ձեռօք նկարեալ պատկերն այն Տիրամօր. . . Արտաքոյ եկեղեցւոյն յանկեան միում, ասէ նոյն Վիլտէպրանտ, կայ շիրիմ դստեր Մահմետի, մեծարեալ յոյժ ի հաւատացելոց նորին. . .»[7]:

Մզկիթի հարավարևմտյան անկյունի դիմաց իսկապես կա տապանատուն համարվող փոքր մի շինություն, ուր, ինչպես Վիլեբրանդն է հավաստիացրել, իբր թաղված է եղել Մուհամմեդի դուստրը: Սակայն Տարսոնի արդի բնակիչները պնդում են, թե դա իբր եղել է Տարսոն քաղաքն առաջին անգամ բյուզանդացիներից գրաված արաբական զինվորական Բիլալ Հաբեշիի գերեզմանը: Տապանատունը բյուզանդական ոճով կառուցված շինություն է և չունի ոչ մի արաբական կառույցի տեսք և ոճ: Մեջն էլ դատարկ է:

---

[6] Եկեղեցիների երկայնական առանցքներն ուղղված են լինում դեպի արևելք, իսկ մզկիթներինը՝ դեպի Մեքքա կամ Քերբելա քաղաքները:

[7] Ղ. Ալիշան, Սիսուան, նշվ. աշխատ. էջ 269: Wilebrand d'Oldenburg, Itineraire en Terre-Sainte.

Վիլեբրանդի նկարագրության բովանդակությունից պարզվում է, որ տաճարը կառուցված է եղել «կաթողիկէ» ոճով: Այսինքն՝ ունեցել է կենտրոնական խոշոր մեկ գմբեթ և անկյուններում՝ էլ ավելի փոքր տրամագծերով չորս գմբեթներ: Կաթողիկե եկեղեցու առկայության պայմաններում Տարսոնը հանդիսացել է իբրև թեմի հոգևոր առաջնորդության թեմի կենտրոն-քաղաք:

Միջնադարյան Տարսոնում, Ս. Սոֆիա կաթողիկե Մայր տաճարից բացի, կային նաև Ս. Պետրոսի, Ս. Աստվածածնի, Ս. Պողոսի, Ս. Հովհաննու Մկրտչի, Ս. Սարգսի և լատինների Ս. Հովսեփի (St-Joseph) անուններին նվիրված եկեղեցիներ: Ս. Աստվածամոր եկեղեցին իբր հիմնվել էր 1-ին դարում Ս. Պողոս առաքյալի կողմից, սակայն այդ կարծիքը կարիք ունի փաստարկման: Հեթում Բ թագավորի կառուցած Ս. Պողոս եկեղեցին վերածված է մզկիթի և այժմ կոչվում է Քիլիսե-Ջամի կամ Էսկի-Ջամի: Հեթում Ա թագավորի որդի Լևոն Բ-ի ժամանակ Տարսոնի Ս. Սարգիս, Ս. Հովհաննու Մկրտիչ և Ս. Հովսեփ եկեղեցիները այրվել էին եգիպտացիների կողմից:



*Իսկատիպ ձեռագրի Լևոնի Ա թագի 1210.*

1215 թ. Լևոն Ա Մեծագործ (1187-1219 թթ.) թագավորն իր երկրի բերկրության համար Տարսոնում կառուցել էր տվել արքունի մի պողոտա (vicus), մի եկեղեցի, մի բաղնիք և հիմնել տնկարկությունների համար գեղեցիկ մի պարտեզ[8], որը գործում է մինչև օրս իբր «Թարսուսի քաղաքային զբոսայգի», ուր տնկված են հազար ու մի տեսակ բույսեր, ծաղիկներ և հնամենի ծառեր: Տարսոնի շուկայում, մզկիթի կողքի բաղնիքի վրա, պատմվում է «Օձերի թագավորի» մասին ժողովրդական մի առասպել: Դա, հավանաբար, առնչվում է Լևոն Ա Մեծագործի 1215 թ. կառուցել տված բաղնիքի հետ:

Կիլիկիայի Հայկական թագավորության շրջանում բազմաթիվ անգամներ հանդիսավոր իրադարձություններ են կատարվել Տարսոնի Մայր տաճարում: Դրանցից գլխավորն այն էր, որ Ռուբինյան պարոն Լևոն Բ իշխանը, նախ Բյուզանդիայի Ալեքսիոս Գ Անգելոս (1195-1203 թթ.) կայսեր ուղարկած թագն ու պսակը, ապա Հռոմեական սրբազան կայսր Հենրիխ Զ-ի ուղարկած թագն ու լրացուցիչ հանդերձանքը Տարսոնում ընդունելուց հետո, 6 հունվար 1199 թվականի Ս. Ծննդի և Աստվածածնի հայտնության տոնի օրը Ս. Սոֆիա տաճարում մեծ

[8] Victor Langlois, Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Armenie. 1860, St. Petersbourg, էջ 73-74:

հանդիսավորությամբ առաջին անգամ օծվել էր Կիլիկիայի հայոց պետության թագավոր:

Այնուհետև Կիլիկիայի հայկական պետության «Ռուբինյան իշխանություն» անունը փոխվեց և կոչվեց «Կիլիկիայի Հայկական թագավորություն»: Ռուբինյան պարոն Լևոն Բ-ը կոչվեց «Լևոն Ա թագավոր Հայոց» (1199-1219 թթ.): Սա նշանավոր և անմոռաց եղելություն էր հայ ժողովրդի պատմության մեջ: Հայաստանում Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո առաջին անգամն էր, որ Կիլիկիայում հայերը վերականգնել էին իրենց թագավորությունն ու լիակատար անկախ պետականությունը:

Տարսոնի Ս. Սոֆիա տաճարում թագադրվել էր նաև Հեթում Ա թագավորի որդի Լևոն Բ-ն (1270-1289 թթ.): Նմանապես 1308 թ. նույն տաճարում թագադրվել էր Օշին Ա (1308-1320 թթ.) թագավորը:

Ս. Սոֆիա տաճարում տեղի են ունեցել նաև արքունի հարստության անդամների հարսանիքներ, մկրտություններ և պատմական բազմաթիվ այլ իրադարձություններ:

Լևոն Ա-ի թագադրության առթիվ հետևյալն է նշված Սմբատ Սպարապետի «Տարեգրքում». «Ի թուին ՈԽԷ (647) յամսեանն յունուարի, յաւր Ցայտնութեան Տեառն, օծին զԼևոն թագաւոր Հայոց. . . »[9] կամ «. . . ի լրումն թուիս ՈԽԷ[10], յորում ամի վերապատուեցաւ թագաւոր Հայոց Լևոն, որ յՌոբինեանց բարէպաշտ և յաղթաւղ Աստուծով: Որոյ հոչակ արութեանն շարժեաց զմեծ ինքնակալն հին Հռոմա զհեռի եւ զնոր Հռոմա զԱլեքս, որ պսակեցին զսա քարամբ պատուական, յեկեղեցի Տարսոնի, որ իմ անարժանութեամբ հով[ու]ի»[11]:

Այս հաշվով, 1999 թվականի հունվարի 6-ին, չորեքշաբթի, «Ս. Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ» տոնի օրը, լրացել է Կիլիկիայի Հայկական թագավորության հաստատման 800-ամյա տարելիցը: Դա հայ ժողովրդի անցյալի հետ առնչվող հիշարժան և անմոռաց տարելիցներից մեկն էր:

---

[9] Սմբատայ Սպարապետի Տարեգիրք: 1956, Վենետիկ, էջ 208: «Ցայտնութեան Տեառն» օրը, հունվարի 6-ին, Ս. Ծննդի տոնն է:

[10] Հայկական օրացույցի տոմարով «ի լրումն թուիս ՈԽԷ» նշանակում է, որ այն տարի «Հայտնության տոնը» համընկնում էր «ՈԽԷ թվականի վերջին», երբ կատարվել էր Լևոն Ա-ի թագադրությունը: Ուստի թագադրության թվականը ոչ թե 1198 թ. հունվարի 6-ը, այլ 1199 թ. հունվարի 6-ն էր համընկնում, որը ճիշտ է թվագրված հիշատակարանում:

[11] Հայ. ձեռ. հիշ., Ե-ԺԲ դդ., էջ 302: Ձեռագրի հեղինակն է Ներսես Լամբրոնացի եպիսկոպոսը: Ձեռագիրը գրված պիտի լինի Սկևռա վանքում, հեղինակի վերջին տարիներին: Առկա ձեռագիր մատյանը 1286 թ. ընդօրինակություն է, և հետագա հավելում է վերջի նախադասությունը:

# ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

## ԿԵՆՍԱԳԻՐ ՆԵՐԲՈՂ ԵՎ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՎԱՍՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ[1]

Ցանուն Մշոյ մենաստաններուն եւ ուխտելի սրբութիւններուն, յանուն բազմախուռն եկեղեցիներու, վկայարանաց, մատրանց եւ ժամատանց, յանուն մեծին Ս. Կարապետի եւ Տարօնոյ եկեղեցական հովուութեան ներկայացուցչին՝ փոխանորդ Հօր, յանուն կրօնական եւ Քաղաքական, գաւառային վարչութեան կը գուժենք ձեզ աղօթաւորաց, երկիւղածաց եւ հոգեսէր հօտիդ եւ զաւակաց Տարօնոյ եկեղեցւոյն՝ զգուժն մեծագոյն եւ վիշտն հոգեկան համայնական Եկեղեցւոյն Հայ[աստանեայց], թէ ոչ եւս է Խրիմեան Հայրիկ, Մայրագոյն Պատրիարքն համազգական Ս. Աթոռոյ Էջմիածնի:

Այս սգամած մահաբեմին առջեւ ծունր դնենք ամենախորին պատկառանքով, մտովին վերաթռած Էջմիածնի Մայր տաճարի իր վեհաշուք թաղման սրբազան արարողութեանց եւ ողբանք ոչ միայն մեր պատուական Եպիսկոպոսապետը, այլ բովանդակ հօտին կողմէ սիրեցեալ եւ յարգեցեալ Հայրիկը:

---

[1] Այս դամբանական խոսքի հեղինակը Տարոնի առաջնորդարանի քարտուղար Գեղամ Տեր-Կարապետյանն է, գրական աշխարհին ավելի քաջածանոթ «Գեղամ», «Մշո Գեղամ» կամ «Ուխտավոր», իսկ քաղաքական շրջանակներին՝ «Մշո Տատրակ» մականունով: Նա ծնունդով Մշո դաշտի Խեյպյան գյուղից էր (1866-1918 թթ.), քահանայի որդի: Մոտ քառորդ դար պաշտոնավարել է Ս. Կարապետ վանքում, Տարոնի առաջնորդարանում, ապա 1908-ին տարոնահայությունը նրան ընտրել է Կ. Պոլսի խորհրդարանի պատգամավոր՝ ինը հայ պատգամավորների շարքում, և Ազգային ժողովի անդամ: Եղել է ազգային-ազատագրական շարժումների գործուն մասնակիցը, Տարոն-Սասունի ազատամարտիկների գործընկերն ու գաղափարակիցը: Տասնյակ տարիներ աշխատակցել է Կ. Պոլսի պարբերականներին՝ սկսած պարզ հաղորդագրումից, ազգագրական, տեղագրական, կրոնական, հրապարակախոսական բնույթի հոդվածներից մինչև գեղարվեստական երկեր. ակնարկ, պատմվածք, վեպ, վիպակ՝ «գրական գողտրիկ էջեր... գավառի ցավերովը առլեցուն» (Ե. Օտյան): Նա հայտնի է իբրև գավառական տոհմիկ գրականության նշանավոր ներկայացուցիչ՝ Մ. Խրիմյանի, Գ. Սրվանձտյանցի, Հ. Թլկատինցու, Ռ. Զարդարյանի կողքին: «Գավառական գրականություն» գրական հոսանքը, որի ակունքների մոտ կանգնած էին Խրիմյանն ու Սրվանձտյանցը, հայրենի հողի վրա, բուն Հայաստանում գրականություն ունենալու պահանջ էր, ի տարբերություն տարաշխարհիկ-գաղութային գրականու-

Հայաստանեայց Եկեղեցին իր ամենախորին վշտերէն ծանրագոյնը կրելու դժբախտութեան առջեւ կը գտնուի այսօր, հանդէպ այն անդարմանելի հոգեկան մեծ կորուստին, որ այնքան դժպհի առաջ եկաւ՝ Ն. Վեհափառութեան Ամենայն Հայոց պատուական Հայրապետին եւ երիցս երանեալ քաղցրահոչակ Կաթողիկոսին առ Քրիստոս Աստուած իր ամենաողբալի հանգիստով, որ պատրիարքական զուժող հեռագրին համաձայն պատահած ըլլալու է հոկտեմբեր 28-29-ին՝ վերջակէտ դնելով բազմերախտ, յոգնաջան, սրբազնակատար կեանքին եւ հովուապետական պաշտօնավարութեան, որ Լուսաւորչայ լուսափայլ Եկեղեցւոյ հանդէպ անձնադրութեան, բարեզարդող գործունէութեան, քրիստոսաքարոզ պերճաբանութեան, բարեգթութեան ու մարդկային տկարութեան վրայ այնքան հոգիաշունչ եւ առաքելավայել արգահատանքի ու մարդասէրի՝ հիացման շղթայ մը եղաւ

---

թյան: Գեղամը իր դաստիարակությամբ, հայացքներով, գործելակերպով անմիջական հետևորդն էր Մ. Խրիմյանի: Մուշում իր առաջնորդության տարիներին (1862-1869 թթ.) Հայրիկը հսկայական ազդեցություն է ունեցել և բարերար հետք թողել տարոնցիների հոգիներում: Լինելով համազգային խոշոր անհատականություն և ապրելով ու գործելով համայն հայության շահերով՝ նա առանձնահատուկ վերաբերմունք ուներ Տարոն աշխարհի նկատմամբ, ինչպես իր պաշտելի Վասպուրականի: Այս առումով հատկանշական է նրա երդման խոսքը Պոլսի պատրիարք ընտրվելիս. «Ես երդումս կատարած եմ արդեն Հայաստանի մէջ, Մշոյ դաշտի մերկ ու բոկոտն զաւակացս առջեւ, հարստահարեալ ժողովրդիս»: Այս երդման ոգին է ուղեկցել և առաջնորդել նրան իր գիտակցական կյանքի ամբողջ ընթացքում:

Ահա այս ելույթում (1907 թ.), որ կարդացել է Գեղամը Մուշ քաղաքի հասարակայնության առաջ, Հայրիկի մահվան լուրը  ստանալուց հետո, արտահայտվել են նրա խոր ցավն ու մորմոքն այդ անդարմանելի կորստի առաջ, և խտացվել է ժողովրդի անպարփակ սերն ու ջերմեռանդ ակնածանքը ժամանակի անհրաժեշտության թելադրանքով հայոց պատմության ասպարեզ իջած մեծ Խրիմյանի նկատմամբ, որ ծնվել էր իր ազգի ցավերը դարմանելու և նրա հետագա ընթացքի ուղիները որոնելու համար: Ընթերցողը կնկատի, որ Գեղամը իր ելույթում քանիցս շեշտում է Խրիմյանի՝ իբրև Աստծո հավատարիմ ծառայի, հոգևոր նվիրված պաշտոնյայի, ազգային իսկական գործչի, մեծ հայրենասերի ու ներհուն մարդասերի առաքինությունները՝ նրան իբրև տիպար-օրինակ ներկայացնելով ու հակադրելով իր ժամանակի շահացետ ու զեղծարար գործիչներին: Մեծ խորհուրդ են պարունակում հայրենախոսիկ Խրիմյանի հետևյալ տողերը, որ կարծես այսօրվա համար գրված լինեն. «Թէ մեռնիմ երթամ գերեզման եւ այլեւս չկարեմ խօսիլ ձեզ հետ կենդանի բարբառով ու գրով, ահա կը թողում ձեզ գիրս իբրեւ մշտախօս կտակ եւ յիշատակ, որոյ միակ նպատակն է, որ հայն իւր հայրենատուր հողէն չը բաժանուի, զի իւր սեփհական ժառանգութիւն է դրախտի երկիր, զոր Տէր Աստուած մեր Ադամ պապուն եւ ժառանգորդներուն տուաւ եւ ասաց. Գործել զերկիր ու պահել» (Տե՛ս Խրիմյան Հայրիկ. Երկեր: Երևանի համալս. հրատ., Երևան, 1992, էջ 24: Գեղամի մասին տե՛ս Հ. Բ. Պետրոսյան, Գեղամ Տեր-Կարապետյան. Կյանքը և ստեղծագործությունը: Երևան, 1983: **Գեղամ Տեր-Կարապետյան** (Տատրակ), Տարոնի աշխարհ: Երևան, 1995):

Ձեռագիրը սիրով մեզ է տրամադրել Հր. Տասնապետյանը Բեյրութի ճեմարանի՝ Գեղամի արխիվից, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը: Այն գրված է Տարոնի առաջնորդարանի պաշտոնական թերթերի վրա: Կատարել ենք սրբագրական և խմբագրական աննշան շտկումներ:

ՀԱԿՈԲ ՊԵՏՐՈՍՅԱՆ

մարգարտազարդ՝ եւ օժտուած առաքինական պէսպիսուկ ձիրքերով՝ Աւետարանի եւ ճշմարիտ եկեղեցականի նեղ եւ անձուկ առապարին վրայ:

Ամենասգալի հանգիստն Հայրապետիս պատուականի, վշտառիթ եւ ողբալի յուշեր կը բերէ՝ մասնաւորապէս մեզ ամենուս, զաւակացս Գլակայ Ս. Կարապետի եւ Տարօնոյ եկեղեցւոյն, որու բազմավաստակ, խնամատար եւ տքնող Առաջնորդ եւ Արքեպիսկոպոսն եղած էր երջանկայիշատակ հանգուցեալը յընթացս 10-12 տարիներու:

Բայց այս խնկելի կեանքին, Քրիստոսի երկնատուր շնորհներով սիրազարդուած այս արեւին, որ փայլեցաւ ընդ երկար Հայաստանեայց Եկեղեցւոյ կամարներուն ներքեւ, որ ի մէջ այլոց երգեց - Ս. Երուսաղէմէ - իր Ս. Սաղեմայ հրաւիրակով, Աւետարանին մարգարիտով, Սիրաք-Սամուէլի եւ Ընտանիք դրախտի՝ բանա-ստեղծի աւիւնով համեմուած՝ Նահապետի քաղցրիկ քարոզներով եւ արծուեթռիչ իմաստութեան, եկեղեցասէր ներշնչումներով. կենսագրին ինչ ինչ մասերը՝ թէեւ ծանօթ ըլլայ ձեզմէ քիչերուն, սակայն անծանօթ կը մնայ շատերուն եւ նոր սերնդին, որոնք թերեւս չգիտեն պատուականն պատուականաց որքան համակրանք, սէր ու գութ կը տածէր Տարօնոյ Ս. Կարապետի, յարակից վանքերու, եկեղեցիներու եւ անոնց ամէն ստորաբաժանումներու վրայ: Այս սիրազեղ զգացումները, ո՛չ ապաքէն նոյն հոգեւոր աւիւնովն էր, որ պաղեստինական իր ոխսաորիկ տաղերուն հետ՝ փայփայեց եւ երգեց սրտագին. «Ո՛ն առեալ զձեզ, մանկունք, տանիմ հանիլ ի վայրս, ի վանս Տարօնեան սրբութեանց եւ բազմախուռն սուրբ մասանց, Սրբոյ Կարապետին եւ մեծին ի ծնունդս կանանց տուողին մեզ զգիր, զբան՝ Հայրապետին Սուրբ Սահակայն եւ նշխարացն երանեալ Մովսիսի, Դաւթի եւ Մեսրոպայն եւ վայրացն ծօնիւք սրբեալ լուսաւորչական, ուր դեւք՝ խաչէ, խաւար՝ լուսէն կորեան եւ կուռքն Գիսանեայ, կանգնեցաւ Խաչ, փայլեցաւ աջ եւ փառքն Լուսաւորչեայն,- զեկեղեցեացն ասեմ եւ զբարեղի մենաստանաց, զոր շատ սիրեցի, յոր տքնեցայ,- եւ կամ, մնամ ի սէր հոգեկանն յարգանաց:

Համառօտ կենսագրական մը, գիտենք, սիրելի պիտի ըլլայ լսել ձեզ ամենուդ ալ, անգամ մ'ալ ի յուշ բերելու ձեզ իր լուսաշող պատկերը, իր անբիծ ու պայծառ նկարագիրը եւ արեւոտ-շնորհալի կեանքը Վարդապետին, Եպիսկոպոսին, Պատ-րիարքին եւ Հովուապետին Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Նորին հոգելոյս Ս. Օծութիւնը ծնած էր ի Վան 1820 թուականին, որով իր սրբակենցաղ վախճանը կնքուելու ատեն թեւակոխած էր դէպ 88-րդ տարին, հոգով եւ ալեօքն ծերութեան: Ն. Սրբութեան մանկութեան ատենները՝ գիր եւ բան, ուսում եւ դպրութիւն տոհմական շատ սահմանափակ էին, գրեթէ մասնաւոր սեփականու-թիւն եկեղեցական դասուն եւ վանական աբեղաներուն: Բայց ո՛չ ապաքէն, տուիչն իմաստութեան իր լուսատու մատը դրեր էր արդէն մանկանն արդարոյն հանճարեղ ճակատին, ու Մկրտիչ Խրիմեան, զինչ մանուկ մտավարժ, Ս. Հոգիէն մղուեցաւ յանապատն միանձանց, ուր հոգւոյ, բարւոյ հանդիպեցաւ վանականի մը իմաստուն եւ երկիւղած, ու ճգնազգեացն վեղարաւոր՝ մարգարէական ոգւով մը կանխած էր

յայտարարիլ, թէ փոքրիկ պատանեակին մէջ հոյակապ ոգի մը կը բնակի ու բացականչած էր՝ «Քեզ պարտ է աճիլ եւ ինձ մեղմանալ...»:

Իր բնատուր, անզուգական հանճարով եւ ուսումնասիրական բարձր ոգիով կ'անցունէ նա մանկութեան, պատանեկութեան շրջանները՝ տիրանալով ժամանակակից դպրութեան ու գրականութեան: Ա՛լ կը հոսէր մեղրածորան իր բերանէն, բանաստեղծի երկնող գրիչէն՝ գիտութիւն երկնային եւ իմաստութիւն հոգեւոր: Սակայն՝ Քրիստոսի Աւետարանին այս պատուական աշակերտը պահ մը տարակուսեալ մնաց իր մէջ երկուց ճանապարհաց, ու ձգտեցաւ ամփոփուիլ աշխարհիկ կեանքի անձուկ տնակին մէջ: Բայց փայլակի արագութեամբ անցաւ իր կենցաղն ամուսնական. եւ ահա Ս. Հոգւոյն աներեւոյթ ձեռքը մղեց ու քաշեց զինքը Քրիստոսի քաղցր լուծին եւ Հայ Եկեղեցւոյ կապոյտ վեղարին ներքեւ, որով դադրեցան իրեն համար առտնին եւ աշխարհիկ խոհեր ու խոկեր. հարեցաւ, փարեցաւ Եկեղեցւոյն, որուն ի սպաս դրաւ իր անձը, կեանքը, բանն ու գիրն աստուածաքարոզ եւ հոգեսփոփ...

Այնուհետեւ երկնային ներշնչումներով կը պարուրի եւ կը պատատի հոգին նորընծայ վարդապետին, որ կ'երկնէ իր հոգեւոր հրաշակերտները Աստուծոյ բանին եւ իմաստութեան՝ ջրոյն կենդանւոյ՝ նօթի, ծարաւ՝ հոգեւորականաց եւ աշխարհականաց, որոնք կարօտ էին Աստուծոյ ճշմարտութեան բանին եւ Քրիստոսի Աւետարանի հոգեպարար պատուիրանաց եւ պատգամացն աստուածեղէն:

Ա՛լ հայ համայնքին ծանօթ էին Քրիստոսի սուրբ սիրով վառուած աշակերտին՝ Հայրիկ վարդապետին անունն ու բանն, թուղթն ու գիրն հոգիընկալ. իր արժանաւոր հռչակն ու համբաւը կ'սկսէր ոչ միայն Բիւզանդական արքայանիստ ոստանէն, այլ ի գաւառաց, գաւառահայ եկեղեցիներու եւ անոնց հետ միասին Տարօնոյ եկեղեցւոյն մէջ, ուր կը փայլէր բազմադարեան տոհմային ուխտաւորութեան կեդրոնիկ մենաստանն հռչակաւոր Ս. Կարապետ, որ իր բարոյական ազդեցութեամբ եւ նիւթական բարգաւաճումովը կը ճխար այն ատենները, առ ինքն կը հրաւիրէր նաեւ Ս. Երուսաղէմի ուխտաւորութեան հրաւիրակ վարդապետին ալ, ու 1861-ին Մկրտիչ վարդապետ, տակաւին ալեօքն բարեթուխ եւ իրանովն կենդանի, զգացմամբ կորովալից, առոյգ, այլ շնորհազարդ՝ յանկարծ կը փայլէր յանդս եւ բարձրավանդակս Իննակնեանց մայրավանուց, վարդավառեան վարդածղի աղաւնեարձակ մեծագոյն տօնին եւ բազմագոյն տօնականներուն: Իսկ 1862-ին Պոլսոյ պատրիարքարանը Ս. Կարապետի վանահայր-առաջնորդութեան կը կոչէր Խրիմեան Մկրտիչ վարդապետը, որ լեցուած տոհմիկ կրօնասիրութեան եռանդով՝ կուգար, կ'ստանձնէր մեր եկեղեցւոյն տեսչութիւնը, որը ցանկալի էր հրաւիրողին եւ հրաւիրեալին միանգամայն:

Եւ տքնեցաւ երջանկայիշատակն տքնութեամբն բարեգործով, որպէսզի սրբութեան այդ մեծ տունը՝ Իննակնեան մենաստանը Աստուծոյ լուսոյն եւ իմաստութեանն ալ տունն ըլլար արժանաւոր, ուր ոչ միայն շնորհակալուչ ըլլային- աչացու աշուղքն անգիր, անուս, այլ՝ լուսազարդուէին Լուսաւորչայ հաւատով եւ Ս. Սահակայ կարգմունքով՝ որբացած, ուշիմ, այլ բանիմաց մանկտին ու պատանին

Մշոյ եկեղեցւոյն. Աստուծոյ իմաստութեան ճառագայթող շողն ու ցօղը լուսափայլ սրսնկելու Գլակայ տաճարի սեղանին եւ սրբութեանց առջեւ...

1862-1869-ի Հայրիկի վանահայր առաջնորդութեան հոգեւոր շրջանը՝ ունկնդիրները շատերը տակաւին կրնան յիշել, թերեւս իր մանրամասնութիւններով: Այդ մայրավանքը միայն այն ատեն կրնար իր ոսկերուխ գանձանակներէն մեծ հասոյթ մը ապահովել՝ պահելու համար գոնէ բարձրագոյն վարժարան մը: Այս էր նոր Առաջնորդին փայփայած գեղեցիկ փափագներէն մէկը: Ու նա անմիջական հայեացքով կրցած էր թափանցել վանական զեղծ ու յոռեգոյն մատակարարութեան՝ եւ վերահաս ըլլալ, թէ ինչպէս ուխտաւորական ահագին եկամուտները սահմանուած էին պարարելու քսակները նախկին վանահայրերու եւ վարդապետներու՝ որոնց դրսէն շահակից էին ժողովրդեանէն ուրիշ դաս մը զեղծ առաջաւորներ ու համբալներ: Միմիայն Տաճարը եւ Ս. Գերեզմանը տարեկան 1000 ոսկի դիւրութեամբ կ'արտադրէին, երկպատիկ հասոյթ մ'ալ Տաճարէն դուրս, որ նոյնպէս կրնար յանգել 1-2000 ոսկիի: Նա ձեռնարկեց բարեզարդել վանքը, վանական ժողովի մը հսկողութեան ներքեւ՝ արկղ հաստատեց առաջնորդարանում, ու գանձանակ՝ գերեզմանատան մէջ: Հակակշռի տակ առաւ մոմավաճառի, մատաղավաճառի հասոյթները եւն, որոնցմէ կարեւոր բաժին մը սահմանուեցաւ դպրոցի զարգացման եւ եկեղեցական մատեաններու պատրաստութեան, ու ամենակարճ ժամանակի մէջ՝ Գլակայ վարժարանը կ'սկսէր ուսումնական արդիւնաւոր վիճակ մը ստանալ: Ժամանակի լաւագոյն ուսուցիչներէն ծանօթ Գարեգին վարդապետ Սրուանձտեանց եւս՝ իրենց ուսուցչական աշխատակցութեան բաժինը կը նուիրէին: Վարժարանը դեռ խանձարուրին մէջ էր. վարդապետաց եւ շահակցաց քսակները կ'սկսէին սնանկանալ, եւ ահա՝ Ս. Կարապետի հասոյթները կրծողներու տգէտ խմբակ մը իր դէմ կանգնեցաւ. ի՞նչ անէր նա: Ապաստանեաց Աստուծոյ եւ Ս. Կարապետին: Բարեմտութեամբ, ան[յ]իշաչարութեամբ թէպէտ փորձեր չխնայեց, որ Աստծոյ տաճարին օգուտը եւ շահը վայրապար չվատնուին, բայց անձնասէրք տարիներով մաքառեցան, պայքարեցան եւ նոյնիսկ անարժան միջոցներով փորձեր չխնայեցին՝ իրենց քսակին պարապութիւնը դարմանելու: Չնայելով թէ եկեղեցւոյ հոգերը թոյլ չէին տար, որ վարդապետն եկեղեցւոյ դիւրէր իր հոգեւոր ջանքերը, մանաւանդ Ս. Կարապետի գրատունն եւ կրթատունն, իր ուսումնասիրական վայել ու զարգացուն վիճակին մէջ դնելու եւ սակայն կը տոկայ՝ հիանալի համբերատարութեամբ, հոգւոյ մեծութեամբ, աննենգ ներողամտութեամբ, ու կը փորձէ շարունակել իր հոգեւոր պաշտօնը, սիրելով, ներելով, օրհնելով եւ աղօթելով՝ հետեւած անշուշտ Եկեղեցւոյ Գերագոյն Հեղինակին՝ պաշտելի Քրիստոսին, որ կ'աղաղակէր. Տէ՛ր, թող դոցա, զի ոչ գիտեն, զինչ գործեն...

Թոյլ տանք այդ էջերը, միայն ցաւագին շեշտերով մատնանշենք դպրոցասիրութեան՝ իր սրտագին ջանքերուն տգիտութեան հովերէ վայրապար ամլանալն եւ ապարդիւն աւիլը, ու շարունակենք դիտել հոգեւոր եկեղեցասիրութեան հոյակապ գնացքը, որով անհողդողդ եւ քայլ առ քայլ բարձրացաւ եկեղեցական սրբազան աստիճաններուն եւ մինչեւ Աթոռն հովուապետական:

Դեռ Տարօնոյ Առաջնորդութեան մէջ 1868-ին կ'ընդունի եպիսկոպոսական ձեռնադրութիւնը ի Ս. Էջմիածին՝ հոգելոյս Տ. Գէորգ Դ. Կաթողիկոսէ, եւ այս առթիւ՝ Հայրիկը չի քաշուիր ձաղկելէ հայ եկեղեցական նուիրապետութեան բարձր պաշտօնեաները՝ Էջմիածնի միաբանութեան ընծայ դնելով միմիայն Քրիստոսի Աւետարանի մարգարիտները. փոխան նուէրներուն, ոսկւոյ, արծաթի եւ զարդուցն ականակուռ, զոր սովոր էին ընծայաբերել՝ իւրաքանչիւր եպիսկոպոսացու՝ մամռնայական դերեր եւ իղձեր փայփայելով՝ Մայր Աթոռոյն մէջ ալ թողոքեց Հայրիկը. Ջրի առիք եւ ձրի տուք:

1869-ին մինչ Ս. Կարապետի Աթոռը շատ կը տեսնուէր եկեղեցւոյ խոնարհամիտ վարդապետին, ու արծաթասէր Ս. Կարապետցիներ տակաւին զուն կը գործէին վանապատկան հասոյթները ձեռք բերելու համար՝ հրաժարեցնել զինքը, որ մինչ իսկ երբեմն ստիպուած էր դեգերիլ վանքին ագարակներ, Մշոյ գեղեր ու թաղեր, Կարնոյ հիւրընկալ եկեղեցին եւն:

Եւ ահա Կ. Պոլսոյ եկեղեցւոյ ընդհանուր ժողովը, Վեհափառ կայսեր բարձր իրատէով եւ Կայսէրական կառավարութեան հաճութեամբ կը կանչէ զինքը Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռակալութեան, ուր կը հրաւիրուէր մեծարանօք եւ կ'ընդունուէր արժանավայել պատիւներով... հրամայուած Կայսերական հպատակաւէր կառավարութենէ: Պատրիարքական պաշտօնը ստանձնելուն, նա պարտքերով ընկճուած գտաւ կեդրոնական այդ հաստատութիւնը եւ զուն գործեց ազգին հոգեւոր մեծ պաշտօնատեղին փրկել պարտքերէ եւ միաժամանակ մեծապէս սատարեց ազգային վարժարաններու առաջադիմութեան եւ ժամանակակից կրթական ուղղութեան: Չորս տարուայ շրջանէ մը յետոյ՝ 1873-ի վերջերը թողուց պատրիարքական Աթոռը, եւ սակայն պատրիարքի մը համահաւասար միշտ վայելեց ժողովրդի ամէն դասերու յարգանք եւ համակրանքը:

1879-ին մայրաքաղաքէն կը վերադառնայ Վարագայ իւր սիրելի մենաստանը՝ ստանձնելով Նաեւ Վանայ առաջնորդական հովւութիւնը, որով զբաղեցաւ եւ ապա բոլորովին առանձնացաւ Ս. Խաչ Նշանին մենանոցը:

Վերջին անգամ ըլլալով՝ այցելեց Տարօնոյ եւ Ս. Կարապետի եկեղեցւոյն եւ 1885-ին՝ ու նորածագ գարնան սկիզբը, այն օրերուն՝ երբ Էջմիածնի մէջ համազգական ժողովը զբաղուած էր հոգելոյս Տ. Գէորգ Դ.-ի յաջորդին ընտրութեամբ: Ընտրելիներէն մէկն ալ Հայրիկն էր թէեւ, բայց իր վերջնական ընտրութիւնը նոյն անգամ յապաղեցաւ ընտրութեամբ Տէր Տէր Մակարայ Արքեպիսկոպոսի: Հոգեւոր ընդհանուր համակրանքով ընդունուեցաւ այստեղ նախորդ պատրիարքը. Մշոյ սիրելի Առաջնորդը, որ այցելեց քաղաքի եկեղեցիները՝ իր հոգեւոր քարոզներուն ունկնդիր ընելով ժողովրդի ամէն դասակարգերը, այցելեց եւ ուխտ դրաւ Ս. Կարապետի գերեզմանին, արցունքով թացեց խոնարհ նկուղը մեծացոյն Հայրապետին Սրբոյ Սահակայ Պարթեւի, ու տուաւ իր հրաժեշտը հայրական: Չմոռանամ ըսելու, որ իր հանդիսադրութեամբ ծերունի Մահտեսի Աղաջանին թաղման առթիւ իր դամբանականը [չմոռանամ... դամբանականը հատուածը ջնջուած] քարոզեց, համեմեց արտայայտելով փափագ մը, որ ինքն այլ 120 տարեկանին հասնի: Անկէ

վերջ հեռացաւ Կ. Պոլիս, ամփոփուեցաւ Գուլկունճուկի մինինիկ գեղեցիկ եկեղեցւոյ գաւթին մէջ: Իբր ամէն պարագային սակայն հոյակապ տիպար սրտագին մարդասիրութեան եւ աղքատասիրութեան, բարեմտութեան եւ արդարամտութեան, անպակաս եղան անոր համար համայնական համակրանքը եւ խորին պատկառանքը: Հոնկէ Հայրիկը հեռացաւ 1890-ին դէպ Քրիստոսակոխ Ս. քաղաքն Երուսաղէմ, Սրբոց Յակոբեանց առաքելական Աթոռը՝ իր օրերուն մնացորդը Սուրբ երկիրին մէջ անցունելու, եւ հոնկէ էր, որ Ս. Հոգին եւ համազգական պատգամաւորաց ժողովն Էջմիածնի, միաձայնութեամբ ընտրեց զինքը Ամենայն Հայոց Ծ. Պատրիարքութեան, Սրբոյն Թադէոսի, Բարթողիմէոսի եւ Գրիգոր Լուսաւորչի 1900-ամեայ նուիրական Ս. Աթոռին:

Ոսկեստար Հայրիկը՝ արցունքոտ աչքով, զգածուած սրտով խոնարհեցաւ Ս. Հոգւոյն այս աւագ տրչչութեան ու շնորհին առաջ, եւ հովուական ցուպն ի ձեռին ուղեւորեցաւ Արարատայ Էջմիածին, ուր ամենափայլուն ընդունելութիւն մը կ'սպասէր իրեն Արեւելեան Հայոց եկեղեցական, աշխարհական, գիտուն եւ անգրագէտ, դպրոցական ու դաշտական, քաղաքային ու գիւղային ողջոյն հօտին ու զաւակաց կողմէ: Որովհետեւ ժողովուրդը կը սիրէր զինք, ոչ թէ՝ առ արտաքին քաղաքավարութեան ձեւակերպուած համակրանքի հարկ մը հատուցանելու, այլ անոր համար, կը հաւատային թէ նա այր Աստուծոյ է, յորում ոչ գոյ նենգութիւն, թէ նա բարի է եւ բարեգործ, թէ նա Աստուածավախ է, որքան մարդասէր, թէ նա հօտասէր հովիւ է իբր հովուապետ, որդեսէր հայր է իբր Հայրապետ:

Իր բարոյական ու մեծահոչակ հոգեւոր հեղինակութիւնը՝ կուգար կ'օծուէր Էջմիածինը եկեղեցական նոր իմն ազդեցութեամբ ու կորովով ու ժողովրդի համակրական վերաբերմամբ: Օրեցօր Մայր Աթոռը բարգաւաճման ուղիին կ'առաջնորդուէր, նորանոր գեղեցիկ շինուածքներով, թանգարանով, տպարանով եւ Ներսիսեան գեղեցիկ լճին եզերքը կառուցուած գեղակերտ հիւրանոցներով: Այս ամէն հոգածութիւնք հայրապետական կրնամք ըսել թէ կը նսեմանային այն լուսաբեր շնորհներուն եւ օրհնաբեր խնամքներուն, որ ուղղուած էին դէպի հոգեւոր մեծ կրթարանը՝ Գէորգեան ճեմարանն, որու ուսանողներու թիւը առաջին առթիւ 3-400-ի կը բարձրանար, ուսանողներ, որոնց մեծ մասը զանազան կողմերէ հասած՝ անոնք էին, անպաշտպան, մերկ, չքաւոր, վտարանդի որբեր, շատերը բոբիկ ու փոքրիկ: Բայց ինչո՞ւ վհատէին հոն, Արարատ-Մասիսի ստորոտը, հայոց 1600-ամեայ տաճարում ծերունազարդ մէկ հայրապետ կար, որ իր հսկայ կուրծքին մէջ գթութեան ծով մը պարփակած էր եւ պատրաստ էր սրբելու քրտինքն եւ արցունք ուսումնատենչիկ մանուկներու: Բաց էր հովուական վեհարան. շուտով կը հասնէին հոն որբերու, որբեւայրիներու, այրիներու եւ հէք աղքատներու աղերսները, մրմունջները եւ պաղատանքները, հոն էր Հայրիկ եւ հայրաբար կը լսէր, կը գթար, կը պատսպարէր եւ կը մխիթարէր: Իր մեծ հոգին ոչ զով մերժեց, ոչ ոքի աղաչատանքին անլուր մնաց. ամէնքը գոհացան, ամէնքը օրհնեցին, ամէնքը գովեցին զինքը

աղքատաց-տնանկաց, չքաւորաց նախիրներէն՝ Աստուած, կ՚ասէին չորեք դիմաց, մեր արեւէն կտրես, Հայրիկին տաս:

Չնայելով ութսունամենայ հասակին՝ կ՚երթար երկրէ երկիր, քաղքէ քաղաք, ուր զինքը կոչէր եկեղեցւոյ շահը եւ վտանգը, այցելէր մեծատան ապարանքէ եւ տնանկին խրճիթը հաւասարապէս: Էջմիածնի վանապատկան ուխտատուրական շէնքերուն մեծ մասը խարխլած, ինչպէս եւ ոսկէ ուտամբ հիմնադրուած պարթեւականն Գրիգորի Ս. Տաճարը: Անոնց վերաշինութեան, վարժարանաց անման զարգացման, կարօտելոց ոգեպահիկին, բազմաթիւ որբերու, այրիներու պատսպարման անհացին հոգեր արդէն ճնշած էին իր զգայուն ոգին եւ հոգատար սիրտը, որու վրայ ծանրացած կար տարիքներու եւ ալեաց բեռը, երբ դժբաղդաբար վրայ եկաւ ռուսահայ եկեղեցիներու, դպրոցներու, Էջմիածնի կալուածական սեփականութեան եւ մատակարարական իրաւասութեան ամէնէն մեծ խնդիրը, որու նման Հայոց Եկեղեցին դարերու ընթացքին մէջ, զուն ուրեք թէ տեսած տեսայ, բայց թէ Սրբոյ Ղեւոնդեանց եւ Սրբոց Վարդանանց հոգեւոր ճգնաժամին:

Այո՛, վրայ եկաւ արեւելեան հայոց, Էջմիածնի կալուածոց պետական գրաւման արհափիրքը եւ այն անակնկալ հրամանները, որով ծերունազարդ Հայրապետը կը ճնշուէր ձեռք քաշելու իր 1600 տարուայ Եկեղեցւոյն կաթողիկոսական իրաւասութենէ, բայց հարկ էր դիմանալ, եւ նա ամենուն տոկաց. չվհատեցաւ, չհուսահատեցաւ: Դիմեց Լուսաւորչի, Ներսէսի, Սահակայ Աստծուն, ապաստանեցաւ արդարութեան, որուն վրայ այնքան լիահաւատ էր: Իրաւասութիւնները պարզեց, գրեց, խօսեցաւ: Եւ այս առթիւ օժանդակ կանգնեցան Նորին Ս. Օծութեան Թուրքիոյ Պատրիարք Տ. Մաղաքիա Արքեպիսկոպոս եւ Հայ Եկեղեցւոյ բոլոր եպիսկոպոսները: Նա զօրաւոր ճիգով ու կոչով՝ ցոյց տուաւ Հայ Եկեղեցւոյ 16 դարեան անվիճելի հեղինակութիւնը եւ սեփականութեան ճշմարիտ ու նուիրական իրաւունքը անձնուէր կորովով, եւ երբ Երեւանի նահանգապետը՝ Ս. Հռիփսիմեանց վանքին մէջ՝ ուր պահ մը առանձնացաւ եւ լացաւ ութսունամեայ Հայրապետը՝ Բեդերպուրգի հրամանները կը ներկայացնէր Ն. Սրբութեան եւ թուղթ մը, որու վրայ պէտք է ստորագրէր իր հայրապետության սեփականտէրի իրաւասութեան ջնջումը: - Արդարացեալ-ճշմարիտ զայրոյթի մը թափով մերժելով մերժեց՝ այդ դժպհի եւ օտարոտի առաջարկը, յայտարարելով թէ՝ Հայրիկը չի կրնար առանց գերեզման իջնելու, Ս. Թադէոսի եւ Լուսաւորչի իրեն աւանդ թողած Քրիստոնէական ամենահին Եկեղեցւոյ կանոնադրութենէ, սեփականութենէ, իրաւասութենէ մազի չափ շեղելու: Իր ձայնը հասաւ մինչեւ Վեհ. Ջարին կառավարութեան Բարձրագոյն ատեանները: Աստուած գթաց ալեզարդ Հայրապետին, անցունելով դառնութեամբ հոգեւորական բաժակը: Ու արժանացոյց զայն հայրապետական իրաւանց եւ եկեղեցական սեփականութեան վերադարձին, որոնց համար՝ արեւելեան հայերը՝ Էջմիածնի զաւակները՝ կիներով, այրերով, աղջիկներով, երախաներով, քահանաներով, դպիրներով, տանուտէրերով ու ծառաներով հաւասարապէս ողբացին ու աղաղակեցին հուսկ ուրեմն, Եկեղեցւոյ իրաւանց վերստացմամբ հաւասարապէս մխիթարուեցան...

Մինչեւ եկեղեցական իրաւանց փորձութեան այս դառն բաժակին պարպուիլը՝ շատ քիչ ժամանակ անցաւ. դեռ բաժակին պարպուիլը՝ շատ քիչ ժամանակ անցաւ. դեռ ո՛չ Էջմիածին, ո՛չ եկեղեցիներ, ո՛չ դպրոցներ՝ վերագտած չէին իրենց բաւարար մատակարարութիւնը: Արեւելեան Եկեղեցւոյ ելեւմուտքը խանգարուած էր. Հոգեւոր հաստատութիւնները կարօտութեան ու չքաւորութեան հասեր էին. Նոյնիսկ Էջմիածին կրճատեց իր ծախքերը, շատցուց իր պատուերը՝ եւ Հայրիկն կրթասէր ստիպուեցաւ եւ ճար չգտաւ հաց եւ ուսում բաշխելու ճեմարանի աղքատ ուսանողաց, որոնց մեծ մասը ցրուեցաւ, յոյս ունենալով թէ բարեխիղճ Հայրիկը կը մուրայ, կը ճարէ եւ դարձեալ պիտի խնամէ զիրենք եւ իրենց նմանակ դեռ շա՜տ շատերը:

Դեռ երկար ապրելու պէտք եւ իրաւունք ունէր: Արդեօք ինքն ալ այնպէս չէր խնդրէր իր պաշտած Աբրահամու բարեգործ Աստուծմէն. «Եթէ չենք սխալիր, 1885-ին էր, երբ այստեղ, իր հանդիսադրութեամբ հանգուցեալ Մ. Աղաճան ծերունիի թաղման կը մասնակցէր, իր դամբանական քարոզին վերջ տուեր էր՝ արտայայտելով փափագ մը, թէ «աղօթեցէ՛ք, որ Հայրիկն ալ 120 տարի ապրի...», եւ սակայն Աստուծոյ անհասանելի կամքը այլապէս տնօրինած էր. ու վերջապէս հասաւ հանգիստը բազմավաստակ եւ բազմերախտ Հայրիկին:

Հետեւաբար՝ դժբաղդութիւն ունինք գուժելու Ձեզ, թէ Վեհափառ Հայրիկը այլեւս չի շնչեր, չի վարեր, չի փայփայեր իր եկեղեցին եւ չի քարոզեր: Անոր իմաստութեան արծւոյ բիբերը չեն դիտեր Մայր տաճարը եւ ականց պատուականաց պատուական թարթիչները չեն իջներ այլեւս ի սփոփանս հոգեւորս Եկեղեցւոյ պաշտօնեաներու, այրիներու, որբերու, կարօտներու, աղքատներու, ուսումնածարաւ մանուկներու եւն եւն:

Արդեօք, այդպէս, մեռա՞ւ, հեռացաւ ու մոռացուաւ Հայրիկը. բայց ոչ, մի երկմտիք, նա չէ մեռած սրտով ու հոգիով. նա կ'ապրի ու պիտի ապրի շատ դարեր, հազարանց տարիներ, Քրիստոսի այս փոքրիկ եկեղեցւոյն արձանագրութեանց հոգեւոր զաւակաց սրտերուն մէջ: Այսպես են այս մեծ ու հոյակապ ծառաներն Աստուծոյ, մահկանացու կը ծնին, այլ զինչ փիւնիկն անմահից կաճառին մէջ՝ անմահութեան վերածնութիւնը կը զգենուն, ու բարոյապէս բարձր ու յարակայ կը մնան, իրենց հոգեւոր հեղինակութեամբ, առաքինութեամբ, մարդասիրութեամբ եւ իմաստութեան Ս. Հոգւոյ շնորհներով: Ո՛չ, չեն մոռցուիր. Հայրիկի արդարասիրութիւնը եւ հոգւոյն մեծութիւնը, Հայրիկի եկեղեցասիրութիւնը ու մարդասիրութիւնը, Հայրիկին աղքատութիւնը և ողորմածութիւնը՝ Հայրիկին՝ Աւետարանի խոնարհամիտ աշակերտութիւնը եւ բարեխղճութիւնը, Հայրիկի ուսումնասիրութիւնը եւ բարոյասէր տաղանդը, անոր ներողամիտ ոգին եւ հայեացքն անաչառ, անոր հասակն պարթեւական ու նկարագիրն ազնուական:

Անոր հոգեւոր բարձր արժանիքը գնահատուած էր... եւ դէպ ի տաղանդն ու նկարագիր օտար գիտնականներու յարգանաց յորդումով:

Իր ներողամտութիւնը կը փայլէր բացառիկ պարագաներու մէջ իսկ. նա կօշիկ հագուցեր է այն բոբիկ, անճարակ քահանային, որ ունայնամտութեամբ իր դէմ ելեր

էր. նա իր լումաներով կերակուր էր տուեր այն խմբագրին, որ նոյնպէս գրչի հարուածներ կը փորձէր տալ իրեն: Լայնամիտ Վարդապետը՝ իր հոգւոյ բարձրութեան վերին սանդղամատէն կ՚արգահատէր այդ պզտիկ ու անզէտ մարդոց յիմարութիւններուն վրայ, վասնզի ոչ միայն գիտէր, այլ կ՚ըմբռնէր թէ ունայն են աշխարհիկ անձուկ հոգեր, միայն կայ ու կը մնայ Աստծոյ բարեգթութիւնը, եւ հնարաւորութեան չափով տկար մարդուն՝ ի սպաս՝ դնելիք բարեգործութիւնը:

Նա երբեք մարդը չեդաւ ունայն փառասիրութեան, արծաթին եւ մամոնային, իբր Քրիստոսի աշակերտ, իր քսակը հասարակաց էր. Հայրիկը կուտար ամէն իրեն դիմողին եւ ժողովուրդն ալ կուտար Հայրիկին, որովհետեւ վստահ էին, թէ նա իր անըստգիւտ ողորմածութենէ մղուած՝ գիտէր ըստ արգահատանացն յանձնել այդ լումաները: Երբեմն իր մեկ հատիկ վերարկուն, որով կը պատսպարէր իր բարեձեւ եւ գեղակազմ իրանը՝ ընծայեր է իրմէ աւելի մերկերուն...

- Որ ունիցի երկուս, տացէ այնմ, որ ոչ ունիցի:

Չէ՛ որ ամենամեծ մարդասէրն Քրիստոս այնպէս պատուիրած էր :

Անհամեմատելի է այս կորուստը Հայ Եկեղեցւոյ համար, քան որչափ կրնար ըլլալ նոյնիսկ երկարաձիգ դարերուն ընթացքին մէջ, վասնզի Ն.Ս. Օծութիւնը եկեղեցական բարձր եւ մաքուր հեղինակութիւն մ՚էր, որ Քրիստոսի Աւետարանին սրբագործ ուղիէն կ՚ընթանար՝ նմանակ Եկեղեցւոյ վաղեմի, պաշտելի հարցն երանելեաց՝ պարթեւազանց Սրբոյ Ներսէսի, Սահակայ, Տարօնոյ խնկելի սուրբերուն՝ Մովսէսի, Մեսրոպայ եւն, որոնք բանիւ եւ գրով, մագաղաթով եւ աղօթքով նուիրեցին Եկեղեցւոյն զարդիւնս բազմավաստակ երկանց, եւ իրենց հոգեղէն կեանքն բովանդակ ընծայեցին Քրիստոսի եկեղեցւոյն, Քրիստոսի հօտին, անոր եկեղեցական անձկութեանց եւ կարօտութեանց ատենին, օրհնութեամբ նուիրագործելով արդարոց յիշատակը եւ զոր եկեղեցին շնորհապարտ զգացումով կը տօնէ միշտ, սաղմոսերգութեամբ քահանայից, դպրաց եւ դպրապետաց:

Հանգիստովը անձին, այս մեծ հովուապետին, Հայ[աստանեայց] Եկեղեցին կը կորսնցնէ իր երկիւղած, բարեկրօն, աղօթասէր եւ աստուածասէր վարդապետը, իր հօտասէր, պերճաբան, իմաստնացոյն, պարտաճանաչ եւ արժանաւոր եպիսկոպոսը, իր մեծատաղանդ, ակնածելի, հաւատարիմ, աշխատասէր, կրթասէր, առաջդիմասէր, գաւառային եկեղեցիներու ծանօթ նախկին Պատրիարքը... եւ Օսմ. Կայսեր. պետութեան հաւատարիմ պաշտօնեան: Իր համայնահռչակ, բնութքով՝ մեծահոգի, բարեպաշտութեամբ՝ լայնամիտ, բոլոր իր եկեղեցական պաշտօնէից եւ հօտին հանդէպ՝ սիրովն անխտրող, գթով՝ անաչառ, պատկառելի ամենուն, անձնադիր Եկեղեցւոյն, ճշմարտապէս աստուածասէր, կենցաղովն մաքրակրօն, զգացումով առաքելական, իրանովն պարթեւական, դպրաց եւ դպրատանց պաշտպան՝ ամենուն առ հասարակ համակրելի ու սիրելի Հայրապետը Արարատեան Մայր Աթոռոյ հոգեւոր մեծ Գահակալը:

Ահա հանգստեան կորստին հոգեկան մեծութիւնը, ու կ՚ողբանք այս կորուստը:

կը խնդրենք՝

Աղօթեցէ՛ք ամէնքդ ալ եւ խնդրեցէք, որ Աստուածն ամենաբարեգութ իր յաւիտենական հանգիստին մէջ ընդունի՝ ի դասս հոգելոյս հայրապետաց մաքուր հոգին երանելի Հայրապետին եւ լուսաւորէ զայն եդեմական ցանկալի դրախտին լուսովն երանաւէտ, եւ իր անհուն ողորմութեամբ քաւէ զայն մարդկային տկարութիւններէն ըստ այն արդարաւէտ պատգամին մարգարէական՝ թէ Ո՞վ է մարդ, որ կեցցէ եւ ոչ մեղիցէ:

Աղօթեցէ՛ք, որ Հայրիկին հոգեւոր-պատուական ձիրքերը սփռէ մեր փոքրիկ Եկեղեցւոյ բոլոր պաշտօնէից եւ զաւակաց վրայ, անպակաս պահելով իր խոնարհ հօտը Աւետարանի ճշմարիտ աշակերտներէ:

Աղօթեցէ՛ք, որ Քրիստոս Աստուած անփորձ-անսասան պահէ Հայրապետական Աթոռը՝ Ս. Էջմիածնայ Մայր տաճարը, ըստ անճառելի խոստման ի ձեռն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, բազմաչարչար իր ծառային:

Աղօթեցէ՛ք նաեւ, որ Ս. Հոգին իր իմաստութիւնը տարածէ համազգական հոգեւոր ժողովին, երջանկայիշատակ Հայրիկին արժանաւոր յաջորդ եւ Մայր Աթոռին առաքինազարդ գահակալ մը շնորհելու ի հովուապետութիւն արիացեալ Եկեղեցւոյն Հայոց:

Եւ ամէնքդ ալ միաբերան ասացէք.

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. ամէն:

•••

Ամենաթախծալից ցաւով կը յայտարարենք Ձեզ, թէ համազգական մեծագոյն կորուստներէն մէկին առջեւն ենք. Էջմիածինը սուգերու մէջ է. համազգական Աթոռը սեւերով պալուլուած. Վեհարանը ցաւատանջ ու խոր լռութեան ներքև իր մէջ կը պահէ սեւ շղարշով պատած Հայրապետական խաչակիր դագաղ մը,

Ուր անշունչ պառկած է քաղցրաբարբառն Հայրիկ:

Աւա՛ղ այս կորուստին,

Աւա՛ղ այս մեծ իմացականութեան, լոյսին շիջման եւ անէացման:




## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Մայիսի 2-ին, չորեքշաբթի.- Ժ. օր Յինանց:***

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Մալթայի ինքնիշխան մարտական ուխտի դեսպան Անդրե Գուտսվիլերին:

***Մայիսի 4-ին, հինգշաբթի.- ԺԲ. օր Յինանց:***

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հանս-Ուլրիխ Քլոզեի գլխավորած պատվիրակությանը՝ Հայաստանում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆոլկեր Զայթցի ուղեկցությամբ:

Նույն օրը Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի հուշարձանների պահպանության միջազգային կազմակերպության անկախ փորձագետ Ալկիվիադես Պրեպիսին:

***Մայիսի 7-ին, կիրակի.- Գ. կիր. Աշխարհամատրան (Կանաչ Կիրակի):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Ամենայն հաւատացեալքն էին ի միասին, եւ ունէին զամենայն ինչ հասարակաց» (Գործք Բ 44) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Մայիսի 11-ին, հինգշաբթի.- ԺԹ. օր Յինանց:***

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց World Vision միջազգային քրիստոնեական կազմակերպության նախագահ Դին Հըրշի գլխավորած պատվիրակությունը՝ կազմակերպության հայաստանյան գրասենյակի փնօրեն Ռոբերտ Դիրայի ուղեկցությամբ:

***Մայիսի 14-ին, կիրակի.- Դ. կիր. (Կարմիր Կիրակէ):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Արիւն մարտիրոսաց հիմն եկեղեցւոյ» (Օգոստինոս) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Մայիսի 19-ին, ուրբաթ.- ԻԷ. օր Յինանց:***

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Էջմիածնի թիվ 2 երաժշտական դպրոց՝ մասնակցելու և իր օրհնությունը փալու դպրոցի շենքում համակարգչային կենտրոնի բացմանը: Նորաբաց կենտրոնը գործելու է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արմավիրի թեմի հովանու ներքո:

***Մայիսի 21-ին, կիրակի.- Ե. կիր.: Տօն Երևման Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Թադեոս վրդ. Զիրեկյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը քարոզ խոսեց՝ «Ի յերկնից երեւեալ նշանն յաղթութեան այսօր հեթանոսաց ծագեաց լոյսն ողորմութեան» (Շարական) բնաբանով (տես էջ 49):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Մայիսի 27-ին, շաբաթ.- ԼԵ. օր Յինանց:***

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին բերվեց հայ մեծ զորավար Դրաստամատ Կանայանի աճյունը:

Իջման Ս. Սեղանի առջև, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ հոգեհանգստյան հանդիսավոր արարողություն: Ներկա էին նաև ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, կառավարության անդամներ, մեծ զորավարի ազգականները, բազմաթիվ հավատացյալներ:

Ս. Էջմիածինը հրաժեշտ տվեց իր նվիրյալ զավակին՝ ճանապարհելով դեպի Ապարան, ուր և իր վերջին հանգրվանը գտավ զորավարի աճյունը:

***Մայիսի 28-ին, կիրակի.- Զ. կիր.:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Ես եմ դուռն. ընդ իս եթէ ոք մտանիցէ, կեցցէ» (Հովհ. Ժ 50) բնաբանով (տե՛ս էջ 52):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Մայիսի 29-ին, երկուշաբթի.- ԻԷ. օր Յինանց:***

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին ECLOF-Հայաստան աշխատանքային սեմինարի մասնակիցները՝ Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսին սեմինարի ծրագիրը ներկայացնելու և Վեհափառ Հայրապետի օրհնությունը ստանալու նպատակով:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի նախագահի տեղակալ տիկ. Անկե Ֆուքսի գլխավորած պատվիրակությանը:

# ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ
# Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Էջմիածին» ամսագիրը 1997-1998 թվականների ընթացքում հրապարակեց Բարեշնորհ Նշան սարկավագ Հովհաննիսյանի (այժմ Խորեն աբեղա) "Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի" Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանած ավարտաճառը (ղեկավար՝ Վարդան Դևրիկյան), որտեղ, թյուրիմացաբար, առանց հեղինակի անունը նշելու, թվարկված են մի շարք նյութեր, որոնք իմ գրչին են պատկանում: Դրանք են.

1. Հայ Եկեղեցու տոնելի սրբերի համառոտ կենսագրությունները, 1980 թ., համարներ Ա 38, Բ-Գ 34, Զ-Է 37, Ժ 14, ԺԱ 31:

2. Հայագիտական հրապարակություններ, 1982 թ., համարներ Է 58, Ը-Թ 74, Ժ 57, ԺԱ-ԺԲ 67, 1983 թ., համարներ Բ-Գ 82, Է 53, Ը 54, ԺԱ-ԺԲ 77:

3. Հայազգի սրբերի կենսագրության նոր ժողովածու, 1983 թ., համար Ը 5:

Բացի այդ, «Հեղինակների և անձնանունների ցանկ»-ում, չգիտես ինչու, «Վոլոդյա Աբրահամյան»-ը դարձել է «Վալենտինա Աբրահամյան»: Կարծում եմ, այնքան էլ բարդ չէր զանազանելը գրախոսի և գրախոսվող գրքի հեղինակի անունները:

"Մատենագիտություն"-ը օգտագործելիս խնդրում եմ նկատի ունենալ այս պարագան, իսկ նոր "Մատենագիտություն" կազմելիս սրբագրել անճշտությունները:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# "ЭЧМИАДЗИН"
# ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Мая 2000)

## ОФИЦИАЛЬНАЯ ИНФОРМАЦИЯ

1. МУШЕГ ДЬЯКОН ОГАНИСЯН - Официальный визит Его Святейшества Католикоса всех армян Гарегина II в Грузию, 9-12 мая 2000 г. (с. 3-21).
2. Благословение и поздравление Его Святейшества Католикоса всех армян Гарегина II Его Преосвященству Архиепископу Овнану Тертеряну по случаю его переизбрания в сан главы армянской епархии Канады, 28 мая 2000 г., № 41 (с. 22-23).
3. Благословение и поздравление Его Святейшества Католикоса всех армян Гарегина II Его Преосвященству Архиепископу Авагу Асатуряну по случаю его переизбрания в сан главы армянской епархии Ирака, 27 мая 2000 г., № 40 (с. 24-25).
4. Благословение и поздравление Его Святейшества Католикоса всех армян Гарегина II Его Преосвященству Архиепископу Егише Кизиряну по случаю завершения его духовной службы, 16 мая 2000 г., № 35 (с. 26-27).
5. Энциклика Его Святейшества Католикоса всех армян Гарегина II редактору еженедельника "Апага" Арсену Нувару Мамуряну - по поводу его награждения орденом "Св. Саак-Св.Месроп", 16 мая 2000 г., № 36 (с. 28-29).
6. Благословение и поздравление Его Святейшества Католикоса всех армян Епархиальному Совету армянской епархии Австралии, 1 мая 2000 г., № 36, (с. 30-31).
7. Благословение и поздравление Его Святейшества Католикоса всех армян Гарегина II редакции еженедельника "Апага" Монреаля (Канада), 6 мая 2000 г., № 34 (с. 32-33).
8. Благословение и поздравление Его Святейшества Католикоса всех армян Гарегина II Араму Галустяну (Бостон, США) за его многолетнюю патриотическую деятельность, 17 мая 2000 г., № 37 (с. 34-35).
9. Благословение и поздравление Его Святейшества Католикоса всех армян Гарегина II Ваче Семерджану (Лос Анжелес, США), в связи с его 40 летием журналисткой и общественной деятельности, 18 мая, 2000 г. (стр. 36-37).
10. Поздравительное послание Католикоса всех армян Гарегина II по случаю дня Победы, 9 мая 2000г. (стр.38).
11. Речь Католикоса всех армян Гарегина II в Кафедральном Соборе во время панихиды полководца Драстамата Канаяна, 27 мая 2000г., (с. 39-40).

12. Послание Католикоса всех армян выпускникам средних школ Армении, 26 мая 2000 г., (с. 41-42).
13. Звон колоколов был вновь услышан в древней столице Армении Двине, где Католикос всех армян Гарегин II освятил церковь Св. Воскресения, 3 мая 2000 г., (с. 43).
14. Освящение церкви Св. Саркиса в Новом Норке Католикосом всех армян Гарегином II, 3 апреля 2000 г., (с. 44).
15. Аудиенция делегации Юридического Университета г. Братиславы под руководстовом вице-мэра Братиславы Павла Минарика в Св. Престоле у Католикоса всех армян Гарегина II, 1 мая 2000 г., (с. 45).
16. В Св. Престоле католикос всех армян Гарегин II наградил поэтессу Сильву Капутикян орденом "Св. Саак-Св. Месроп" Армянского Католикосата, 29 апреля 2000 г., (с. 45).
17. Поздравительное Послание Его Святейшества Католикоса всех армян Гарегина II Андранику Маркаряну по случаю его назначения Премьер-Министром Армении, 13 мая 2000 г., (с. 46-47).
18. Посещение Эчмиадзинского Св. Престола Премьер-Министром Армении Андраником Маркаряном для получения благословения Его Святейшества Католикоса всех армян Гарегина II (с. 47).
19. Его Святейшество Гарегин II : "Мы воспринимаем Матенадаран как храм". Его Святейшество подарил Ереванскому Матенадарану им. Маштоца Евангелие XII в., 20 мая 2000 г., (с. 48).
20. Аудиенция заместителя Министра иностранных дел Украины Дмитрия Ткача в Св. Престоле у Католикоса всех армян Гарегина II, 31 мая 2000 г. (с. 48).

## ПРОПОВЕДИ

21. Проповедь Его Преосвященства Архиепископа Нерсеса Позапаляна в Кафедральном соборе Св. Эчмиадзина по случаю праздника Святого Креста, 21 мая 2000 г., (с. 49-51).
22. Проповедь архимандрита Макара Оганисяна в Кафедральном соборе, 28 мая 2000 г., (с. 52-53).
23. СВЯЩЕННИК АВАГ ДЮЛГЕРЯН - От земли до небес. Сыновья Воскресения (с. 54-57).

## РЕЛИГИОЗНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

24. МАРИ САНТУРДЖЯН - "Святые образы" в армянской духовной лирике (исследование) - (с. 58-68).
25. РИМА АРТАВАЗДОВНА МИРУМЯН - Религиозная философия в контексте современной культуры (исследование) - (с. 69-78).

1700-ЛЕТИЕ

26. Г. Ж. ОГАНИСЯН - Нерсес Апгарекеци - защитник Родины (исследование) - (с. 79-89).

ИСТОРИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

27. АРУСЯК ТЕРЧАНЯН - Роль Армянской церкви в победе над фашизмом 1941-1945 гг. (исследование) - (с. 90-93).
28. Х. В. ТОРОСЯН - Возделование виноградной лозы в монашеском хозяйстве Эчмиадзина в XVII-XVIII вв. (исследование) - (с. 94-103).

АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

29. ВАРАГ АРАКЕЛЯН - Теория армянского ударения по Николу Агбаляну (иclледование) - (с. 104-109).
30. ЕРАНУИ МЕЛИК-МУРАДЯН - Связь богини Астгик с празднованием Вардавара (исследование) - (с. 110-118).
31. МИСАК Х. ДЖЕВАИРДЖЯН - Кафедральный собор Св. Софии в г. Тарсусе (исследование) - (с. 119-123).

ДОКУМЕНТЫ

32. АКОП ПЕТРОСЯН - "Панегирик и некролог за упокой души покойного Патриарха" (исследование и текст) - (с. 124-134).

В СВЯТОМ ПРЕСТОЛЕ

33. Краткие церковные новости. Информация о Святой Литургии, проповедях и других торжествах в Кафедральном соборе (с. 135-137).
ВОЛОДЯ АБРААМЯН - Письмо в редакцию с уточнениями (с. 138).

# "ETCHMIADZIN"
# OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
# (MAY 2000)

## OFFICIAL INFORMATION

1. **MUSHEGH DEACON HOVHANNISYAN** - Official Visit of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to Georgia, May 9-12, 2000 (p. 3-21).
2. Benediction and Congratulation Message of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to His Eminence the Archbishop Hovhan Terterian on the Occasion of his Re-election to the Dignity of Chief of the Armenian Diocese of Canada, May 28, 2000, no. 41 (p. 22-23).
3. Benediction and Congratulation Message of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to His Eminence the Archbishop Avag Assatourian on the Occasion of his Re-election to the Dignity of Chief of the Armenian Diocese of Iraq, May 27, 2000, no. 4 (p. 24-25).
4. Benediction and Congratulation Message of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to His Eminence the Archbishop Eghishe Kizirian on the Occasion of his Retirement from Spiritual Service, May 16, 2000, no. 35 (p. 26-27).
5. Encyclical of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to Arsen-Nuhar Mamourian, editor of the Weekly "Apaga" on the Subject of his Decoration with the Order "St. Sahak-St. Mesrop", May 16, 2000, no. 36 (p. 28-29).
6. Benediction Message of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to the Diocese Council of the Armenian Diocese of Australia, May 1, 2000 no. 33 (p. 30-31).
7. Benediction and Congratulation Message of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to the Editorial Staff of the Weekly "Apaga" of Montreal (Canada), May 6, 2000, no. 34 (p. 32-33).
8. Benediction and Congratulation Message of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to Aram Galoustian (Boston, USA) for his Many Years Patriotic Activities, May 17, 2000, no. 37 (p. 34-35).
9. Benediction and Congratulation Message of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to Vache Semerdjian (Los Angeles, USA) on the Occasion of the 40th Anniversary of his Career of Journalist and his Public Activity, May 18, 2000, no. 38 (p. 36-37).
10. Word of Congratulation of the Supreme Patriarch on the Occasion of the Victory Day, May 8, 2000 (p. 38).

11. Speech of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, at the Funeral Ceremony of General Drastamat Kanayan at the Cathedral of St.-Echmiadzin, May 27, 2000 (p. 39-40).
12. Congratulation of the Catholicos of all Armenians to the Secondary Scholl Graduates of Armenia, May 26, 2000 (p. 41-42).
13. Bells Chimes were again heard in Dvin, Ancient Capital of Armenia, where Gareguin II, Catholicos of all Armenians, consecrated the Church of the St. Resurrection, May 3, 2000 (p. 43).
14. Consecration of the Church of St.-Sarkis in Nor-Nork by Gareguin II, Catholicos of all Armenians, April 30, 2000 (p. 44).
15. Audience given by the Catholicos at the Holy See to the Delegation of the Bratislava Law University, headed by Pavel Minarik, Vice-Mayor of Bratislava, May 1, 2000 (p. 45).
16. At the Holy See His Holiness Gareguin II decorated Poetess Silva Kaputikian with the Order "St.-Sahak-St. Mesrop" of the Armenian Catholicosate, April 29, 2000 (p. 45).
17. Congratulation of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to Andranik Markarian on the Occasion of his Nomination as Prime-Minister of Armenia, May 13, 2000 (p. 46).
18. Armenia Prime-Minister Andranik Markarian's Visit to the Holy See, to Receive the Benediction of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, May 14, 2000 (p. 46-47).
19. His Holiness Gareguin II: "The Matenadaran is a Cathedral for us". His Holiness presented the Yerevan Mashtots Matenadaran with a Gospel of the 12th century, May 20, 2000 (p. 47).
20. Audience given by Gareguin II, Catholicos of all Armenians, at the Holy See to Dmitri Tkach, Vice-Minister of Foreign Affairs of Ukraina, May 31, 2000 (p. 48).

**SERMONS**

21. Sermon of His Eminence the Archbishop Nerses Pozapalian at the Cathedral of St.-Echmiadzin on the occasion of the Holy Cross Feast, May 21, 2000 (p. 49-51).
22. Sermon of Vardapet Makar Hovhannissian at the Cathedral of St.-Echmiadzin, May 28, 2000 (p. 52-53).
23. **SENIOR PRIEST AVAG DULGUERIAN** - From the Earth to the Heaven. The Sons of the Resurrection (p. 54-57).

## RELIGIOUS STUDIES

24. **MARIE SANTOURJIAN** - The "Saint Persons" in the Sacred Poetry of Armenia (investigation) - (p. 58-68).
25. **RIMA A. MIROUMIAN** - The Religious Philosophy in the Context of the Modern Culture (investigation) - (p. 69-78).

## 1700th ANNIVERSARY

26. **H.J. HOVHANNISSIAN** - Nerses Ashtaraketsi, Defender of the Motherland (investigation) - (p. 79-89).

## HISTORICAL STUDIES

27. AROUSIAK TERCHANIAN - The Role of the Armenian Church in the Victory over Nazism in 1941-1945 (investigation) - (p. 90-93).
28. H.V. THOROSSIAN - Cultivation of the Vine in the Monastic Vineyard of Echmiadzin in the 17th-18th centuries (investigation) - (p. 94-103).

## ARMENIAN STUDIES

29. **VARAG ARAKELIAN** - The Theory of the Armenian Accent According to Nicol Aghbalian (investigation) - (p. 104-109).
30. **ERANOUHI MELIK-MOURADIAN** - The Connection of the Goddess Astghik with the Feast of Vardavar (investigation) - (p. 10-118).
31. **MISSAK H. DJEVAHIRJIAN** - The St.-Sophia Cathedral of the Town of Tarsus (investigation) - (p. 119-123).

## DOCUMENTS

32. **HACOP PETROSSIAN** - "Panegyric and Necrology for the Repose of the Soul of the Late Patriarch" (investigation, text) - (p. 124-134).

## AT THE HOLY SEE

33. Brief Church News. Information about the Holy Masses, Sermons and other Solemnities held in May at the Cathedral of St.-Etchmiadzin, (p. 135-137).
34. **VOLODIA ABRAHAMIAN** - Letter to the Editorial Staff with Additional Information (p. 138).

# "ETCHMIADZINE"
# ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
# (Mai 2000)

## INFORMATION OFFICIELLE

1. **MOUSHEGH DIACRE HOVHANNISYAN** - Visite officielle de Sa Sainteté Garéguine II; Catholicos de tous les Arméniens, en Géorgie, 9-12 mai 2000 (p. 3-21).
2. Message de bénédiction et de félicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Son Eminence l'Archevêque Hovhan Tertérian à l'occasion de sa réélection à la dignité de chef du diocèse arménien du Canada, 28 mai 2000, no. 41 (p. 22-23).
3. Message de bénédiction et de félicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Son Eminence l'Archevêque Avag Assatourian à l'occasion de sa réélection à la dignité de chef du diocèse arménien d'Iraq, 27 mai 2000, no. 40 (p. 24-25).
4. Message de bénédiction et de félicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Son Eminence l'Archevêque Eghiché Kizirian à l'occasion de sa retraite du service spirituel, 16 mai 2000, no. 35 (p. 26-27).
5. Encyclique de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Arsène-Noubar Mamourian, rédacteur de l'hebdomadaire "Apaga" au sujet de sa décoration de l'ordre "St.-Sahak-St.-Mesrop", 16 mai 2000, no. 36 (28-29).
6. Message de bénédiction de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, au Conseil diocésain du diocèse arménien d'Australie, 1 mai 2000, no. 33 (p. 30-31).
7. Message de bénédiction et de félicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à la rédaction de l'hebdomadaire "Apaga" de Montréal (Canada), 6 mai 2000, no. 34 (p. 32-33).
8. Message de bénédiction et de félicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Aram Galoustian (Boston, USA) pour sa longue activité patriotique, 17 mai 2000, no. 37 (p. 34-35).
9. Message de bénédiction et de félicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Vatché Sémerdjian (Los Angeles, USA) à l'occasion du 40e anniversaire de sa carrière de journaliste et de ses activités publiques, 18 mai 2000, no. 38 (p. 36-37).
10. Message de félicitation du Patriarche Suprême à l'occasion du Jour de la Victoire, 8 mai 2000 (p. 38).

11. Allocution de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, durant la cérémonie des funérailles du général Drastamat Kanayan à la Cathédrale de Saint-Etchmiadzine, 27 mai 2000 (p. 39-40).
12. Message de félicitation du Catholicos de tous les Arméniens aux promus des écoles secondaires d'Arménie, 26 mai 2000 (p. 41-42).
13. La carillon des cloches s'est fait à nouveau entendre à Dvine, ancienne capitale de l'Arménie, où Garéguine II, Catholicos de tous les Arméniens, a béni l'église de la Sainte-Résurrection, 3 mai 2000 (p. 43).
14. Bénédiction de l'église St.-Sarkis de Nor-Nork par Garéguine II, Catholicos de tous les Arméniens, 30 avril 2000 (p. 44).
15. Audience donnée au Saint-Siège par le Catholicos à la délégation de l'Université de Droit de Bratislava, menée par Pavel Minarik, vice-maire de Bratislava, 1er mai 2000 (p. 45).
16. Au Sainte-Siège, Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, remet à la poétesse Silva Kapoutikian la décoration "St.-Sahak-St.-Mesrop" du Catholicossat arménien, 29 avril 2000 (p. 45).
17. Message de félicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Andranik Markarian, à l'occasion de sa nomination au poste de Premier-Ministre d'Arménie, 13 mai 2000 (p. 46).
18. Visite au Saint-Siège d'Etchmiadzine d'Andranik Markarian, Premier-Ministre d'Arménie, pour recevoir la bénédiction de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, 14 mai 2000 (p. 46-47).
19. Sa Sainteté Garéguine II "Le Maténadaran est une Cathédrale à nos yeux". La donation par le Saint Père d'un Evangéliaire du XIIe siècle au Maténadaran Machtots d'Erévan, 20 mai 2000 (p. 47).
20. Audience donnée au Saint-Siège par Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à Dmitri Tkatch, Vice-Ministre des Affaires Etrangères de l'Ukraine, 31 mai 2000 (p. 48).

**SERMONS**

21. Sermon de Son Eminence l'Archevêque Nersès Pozapalian à la Cathédrale de St.-Etchmiadzine à l'occasion de la Fête de la Sainte Croix, 21 mai 2000, (p. 49-51).
22. Sermon de Monseigneur l'Archimandrite Makar Hovhannissian à la Cathédrale de St.-Etchmiadzine, 28 mai 2000 (p. 52-53).
23. **MONSEIGNEUR AVAG DULGUERIAN** - De la terre jusqu'au ciel. Les fils de la Résurrection (p. 54-57).

## ETUDES RELIGIEUSES

24. **MARIE SANTOURIAN** - Les "personnages saints" dans la poésie spirituelle arménienne (étude scientifique) - (p. 58-68).
25. **RIMA A. MIROUMIAN** - La philosophie religieuse dans le contexte de la culture moderne (étude scientifique) - (p.69-78).

## 1700e ANNIVERSAIRE

26. **J. HOVHANNISSIAN** - Nersès Achtarakétsi, défenseur de la Patrie (étude scientifique) - (p. 79-89).

## ETUDES HISTORIQUES

27. **AROUSSIAK TERTCHANIAN** - Le rôle de l'Eglise Arménienne dans la victoire remportée sur le nazisme en 1941-1945 (étude scientifique) - (p. 90-93).
28. **H. V. THOROSSIAN** - La culture de la vigne au vignoble monastique d'Etchmiadzine aux XVIIe-XVIIIe siècles (étude scientifique) - (p. 94-103).

## ETUDES ARMENIENNES

29. **VARAG ARAKELIAN** - La théorie de l'accent arménien d'après Nicol Aghbalian (étude scientifique) - (p. 104-109).
30. **ERANOUHI MELIK-MOURADIAN** - La relation de la déesse Astghik avec la fête de Vardavar (étude scientifique) - (p. 110-118).
31. **MISSAK H. DJEVAHIRJIAN** - La Cathédrale St.-Sophie de la ville de Tarse (étude scientifique) - (p. 119-123).

## DOCUMENTS

32. **HACOP PETROSSIAN** - "Panégyrique et nécrologie pour le repos de l'âme du Patriarche défunt" - (étude scientifique, texte) - (p. 124-134).

## AU SAINT-SIEGE

33. Bréves nouvelles ecclésiatiques. Information sur les Saintes-Messes, les sermons et les autres solennités accomplies à la Cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de mai (p. 135-137).
34. **VOLODIA ABRAHAMIAN** - Lettre à la rédaction pour certaines précisions (p. 138).

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՋԵՅԹՈՒՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՍԻՉ՝ 77764

---

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ